

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

MIDDLE EAST

HISTORY
POLITICS
CULTURE

XIII

YEREVAN – 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

XIII

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2018

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գլխավոր խմբագիր՝ Մուշեղ Ղահրիյան, խմբագրի տեղակալ՝
Ռուսլան Ցականյան
Խմբագրական խորհրդի անդամներ՝ Ռոբերտ Ղազարյան, Գոռ Մարգարյան,
Թամարա Աղամալյան, Վարդան Գալստյան
Համակարգչային ձևավորումը՝ Նաիրա Կարախանյանի

«Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ» ժողովածուի XIII հատորը ներառում է 2017 թ. Ադվերանում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի երիտասարդ արևելագետների խորհրդի կազմակերպած երիտասարդ արևելագետների 38-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումները և այլ հեղինակների հոդվածներ: Հեղինակներն անդրադառնում են Մերձավոր և Միջին Արևելքի, Հեռավոր Արևելքի, Կովկասի երկրների ու ժողովուրդների պատմության և բանասիրության մի շարք հիմնահարցերի: Ժողովածուն նախատեսված է արևելագետների, հնագետների, ազգագրագետների, հայագետների, միջազգայնագետների, բուհերի ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

The 13th volume of Middle East: History, Politics, Culture is recommended for publication by the Scientific Council of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences, RA

EDITORIAL BOARD

Editor-in-chief M. Ghahriyan, Vice-editor R. Tsakanyan, R. Ghazaryan, G. Margaryan,
T. Aghamalyan, V. Galstyan.
Layout by: **Naira Karakhanyan**

The volume includes the pupils presented in the 38th International Conference of
Young Orientalists (Yerevan, 2017)

ISSN 1829-0833

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2018

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա
ԱԻ - ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
ՊԻ - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
ԳԿՄԿ - ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն
ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ՀՊՄՀ - Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀԶԳԻ – Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
ՎՋԱԿ – Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոն
ԵԿԹԱ – Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա

ABBREVIATIONS

NAS RA - National Academy of Sciences, Republic of Armenia
IOS - Institute of Oriental Studies, NAS RA
IOH – Institute of History, NAS RA
ISEC - International Scientific Educational Center of NAS RA
IAE - Institute of Archaeology and Ethnography, NAS RA
YSU - Yerevan State University
ASPU - Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
SRIA - Scientific Research Institute of Ancient Manuscripts named after Mesrop Mashtots
GNCM – Georgian National Center of Manuscripts
EU – European University

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԱՆՆԱ ԱԶԻՋՅԱՆ	
ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԿ ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ	11
ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ	
ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԿԻԿԼՈՊՅԱՆ» ԱՄՐՈՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐԸ	19
ՆՇԱՆ ԹՈՍԱՍ ՔՍԵՔԵՐ	
ԼՈՒԳԱԼԶԱԳԵՄԻՆ «ՇՈՒՇԳԱԼ» ՑԱՆՑՈՒՄ. ՎԱՂ ԴԻՆԱՍՏԻԱՆԵՐԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԳՈՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ	29
ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ	
ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՆ ՄԻՆՈՒԱՅԻ ՕՐՈՔ՝ ԸՍՏ Կ. Ֆ. ԼԵՄԱՆ- ՀԱՈՒՊՏԻ	34
ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ, ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	
ՕԶԱԲԵՐԴԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ N 001 ԵՎ 002 ՄԵՆՅԱԿՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)	49
ԱՆԺԵԼԱ ԵՐԻՑՅԱՆ	
ԹԱՂՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ	66
ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ	
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՌԴԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԹԱՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՈՃԻ) ՄԵՁ	73
ԼԻԱՆԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ	
ՄՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12-ՐԴ Դ. 80-ԱԿԱՆ ԹԹ.	79
ՍՈՒՄԱՆՆԱ ԱՂԱՍՅԱՆ	
ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱԿՔԱՐ ԳՅՈՒՂԻՑ (ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ)	91

ԻՐՄԱ ԽՈՍԻՏԱՇՎԻԼԻ	
ՎԱՄՆ ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔԻ	
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՈՊՏՈՒՄՆ ԸՍՏ ՀԱԿՈՒԲ	
ԿԱՐՆԵՑՈՒ (17-ԴԴԴ.)	99
ԽԱԹՈՒՆԱ ԳԱՓՐԻՆՂԱՇՎԻԼԻ	
XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ	
(H-60)	107
ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐՉՈՅԱՆ	
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ«ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ»	
ԷՊՈՍՈՒՄ	112
ՀԱՄՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ	
ԿԱՄԱՎՈՐ ՊԱՄԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵՋ	121

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔՐԴԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՁՈՒԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԱՔԻ	
ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ	137
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՐՅԱՆ	
ԶԼՄ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	
ԱԴԱՊՏԱՅԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ (ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ	
ՕՐԻՆԱԿՈՎ)	157
ԱՐԱՄ ԱԲԱՋՅԱՆ	
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ	
ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ	
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ	172
ԱՐԱՔՍ ՓԱՇՍՅԱՆ	
ԿԱՏԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	188
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ	
1882-1895 ԹԹ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ	
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ	
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	198
ՀԵՐՄԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ	
ՀԱՅ ԵՎ ԱՐԱԲ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ 1908 ԹՎԱԿԱՆԻ ՕՍՄԱՆՅԱՆ	
ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ	209
ՎԵՐԱ ՍԱՀԱԿՅԱՆ	
«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ» (ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՍԱ)	
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ	221

ԱՐՏԱԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ	
ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. ՍԱԱԿԱՇՎԻԼԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	230
ԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ	
ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԱՐՑԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ 1920-30-ԱԿԱՆ ԹԹ.	244
ՍԱԼՎԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ	
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՆԶԻՄԱԹԸ	260
ՍՅԱՍՆԻԿ ԵՍՈՅԱՆ	
ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ «ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ 2010-2015 ԹԹ.	271
ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ԿԱՅՔԵՐՈՒՄ	280

CONTENTS

ANCIENT AND MEDIEVAL HISTORY

ANNA AZIZYAN	
A RECONSTRUCTION EXPERIMENT OF A MODE OF ORNAMENT CREATION IN KURA-ARAXES CERAMICS	11
HENRIK DANIELYAN	
MAIN STAGES OF INVESTIGATION OF "CYCLOPEAN" FORTRESSES IN ARMENIA	19
NSHAN THOMAS KSEKER	
LUGALZAGESI IN THE SHUSHGAL NET: EARLY DYNASTIC ICONOGRAPHY OF KINGSHIP IN THE SARGONIC PERIOD	29
VAHE SARGSYAN	
BIAINILI-URARTU UNDER MINUA ACCORDING TO C. F. LEHMANN- HAUPT	34
ARTUR MIKAELYAN (YSU), ARMAN YEGHIAZARYAN (ASPU)	
THE MAIN RESULTS OF THE EXCAVATIONS OF ROOMS 001 AND 002 OF THE OUTER TOWN OF ODZABERD (BRIEF REVIEW)	49
ANJELA YERITSYAN	
SOME FEATURES OF THE BURIAL RITUAL IN THE ARMENIAN HIGHLANDS	66

RUZANNA MIKAYELYAN	
THE MANIFESTATION OF TRADITIONS OF THE ARMENIAN MEDIEVAL ARCHITECTURE IN NATIONAL NEOCLASSICAL (TAMANIAN) STYLE	73
LIANA AGHABEKYAN	
DIPLOMATIC RELATIONSHIPS BETWEEN THE HOLY ROMAN EMPIRE AND CILICIAN ARMENIA IN THE 80S OF THE XII CENTURY	79
SUSANNA ADAMYAN	
NEW INSCRIPTIONS FROM TSAKQAR (GEGHARQUNIQ REGION)	91
IRMA KHOSITASHVILI	
ON THE ROBBERY OF HOLY VIRGIN`S CHURCH ACCORDING TO JACOB OF KARIN (17 TH C.)	99
KHATUNA GAPRINDASHVILI	
ON THE EXAMPLE OF GEORGIAN-ARMENIAN LITERATURE AT THE BEGINNING OF 19 TH CENTURY (MS. H-60)	107
LYUDVIG MIRZOYAN	
SOME CULTIC ASPECTS IN THE EPIC OF "DAREDEVILS OF SASUN"	112
HASMIK ABRAHAMYAN	
KAMAVOR (THE VOLUNTARY) FASTS IN THE ARMENIANS DAILY LIVING	121

MODERN AND CONTEMPORARY HISTORY

VARDAN GALSTYAN	
THE PROBLEM OF THE IDENTITY AND ASSIMILATION OF THE KURDS IN AZERBAIJAN IN THE CONTEXT OF THE INDEPENDENCE REFERENDUM IN IRAQI KURDISTAN	137
GAYANE HAKOBYAN	
THE ROLE OF MASSMEDIA IN THE PROCESS OF SOCIO-CULTURAL ADAPTATION OF SYRIAN ARMENIANS (By TV example)	157
ARAM ABAJYAN	
CHINA`S DIPLOMATIC AND STRATEGIC MOVES IN THE MIDDLE EAST DURING THE COLD WAR PERIOD	172
ARAKS PASHAYAN	
QATARI CRISIS. THE CAUSES AND THE CONSEQUENCES	188
TIGRAN KHACHATRYAN	
ACHIEVEMENTS OF GERMAN MILITARY MISSION`S OF 1882-1895 IN OTTOMAN TURKEY	198
HERMINE ARAKELYAN	
ARMENIAN AND ARAB DEPUTIES IN THE OTTOMAN PARLIAMENT OF 1908	209

VERA SAHAKYAN	
THE NUMBER OF PARTICIPANTS AND THE STAFF OF THE SPECIAL ORGANIZATION (Teşkilat-i mahsusa)	221
ARTAK ZARGARYAN	
THE TRADE AND ECONOMIC RELATIONS BETWEEN TURKEY AND GEORGIA UNDER THE PRESIDENCY OF M. SAHAKASHVILI	230
ANI MELKONYAN	
THE PROBLEM OF THE SANJAK OF ALEXANDRETTA AS AN INTERNATIONAL DIPLOMATIC PROBLEM DURING 1920-30S	244
SALVINE MARKOSYAN	
THE ARMENIAN AMİRA CLASS OF COSTANTİNOPLÉ AND THE TANZİMAT	260
MYASNIK YESOYAN	
THE EGYPTIAN-ARMENIAN ARTISTS IN THE PAGES OF MAGAZINE AREG IN 2010-2015	271
JENNY TAMARYAN	
THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN GEORGIAN LANGUAGE WEBSITES	280

**Հ Ի Ն Ե Վ Մ Ի Ջ Ի Ն Դ Ա Ր Ե Ր Ի
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**ԱՆՆԱ ԱԶԻՅՑԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)**

**ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԿ
ԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁ**

Վաղ բրոնզի դարաշրջանում Հայկական լեռնաշխարհն ընդգրկվում է ինքնատիպ մի մշակույթի սահմաններում, որը հայտնի է Կուր-արաքսյան **կամ շենգավիթյան** անուններով¹: Հայտնի է, որ այն տարածվում է մինչ հյուսիսային Կովկաս, Պաղեստին և կենտրոնաարևմտյան Իրան: Կուր-արաքսյան մշակույթի բնակավայրերը տեղակայված են գետերի մոտ՝ բնականորեն ամրացված բլուրների և բլրաձև բարձունքների վրա, ինչպես նաև գետային և լեռնային հարթակներում՝ երկրագործության և անասնապահության զարգացման համար բարենպաստ տարածքներում: Հարթավայրերում այդ բնակավայրերը երբեմն իրենցից ներկայացնում են մոխրաբլուրներ:

Մ.թ.ա IV հազ. կեսերից մինչ III հազ. վերջին քառորդը գոյատևած կուր-արաքսյան մշակույթի տնտեսական կյանքում մեծ տեղ է գրավել խեցեգործությունը: Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեգործության նմուշներն այնքան ինքնատիպ են, որ հաճախ խնդրո առարկա մշակույթը անվանում են նաև **«կարմրասև կոկված խեցեղենի մշակույթ»**: Այս մշակույթի անվանադիր Բ. Կուֆտինը առաջիններից մեկն էր, որ առանձնացրեց կուր-արաքսյան խեցեղենի հիմնական հատկանիշները: Հայաստանի տարածքի կուր-արաքսյան խեցեղենի տիպաբանության, լոկալ-ժամանակագրական խմբերի առանձնացման հարցերը մեծ տեղ են գրավում Հ. Մարտիրոսյանի, Է. Խանգաղյանի, Տ.

¹ 1936-1938 թթ.-ին հայ հնագիտության ռահվիրաններից մեկի՝ Ե. Հ. Բայբուրթյանի կողմից տրված «շենգավիթյան» մշակույթը, հետագայում՝ Բ. Կուֆտինի կողմից (1944 թ.) վերանվանվեց «կուր-արաքսյան» մշակույթ: Տվյալ մշակույթի անվանաբանական խնդիրների վերաբերյալ նախատեսում ենք առաջիկայում հանդես գալ նոր աշխատանքով:

Խաչատրյանի, Ս. Եսայանի, Ռ. Բադալյանի, Լ. Պետրոսյանի, Կ. Քուչ-նարյովայի, Օ. Ջափարիձեի, Ա. Սագոնայի և այլոց աշխատանքներում²:

Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան խեցեգործական արտադրանքը հատկապես առանձնանում է իր զարդաբանությամբ: Չնայած կուր-արաքսյան հուշարձանների նյութերի ուսումնասիրություններում հեղինակները միշտ էլ անդրադարձել են տվյալ ժամանակաշրջանի խեցեղենի զարդարման հարցերին, սակայն այս խնդրին վերաբերող ամփոփ ուսումնասիրություն դեռ չի կատարվել: Վաղ բրոնզի դարի խեցեղենի զարդարվեստը վեր հանելու համար առաջնային է համարվել ուսումնասիրել կատարման եղանակները:

Խեցեղենը հնագույն մարդուն ծառայել է տնտեսության տարբեր ճյուղերում, ինչպես երկրագործական և անասնապահական մթերքների, այնպես էլ օժանդակ ուղորտների՝ ձկնորսության, որսորդության և հավաքչության միջոցով ձեռք բերված սննդամթերքի մշակման ու պահպանման համար: Դրանով է բացատրվում կավամանների ձևերի և չափերի բազմազանությունը:

Լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթն աչքի է ընկնում հատկապես իր ինքնատիպ և հարուստ խեցեղենով, որով և այն հիմնականում տարբերվում է Հին Արևելքի համաժամանակյա այլ մշակույթներից: Նշենք, որ այս խեցեղենը ո՛չ տեխնոլոգիական հատկանիշներով, ո՛չ ձևով, ո՛չ զարդարման բնույթով կապված չէ Անդրկովկասի մ.թ.ա. V-IV հազ. հուշարձանների խեցեղենի հետ: Այն ավելի կատարյալ է իր որակով, պատրաստման տեխնիկայով և բազմազան իր ձևերով: Այդ խեցեղենին բնորոշ չէ գունազարդումը: Գունազարդ խե-

² Հմմտ.՝ Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967; Եսայան Ս., Հայաստանի հնագիտությունը, Երևան, 1992; Куфтин Б., Урартский “колумбарий” у подошвы Арарата и куроаракский энеолит, ВГМВ, 13, 1943; Мартиросян А.А., Армения в эпоху Бронзы и Раннего Железа, Ереван, 1964; Кушнарева К. Х., Чубинашвили Т., Древнейшие культуры Южного Кавказа, Ленинград, 1970; Бадалян Р. С., Раннебронзовое поселение близ с. Карнут, Պատմաբանասիրական հանդես, 1984, N 1, էջ 229-237; Петросян Л. А., Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н.э.), Ер., 1989; Кушнарева К., Южный Кавказ в IX-II тыс. до н.э., С. Петербург, 1993; Sagona A., The Caucasian Region in the Early Bronze Age, BAR IS 214, 1984: Առավել թարմ անդրադարձումների համար տես և հմմտ.՝ Chronologies des Pays du Caucase et de l’Euphrate aux IVe-IIIe Millenaires, Actes du Colloque d’Istanbul, 16-19 decembre 1998, Marro C., Hauptmann H. (eds.), Varia Anatolica XI, Paris 2000.

ցեղեն նկատվում է միայն մի քանի կուր-արաքսյան հուշարձաններում (*Շենգավիթ, Կվաջխեղեբի, Նախիջևանի Քյուլ-թեփե 1*), այն էլ հատուկ են օրինակներով:

Այն գլխավորապես ներկայացված է բազմազան անոթներով, որոնց, ըստ ձևի և գործածության, կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի. կարասներ, թաղարներ, գավաթներ, կճուճներ, թասեր, քրեղաններ, գավեր, տապակարաններ-սաջեր, ձագարներ, քամիչներ, մինիատյուր կավամաններ, օջախներ, օջախների հենակ-պատվանդաններ: Դրանք բոլորը պատրաստված են ձեռքով: Բրուտները օգտագործել են տեղական կավը և նրան ավելի կայունություն, ամրություն տալու համար խառնել են տարբեր նյութեր, օրինակ՝ խճավազ կամ ուղղակի գետավազ, երբեմն նաև՝ մանր ջարդած խեցի: Հանդիպում են խեցու բեկորներ, որոնց կտրվածքում երևում են այրված խոտի կամ հարդի հետքեր³:

Խեցեղենի էական հատկանիշներից մեկը կառուցման եռամասնությունն է, այսինքն՝ այն ունի երեք ծավալային հորիզոններ բաղկացած ստորին՝ դեպի վեր լայնացող մասից, միջին՝ տակառաձև կամ ուռուցիկ հատվածից և վերին՝ գլանաձև ներձկված վզից: Մովորաբար անոթի իրանի և վզի միացման հատվածում առաջանում էր հորիզոնական գոտի: Կանթերը պատրաստվում էին առանձին, որից հետո ամրացվում իրանին:

Խեցեղենի մի մասին բնորոշ է բազմաշերտությունը, մասնավորապես միջին մասը մոխրագույն է, դրսի կողմը՝ սև, ներսը՝ վարդագույն: Ըստ Բ. Կուֆտինի, դա կարող էր ստացվել երկու եղանակով, կամ կավե կմախքի վրա դրսից և ներսից թաց ու յուղոտ կավի շերտեր քսելու եղանակով, կամ թրծման ուղղորդվող ռեժիմով, երբ կավամանը կրակի վերականգնող ազդեցությանն է ենթարկվում միայն դրսից, իսկ ներսի մասը՝ ոչ, այդ պատճառով էլ աստառը մնում է բաց գույնի և ստացվում է **«վարդագույն աստառով խեցեղեն»**⁴:

Խեցեղենի մեծամասնությունը արտաքինից պատված է սև, երբեմն վարդագույն, մոխրագույն, նարնջագույն, սակավ շագանակագույն

³ Խանգաղյան Է., Գառնի, IV, Երևան, 1969, էջ 46-83: Կուր-արաքսյան մշակույթի որոշ հուշարձաններում հայտնաբերվել են խեցանյութի բեկորներ, որոնք կրում են պարզագույն դուրզի հետքեր (Мунчаев Р. М., Кавказ на заре Бронзового века, Москва, 1975, стр. 161).

⁴ Куптин Б., Урартский “колумбарий”..., стр. 76-77.

անգործ և փայլեցված է: Անգործ ստացվել է մեծ մասամբ արդեն ամրացված, չորացած կավամանի վրա յուղոտ, գուցե ներկախառն բարակ կավի զանգված քսելով, որը թրծումից հետո առաջացնում է հարթ և նուրբ, մի փոքր ճաքճքված մակերես: Դժվար է ասել, թե այդպիսի արտակարգ, երբեմն հայելանման, արծաթափայլը ի՞նչ եղանակով է ստացվել: Արդյոք հենց նե՛րկն է իր մեջ այդ փայլը պարունակել, թե՞ անգործ պատելուց հետո վարպետները որևէ այլ տեխնիկական հնարքի են դիմել: Այդ մասին գրականության մեջ կան տարբեր կարծիքներ: Կատարված որոշ փորձեր ցույց են տվել, որ թրծումից առաջ փայլեցրած խեցեղենը, դրանից հետո իր փայլը լրիվ չի պահպանում, խամրում է: Ենթադրվում է, որ խեցանոթը լրացուցիչ փայլեցման պետք է ենթարկվեր թրծումից հետո:

Կավամանների աստառը ներկված է տարբեր գույներով՝ շագանակագույն, մոխրագույն, մարմնագույն, վարդագույն, դեղին, սև և անգամ մանուշակագույն: Սովորաբար ամանի շուրթը ներսից լայն ժապավենաձև փայլեցված է լինում: Խեցեղենի հարդարելուն և կոկելուն են ծառայել քարե կոկիչները, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվում են համարյա բոլոր վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում:

Շայտնաբերված ամբողջ խեցեղենը ըստ որակի կարելի է բաժանել երկու խմբի՝ բարձրարվեստ և հասարակ: Հասարակ խեցեղենը մեծ մասամբ խոհանոցային է՝ մրից սևացած, անգարդ, անփայլ մակերեսով: Պատրաստված է խոշոր ավազախառն, վատ հունցված և մշակված կավից, ունի ոչ հավասար թրծում: Կրակի ուժեղ ազդեցությունից շուտ քայքայվում և փշրվում է: Նման կավից են պատրաստված օջախները և օջախի հենակները: Այս խեցեղենը արտաքինից պատած է դեղին կամ վարդագույն կավի նուրբ շերտով:

Բարձրարվեստ խեցեղենը պատրաստված է լավ հունցված, մշակված բարձրորակ կավից և աչքի է ընկնում իր արտակարգ թրծումով: Ունի կոկված, երբեմն հայելանման հարթեցրած մակերես, որը գերազանցապես զարդանախշված է: Առանց բացառության՝ բոլորի շուրթերը նուրբ են և եզերված անկյունային նեղ ժապավենով: Մեծամասնությանը բնորոշ է փոքրիկ ներձկված հատակ: Խեցեղենի այս խումբն աչքի է ընկնում մասերի համաչափությամբ և զարդանախշերի կատարման բարձր ճաշակով:

Կուր-արաքայան մշակույթի խեցեղենի հարդարման եղանակները հետևյալն են.

1. Ռելիեֆ,

2. Ներձկված
3. Ռեխիեֆ-ներձկված
4. Գծագարդ
5. Ակոսագարդ
6. Ծեփածո (վերադիր)
7. Գունագարդ
8. Փայլաներկը հեռացնելու եղանակ:

Տվյալ աշխատանքի սահմաններում, Ագարակի վաղ բրոնզեդարյան բնակավայրի մի խեցեղեն բեկորի (Նկ. 1, 3) էքսպերիմենտալ ուսումնասիրման/կրկնօրինակման հիման վրա, փորձ է կատարվել վերականգնել միայն ներձկված եղանակով կատարված մեկ զարդամոտիվ, որն իրականացվել է հետևյալ ձևով. պատրաստի, բայց դեռ հում՝ չթրծած անոթի վրա նախնական որևէ գործիքի (հմմտ. Նկ. 2) օգնությամբ ուրվագծվում էր տվյալ հորինվածքը, այսինքն՝ նախշը կամ կոմպոզիցիան, որից հետո հատուկ գործիքի լայն, **ներձկված** մատով ուրվագծված նախշը մշակվում էր: Կատարված գործողությունից անմիջապես հետո զարդամոտիվը հղկվում և բերվում էր վերջնական տեսքի, այնուհետև նոր թրծվում: Ներձկման եղանակով կատարված մոտիվները անոթի ընդհանուր մակերեսից ցածր են: Սա իր հերթին ունի կատարման տարբերակներ՝ ուղղված մասնավորապես խոր կամ թույլ ներձկմանը (Նկ. 4-6):

Այս ներձկման եղանակը ունի իր կատարման տարբերակները՝ մատնեքագարդ (կանեյուր) և փոսիկագարդ (սեղմելու եղանակ):

Մատնեքագարդ (կանեյուր - ֆր. **cannelure** - ուղղահայաց ներձկում). կատարվում էր թաց կավամանի վրա մատով կամ մատներով, նաև ուռուցիկ վերջավորություն ունեցող գործիքով: Այն արվում էր ուժգին կամ թույլ սեղմելու միջոցով: Այնուհետև անոթը թողնում էին չորանալու, ապա՝ թրծում (Նկ. 7):

Սեղմելու եղանակով կատարված փոսիկագարդ, սովորաբար այս զարդը իրականացվում էր թաց խեցեղենի վրա: Անոթի համապատասխան հատվածի վրա մատով սեղմվում (ներձկվում) էր զարդը: Հնարավոր է նաև, որ զարդն արվել է կիսակլոր կամ կլոր ծայր ունեցող գործիքի միջոցով, որից հետո հղկվում էր, ապա՝ թրծվում: Արդյունքում ստացվում էր կլոր կամ ձվաձև փոսիկավոր-ներձկված զարդ (Նկ. 8):

Նման էքսպերիմենտալ ուսումնասիրությունը մեր առաջին փորձն է վաղ բրոնզեդարյան մշակույթի զարդամոտիվների կատարման եղանակների ուսումնասիրման հարցում:

Նկարների ցանկ

1. Վաղ բրոնզեդարյան (մ.թ.ա. 29-27-րդ դդ.) սև փայլեցրած խեցեղենի բեկոր Ագարակից (*առանց շերտագրական համատեքստի*)
2. Խեցեղենի ներձկման համար նախատեսված սև փայտից ենթադրյալ գործիք
3. Վաղ բրոնզեդարյան խեցեղենի նույն Ագարակյան բեկորի կտրվածքը
- 4-5. Խեցաբեկորի էքսպերիմենտալ ներձկման գործընթացը
6. Խեցաբեկորի էքսպերիմենտալ ներձկման արդյունքը
7. Վաղ բրոնզեդարյան խեցեղեն բեկոր Շենգավիթ բնակավայրից ԷՊԱԹ 1/401 /զճանկարը՝ հողվածագրի/ նյութը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ
8. Վաղ բրոնզեդարյան կավանոթ Արագածի N 3 քարարկղից ԷԳԹ 5565/6 /զճանկարը՝ հողվածագրի/



1



2



3




4




5



6



7



8

**ANNA AZIZYAN
(IAE, NAS RA)**

**A RECONSTRUCTION EXPERIMENT OF A MODE OF ORNAMENT
CREATION IN KURA-ARAXES CERAMICS**

In Early Bronze Age era the Armenian Highland was a part of a unique culture called Kura-Araxes. It is evident that this culture spread to the Southern part of Caucasus, Palestine and centre-occidental part of Iran. Ceramics had an important place in the economic life of Kura-Araxes culture,

which existed from the middle of the 4th millennium until the last quarter of the 3d millennium BC.

In the Armenian Highland the ceramics production of Early Bronze age stands out by its art of decoration. Although the decoration of the pottery of that period has always been a subject research, a comprehensive study has not been done yet.

To understand and particularize the peculiarities of method of execution of form of decoration we have conducted research on the base of materials. We have explored the materials of monuments in Agarak, Aragats, Mokhrablur, Shengavit, Shirakavan, Fioletovo and other places to understand and distinguish the methods of embellishment. It is important to study the methods of embellishment to reveal the art of decoration of pottery of Early Bronze Age. In this regard, we have conducted an experiment to restore a decorative motive performed by impressing, which was found during the excavations of Early Bronze Age settlement in Agarak. The method of impressing has its varieties - decoration of fingertips (cannelure) and decoration of dimple (method of compression).

This attempt is our first experiment in studying the methods of decoration of motives in the culture of Early Bronze Age.

ՀԵՆՐԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԿԻԿԼՈՊՅԱՆ» ԱՄՐՈՑՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ*

Հայաստանի հնագույն պաշտպանական համակարգերը (ամրոցներ, ամրոց-բնակատեղիներ և դիտակետ-ամրոցներ) պատկանում են համեմատաբար քիչ ուսումնասիրված հուշարձանների թվին: Մասնագիտական գրականության մեջ այս ամրոցները հայտնի են «կիկլոպյան ամրոցներ»¹ (19-20-րդ դդ. սահմանի հայ հեղինակների մոտ՝ «աչկատարյան ամրոցներ») անունով²: Մրանք ամրացված բնակատեղիներ են՝ կառուցված բարձր վայրերում (բլուր սարահարթ, հրվանդան), գետերի աղբյուրների մոտ՝ շրջապատված հսկայական պարիսպներով և գտնվում են ծովի մակերևույթից մինչև 1800-2300մ բարձրության վրա³: Հայաստանի «կիկլոպյան» ամրոցները ամրակայման և

* Օգտվելով առիթից՝ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մարգահովիտի արշավախմբի ղեկավար Ա. Գևորգյանին և Սոթքի/Նորաբակի արշավախմբի ղեկավար Ա. Բոբոխյանին արշավախմբերի մեջ ընդգրկելու, նյութերը տրամադրելու և խորհուրդների համար, իսկ քննարկումների համար Մ. Բաղայանին և Հ. Վանյանին:

¹ Կիկլոպները, ըստ հունական դիցաբանության, միաչքանի հսկաներ էին, որոնք սնվում էին մարդկային մսով և օժտված էին հզոր ուժով, բնակվում էին քարանձավներում «Մուտքը փակում հսկա ժայռով, ինչպես կապարձն են խցանում» տես՝ Հումերոս, Ողիսական երգ իններորդ, 145, Անտիկ, միջնադարյան և վերածննդի գրականություն, Ե., 1990: «Կիկլոպյան» տերմինը որպես ճարտարապետական եզրույթ առաջին անգամ օգտագործել է Հ. Շլիմանը միքենյան քաղաքակրթության նմանատիպ շինությունները բնորոշելիս: «Կիկլոպյան» քարե շարվածքներով ամրոցներ կան Հարավային Ֆրանսիայում, Պիրենեյան թերակղզում, Մարդիինիայում, Բալկանյան թերակղզում, Մալթայում տես՝ *Всеобщая история архитектуры* (այսուհետև ВИА), *Архитектура первобытно-общинного строя*, том 1, М., 1944, ст. 26:

² Ատրպետ, Շիրակի աչկատարեան ամրոցներ, Ազգագրական հանդես № 2, 1914, Թ., էջ 165-188:

³ Հայաստանի «կիկլոպյան» ամրոցների կառուցողների և ժամանակագրության հարցի շուրջ հայ դասական գիտնականների մոտ առկա են տարբեր տեսակետներ՝ կապված ժամանակի գիտության տվյալների հետ, օրինակ՝ Ն. Ադոնցը այդ շինությունները կապում է նորքարեդարի հետ հմմտ.՝ «Մեզա-

հատկապես կառուցապատման եղանակով մոտ են միքենյան և խեթական աշխարհի համապատասխան օրինակներին⁴:

1. Պաշտպանական համակարգերի ուսումնասիրության առաջին փուլն սկսում է 19-րդ դարի վերջերից և կապվում Ատրպետի, Թ. Թորամանյանի, Ն. Մառի կողմից ուսումնասիրված Շիրակի և Արագածի, իսկ Ա. Իվանովսկու⁵ կողմից Գավառի (նախկինում Նոր Բայազետ) պաշտպանական համակարգերի հետ: Նրանք, մասնավորապես Ն. Մառը մանրամասն ուսումնասիրեցին հիշյալ տարածքների պաշտպանական համակարգերը, ընդ որում, կատարելով կարևոր մի դիտարկում, այն է, որ դամբարանները տեղակայված են հենց ամրոց-բնակավայրերի մոտ: 1884-1885 թթ. Ատրպետն իր ուսումնասիրությունների մեջ փորձում է տեսականորեն տալ «կիկլոպյան» ամրոցների կառուցման ժամանակաշրջանը⁶, իսկ Թ. Թորամանյանը, ավելին, առաջին անգամ փորձեց Արագածի «կիկլոպյան» ամրոցների օրինակով տիպաբա-

լիթյան կառուցումները, որոնք այնքան բնորոշ են նեոլիթի դարաշրջանին, Հայաստանում ամենուրեք առատ են դոլմենների, մենհիրների, կրովեյների և կիկլոպյան պարիսպների ձևերով: ... Արաքս գետը թափվող Արփայի ակունքների վրա ընկած Դայլակյա գյուղի մոտ հայտնաբերված պարիսպը պատկանում է, ըստ երևույթին, նեոլիթյան տիպի հուշարձաններին: ... Շրջակայքում կան շատ հողակույտեր, որոնցից մի քանիսը պեղված են, բայց երկու մետր խորության վրա գտնված է միայն մոխիր»: Տես՝ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 11-12: Ատրպետը և Լեռն այն վերագրում են ուրարտական ժամանակաշրջանին՝ հմմտ. «Ուրարտական շրջանի (Թ.Ը. դար Ք.ձ. առաջ) այն արինահեղ մրցման դարում, ուր Ատրեստանի թագավորներն ահար բանակներով յարձակում և հարիւրար բերդեր և բերդաքաղաքներ էին աւերում Նայիրի և Ուրարդուի երկրներում, մեր տանուտեր-իշխաններն իրենց ժողովրդով պարտաւրում էին աչկատարեան բերդեր ունենալ, նրանց ամրացնել մեծ նախանձախնդրությամբ» (Ատրպետ 1914, նշվ աշխ, էջ 184-185): «Քարակոփության արհեստին այսքան կատարելությամբ տիրացած ուրարտացիների համար դժվար չպիտի լինի կառուցանել այնպիսի շինություններ, որոնք հայտնի են Կիկլոպյան անունով» (Լեռ, Երկերի ժողովածու, հ. 1 Ե., 1966, էջ 236):

⁴ Հմմտ.՝ ВИА 1944, Архитектура егейского мира, Микены, с. 166-167; ВИА 1944, Архитектура горных стран Пердней Азии, хеттская и сиро-хеттская архитектура, с. 115-120.

⁵ Ивановский А., По Закавказью, Археологическія наблюдения изслѣдованія 1893, 1894 и 1896 гг., Матеріалы по археологіи Кавказа, Выпускъ 6, М., 1911.

⁶ Ատրպետ 1914, նշվ. Աշխ., էջ 184-185:

նել դրանք⁷: Հիշյալ ուսումնասիրողները, որոնք միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պեղումների նախաձեռնողներն էին, կարողացան նոր որակ ապահովել՝ շեշտելով նաև, որ միջնադարյան Անիի կառուցման ժամանակ շարունակաբար օգտագործվել են «կիկլոպյան» պարսպաքարերը:

2. «Կիկլոպյան» ամրոցների ուսումնասիրման հաջորդ փուլն սկսում է 20-րդ դարի 30-ական թվականներից: Արդեն 1930 թ. Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի կողմից, որի կազմի մեջ էին Ա. Հաջյանը, Լ. Գյուզալյանը, Բ. Պիոտրովսկին, ուսումնասիրվեցին Արագածի հյուսիսարևմտյան հատվածների «կիկլոպյան» ամրոցները. ընդ որում, ուսումնասիրության արդյունքում վերջիններս կարողացան սահմանել երեք տարածամասակյա ամրոց-բնակավայրերի խմբեր⁸: 1931-1932 թթ. Բ. Պիոտրովսկին և Լ. Գյուզալյանը⁹ ապա Ի. Մեջանինովը¹⁰ և Ս. Բարխուդարյանը¹¹ ուսումնասիրեցին Սևանի ավազանի արևմտյան և հարավարևմտյան մասի ու ներկայիս Գավառ քաղաքի (նախկինում Նոր Բայազետ) «կիկլոպյան» ամրոցները: Արագածի պաշտպանական համակարգերի խնդրին անդրադարձել է

⁷ Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ե., 1942, էջ 11-40:

⁸ Аджян А., Гюзалян Л., Пиотровский Б., Циклопические крепости Закавказья, Сообщение Государственной Академии Истории Материальной культуры, №1-2, Л., 1932, с. 61-64: Արագածի մեգալիթյան հուշարձանների խնդրով զբաղվել է նաև Ա. Քալանթարը, ով, լինելով Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի անդամ, մանրամասն ուսումնասիրել է հիշյալ տարածաշրջանի հուշարձանները՝ անդրադառնալով նաև տեղի «կիկլոպյան» ամրոցներին (Աշխարհբեգ, Քարե դարը Հայաստանում, Նորք 5-6, Երևան, 1925, էջ 216-219): 20-րդ դ. 20-ական թթ. Անդրկովկասի «կիկլոպյան» հուշարձաններին, անդրադարձել է նաև Վ. Գուրկո-Կրյաժինը (Гурко-Кряжин В., Циклопические сооружения Закавказья, Новый Восток, книга 15, М., 1926, с. 212-221).

⁹ Пиотровский Б., Гюзалян Л., Крепости Армении доурартского и урартского времени, Проблемы истории материальной культуры № 5-6., Л., 1933, с. 51-59
Пиотровский Б., Ванское царство (Урарту), М., 1959, с. 89-92; Пиотровский Б., Археология Закавказья с древнейших времён до I тысячелетия до н.э., Л., 1949.

¹⁰ Мещанинов И., Циклопические сооружения Закавказья, Том XII., вп. 4-7, Л., 1932.

¹¹ Բարխուդարյան Ս., Վելիքուխի երկիրը, ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ 1, Ե., 1935, էջ 153-204:

նան Վ. Աբրահամյանը, ով 1930-ականների վերջերին հաշվառել և քարտեզագրել է մի շարք «կիկլոպյան» ամրոցներ¹²:

1960-ական թթ. Ս. Եսայանը և Կ. Ղաֆադարյանը պաշտպանական համակարգերի ուսումնասիրման և հնագիտական նյութեր հայտնաբերելու նպատակով Տավուշի մարզում ծավալեցին հնագիտական հետախուզական աշխատանքներ. չափազրվեցին, ուսումնասիրվեցին և հաշվառվեցին 6 պաշտպանական համակարգեր¹³: Նույն տարածաշրջանի «կիկլոպյան» ամրոցների խնդրին անդրադարձել է նաև Ս. Չիլինգարյանը¹⁴: 1983 թ. Լ. Պետրոսյանի կողմից ուսումնասիրվեց Շիրակի Քեթի գյուղի համանուն «կիկլոպյան» ամրոցը¹⁵:

Սևանա լճի պաշտպանական համակարգերի ուսումնասիրության և դրանց ռազմավարական նշանակության մասին¹⁶ մանրամասն անդրադարձել է Գ. Միքայելյանը: Նա, մասնագիտությամբ լինելով զինվորական, քննության առավ Սևանի ավազանի ամրոցների ինչպես կառուցման միջավայրը, այնպես էլ ռազմական դիրքի նշանակությունը¹⁷:

¹² Աբրահամյան Վ., Աշտարակի շրջան, Հայկական ԽՍՀ պատմական հուշարձանները IV, Ե., 1940:

¹³ Եսայան Ս., Ղաֆադարյան Կ., Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցների մասին, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, № 11, 1965, Ե., 80-88: Եսայան Ս., Древняя культура севоро-восточной Армении, Ե., 1976, с. 16-97; նույն տարածաշրջանում համատեղ ուսումնասիրություններ են կատարել նաև Ս. Եսայանը և Գ. Միքայելյանը. այդ մասին տես՝ Եսայան Ս., Микаелян Г., О некоторых циклопических крепостях Ноемберяна. Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև ՊԲՀ), № 1, Ե., 1972, էջ 269-276:

¹⁴ Չիլինգարյան Ս., Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները, ՊԲՀ., № 1, Ե., 1968, էջ 221-231:

¹⁵ Պետրոսյան Լ., Քեթի կիկլոպյան ամրոցը, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև ԼՀԳ), № 12 . Ե., 1983, էջ 62-72:

¹⁶ Սևանա լճի տարածքում ուրարտացիների հայտնվելու և այդ համատեքստում «կիկլոպյան» ամրոցների կառուցման խնդրին անդրադարձել է Վ. Շլեյեր (Шлеев В., К истории ванского царства (Урарту) второй половины VIII- первой половины VII вв. до н.э, Вестник древней истории, 1, М., 1958, с. 17-23).

¹⁷ Միքայելյան Գ., Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը ՊԲՀ, № 1, Ե., 1964, էջ 119-132; Միքայելյան Գ., Մարտունու շրջանի կիկլոպյան ամրոցները, ՊԲՀ, № 3, Ե., 1966, էջ 234-247; Միքայելյան Գ., Լճաշենի կիկլոպյան ամրոցի կոմպլեքսը, ՊԲՀ, № 1, Ե., 1965, էջ 284-290; Միքայելյան Գ., Եսայան Ս., Շամշադինի և Կրասնոսելսկի շրջանների կիկլոպյան ամրոցները, ՊԲՀ, № 3, Ե.,

«Կիկլոպյան» ամրոցների և դրանց կառուցման տեխնիկայի մասին շատ կարևոր է Գ. Սարգսյանի ուսումնասիրությունները, ով փորձեց գուգահեռ օրինակների հիման վրա տալ քարերի տեղափոխման սխեման¹⁸: 1950-60-ական թթ. Սևանա լճի ափամերձ շրջանների «կիկլոպյան» ամրոցներին անդրադարձել է նաև Հ. Մարտիրոսյանը¹⁹:

Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան պաշտպանական համակարգերի ուսումնասիրման²⁰, դրանց տիպաբանության և դասակարգման մեջ մեծ դեր ունեն Գ. Արեշյանը²¹ և Կ. Ղաֆադարյանը²²: Նրանք տի-

1968, էջ 289-296: Միքայելյան Գ., Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, պրակ 1, Ե., 1968:

¹⁸ Սարգսյան Հ., Հայաստանի բրոնզեդարյան շինարարական կառույցների մասին, ՊԲՀ., № 4, Ե., 1979, էջ 72-83:

¹⁹ Մարտիրոսյան Հ., Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Հայաստանի հնագիտական հուշարձանները, պրակ 2, Ե., 1969, էջ 7-16:

²⁰ Հայաստանի «կիկլոպյան» ամրոցների խնդրին անդրադարձել է նաև ակադեմիկոս ճարտարապետ Վ. Հարությունյանը (Арутюнян В., Каменная летопись армянского народа, Е., 1985, с. 8-10): Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև Միքայել Հովհաննիսյանին, որի աշխատանքն ունի աղբյուրագիտական մեծ նշանակություն՝ ներկայացնելով բոլոր դարաշրջանների Հայաստանի պաշտպանական համակարգերը, ըստ Մեծ Հայքի նահանգների ու գավառների (Հ. Միքայել Վ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1972): Դեռևս 1970-ականների սկզբին Լոռու շրջանում նոր «կիկլոպյան» ամրոցներ հայտնաբերել և հաշվառել է Վ. Ավետյանը (Ավետյան Վ., Կիկլոպյան ամրոցներ Շնողի տարածքում, ԼՀԳ № 6, Ե., 1979, էջ 112-114):

²¹ Գ. Արեշյանը 1978 թ. լույս տեսած իր հոդվածում փորձ է կատարում ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակվող ոչ ուրարտական URU («քաղաք») և É.GAL («պալատ», «ամրոց» «միջնաբերդ») ճարտարապետական կառույցների միջոցով տալ Հայաստանի ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան բնակավայրերի դասակարգումը՝ մանրամասն ուսումնասիրության ենթարկելով Էջմիածնի Մոխրաբլուր, Գազանոց, Օրգով, Նազրվան հուշարձանները (Арешян Г., Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков, Государственный музей искусства народов Востока, Научные сообщения X, М., 1978, с. 91-106):

²² Կ. Ղաֆադարյանը դեռևս 1972 թ. հրատարակած իր հոդվածում ուրարտական ամրաշինական համակարգերի ձևավորումը և զարգացումը կապում է Հայկական լեռնաշխարհում լայն տարածում գտած «կիկլոպյան» ամրոցների շինարարական ավանդույթների հետ, այս մասին տես՝ Ղաֆադարյան Կ., Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ, ՊԲՀ., № 2 Ե., 1972, էջ 151-162:

պարանել են Հայաստանի տարածքում առկա «կիկլոպյան» ամրոցների որոշ մասը՝ համեմատական եզրեր գտել ինչպես արագածյան խմբի, այնպես էլ Սևանի հարավային ավազանի պաշտպանական համակարգերի միջև²³:

3. 1990-ականներից սկսած նոր փուլ սկսվեց «կիկլոպյան» ամրոցների ուսումնասիրման բնագավառում²⁴, ներդրվեցին նորագույն տեխնոլոգիաներ և մոտեցումներ: Պաշտպանական համակարգերի ուսումնասիրության, խորհրդային շրջանում կատարված տոպոգրաֆիական հանույթների վերանայման ու թվային վերարտադրության մեջ մեծ նշանակություն ունեցավ 1995 թ. Ա. Սմիթի և Կ. Ղաֆադարյանի աշխատանքը: Թվայնացման աշխատանքները կատարվել է ԱՄՆ-ի Արիզոնայի համալսարանի Մարդաբանության բաժնում, որտեղ արխիվային հին տոպոգրաֆիական հանույթները վերանայվել են և համակարգչային «AutoCAD» ծրագրի միջոցով ենթարկվել թվային վերծանության և ոճական փոփոխությունների՝ համապատասխանեցվելով նորագույն տոպոգրաֆիական հանույթների գծագրման սխեմային: Այդ աշխատանքում հեղինակները ներկայացնում են Հայաստանի լեռնային շրջանների և Արարատյան ու Շիրակի հարթավայրերի պաշտպանական համակարգերից մի քանիսը²⁵:

Վերջին շրջանում պաշտպանական համակարգերի և դրանց տիպերի ուսումնասիրությամբ զբաղվել է հայ-իտալական համատեղ հնագիտական արշավախումբը (Հ. Սանամյան²⁶ և Ռ. Բիշոնի), որը

²³ Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը վաղ դասակարգային հասարակության և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում (մ.թ.ա. 3 հազարամյակի վերջին քառորդից մինչև մ.թ.ա 1 հազարամյակի սկիզբը), Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1996, էջ 68-87:

²⁴ 1990-ականներից սկսած մեծ հետաքրքրություն սկսվեց Արևմտյան Հայաստանի, մասնաորապես Վանի ավազանի ուրարտական, այդ համատեքստում նաև տեղի «կիկլոպյան» ամրոցների նկատմամբ այս մասին տես՝ Եսայան Ս., Քիլիմյան, Գ., Հայկաբերդ ամրոցը, ԼՀԳ, № 6, Ե., 1991, էջ 102-113; Եսայան, Ս. Աբաջյան, Լ. Վանի ավազանի բիսյնական ամրոցները (Արևմտյան Հայաստանի ուրարտական հուշարձանները շարքից), ՊԲՀ, № 1, Ե., 1995, էջ 209-224:

²⁵ Smith A. Kafadarian K., New Plans of Early Iron Age and Urartian Fortresses in Armenia, Iran, Vol. 34, 1996, London, p. 23-37.

²⁶ Սանամյան Հ., Լճաշենի բերդենի կազմավորման փուլերը և պաշտպանական համակարգը (մինչնախագծային ուսումնասիրություն), Հուշարձան տարե-

մանրամասն վերլուծության է ենթարկել և տիպաբանել Սևանի ավազանի պաշտպանական համակարգերը բրոնզ-երկաթի դարից մինչև միջնադար ընկած շրջանում²⁷:

Պաշտպանական համակարգերի ուսումնասիրման մեջ մեծ նշանակություն ունեցավ ArAGATS նախագծի շրջանակներում Չիկագոյի համալսարանի և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հայ-ամերիկյան համատեղ արշավախումբը (Ա. Սմիթ, Ռ. Բադայան), որը ուսումնասիրեց և հաշվառեց Արագածոտնի տարածաշրջանի մի շարք բնակավայրեր²⁸:

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև Լ. Կիրակոսյանի և Ա. Աղաջանյանի կողմից Արագածի Ղազարավան և Օրգով պաշտպանական համակարգերի ուսումնասիրությունը, չափագրությունները և նորովի մեկնաբանությունները²⁹:

Վերջին շրջանի ուսումնասիրություններից կարևոր է Գ. Մարգարյանի, Ա. Գնունու և Ա. Հակոբյանի կողմից ԼՂՀ Քաջաթաղի շրջանում նոր «կիկլոպյան» ամրոցների հայտնաբերումը, փաստագրումը և քարտեզագրումները³⁰:

2011-2014 թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը պեղումներ է իրականացնում Լոռու Մարգահովիտ և Գեղարքունիքի Սոթք 1, Սոթք 2 և Նորաբակ 1 հուշարձաններում, որտեղ կարևոր հարցադրումներից մեկը դիտակետ - ամրոցների և ամրոց - բնակատեղիների մանրամասն հետազոտությունն է՝ դրանց թվագրելու նպատակով: Արդեն կան առաջին արդյունքները, որոնք հնարավորու-

գիրք Զ, Ե., 2010, էջ 45-52: Լճաշենի «կիկլոպյան» ամրոցի ժամանակագրության խնդրին անդրադարձել է նաև Վ. Ավետյանը (Ավետյան Վ., Լճաշենի կիկլոպյան ամրոցի ժամանակագրության հարցի շուրջ, ԼՀԳ, № 1, Ե., 1994, էջ 142-150:

²⁷ Biscione R., Hmayakyan S., Parmegiani N., Sayadyan Y., Sanamyan H., The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, Documenta Asiana VII, Roma, 2002.

²⁸Smith A., Badalyan R., Avetisyan P., The Foundation of Research and Regional Survey in the Tsaghkahovit Plain, Armenia, The Oriental Institute, Chicago 2009.

²⁹ Կիրակոսյան Լ., Աղաջանյան Ա., Ղազարավանի և Օրգովի ամրոց-բնակատեղիները (Պաշտպանական համակարգի և ճարտարապետության շուրջ), Հուշարձան տարեգիրք Ը, Ե., 2013, էջ 71-80:

³⁰ Մարգարյան Գ., Գնունի Ա., Հակոբյան Ա., Սյունիքի արևելյան սահմանների պաշտպանական համակարգի ձևավորումը մ.թ.ա. 2-1-ին հազարամյակներում, Վեմ համահայկական հանդես Զ(ԺԲ) տարի, թիվ 1 (45) 2014, էջ 147-171:

թյուն են ընձեռում տարբերակիչ հատկանիշներ առանձնացնել բրոնզ-երկաթեդարյան ամրաշինական համակարգերի մեջ³¹: Մեր մոտակա խնդիրն է լինելու այդ տվյալների հիման վրա ավելի հիմնավոր տեսակետներ շրջանառել Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան ամրաշինական համակարգերի թվագրության և նշանակության վերաբերյալ:

HENRIK DANIELYAN

(IAE NAS RA)

MAIN STAGES OF INVESTIGATION OF "CYCLOPEAN" FORTRESSES IN ARMENIA

In this article we refer to the history of investigation of the so called "cyclopean" fortresses in Armenia, conventionally dividing it into three phases.

1. The first phase of the study of defense systems of ancient Armenia starts at the end of the 19th century and is connected with the names of Atrpet, T. Toramanyan, N. Mar (in Shirak and Aragats) and A. Ivanovsky (in Gavar).

2. The next phase begins in 30's of the 20th century, when A. Hajyan, L. Gyuzalyan, B. Piotrovskiy studied fortresses in the north-western parts of the mountain Aragats, I. Meshchaninov, S. Barkhudaryan - in western and south-western parts of the Sevan Lake basin. In 1960s S. Esayan, K. Ghafadaryan and S. Chilingaryan continued researches in Tavush region, and G. Mikaelyan in the Sevan Lake basin. Especially G. Areshyan and K. Ghafadaryan play an important role in typologizing of Bronze and Iron Age fortresses in 1980s.

³¹ Այս արշավախմբերի նախնական հաշվետվությունների համար հմմտ. Գևորգյան Ա., Բոբոխյան Ա., Մարգահովիտ բնակավայրի պեղումները, Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը, Միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2012, էջ 118-120; Kunze R., Bobokhyan A., Pernicka E., Meliksetian K., Projekt Ushkiani. Untersuchungen der Kulturlandschaft um das prähistorische Goldrevier von Sotk, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt – Landesmuseum für Vorgeschichte 67, Halle 2013, p. 49-88.


3. Since the 1990s a new phase has begun in history of research of the problem. Armenian-Italian joint archaeological expedition (S. Hmayakyan, H. Sanamyan and R. Biscione) classified the Sevan Lake basin defense systems, Armenian-American joint expedition (R. Badalyan, A. Smith) - that of Aragatsotn region. During 2011-2014 the Institute of Archaeology and Ethnography, NAS RA excavated in sites Margahovit (Lori region), Sotk 1, Sotk 2 and Norabak 1 (Gegharkunik region), with special reference to investigation of fortification systems in order to date them: already the first results are apparent, which allow separate distinguishing features among Bronze and Iron Age defensive structures.



Տ. Մուռ (1865-1935)
 (Արտի արդյունք Ա. Վրացք • Մեթուս.Երևան 1964 էջ 16)



Բ. Թրիսունյան (1864-1934)
 (Արտի արդյունք Ա. Վրացք • Մեթուս.Երևան 1964 էջ 33)



Լ. Չիրակչյան (1900-1994)
 (Արտի արդյունք http://www.hayazg.info/Հավանական_ձևեր_Կարտուզներ)



Ա. Հազգալ (1904-1938)
 (Արտի արդյունք http://www.hayazg.info/Աճյառ_Առյուծաբան)



Մարգահովտի «կիկլոպյան» ամրոցի վերված մուտքը



Սուրբ 1 «կիկլոպյան» ամրոցի հարավային պարսպաշարի վերված հատվածը



Նարարակ 1 «կիկլոպյան» ամրոցի հյուսիս-արևելյան մուտքի վերված հատվածը



Սուրբ 2 «կիկլոպյան» ամրոցի հյուսիսային մուտքի վերված պարսպաշարը

NSHAN THOMAS KSEKER
(YSU)

**LUGALZAGESI IN THE SHUSHGAL NET: EARLY DYNASTIC
ICONOGRAPHY OF KINGSHIP IN THE SARGONIC PERIOD**

Despite the radically different art of some Classical Sargonic (spanning the reigns of Naram-Sin and Sharkalisharri) artifacts, the Sargonic period retained significant amounts of Early Dynastic (ED) iconography. Some of the most enduring aspects of the civilization of Ancient Mesopotamia are its symbolic expressions of kingship and royal authority. From the semi-legendary Gilgamesh to Hammurabi, the kings of Mesopotamia provided their subjects (and occasionally their political neighbors) with ideals of authority that other rulers sought to emulate and, in many cases, surpass. Many motifs that were utilized consistently can clearly be visualized from textual sources, especially royal inscriptions from stela, temple offerings and ceremonial plaques. However, they can also be traced through the artistic depictions of kings and their actions. One of the symbols that signaled royal authority was the Shushgal Net, first appearing (as far as we know) in Eannatum's Stele of the Vultures.¹ One way that Sargon maintained ED traditions of kingship was by utilizing motifs that were well known in the region.

The Vulture Stele of Eannatum, king of Lagash, one of the most striking ED royal monuments, is echoed heavily in one of Sargon's most important artifacts - the remnants of his own stele found at Susa. The parallels between these two stela highlight Sargon's (and his successors) heavy ED influence. By examining the Sargonic monuments utilizing this motif, as well as the texts accompanying the usage of these images, a consistent yet evolving tradition of symbolizing royal authority can be traced in Mesopotamia from the Early Dynastic through Sargonic periods.

Eannatum's Stele of the Vultures is an excellent example of royal

¹ For a bibliography of this artifact and its inscription, see Frayne D., *The Royal Inscriptions of Mesopotamia Early Periods Volume I: Presargonic Period (2700-2350 BC)*, Toronto, 2008, pp. 126-140.

dominance in the ED period.² In the 25th century BCE, a series of border disputes between the city-states of Umma and Lagash saw the brief rise of the Lagashite ruler, Eannatum, to become a regional potentate in approximately 2450.³ After defeating Umma soundly, Eannatum repelled several attacks and pushed into territories of other city-states that opposed him, even going so far as to campaign in Elam and style himself a “king of Kish” in one inscription.⁴ It was during this period when Eannatum set up the “Stele of the Vultures” to commemorate his initial victory over his greatest rival, Umma, during the prolonged Umma versus Lagash border dispute⁵.

The Vulture Stele contains the first use of the Shushgal Net motif, both in the text and in the depiction. The king can be seen leading his army into battle. In the upper register, Eannatum is on foot, while in the second register he is in a chariot. In this depiction, the Lagashite army is arrayed in a shield-wall-like formation behind the king. Eannatum’s head is clean shaven, as are all the other troops. On the other side of the stele, vultures are picking at the corpses of the Ummaite soldiers – a display of what happens to those who oppose the king. Also pictured is the patron deity of Lagash, Ningirsu, holding the captured Ummaite forces in a “Shushgal Net,” bashing the king of Umma (also clean shaven) on the head with a mace (Figure 1). The Ummaite king is indistinguishable from the rest of his soldiers here. Though much of the stele is missing, it is clear from what



Figure 1. The Shushgal Net on the Vulture Stele, showing Ningirsu smiting the king of Umma. Image courtesy of http://upload.wikimedia.org/wikipedia/commons/4/4d/Stele_of_Vultures_2.jpg

² Magid G., Sumerian Early Dynastic Royal Inscriptions, in *The Ancient Near East: Historical Sources in Translation*, edited by Chavalas M. W., 4-16. Oxford, 2006, p. 7.

³ Van de Mieroop M., *A History of the Ancient Near East ca. 3000-323*, Oxford, 2007, p. 41.

⁴ Magid G., Sumerian Early Dynastic Royal Inscriptions, p. 8.

⁵ For an in depth look at the importance of the Vulture Stele in the development of Mesopotamian depictions of historical events, see Winter I., *After the Battle is Over: The “Stele of the Vultures” and the Beginning of Historical Narrative in the Art of the Ancient Near East*, Washington, 1985.

remains that Eannatum intended for it to represent his victory over his rival against the odds, since apparently, his victory brought the force of many other Mesopotamian cities to bear on Lagash. Eannatum is shown as a hero, leading troops fearlessly at the front of his army. The Ummaites are shown to be completely powerless in the face of Eannatum since Lagash had the will of their god Ningirsu on their side, as illustrated by the "Shushgal" Net motif. Though Eannatum does show himself to be a great military leader, he gives Ningirsu the credit for the victory, with the god being the one to smite the captured king. Thus the Shushgal Net is not only a powerful image on its own, but it is also associated with Eannatum's more straightforward depictions of his unmatched power. It was important for him to include this scene out of a sense of piety and gratitude to Ningirsu for his divine assistance in the battle.




Figure 2. Reconstruction of Sargon's Shushgal Net motif, by Nigro. Note Lugalzagesi's (?) hair. Image from <http://sumerianshakespeare.com/media/2bb5ecf2c805583affff820ffeffe415.jpg>

Though Eannatum's political successes were short-lived, his efforts were apparently not forgotten, as shown by the fragments of a victory stele of Sargon. Sargon's stele is heavily damaged and the vast majority is missing, but the little of it that remains is telling of the influence of late Early Dynastic iconography. Sargon is depicted leading his army on foot, just like Eannatum. There are significant differences: first, the soldier directly behind Sargon is holding a parasol above the king, and the soldiers are armed with axes rather than spears (thus in a more loose formation than a shield-wall).⁶ Sargon's alterations to the Shushgal Net motif are also important. Though this fragment is highly damaged, Nigro reconstructs (Figure 2) from the remaining portion that the figure holding the captured enemies in the net is none other than Sargon himself, rather than a specific patron deity (which in the case of Akkad would have been Ilaba).⁷ In this regard, Sargon uses the

⁶ Nigro L., *The Two Steles of Sargon: Iconology and Visual Propaganda at the Beginning of Royal Akkadian Relief*, Iraq, vol. 60, 1998, p. 92.

⁷Ibid., p. 91.

same motif, but alters it to suit his own personal ideology. Rather than granting credit for the smiting of his foes to a god, he takes the martial glory for himself as a sort of offering to the Warlike Ishtar, who is seated in front of this action.⁸ Sargon is thus emulating ED rulers very closely in the stele, with similar scenes of leading his marching army and the Net, but he also injects his own unique concepts into the stele by inserting himself into the role that had been reserved for the city-god. Though Sargon does show his piety by performing this act in front of Ishtar, he wants himself to be the one smiting his mortal opponents rather than delegating credit to divine assistance for his achievements on the battlefield. Also critical is the image of the king in the Net being vanquished by Sargon. This king is probably Lugalzagesi.⁹ He is shown as distinct from his troops, with his long hair hanging down. Thus the Shushgal Net evolved to be even more personal for Sargon than it had been for Eannatum, with the various alterations adding to the Akkadian king's individual prestige.

The case of these monuments to royal achievements is important to seeing the development of iconography and symbolism in the mid-third millennium. Kings were becoming more overt in their depictions of military acts, and this was apparent both in the textual and artistic record. Though the Shushgal Net is not attested after Sargon's Victory Stele, the fact that Sargon would look back to Eannatum for iconography shows how much continuity and conservatism there was in Mesopotamian symbolism and kingship. At its core, the imagery utilized in these depictions convey the same message as in the ED, and shows Sargon's (and perhaps his successors?) indebtedness to past kings rather than an inclination to revolutionize kingship. It is also important for the fact that despite being "forgotten" in the historical literary tradition, ED royal ideology remained very important into the Sargonic period. Though many of their names may have been lost in time, the royal ideology and iconography of ED kings remained strong well into the Sargonic period, illustrating the inseparable nature of the two periods. Rather than being an unprecedented revolutionary dynasty in the history of Mesopotamia, Sargon and his successors may have been more similar ideologically to ED monarchs than previously thought.

⁸ Ibid., p. 87.

⁹ Nigro L., *The Two Steles of Sargon*, p. 87.

**ՆՇԱՆ ԹՈՄԱՍ ՔՍԵՔԵՐ
(ԵՊՀ)**

**ԼՈՒԳԱԼԶԱԳԵՍԻՆ «ՇՈՒՇԳԱԼ» ՑԱՆՑՈՒՄ. ՎԱՂ ԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՐԳՈՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ**

Ուսումնասիրողները գտնում են, որ Միջագետքում կայսրության և իմպերիալիզմի հիմքերը դրվել են Սարգոնի ու նրա հետնորդների (Ք.ա. 2350-2250 թթ.) կողմից՝ հիմնվելով վերջիններիս և Վաղ Դինաստիական դարաշրջանի (Early Dynastic Period Ք.ա. 2900-2350 թթ.) տիրակալների գաղափարական և պատկերագրական տարբերությունների վրա: Հոդվածում ուսումնասիրության են ենթարկվում Վաղ դինաստիական դարաշրջանի և Սարգոնյան հարստության ժամանակաշրջաններից մեզ հասած «Շուշգալ» ցանցերի պատկերներն ու գրությունը: Շոշից գտնված Սարգոնի «Շուշգալ» ցանցի պատկերը, թերևս, լավագույն փաստն է, որն ապացուցում է Վաղ դինաստիաների ժամանակաշրջանի և Սարգոնյան դինաստիայի միջև գաղափարական և պատկերագրական ժառանգականությունը:

ՎԱՀԵ ՄԱՐԳՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՆ ՄԻՆՈՒԱՅԻ ՕՐՈՔ՝
ԸՍՏ Կ. Ֆ. ԼԵՄԱՆ-ՀԱՌՈՒՊՏԻ

Գերմանացի արևելագետ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը (1861-1938 թթ.) Բիայնիլիում Մինուայի (մ.թ.ա. 810-786 թթ.¹) միանձնյա գահակալության տարիների իրողությունները վերականգնելիս առանձնահատուկ ուշադրություն է հատկացրել դեռևս Իշպուլինիի օրոք մայրաքաղաք դարձած² Տուշպայի հետագա ընդլայնման և ջրապահովման հանգամանքին: Հետագոտողը կարծում է՝ Մինուան է եղել առաջին ավանքադաքի հիմնադիրը՝ Վանա միջնաբերդից հարավ³: Մինչ ավանի հիմնումը, հարկավոր էր բնակչության համար անհրաժեշտ ջրի ապահովումը, որը Մինուան լուծեց իր կառուցած ջրանցքի միջոցով⁴: Ջրանցքը

¹ Լեման-Հաուպտը Մինուայի կառավարման ժամանակաշրջանը թվագրում է մ.թ.ա. 810-778 թթ. (տե՛ս u Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt (այսուհետև՝ AEJ), Bd. II/1, Berlin-Leipzig, 1926, էջ 25): Հարկ է նշել, որ ներկայումս Մինուայի կառավարման ժամանակաշրջանի ավանդական թվագրումը (մ.թ.ա. 810-786թթ.) պայմանական է. կառավարման ստորին տարեթիվը վիճարկելի է (տե՛ս u Fuchs A., Urartu in der Zeit, Biainili-Urartu, The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007, "Acta Iranica", 51, Peeters, 2012, էջ 150-153, 158, Գրեկյան Ե., Արգիշթի I արքայի գահակալության տարիների վերաթվագրության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, 2016, էջ 178-190):

² Տե՛ս u AEJ, Bd. II/1, էջ 21:

³ «Սարդուրիի բերդի» մոտ գտնվող, Վանա ժայռի հարավային կողմի՝ ածխաթթու պարունակող, կամ՝ Վարագա լեռների լանջից սկսվող և միջնաբերդին խմելու ջրով ապահովող աղբյուրները չէին կարող արդեն բավարարել աճող քաղաքային բնակչությանը (տե՛ս u AEJ, Bd. II/1, էջ 33-34, Bd. II/2, Berlin-Leipzig, 1931, էջ 852):

⁴ Խեթական թագավորությունում դեռևս երկրորդ հազարամյակում ամբարտակաշինության միջոցով կառուցում էին ջրամբարներ: Բիայնիլիում արդեն մ.թ.ա. 9-րդ դարում հայտնի էր ամբարտակաշինությունը՝ ավելի կատարելագործված ձևով: Բիայնական ամբարտակները կառուցված են երկու կամ երեք քարե պատանման շերտերից՝ առանց ցեմենտաշաղախի, միջուկում՝ ջրից մեկուսացված կավ պարունակող հողի շերտերով: Աքեմենյան ամբարտակները ունեն ջրից մեկուսացված կավ պարունակող մեկ հողե միջուկ, որն ամրացված է

սկզիբ է առնում 1800 մ բարձրությունից և հոսելով 54 կմ հասնում է Վանի Այգեստան թաղամասը, որը գտնվում է ծովից 1750 մ բարձրության վրա⁵: Այն, հավանաբար, մայրաքաղաք Տուշպա է մատակարարել վայրկյանում 1-1,5 մ³ տարեկան 20-30 մլն մ³ ջուր⁶:

Լեման-Հաուպտն անձամբ 1898 թ. նոյեմբերի 13-15-ին հետազոտել է ջրանցքը⁷ և նշում է, որ ջրանցքը սնող աղբյուրը սկիզբ է առնում Խոշաբ գետից 5 կմ հվ. գտնվող, 30-40 (իրականում՝ 54) մ լայնությամբ ժայռի ճեղքերից և ստորին հատվածից⁸: Այնուհետև հողով և քարերով ամբարտակված այն հոսում է հյուսիսարևելյան ուղղությամբ դեպի Վերին Մժնկերտ⁹: Վերին Մժնկերտի մոտ ջուրը շյուզով հավաքվում է բավական կարևոր նշանակություն ունեցող արհեստական լճակում¹⁰:

երկու քարե շերտերով և էրոզիայից ու ավերախությունից մեկուսացված թեք իջնող քարե և հողե շաղախով (տե՛ս W. Kleiss, Urartäische und achämenidische Wasserbauten, Biainili-Urartu, էջ 61-76):

⁵ Մ. Սավլինին նույնպես մայրաքաղաքի հիմնադրումը կամ ընդարձակումը, բնակչության աճից հետո, որը նաև Իշպունիի և Մինուայի ռազմական արշավանքների ժամանակ տեղահանված գերիների զանգվածով էր պայմանավորված, աղերսում է Մինուայի ջրանցքի հետ (տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995, էջ 126-127):

⁶ Տե՛ս Garbrecht G., Historische Wasserbauten in Ostanatolien-Königreich Urartu, 9.-7. Jh. v. Chr., "Wasserbauten im Königreich Urartu und weitere Beiträge zur Hydrotechnik in der Antike: Schriften der Deutschen Wasserhistorischen Gesellschaft", Bd. 5, Siegburg, 2004, էջ 31:

⁷ 20-րդ դարում ջրանցքը թուրքական կառավարության կողմից բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել. ներկայումս անփոփոխ է մնացել միայն ակունքից մինչև Իշխանիզումի և Անգոլի միջև ընկած հատվածը (տե՛ս Garbrecht G., նշվ. աշխ. էջ 30-31): Լեման-Հաուպտի սույն նկարագրությունը ներկայումս անփոխարինելի աղբյուր է ջրանցքի նախնական վիճակի մասին (տե՛ս AEJ, Bd. II/1, Einundzwanzigstes Kapitel. Der Menuas-Kanal, էջ 95-109, Lehmann-Haupt C. F., Corpus Inscriptionum Chaldicarum (այսուհետ՝ CICH), Bd. I/II, Berlin-Leipzig, 1928-1935, N 34-46): Հեղինակի վկայած առանձնակի կարևորություն ունեցող փաստերը ջրանցքի վերբերյալ ստորև տրված են:

⁸ Նախկին հունը օգտագործվել է ջրանցքի ճյուղավորությունների համար: Վերին Մժնկերտի հատվածում ջրանցքն ունեցել է 4,5 մ լայնություն և 1,5 մ խորություն (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 97):

⁹ Հակառակ ուղղությամբ նույնպես ձգվել է ջրանցքի փոքր ճյուղավորություն՝ Խոշբ գյուղը ոռոգող (տե՛ս նույն տեղում):

¹⁰ Վերին Մժնկերտի հյուսիսային կողմում արհեստական առունների միջոցով բաժանվում է քառասուն ճյուղի՝ 20-ը աջ ափին և նույնքանը՝ ձախ՝ սնելով ջրա-

Այնուհետև հոսում է դեպի Ներքին Մժնկերս՝ բարձրացված հունով. Խոշաբ գետի վրայով՝ 3մ բարձրությամբ ջրանցքն անցնում է գերաններինց պատրաստված 14-15մ ջրանցույց կամրջով¹¹: Իշխանիգոմ գյուղի մոտ ջրանցքի ձախ եզրը աջից 20 մ հեռավորության վրա է. հենապատի միջոցով ջրանցքի հարևան լեռան լանջը ամրացված է (3-4մ)՝ ջրերի ճնշման հետևանքով փլուզումից խուսափելու համար¹²: Հայոց ձորից հյուսիս թեքվող ուղղությամբ, Մինուայի ջրանցքի ճյուղավորման փողոսին անցնում է շաղափված ժայռերի միջով, որի վրա գտնվել են երեք ջրաղացներ, որոնց շահագործումը մոտ է տուրքինային սկզբունքին, որը նաև հետագայում ողջ Հայաստանում կիրառելի է եղել¹³:

Խուրկում գյուղի եկեղեցու բակում, սյունախարսի վրա գտնված արձանագրությունից ելնելով, Լեման-Հաուպտը կարծում է, որ այստեղ Մինուան կառուցել է քաղաք ու ամրոց: Արձանագրությունում հիշա-

ղացները: Խոռնուրդ գյուղի մոտ առվակները միավորվել են (տե՛ս Ս. Տեր-Ավետիսյան, Ուրարտական թագավոր Մենուաս առաջինի կառուցած ջրանցքը, «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի, N 3-4, Երևան, 1941, էջ 38):

¹¹ Արիել Մ. Բագը, համեմատելով բիայնական և ասորեստանյան ոռոգման համակարգերը, նշում է, որ այս միակ պահպանված արվեղուկն իր չափերով զգալի զիջում է ասորեստանյաններին (տե՛ս Ariel M. Bagg, Zur Technologie altorientalischer Bewässerungssysteme: Technologietransfer in Nordmesopotamien im 1. Jt. v. Chr., "Wissenskultur im Alten Orient: Weltanschauung, Wissenschaften, Techniken, Technologien: 4. Internationales Colloquium der Deutschen Orient-Gesellschaft, 20-22. Februar 2002, Münster", Wiesbaden, 2012, էջ 351): Կամրջից 100 մ ներքև գտնվում է ջրանցքի կառուցման վերաբերյալ առաջին արձանագրությունը (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 99): Ըստ Վ. Բելքի՝ արձանագրություններ կանգնեցվել են կառուցման ժամանակ առանձնակի բարդություն ներկայացնող հատվածներում (տե՛ս W. Belck, C. F. Lehmann, Ueber neue armenische Keilinschriften., "Zeitschrift für Ethnologie", Bd. 24, Berlin, 1892, էջ 138):

¹² Ջրանցքը հենապատերով անցկացված է Անգղ գյուղի մերձակայքից՝ 1-2 մ բարձրությամբ՝ մինչև Արտամետ. Կատեպանցի մոտ այն հասնում է առավելագույն բարձրության՝ 11-12 մ և հավանաբար եղել է 17-18 մ (տե՛ս Garbrecht G., նշվ. աշխ. էջ 28):

¹³ Հեղինակը ջրաղացների բիայնական ժամանակաշրջանով թվագրումը հիմնավորում է ճյուղավորման ժայռափոր լինելու և ջրաղացները աշխատեցնելուց զատ՝ այլ նշանակություն չունենալու հանգամանքով (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 101):

տակվող Մինուայի կառուցած շինությունը (aših=usi) գտնվել է այստեղ¹⁴: Ամրոցը հսկել է Խոշաբի գետաբերանը, Հայոց ձորը, Մինուայի ջրանցքն ու Վանա լճի հարավարևելյան մասը¹⁵:

Իշխանիգումից դեպի Կատեպանցի կիրճն ընկած հատվածում, ջրանցքի կառուցման ժամանակ շրջանցել են մի հսկայական կիրճ, որի հաղթահարմամբ ջրանցքը կարելի է համարել Հին աշխարհի հիդրոտեխնիկական կառույցների առաջատարը¹⁶: Կիրճը ձգվում է լեռների արևելյան ուղղությամբ, որի հարավային կողմի երկարությամբ անցկացվել է ջրանցքի պատը: Այնուհետև կտրուկ ուղղանկյուն թեքմամբ, դարձյալ փայտից կառուցված ջրանցույցով ջրանցքը անցկացվել է կիրճի վրայով՝ 6 մ բարձրությամբ: Անցնելով կիրճի հյուսիսային կողմը՝ ջրանցքը թեքվում է արևմուտք և շարունակում է հոսքը՝ 30-40 սմ խորությամբ և 90-110 սմ լայնությամբ:

Ջրանցքը հյուսիսային ուղղությամբ շարունակվում է մինչև Կատեպանցի կիրճ: Այն ավելի լայն է քան վերոնշյալը և ավելի քիչ է մխրճվում լեռները, հետևապես այստեղ կիրճի վերևով անցկացման կարիք չի եղել. արևելքից կիրճը եզերող տարածքը, որն ավելի բարձր է Վանա լճից, օգտագործվել է ջրանցքի անցկացման համար: Այստեղ՝ Մինուայի ջրանցքի հարևանությամբ, Մինուան իր կնոջ՝ Թարիրիայի համար¹⁷, կառուցել է խաղողի այգի, հավանաբար՝ կից ամառանոցով¹⁸:

¹⁴ Բլրի ներքևում գտնվել է քարե պարիսպ (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 102, CICH, N 78, CTU, vol. I, A 5-65C): Մ.Սավլինին այն թարգմանում է ճաշկերութային սրահ (Salvini M., Wegner I. Einführung in die urartäische Sprache, Wiesbaden, 2014, էջ 108): Ըստ Մ. Հմայակյանի աշխուսեն տաճարի տեսակ է՝ ամբարով և գանձատնով (տե՛ս Հմայակյան Մ., Քաղաքային գանձատուն-թանգարանը Վանի թագավորությունում, «Անտառ ծննդոց», Երևան, 2015, էջ 134): Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նշում է, որ հետագայի քրիստոնեական տաճարները կառուցված են այն վայրերում, որտեղ նախկինում եղել բիայնական պաշտամունքային կառույցներ (տե՛ս AEJ, Bd. I, էջ 3-4):

¹⁵ Ն. Հարությունյանը այս տեսակետը վերագրում է Բ. Պիտրովսկուն, սակայն այն Լեման-Հաուպտի հետազոտությունների արդյունքն է (տե՛ս Арутюнян Н. В., Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 22):

¹⁶ Տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 103:

¹⁷ Տե՛ս Salvini M., Carl Friedrich Lehmann-Haupt und die Urartu-Forschung, Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Forscherleben zwischen Orient und Okzident, "Classica et Orientalia", Bd. 11, Wiesbaden, 2015, էջ 160|.

¹⁸ Հեղինակը նշում է, որ արձանագրության դիմաց առկա է դարավանդ՝ 18 մետր լայնությամբ և 70 մետր երկարությամբ: Թագուհու հանդեպ նման ուշադրու-

Ջրանցքը մինչ արևմուտք թեքվելը մի քանի մետր խորությամբ ստոր-երկրյա խորշի մուտք ունի¹⁹:

Մինուայի ջրանցքը դարձյալ փաստում է Բիայնիլիում բարձր զարգացման հասած ժայռակոփության, քարակոփության, մետաղագործության, կավագործության և արհեստագործության այլ ճուղերի մասին²⁰: Թե ինչ գիտելիքներ էին հարկավոր բիայնացի վարպետներին, բարձրությունները և զառիվայրերը մետր առ կիլոմետր հաշվելու համար մնում է դեռևս անհայտ²¹:

Լեման-Հաուպտը միջնաբերդի հյուսիսային կողմում իր գտած, և Վանա ժայռի արդեն հայտնի ժայռափոր սենյակի (20,55 մ երկարություն, 8 մ լայնություն, 2,55 մ բարձրություն) մուտքի աջ կողմում գտնվող, միանման արձանագրություններից ելնելով՝ իրավացիորեն կարծում է, որ Մինուան նաև Վանա միջնաբերդում է իրականացրել

թյան դրսևորումը վկայում է նաև Վանի թագավորությունում կանանց վերապահված կարևոր դերակատարությունը (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 107-108, 264, CICH, N 57, CTU, vol. I, A 5 A-1): Գ. Ղափանցյանը նշում է, որ այն կարծես արձագանքը լինի Շամիրամի այգիների (Ղափանցյան Գ. Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 154):

¹⁹ Տե՛ս AEJ, II/1, էջ 109: Լեման-Հաուպտը սույն իրողությունն աղերսում է Պատմահոր երկրում նշվող հաղորդման հետ «Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականաս փախստեամբ ամրանան» (Մովսէս Խորենացի (այսուհետև՝ Մովսէս Խորենացի), Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 52: Հնարավոր է, որ այս խորշը ծառայել է ջրանցքի վիճակի ուսումնասիրման և հնարավոր նորոգումների համար. նման խորշեր հաճախ են հանդիպում: Ջրանցքի՝ Արտամետից Վան ընկած հատվածը հիդրոտեխնիկական առումով առանձնակի հետաքրքրություն չի ներկայացրել հետազոտողի համար (տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 109): Լեման-Հաուպտի սույն նկարագրությունը հավանաբար վերաբերում է «ըղտատուն» անվանված վայրին (տե՛ս Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառուս Արևելյան Տաճկաստանի, հ. Բ, Կ.Պոլիս, 1885, էջ 236):

²⁰ Անդրադառնալով Պատմահոր երկրում վկայված կառուցման ավանդությանը՝ ասորեստանցիների և նրանց տիրապետության տակ գտնվողների ներգրավված լինելու հանգամանքին՝ 42000 բանվոր և 6000 արհեստավոր, Լեոն նշում է. «Այսպիսի հսկայական կերտվածքներ, կիկլոպյան պատեր լեռնցու ձեռքից կարող էր դուրս գալ» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 52, Լեո, Հայոց պատմություն, հ. I, Երևան, 1966, էջ 217):

²¹ Տե՛ս Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 127:

աշխատանքներ²²: Ժայռափոր սենյակի մուտքից ձախ, նկատելի է նաև ջրի համար նախատեսված ժայռափոր փողրակ: Ըստ հետազոտողի՝ հավանաբար առկա է եղել կապ այս ժայռափոր սենյակի և ներքևում՝ (մոտ 200 մ արևելք) ժայռե որմնախորշերում գտնվող Մինուայի երեք այլ արձանագրությունների միջև՝ ջրհորներ փորելու և կառուցելու վերաբերյալ: Մուտքից ձախ՝ ավելի բարձր քան այս սենյակն է, նկատելի է ժայռերի մեջ փորված ջրի փողրակ, իսկ 3 արձանագրությունների վերևում գտնվում է լայն սանդուղք, որը տանում է դեպի սույն ժայռափոր սենյակ²³:

Պատմահոր վկայած ավանդությունը, Մինուայի ջրանցքի ու նաև քաղաքի կառուցումը որպես փոխկապակցված իրողություն, Շամիրամ

²² Արձանագրություններում Մինուան նշում է, որ «այս տեղն արեցի ախոռ»: Հետազոտողը իրավացիորեն կարծում էր, որ ի դեմս արձանագրությունում նշվող *siršini-ի*՝ հարկ է հասկանալ ժայռափոր սենյակը, իսկ *esi-ին*՝ տեղ: Ժայռափոր սենյակում պահվել են զոհաբերության համար նախատեսված կենդանիներ՝ ոչխարներ և արջառներ (տե՛ս AEJ, Bd. II/1 էջ 29-32, CICH, N53, 54, Sp. 143, CTU, vol. I, A5-68, A5-69, հմմտ. Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001, N 80z, 81z: Մ. Սավլինին, *անդրադառնալով* սույն արձանագրություններին, նշում է, որ մայրաքաղաքը պիտի *տնտեսապես* լիովին ապահովված լիներ, որը նաև փաստում է Վանա ժառի հյուսիսարևմտյան հատվածի՝ հացահատկի պահեստի արձանագրությունը՝ (տե՛ս Salvini M, Tušpa, die Hauptstadt von Uratu, in: V. Haas (Hrsg), Das Reich Urartu. Ein altorientalisches Staat im 1. Jahrtausend v. Chr., "Xenia", 17, էջ 36-67, CTU, vol. I, A 5-67):

²³ Տե՛ս CICH, N 87a-c: CTU, vol. I, A 5-58 A-C: Salvini M., Geschichte und Kultur der Urartäer, էջ 148: Համեմատության առումով անչափ ուշագրավ է Ս. Տեր-Ավետիսյանի հաղորդումը Արտամետի 3 ժայռափոր սենյակների վերաբերյալ, որոնք հար և նման են այս սենյակներին. «Ժայռի մեջ փորված է մաքուր հղկված մի արհեստական այր, որի միջին մասը բաղկացած է միակտուր քարից հանած քառապուն մի սենյակից: Երկու կողմին կան երկու ուրիշ փոքրիկ անսյուն սենյակներ, որոնցից արևելյան ծայրի սենյակն ունի ավազան կամ լողարան, որի միջի ջուրը հոսելիս է եղել ժայռի մեջ փորված նավակով: Սրանք վերևից ունեցել են քարակոփ աստիճաններ: Ժայռի մոտ կա մեկ հեկտարի տարածություն, որի վրա գտնվել են շենքերի և պարսպի մնացորդներ» (Ս. Տեր-Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 42): Այս հաղորդումը վկայում է, հավանաբար, Մինուայի կառուցած ևս մեկ ամրոցի մասին, ջրանցքի հարևանությամբ, ամրոցներ, որոնք հսկում էին մայրաքաղաքի համար կենսական նշանակություն ունեցող ջրանցքը:

թագուհու հետ է կապում²⁴: Այս հանգամանքը դարձյալ հուշում է, որ Մինուան է եղել Վանա միջնաբերդից հարավ ընկած քաղաքի կառուցողը: Պատմահայրը, հավաքելով Շամիրամի առասպելի անտիկ և հայկական թելերը, միահյուսել է իր «Հայոց պատմության» մեջ²⁵:

Լեման-Հաուպտը ենթադրում է, որ Մինուայի ժամանակակից և ախոյան Շամիրամի առասպելն առաջացել է օտար՝ մարական և բիայնական միջավայրում²⁶: Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.) հետ բիայնացիները բախվել էին սեփական երկրում, սակայն նրա որդու՝ Շամշի-Ադադ V-ի (մ.թ.ա. 823-811 թթ.) և այնուհետև թոռան՝ Ադադ-նիրարի V-ի (մ.թ.ա. 810-783 թթ.) օրոք ձեռնարկված արշավանքների արդյունքում բիայնացիները մտան Մանա՝ անմիջական շփման մեջ հայտնվելով Ասորեստանի հետ²⁷: Առասպելը, համաձայն հեղինակի,

²⁴ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 53-54:

²⁵ Տե՛ս Սարգսյան Գ. Խ., Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները (Հայկի և Հայկյանների առասպելի պատմականության և զարգացման փուլերի խնդիրը), Պատմաբանասիրական հանդես, N 2-3, Երևան, 1992, էջ 33:

²⁶ Տե՛ս Lehmann-Haupt C. F., Die historische Semiramis und ihre Zeit, Tübingen, 1910, էջ 51: Արդեն հետագայում Լեման-Հաուպտը որպես փաստարկ, որ Շամիրամի առասպելի առաջացման համար առավել կարևոր դերակատարություն են ունեցել բիայնացիները, նշում է Ռուսա I-ինի (մ.թ.ա. 735-714թթ.) իշխանության գալու առասպելի մոտիվը, որը հետագայում հանդիպում է Հերոդոտոսի մոտ Դարեհ I-ի (մ.թ.ա. 521-486թթ.) հետ կապված: Ըստ հեղինակի՝ լեգենդը բիայնացիներից մարերի միջոցով անցել է պարսիկներին (տե՛ս AEJ, Bd. II/2, էջ 853-855, Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту.- Вестник древней истории, М., 1951, N 2-4, N 49(367), Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, էջ 194-195, նաև՝ Գիրշան Ռ., Աքեմենյան քաղաքակրթությունը և Ուրարտուն, Իրան Նամե, N 5, Երևան, 1995, էջ 5): Շամիրամի կերպարի առասպելականացումը կարող էր տեղի ունենալ մ.թ.ա VIII դարից հետո, բիայնական միջավայրի մասնակցությամբ ու միջնորդությամբ, կամ՝ արդեն հայկական միջավայրում (տե՛ս Սարգսյան Գ., նշվ. Աշխ, էջ 33):

²⁷ Տե՛ս AEJ, Bd. II/2, էջ 853: Մինուայի՝ Մանա կատարած արշավանքները, Ն. Հարությունյանը հիմնվելով ասորեստանյան աղբյուրների տվյալների վրա, թվագրում է մ.թ.ա. 807-806թթ. (Арутюнян Н. В, Биайнили-Урарту, Санкт-Петербург, 2006, էջ 139): Մ. Սալվինին Բուշտու կատարած արշավանքի հետ է կապում Մանայի արշավանքը՝ այդ արշավանքի շարունակությունը կամ կրկնությունը համարելով: Հետազոտողը նման եզրակացություն է կատարում, Իշպուինիի և Մինուայի՝ Խառակոնիսի արձանագրության տվյալների հետ համե-

մարերի և բիայնացիների դեմ Շամիրամի և նրա որդու մղած համառ պայքարի արձագանքն է: Քանի որ Ասորեստանի ճակատագիրը որոշ ժամանակահատված կին էր տնօրինում, այս հանգամանքը վճռորոշ եղավ ախոյանների մոտ սաքի առաջացման համար²⁸: Անդրադառնալով Կոտեսիասի հիշատակած առասպելական Նինոսի՝ Շամիրամի ամուսնու հետ կապված եղելություններին, Լեման-Չաուպտը նշում է, որ Կոտեսիասի մոտ ընդգծված են հատկապես արևելքում՝ Մեդիայի և հյուսիսում՝ հետագայում որպես Արմենիա հիշատակվող երկրի ժողովուրդները²⁹:

Արարատ լեռան հյուսիսային կողմում՝ Յուլկերտից (Կարա-կոյնլու) 4 կմ հեռավորության վրա գտնվող ամրոցից հայտնաբերված

մատելով և կարծում է, որ հիմնական թիրախը եղել է Մեծշտա քաղաքը (տե՛ս u Salvini M., *Geschichte und Kultur der Urartäer*, էջ 41, 51, CTU, vol. I, A 3-9 A 5-11A,):

²⁸ Լեման-Չաուպտը կարծում է, որ առասպելը Միջագետքում ևս մարերի և պարսիկների միջոցով է տարածվել, մինչ Երկագետքի նվաճումը: Հեղինակը ենթադրում է նաև, որ հայերին նույնպես նրանց միջոցով կարող է անցած լինել, քանի որ հեղինակը համակարծիք էր հայերի ներգաղթի տեսությանը: Աքեմենյան արքունիքում ապրած Կոտեսիաս Կնիդացու վկայությունները Շամիրամի առասպելի մասին որպես սաքի առաջացման հիմնավորում վկայակոչելը միանշանակ չէ. այն կարող է վկայել սոսկ առասպելի գոյությունը նաև պարսից արքունիքում (տե՛ս u AEJ, Bd. II/1, էջ 257-258, 264): Թագուհու կերպարը կարող էր առասպելական դառնալ ինչպես բուն Միջագետքում, այնպես էլ՝ հարևան ժողովուրդների մոտ: Հարկ է նշել, որ մարերին վերագրվող աշխարհակալությունը, և դրանից բխող վերականգնումները նույնպես վիճարկելի են (տե՛ս u Գրեկյան Ե., Մարաստանի «վերելքը և անկումը», - Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Երևան, 2014, էջ 272-278):

²⁹ Անհիմն չէ Կոտեսիասի հաղորդումը, որ Նինոսը Հայաստանի արքա Բարգանեսին չի գրկում իշխանությունից. այն վկայում է Հայկական լեռնաշխարհում վերելք ապրող, Ասորեստանի հետ հարատև պայքարի մեջ գտնվող պետության գոյությունը: Եզիպտոսում գտնված պապիրուսի հունարեն տեքստում նշվում է, որ Նինոսը հանուն սիրեցյալի՝ զարմուհու (իմա՝ Շամիրամ) արջավում է Հայաստան (տե՛ս u Lehmann-Haupt C. F., *Die historische Semiramis und ihre Zeit*, էջ 10-11, AEJ, Bd. II/1, էջ 257, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 14, Դիոդորոս Միկիլիացի, Պատմական գրադարան, Երևան, 1985, էջ 27): Հրատարակիչը նշում է, որ սույն տարբերակի համար հիմք է հանդիսացել Դիոդորոսի հաղորդած Նինոսի և Շամիրամի առասպելը (տե՛ս u Wilcken U., *Ein neuer griechischer Roman*, *Hermes. Zeitschrift für classische Philologie*, Bd. 28, Berlin, 1893, էջ 188-189):

Մինուայի երկու արձանագրությունները վկայում են՝ Էրիկուախի (Էրիկուա ցեղի) երկրի և Լուխիունի արքայական քաղաքի նվաճման և ամրոցի կառուցման մասին³⁰: Լեման-Հաուպտը, սույն արձանագրությունների և Ցոլակերտի հետ կապված, անդրադառնալով Պատմահոր երկում վկայված Հայկի և նրա ժառանգների ավանդությանը, նշում է, որ իր և Վ. Բելքի հետազոտությունները փաստում են, որ այն ունի իրական պատմական հիմք, երբ նրանց վերագրվող քաղաքների հիմնադիր համարում ենք բիայնացիներին³¹:

Լեման-Հաուպտը ենթադրում է՝ Խոշաբի հովտի վերին հատվածում գերիշխող դիրք ունեցող Խոշաբ (Մահմուդիե) ամրոցը ևս, առնչվում է Մինուայի ամրոցաշինական գործունեության հետ: Չնայած Մալմաստ-Բաշկալա ճանապարհը մեծ բանակի համար անցանելի չէ ժայռերի և կիրճերի պատճառով, սակայն այն, այնուամենայնիվ, ապահովել է հնարավոր հարձակումները³²: Հեղինակը մայրաքաղաքն ու շրջակայքը արևելքից պաշտպանող ամրոցների շղթայում է ներառում նաև Մինուայի կառուցած Վերին Անձավի ամրոցը³³:

³⁰ Տե՛ս CICH, N 21, N 22, CTU, vol. I, A 5-1, A 5-27, հմմտ. KYKH, N 48, 11:

³¹ Ամասիան իր որդու՝ Ցոլակի համար, Մասիսի ստորոտում կառուցում է տուն, որը նրա անունով կոչվում է Ցոլակերտ (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 40): Այս տեղեկության իսկության մասին վկայում է Մինուայի ամրոցի գոյությունը Ցոլակերտի անմիջական հարևանությամբ (տե՛ս AEJ, Bd. I, էջ 169-170): Պատմահայրը նաև նշում է, որ Ամասիան իր մյուս որդու՝ Փառոխի համար շինում է տուն Ցոլակերտից արևելք՝ (տեղորոշումը Լեման-Հաուպտինն է) լեռան ստորոտից բխող աղբյուրների մոտ «*բացազոյն իբր մեծոր հասարակ առուք միոյ հետևակագնացի առն ճանապարհի*» և անվանում է Փառախոտ (տե՛ս AEJ, Bd. I, էջ 171, Մովսես Խորենացի, էջ 40): Ցոլակերտից 12-14 կմ հեռավորության վրա՝ *աղբյուրի ակունք անվանված վայրում*, գտնվում են բիայնական մի մեծ ամրոցի ավերակներ: Ըստ այստեղից գտնված արձանագրության՝ Մինուան այստեղ կառուցել է Մինուախինիլի ամրոցը (տե՛ս AEJ, Bd. I, էջ 171, CICH, N 62, CTU, vol. I, A 5-26): Այսպիսով, նաև Պևտինգերյան քարտեզի Պարակատա անվանված վայրն է որոշվում, որը Արտաշատ տանող ուղիներից մեկի վերջին կայանն է (տե՛ս AEJ, Bd. I, էջ 171, Miller K., Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart, 1916, էջ 677):

³² Սույն ամրոցը նաև ցույց է տվել լճի ափին գտնվող Վան քաղաքի տեղը. Լեման-Հաուպտը Վանը համեմատում է առասպելական Ֆինետա քաղաքի հետ (տե՛ս Lehmann-Haupt C. F., Die historische Semiramis und ihre Zeit, էջ 42, AEJ, Bd. II/1, էջ 10):

³³ Տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 38, CICH N 63 Sp. 95-98, N 79, CTU, vol., I, A 5-42B, A 5-62:

Վանի Սբ. Պողոս եկեղեցու պատի շարվածքում գտնվող, արդեն դիմային կողմը հայտնի, արձանագրության վերին մասում, Լեման-Հաուպտը հայտնաբերեց մի նոր հատված՝ որում հիշատակվում է նաև Ուրմիա լճի հարավային շրջանների համար ընթացող պայքարը³⁴: Հետագոտողը կարծում է, որ ի դեմս սույն արձանագրության, գործ ունենք նաև զոհասեղանի հետ, քանի որ արձանագրության վերին հատվածում առկա է գլանաձև խորություն³⁵:

Մանայի համար մղվող պայքարին է վերաբերում նաև Մինուա արքայի՝ Թաշթեփեի (Քարե բլուր) արձանագրությունը: Արձանագրությունում նշվում է արշավանքը Մանայի դեմ և ամրոցի կառուցումը նվաճված շրջանում³⁶: Մինուայի ամրոցի տեղը եղել է հենց Թաշթեփեն, ինչպես ցույց է տալիս արձանագրության դիրքը³⁷: Ամրոցը հսկող և գերիշխող դիրք է ունեցել շրջակայքի նկատմամբ³⁸:

Լեման-Հաուպտը Պալուի արձանագրության վերաբերյալ³⁹ նշում

³⁴ Sté u CICH 19, CTU, vol., I, A 5-9, vol. III, Roma, 2008, A 5-9:

³⁵ Sté u AEJ, Bd. II/1, էջ 33: Ֆ. Վ. Քյոնիգը գտնում է, որ այն նախատեսված է եղել կոթողի, կամ՝ դրոշածոդի համար (տե՛ս König F. W., Handbuch der chaldischen Inschriften, Bd. I/II, Craz, 1955/1957, էջ 5, 47): Ս. Սալվինին հավանական է համարում, որ այն կարող է լինել հեղման համար նախատեսված: Արձանագրության այս կտորը հանդիսացել է միջանկյալ հատվածը համալիր կառուցվածքի (CTU, vol. I, էջ 198-199): Հարկ է նշել, որ առնվազն արձանագրության այս հատվածն իրենից ներկայացնում է բացառապես ռազմական գործողությունների թվարկում և ծիսական բնույթ չի կրում:

³⁶ Sté u CICH, N 20, CTU, vol. I, A 5-10: Հմմտ. KYKH, N 45:

³⁷ Պասսոյր Ֆաբերը 19-րդ դարավերջին արձանագրությունը իր տեղից հավանաբար պայթեցմամբ պոկել և տեղափոխել էր Գերմանիա: Լեման-Հաուպտը դեռևս Լայպցիգում անձամբ ծանոթացել էր պասսոյր Ֆաբերին և ուսումնասիրել արձանագրության բեկորները (տե՛ս AEJ, Bd. I, էջ 220): Արշավախումբը հետագայում ժայռի վրա գտավ միայն արձանագրության որոշ տողերի սկզբի և վերջի հատվածները (տե՛ս CICH, Sp. 46):

³⁸ Բլրի գագաթի կենտրոնում առկա է կավահող՝ կավե աղյուսներով շինությունից մնացած: Այստեղ գտնվել է Մինուայի բավական փոքր ամրոցը (տե՛ս AEJ, Bd. I, էջ 221): Շուրջ 70 տարի անց Վ. Կլայսը և Շ.Կրոլը կարողացան այս վայրում ուրարտա-մանայական ժամանակաշրջանի խեցու բեկորներ գտնել (տե՛ս St. Kroll, Erste Archäologische Forschungen in Urartu durch Carl Friedrich Lehmann-Haupt, Carl Friedrich Lehmann-Haupt. Ein Froscherleben zwischen Orient und Okzident, էջ 134):

³⁹ Այն փորագրված է Արածանիի աջ ափին՝ ժայռակերտ ամրոցի արևմտյան

է, որ Մինուան Խաթիի հետ պայքարում գրավել է Վանից հեռու՝ արևմուտքում գտնվող շրջաններ և իր քաղաքական ազդեցությունը տարածել է մինչև Մելիդ-Մալաթիա⁴⁰: Մելիդի արքան ընծաներով ներկայացել և երդում է տվել⁴¹: Հետագոտողը, իրավացիորեն նկատում է, որ Պալուի ամրոցը և քաղաքը, նույնական է արձանագրությունում հիշատակվող Շեբետերիայի հետ, իսկ Օուփանին՝ Մոֆենեի հետ⁴²: Ըստ Լեման-Հաուպտի՝ Շեբետերիա քաղաքում Խալդիի համար վերականգնվել է սրբավայրը՝ կապելան⁴³: Ժայռափոր սենյակները, աստիճանները, ստորերկյա մուտքերը, որոնցով հարուստ են Պալուի ժայռերը, ըստ էության հիմնականում Մինուայի օրոք են կառուցվել: Հարկ է նկատել, որ Պալուում, ինչպես Վանա ժայռի և այլ պարագաներում,

կողմում գտնվող կոնաձև ժայռի վրա՝ որմնախորշում (տե՛ս CICH, 31, CTU vol. I A 5-5^{հմմտ. 15}):

⁴⁰ Ըստ հեղինակի՝ հեթիթներն իրենց կենտրոնական շրջաններում և հյուսիսային Կապադովկիայում, հավանաբար, դեռևս ներկայացնում էին բավական զորեղ պետականություն, որի ապացույցը բիայնական արքաների մղած տևական պայքարն է Խաթիի հետ: Թեև պարզ չէ, թե, որ ազգությունն էր այս ժամանակաշրջանում գերիշխող դիրք գրավում (տե՛ս AEJ, Bd. I, էջ 465, Bd. II/2, էջ 591-592: Հարկ է նշել, որ դեռևս մ.թ.ա XII դարի սկզբին խեթական պետության առաջատար կենտրոնները և մայրաքաղաք Խաթուսաը լքվել էին և Խաթիի անվան ներքո ասորեստանյան և բիայնական աղբյուրները նկատի ունեն «ուշ խեթական» պետությունները (տե՛ս Քոսյան Ա., Լուվիական պետությունները, Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, էջ 201):

⁴¹ Տե՛ս AEJ, Bd. I, էջ 481: Հեղինակն ավելի վաղ տեսակետ էր հայտնել, որ Շեբետերիան գտնվել է Մելիդի արքայի իշխանության ներքո (տե՛ս Lehmann-Haupt C. F., Kleinasiatishes und Armenisches, "Klio. Beiträge zur alten Geschichte", Bd. 7, Leipzig, 1907, էջ 298):

⁴² Հարկ է նշել, որ արձանագրության սույն տեղանունների համար մինչ այդ առաջարկվել էին սխալ ընթերցումներ: Ըստ հետագոտողի, Օուփանի անվան հանդես գալն այստեղ վերջնականապես փաստարկում է նաև Արգիշթի I-ի (մ.թ.ա. 786-764 թթ.) արձանագրություններում հանդիպող սույն շրջանի պատմաաշխարհագրական տեղորոշումը Խարբերդից հարավ՝ Պալուի և Մելիտենեի միջև ընկած շրջանը (տե՛ս AEJ, Bd. I, էջ 466-467, 513, Kartenskizze zu Bd. I, հմմտ. Арутюнян Н. В., Топонимика Урарту, էջ 237, 242-243, Арутюнян Н. В., Биайнили-Урарту, էջ 128-132):

⁴³ Հեղինակը թյուրիմացաբար šid-iš(i)t(u)-ն թարգմանում է վերականգնել (տե՛ս CICH, 31¹³⁻¹⁴, Sp. 61): Ներկայումս նման թարգմանությունը հերքվում է, թարգմանվում է՝ կառուցել (տե՛ս КУКН, էջ 464):

առաջնորդվել են ժայռը ամրոցի վերածելու տարբերակով⁴⁴:

Այս արշավանքի իրողություններին անդրադառնալիս հեղինակը հավանական աղերս է տեսնում նաև Սղգայի արձանագրությունում նշվող Մինուայի՝ Արծիբինի անունը կրող ձիու վկայության հետ: Ըստ հետազոտողի՝ Մինուան այն նվեր կամ հարկ է ստացել հիշյալ արշավանքի ժամանակ իրեն ենթակա ծայրամասային շրջաններից կամ նրանց հարևան իշխանություններից⁴⁵: Ձիու անվանումը փոխառություն է ստուգաբանվում է հնում ձիաբուծությամբ հայտնի Արծավա երկրի անվամբ⁴⁶: Ձին բերված է դրսից և ըստ այդմ էլ բացատրելի է սույն հանգամանքն արձանագրությամբ այդքան կարևորելը: Ներկայումս բիայնագիտության ռահվիրայի նման պատմաաշխարհագրական տեղորոշումներն ու ստուգաբանությունները, անշուշտ, վիճարկելի են, սակայն ուշագրավ է, որ դեռևս բիայնագիտության արշավույսին հե-

⁴⁴ Պալուի ամրոցը տեսանելի է Մեծկերտի մոտ գտնվող Կալահի համանման ամրոցից, որը հնարավորություն է տալիս երկու ամրոցների միջև ազդանշանային կապ ապահովել: Այս հանգամանքը ռազմավարական առումով բիայնական ամրոցների համար խիստ կարևոր է (AEJ, Bd. I, էջ 472):

⁴⁵Տե՛ս u Lehmann C. F., Zwei unveröffentlichte chaldische Inschriften, "Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft", Bd. 58, Leipzig, 1904, էջ 843-846, Kleinasiatishes und Armenisches, էջ 298-300, CICH, N 55, Sp. 84, CTU, vol. I, A 5-91:

⁴⁶Տե՛ս u AEJ, Bd. II/1, էջ 54: Լեման-Հաուպտը դեռևս շատ ավելի վաղ Արծավա երկիրը տեղորոշում էր Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում, հետագայում հեղինակը ենթադրեց, որ այն ընդարձակվել է դեպի Կիլիկիա, որպես հիմնավորում նշելով նաև Կնուդթցոնի տեղորոշումը՝ Կիլիկիայի արևելք, կամ Կապադովկիայի հարավ (տե՛ս u Lehmann C. F., Šamaššumukīn, König von Babylonien. Inschriftliches Material über den Beginn seiner Regierung (Assyriologische Bibliothek 8), Leipzig, 1892, Teil II, էջ 113. Knudtzon J. A., Die zwei Arzawa Briefe, Leipzig, 1902, էջ 28): Հարկ է նշել, որ հեղինակը հակված էր սույն ժամանակաշրջանում հայերի Կապադովկիայում տեղորոշմանը, որպես փաստարկում նշելով Թրմերդի արձանագրությունում հիշատակվող Ուրմենին (իրականում Ուրմե) Արմենիա անվան գուգահեռ ձև (տե՛ս u Lehmann C.F., Eine Mittheilung über neugefundene Menuas-Inschriften, "Verhandlungen der [Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte](#)", Berlin, 1900, էջ 573, CICH, 32, CTU, vol.I, A 5-6: Ուրմեն տեղորոշվում է Վանա լճից արևմուտք՝ Մուշի և Քղիմարի միջև ընկած շրջանում (տե՛ս u Арутюнян Н. В., Топонимика Урарту, էջ 210-211):

դինակը Արծիբինի անունն աղերսում է հնդեվրոպական աշխարհի հետ⁴⁷:

Պաղինում՝ Պալուի ամրոցից 29 կմ հյուսիս-արևմուտք և Մեծ-կերտի ամրոցից 22,5 կմ արևելք, գտնված արձանագրությունից ելնելով Լեման-Հաուպտը կարծում է, որ Մինուան այստեղ ևս ամրոց է կառուցել⁴⁸: Սույն ամրոցի նկարագրությունը ևս բնութագրական է բիայնական ժայռակերտ ամրոցներին⁴⁹:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը նշում է, որ Մալաթիայից ոչ հեռու՝ Եփրատի աղեղի մոտ՝ Կալահ գյուղում ժայռերի մեջ փորված սենյակների և սանդուղքների առկայությունը, որը, ըստ հետազոտողի, վկայում է, որ

⁴⁷ Տե՛ս Զահուկյան Գ., Հայկական շերտը ուրարտական դիցարանում, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1986, N 1, էջ 49:

⁴⁸ Արձանագրության բեկորներից մեկը ներկառուցված է ամրոցի հյուսիս-արևմտյան կողմում՝ պատի մեջտեղի հատվածում, իսկ *ստորոտում գտնվել է դեպի սենյակ տանող դուռը*, մյուս հատվածը գտնվել է Պաղինի եկեղեցու պատի շարվածքում: Ըստ Լեման-Հաուպտի՝ բեկորը, արձանագրված հատվածով դեպի դուրս, ներկառուցվել է ամրոցի պատում Ռուսա II-ի օրոք: Կիմերները կործանողներն են եղել, իսկ Ռուսա II-րդը՝ վերականգնողը: Ուշագրավ է, որ Կ. Բասմաջեանը նշում է եկեղեցում գտնվող արձանագրության բեկորը բերվել է մոտակա Ղզըլ Ղալա (Կարմիր բերդ) կոչված քանդված բերդից, որի համար իբրև դուռ է ծառայել. հավանական է, որ *խոսքն այստեղ դրան ձևով շինված խորշի մասին է* (տե՛ս Բասմաջեան Կ., Բանասեր, հ. I/4, Պարիս, 1899, էջ 290): Արձանագրությունում նշվում է կոթող կանգնեցնելու և այստեղ Թիթիանի անունով կառավարիչ նշանակելու մասին: Ըստ Լեման-Հաուպտի Թիթիանի անունը բնորոշ չէ բիայնական արքայատոհմին. աղերսվում է Սուպիլուլիումաս I-ի (մ.թ.ա 1345-1322թթ.) հետ դաշինք կնքած Նուխաշեի արքա Տետտեի անվան հետ (տե՛ս AEJ, Bd. I, էջ 467-468, Bd. II/2, էջ 592, CICH, Sp. 64-65, CTU vol. I, A 5-8, vol. III, A 5-8Ro, Vo, Beckman G., Hittite Diplomatic Texts, vol. 7, Atlanta, 1996, No. 7, էջ 50-54): Սույն ժամանակաշրջանում Սիրիական պետություններում, բացի ծովեզրյա հատվածից, արքաները կրում էին հնդիքական անուններ (տե՛ս և История древнего Востока, т. 2, Москва, 1988, էջ 247) Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ Թիթիանին եղել է տեղի առաջնորդը և ընդունել է բիայնական գերիշխանությունը (տե՛ս Меликишвили Г. А., Наирн-Урарту, Тбилиси, 1954, էջ 245):

⁴⁹ Ամրոցի հիմնական մասը կազմել են 3 դարավանդները՝ 20-100 ոտք (անգլիական) երկարությամբ, ժայռի վերևը նույնպես հատված է՝ 100 ոտք երկարությամբ և 20 ոտք լայնությամբ: Յուրաքանչյուր դարավանի և ժայռի վերևում գտնվել են փորված երկուական ջրակուտակ (տե՛ս Huntington E., Weitere Berichte über Forschungen in Armenien und Commagene, "Zeitschrift für Ethnologie", Bd., 33, Berlin, 1901, էջ 177-178):

այստեղ՝ ռազմավարական այս կարևոր կետում ևս, բիայնական ամրոց է եղել⁵⁰: Ըստ հեղինակի՝ այս ամրոցն ամրոցների շղթայի մի օղակն է⁵¹, որոնք գտնվում էին միմյանցից մոտավորապես մեկ օրվա հեռավորության վրա: Այս ամրոցները ցույց են տալիս բիայնական ռազմական ճանապարհը, որը անցնում էր Մալաթիայից Խարբերդի վրայով՝ Պալու և, հավանաբար, այնուհետև Վան⁵²:

Այսպիսով, Մինուայի կառավարման ժամանակաշրջանը նշանավորվեց երկրում բուռն վերելք ապրող քաղաքաշինությամբ և ամրոցաշինությամբ: Մինուայի օրոք կառուցվեց Վանա միջնաբերդից հարավ գտնվող քաղաքը և այն սնող ջրանցքը: Արշավանքների աշխարհագրությունը ձգվեց Ուրմիա լճի հարավային շրջաններից մինչև Եփրատ ու Արաքս: Ասորեստանի հետ համառ դիմակայության արդյունքում դրվեց բիայնական աշխարհակալության հիմքը⁵³: Վերոհիշյալ խնդիրների ուսումնասիրության բնագավառում վիթխարի է Կ. Ֆ. Լեման-Հաուպտի ներդրումը: Մինուայի գահակալության ժամանակաշրջանին վերաբերող Կ. Ֆ. Լեման-Հաուպտի աշխատությունների մի շարք դրույթներ շարունակում են մնալ արդիական:

VAHE SARGSYAN
(IOH NAS RA)
BIAINILI-URARTU UNDER MINUA ACCORDING
TO C. F. LEHMANN-HAUPT

The period of Minua's reign, according to C. F. Lehmann-Haupt, was marked with immensely growing fortress and city building. The scholar considers Minua was the founder of the first city located southwards from Van citadel. Before the foundation of the settlement it was necessary to provide the population with water supply which Minua solved in terms of

⁵⁰ Տե՛ս Առաքելյան Բ., Ջահուկյան Գ., Սարգսյան Գ., Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 96:

⁵¹ Հեղինակը նկատի ունի նաև Մեծկերտի, Փերթակի, Խարբերդի և Բաբերդի ամրոցները, նման ժայռակերտ ամրոցները զգալի թիվ են կազմել Խարբերդի վիլայեթում (տե՛ս AEJ, Bd. I, էջ 472, 476):

⁵² Տե՛ս AEJ, Bd. I, էջ 487:

⁵³ Տե՛ս AEJ, Bd. II/1, էջ 165:

building his renowned canal. The geography of invasions expanded from the southern regions of Urmia up to the Euphrates and the Araxes. As a result of persistent resistance against Assyria the foundation of Biainili's sovereignty was laid.

A series of statements linked to the period of Minua's reign in the works by C. F. Lehmann-Haupt still continue to remain relevant.

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆ (ԵՊՀ)
ԱՐՄԱՆ ԵՂԻՍՁԱՐՑԱՆ (ՀՊՄՀ)

ՕԶԱԲԵՐՂԻ ԱՐՏԱՔԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ N 001 ԵՎ 002 ՄԵՆՅԱԿՆԵՐԻ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*
(Համառոտ ակնարկ)

Օձաբերդը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Արծվանիստ և Ծովինար գյուղերի միջնամասում (Նկար 1, 2)՝ Արփա-Սևան ջրատար թունելից մոտ 70 մ հարավ, ծովի մակարդակից բարձր է 1969 մ, աշխարհագրական կոորդինատներն են՝ 40° 9'10.21, 45°29'43.09"E: Օձաբերդն իր անվանումը ստացել է տեղացիների կողմից՝ տեղանքում առկա օձերի պատճառով: Ծովինար և Արծվանիստ գյուղերի տարեց բնակիչների բանավոր վկայությամբ օձերն այնքան շատ են եղել, որ, հեռվից նայելով բերդի լանջերին, թվացել է, թե դրանք արծաթափայլ են: Հետագայում Արփա-Սևան ջրատար թունելի կառուցման հետևանքով Օձաբերդի տարածքում օձեր գրեթե չեն հանդիպում:

Ուսումնասիրության համառոտ պատմություն¹

Օձաբերդը հայտնի է դարձել դեռևս 1860-ական թթ. ի շնորհիվ հոգևորական Մեսրոպ Սմբատեանցի, որը ամրոցի բլրի արևմտյան մասում գտնվող քարածայռերից մեկի վրա հայտնաբերել է քսան տողից բաղկացած սեպագիր արձանագրություն²: Հետագայում պարզ դարձավ, որ արձանագրությունը պատկանում է Վանի թագավորության միապետ Ռուսա I-ին (մոտ. Ք. ա. 735-713 թթ.)³: Այս սեպագիր ար-

¹ Օձաբերդի ուսումնասիրման պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս՝ Բաղայան Մ., Միքայելյան Ա., Կյուրեղյան Հ., Իսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ս., Եղիազարյան Ա., Օձաբերդի 2014-2016 թթ. պեղումների նախնական արդյունքները, Մեծամորյան ընթերցումներ I (գիտական հոդվածների ժողովածու), Երևան 2017, էջ 205-209: Բաղայան Մ., Միքայելյան Ա., Կյուրեղյան Հ., Իսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ս., Եղիազարյան Ա., Օձաբերդի 2014-2016 թթ. պեղումների նախնական արդյունքները..., էջ 206-207:

² Արձանագրությունը հայտնաբերել է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցը: Այդ մասին տե՛ս օրինակ՝ Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաիառի որ այժմ Նոր-Բայազետ գաիառ, Վաղարշապատ, 1869, էջ 553-555:

³ Ивановский А., По Закавказью. Археологическія наблюдения и изслѣдованія 1893, 1894 и 1896 гг., Материалы Археологии Кавказа, Выпускъ VI, Москва, 1911, сс. 21-23. Քալանթար Ա., Յերկու սեպագիր արձանագրություն Ռուսա Ա-ի,

ձանագրությունում Ռուսան հաղորդում է 23 երկրների գրավման և տեղում քաղաքի կառուցման մասին, որն անվանել է «Տարերքի աստծո քաղաք»⁴: Հավանաբար, Օձաբերդն այս տարածաշրջանում հանդիսացել է ուրարտական պետության կենտրոնը: Ունենալով կարևոր մարտավարական դիրք՝ Օձաբերդը հսկել է Սևանի հարավարևելյան ավազանով տարածվող ամրոցների շարքը՝ Բրուտի բերդ, Քարի դուռ, Ծովակ և այլն, ինչպես նաև դեպի Սոթքի ոսկու հանքեր տանող ճանապարհը (Քարտեզ 1): Հավանաբար, Օձաբերդը կարևոր դեր է ունեցել Վայոց ձորից Վարդենյաց լեռնանցքով դեպի Սևանի ավազան տանող ճանապարհի հսկողության համար⁵:

Օձաբերդի տարածքում առաջինը հնագիտական պեղումներ է իրականացրել Ե. Լալայանը: Վերջինս պեղել է Օձաբերդի շրջակայքում գտնվող մի քանի դամբարաններ, որոնցից մեկը, ըստ Ե. Լալայանի՝ գտնվել է ամրոցի հարավարևմտյան կողմում՝ բլրի գագաթին⁶: 1930-ական թթ. սկզբին Բ. Պիոտրովսկին, Ա. Աջյանը և Լ. Գյուրալյանը կատարել են վերգետնյա ուսումնասիրություններ՝ կազմելով ամրոցի հատակագիծը⁷: 1934 թ. Բ. Պիոտրովսկին պեղումներ է իրականացրել

Սարգսրիի վորդու, Որագիր ՀԽՍՀ Հնությունների պահպանության կոմիտեի 3, Յերեվան 1927, էջ 9-23:

⁴ Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей, Ереван 2001, сс. 295-298.

⁵ Բաղայան Մ., Միքայելյան Ա., Դան Ռ., Կյուրեղյան Հ., Բսկրա Մ., Եղիազարյան Ա., Կզլյան Վ., Հովսեփյան Ռ., Վիտոլո Պ., Զաքյան Ա., Օձաբերդի 2014-2015 թթ. պեղումների նախնական արդյունքները (համառոտ ակնարկ), «Հայաստանի հնամարդաբանության և հնաժողովրդագրության հարցեր». Միջազգային գիտաժողով նվիրված Վանի պեղումների 100-ամյակին («Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարան, նոյմբերի 3-4), Երևան, 2016, էջ 31-34: Badalyan M., Kzlyan V., Iskra M., Mikayelyan A., Kyureghyan H., Odzaberd (Tsovinar): A Brief Preliminary Report on the 2014-2015 Excavations. Aegean World and South Caucasus. Cultural Relations in the Bronze Age. International Workshop. Proceedings, Tbilisi, 2016, p. 164: Բաղայան Մ., Միքայելյան Ա., Կյուրեղյան Հ., Բսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ա., Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 206-207:

⁶ Լալայեան Ե., Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք. Նախապատմական շրջան, Ազգագրական հանդես 13, 1907, էջ 184:

⁷ Güsaljan L., Piotrovskij B., Kyklopische Festungen am Süde Sewansees (Goktscha), Кружок по изучению Древнего Востока при Государственном Эрмитаже, Сборник 1 (8), Ленинград, 1933, p. 45, fig. 4.

միջնաբերդի հարավարևելյան հատվածում: Ցավոք, պեղումների արդյունքները գլխավորապես հրատարակվել են հուշերի և կարճ հաղորդումների տեսքով⁸: 1960-ական թթ. Օձաբերդում ուսումնասիրություններ է կատարել Գ. Միքայելյանը⁹: 1990-ականներին խիստ կարևոր հետազոտություններ է իրականացրել Սևանի ավազանի հայ-իտալական հնագիտական արշավախումբը¹⁰: 2014 թվականից Օձաբերդի ուսումնասիրությունները թևակոխեցին նոր փուլ: 2014-2015 թթ. Օձաբերդում պեղումներ են իրականացրել հայ-իտալական (համադեկավարներ՝ Մ. Բադալյան և Ռ. Դան), ապա՝ 2016-ից բացառապես հայկական արշավախմբի կողմից (ղեկավար՝ պ.գ.թ. Մ. Բադալյան): Վերը նշված տարիներին հնագիտական պեղումները իրականացվել են և՛ ամրոցում (տեղամաս A, D 1, D 2, E, G), և՛ միջնաբերդում (տեղամաս B), և՛ արտաքին բնակավայրում (տեղամաս C, F) (Նկար 3)¹¹: Սույն հոդվածում ներկայացվելու են C տեղամասի 001 և 002 սենյակների պեղումների հիմնական արդյունքները¹²:

ՏԵՂԱՄԱՍ C

Օձաբերդի հնագիտական արշավախմբի նպատակներից մեկն էր փորձել գտնել և հնագիտորեն ուսումնասիրել արտաքին բնակավայրը: Այս առումով 2015 թ. վերգետնյա հետախուզական ուսումնասիրություններ իրականացվեցին Օձաբերդի ամրոցի լանջից դեպի հարավ

⁸ Пиотровский Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, сс. 20, 90-92.

⁹ Միքայելյան Գ., Սևանի ավազանի կիկլոսյան ամրոցները. Հայաստանի հնագիտական հուշարձանները 1, Երևան, 1968, էջ 37-38:

¹⁰ Biscione R., Hmayakayan S., Parmegiani N., Sayadyan Y, Description of the Sites The North-Eastern Frontier Urartians and Non Urartians in the Sevan Lake Basin, Documenta Asiana VII, Roma, 2002. in: Biscione R., Hmayakayan S., Parmegiani N., 2002 (eds.), pp. 319-324.

¹¹ Օձաբերդում 2014-2016 թթ. իրականացված պեղումների մասին տե՛ս՝ Բադալյան Մ., Միքայելյան Ա., Դան Ռ., Կյուրեղյան Հ., Բսկրա Մ., Եղիազարյան Ա., Կզլյան Վ., Հովսեփյան Ռ., Վիտտլո Պ., Ջաքյան Ա., նշվ. աշխ., էջ 31-34: Badalyan M., Kzlyan V., Iskra M., Mikayelyan A., Kyureghyan H., նշվ. աշխ., pp 164-167. Բադալյան Մ., Միքայելյան Ա., Կյուրեղյան Հ., Բսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ս., Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 209-227:

¹² Այս տեղամասում իրականացված պեղումների մասին մանրամասն տե՛ս՝ Badalyan M., Kzlyan V., Iskra M., Mikayelyan A., Kyureghyan H., նշվ. աշխ., p. 166. Բադալյան Մ., Միքայելյան Ա., Կյուրեղյան Հ., Բսկրա Մ., Հովսեփյան Ռ., Նահապետյան Ս., Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 219-226:

գտնվող հարթ, ծառաշատ տարածքում: 1960-ական թթ. տարածքը մելորացվել է, ինչի հետևանքով այն խիստ վնասվել է: Տարբեր հատվածներում կան կիսակոպտատաշ քարերով քարակույտեր: Բացի այդ՝ կան նման քարերով արված հողաբաժաններ: Ըստ երևույթին, դրանք Օձաբերդի արտաքին բնակավայրի տարբեր կառույցների քարերն են: Որոշվեց պեղումներ իրականացնել Օձաբերդի ամրոցի լանջից դեպի հարավ-արևելք գտնվող հարթ հատվածում (տեղամաս C): Այստեղ նշմարվում էին մի քանի քարեր, որոնք կարող էին կառույցի պատի շարեր լինել: Այստեղ պեղումներ են իրականացվել 2015-2016 թթ.:

2015 թ. արշավախմբի կողմից որոշում կայացվեց պեղումներ կատարել մի այնպիսի տարածքում, որտեղ ծառերը առավելապես քիչ էին և մակերեսին երևում էր երկու քար իրարից ոչ այնքան հեռավորության վրա: Վերգետնյա հետազոտմամբ այս հատվածում հայտնաբերվեցին խեցեղենի բեկորներ, որոնք հավանաբար վերաբերում են հետուրարտական և հելլենիստական ժամանակաշրջաններին: Այս հատվածը անվանվեց տեղամաս C, որտեղ սկզբնական շրջանում ընտրվեց 4x5 մ տարածք: Ճիմահողը հեռացնելիս մեծամասամբ գտնվում էին հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղեն բեկորներ: Այնուհետև ֆիքսվեցին իրար կապակցված կիսակոպտատաշ երկշար քարերով երկու պատի հատվածներ (Նկար 4): Նրանց միջնամասում բացվեց կավածեփի հատակ: Արշավախմբի կողմից որոշում է կայացվել պեղավայրը ընդլայնել 6x8 մ չափերով: Այստեղ ևս հեռացվեց ճիմահողը: Անմիջապես ճիմահողի տակ ուրվագծվեց մի կառույց: Սկզբնական շրջանում բացվեց մի սենյակ (Սենյակ 001), իսկ այնուհետև՝ մեկ այլ սենյակ (Սենյակ 002): Սենյակները իրարից բաժանվում էին միջին մեծության կիսակոպտատաշ բազալտե քարերով երկշար պատով: Այն արևմտյան հատվածում ընդհատվում է:

Սենյակ 001-ում ճիմահողի տակ բացվեց կավածեփի հատակ: Այստեղ ֆիքսվեցին խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնք թվագրվում են հետուրարտական ժամանակաշրջանով: Բացի այդ՝ գտնվեցին վանակատի ցլեպներ, կենդանական ոսկորներ: 2015 թ. պեղումների արդյունքում բացվել է սենյակ 001-ը ամբողջությամբ, իսկ սենյակ 002-ը մասնակիորեն (Նկար 5):

2016 թ. տեղամաս C ընդլայնվել է (13 հյուսիս հարավ x12 արևելք արևմուտք մ. չափերի): Տեղամաս C-ի բացարձակ կոորդինատներն են 1. X-4446533.2083 Y8542167.2769 Z1935.40, 2. X-4446531.0621 Y-

8542179.0650 Z1936.77, 3. X-4446518.2728 Y-8542177.0075 Z1936.77 4. X-4446520.2408 Y-8542165.1614 Z 1935.24: Արդյունքում նոր ընդլայնված տեղամասում բացվեց սենյակ 002-ը գրեթե ամբողջությամբ: Սենյակ 001-ից դեպի հարավ ուղվածությամբ ֆիքսվեց եռաշար պատի հատված, որը, ըստ երևույթին, հանդիսացել է կառույցի հատված: Սենյակներ 001 և 002-ի կից ուղղվածությունը դեպի հյուսիս-արևմուտք ֆիքսվել է հարթեցված քարերով հատակ, որտեղ ևս կատարվել է ստուգողական փոսորակ: Ստուգողական փոսորակ է արվել նաև պեղավայրի արևելյան հատվածի միջնամասում: Դրա նպատակն էր պարզել արդյոք հետուրարտական ժամանակաշրջանի շերտերից բացի կան այլ շերտեր: Այստեղ արված պեղումները ցույց տվեցին, որ շերտերը շարունակվում են:

Մեր նպատակն է կոնկրետ անրադառնալ Սենյակ 001-ի և Սենյակ 002-ի պեղումների հիմնական արդյունքներին:

Սենյակ 001

Սենյակ 001-ը քառանկյուն կառույց է՝ շարված կիսակոպտատաշ երկշար, տեղ-տեղ միաշար շարվածքով: Պեղումների արդյունքում ֆիքսվել են սենյակի մեկ շար բարձրությամբ հիմնաքարերը: Հավանաբար, վերին շարվածքներն ավերվել են մելրացիաի արդյունքում: 2015 թ. սենյակ 001-ի արևելյան հատվածում արվել է ստուգողական փոսորակ, որի արդյունքում ֆիքսվեցին մի քանի կավածեփ հատակներ: Հավանաբար, դրանք վերաբերում են հետուրարտական ժամանակաշրջանի տարբեր փուլերի: Հաջորդաբար ֆիքսվեցին խճաքարերով շերտ, այնուհետև՝ կարծր հողից բաղկացած շերտ: Փոսորակում ֆիքսվեց մի մեծ քար, որը գտնվում էր անմիջապես հյուսիսարևելյան պատի տակ: Փոսորակի ստորին հատվածում, մոտ 1.15 մ խորության վրա ֆիքսվել է մանր և միջին քարերով շերտեր և երկշար քարերով կառույց, որը պատ էր հիշեցնում: Այս ստուգողական փոսորակից գտնվեց նաև «վիշապանման» քարի բեկոր (Աղյուսալ 1, գ.), որը վերաօգտագործվել է սենյակում շինարարական աշխատանքների համար¹³:

2016 թ. ստուգողական փոսորակը ընդլայնվեց՝ (Նկար 6, 8, 9) ներառելով իր մեջ ամբողջ սենյակը: Հեռացվեցին սենյակի երկրորդ հատակին դրված քարերը: Այնուհետև ամբողջովին ֆիքսվեց հաջորդ

¹³ Այս տեսակետը պատկանում է Օձաբերդի հնագիտական արշավախմբի ղեկավար Մ. Բաղայանին:

կավածեփի հատակը: Հատակի վրա գտնվեց պեմզայից պատրաստված ձկան կարթի կլոր ծանրոց (Աղյուսակ 1, դ.): Այս հանգամանքը որոշակի հիմքեր է տալիս ենթադրելու, որ այս սենյակում ապրողները զբաղվել են ձկնորսությամբ: Այստեղ գտնվեցին նաև հետուրարտական ժամանակաշրջանի խեցեղեն մնացորդներ և կենդանական ոսկորներ: Այնուհետև ֆիքսվեց խճաքարերով հարթեցման երկու շերտ: Մոտ 40 սմ խճաքարային շերտը շարունակվում է: Ակնհայտ է, որ խճաքարերով արվել է մակարդակի բարձրացում, իսկ այնուհետև՝ Սենյակ 001-ի վազագույն հատակի պատրաստման համար: Այն հետագայում ավելացվել է իրար հաջորդող երկու կավածեփի հատակներով: Խճաքարերով շերտերի տակ որոշ հատվածներում ֆիքսվեց հողե շերտեր (Նկար 7): Այստեղ գլխավորապես գտնվեցին սև գույնի խեցեղեն բեկորներ (Աղյուսակ 3), կենդանական ոսկորների կտորներ և վանակատե բեկորներ: Մեր կարծիքով, գտնված խեցեղենը կարելի է թվագրել Ք. ա. VIII-VII դարերով¹⁴: Մեզ հավանական է թվում, որ ՇՄ 019-ը և 020-ը կառույցի պատի հատված է, որը վերաբերում է Ք. Ա. VIII-VII դարերին: Այնուհետև հետուրարտական փուլում այս կառույցը փակվել է, արվել է խճաքարով հարթեցում և ստեղծվել կիսագետնափոր կացարանի հատակը (Աղյուսակ 3):

Սենյակ 001-ում խեցեղենի բեկորներից բացի գտնվել է աղորիքի հատված (Աղյուսակ 1, ա.), խաղաքար (Աղյուսակ 1, ե.), կրակարանի բեկորներ, պեմզայից պատրաստված վերը նշված կլոր ծանրոցը, որը նախատեսված է եղել ձկնորսության համար (Աղյուսակ 1, դ.): Հաշվի առնելով Սևանա լճի բավականին մոտ լինելը՝ կարելի է ենթադրել, որ ձկնորսությունը զգալի տեղ է զբաղեցրել տվյալ բնակավայրի բնակիչների համար: Նման ծանրոցի գուգահեռներ հայտնաբերվել են Օձաբերդից ոչ շատ հեռավորության վրա գտնվող Կարճաղբյուրի բնակավայրի պեղումներից¹⁵: Այս սենյակում 2015-2016 թթ. պեղաշրջանների ընթացքում նաև գտնվել են վանակատի ցլեպներ, կենդանական ոսկորներ: Խիստ աղքատիկ են մետաղից պատրաստված գտածոները: Այս առումով հայտնաբերվել են գամ (Աղյուսակ 1, է.), իսկ Սենյակ 001-ի

¹⁴ Տեղամաս C-ից հայտնաբերված որոշ առանձնացված խեցեղեն նմուշների զծանկարները տե՛ս՝ Աղյուսակ 2:

¹⁵ Կարապետյան Ի., Կարճաղբյուրի պեղումները (1975-1978), Պատմաբանասիրական հանդես, N 3, 1979, էջ 276:

հարավային և արևելյան պատի միացման արտաքին անկյունի հատվածում գտնվել է բրոնզե օղ (Աղյուսակ 1, գ.):

Մենյակ 002

Մենյակ 002-ը ևս միջին մեծության կիսակոպտատաշ երկշար, տեղ-տեղ միաշար պատերով կառույց է: 2015 թ. սենյակը պեղվել է մասամբ: Բացվել են սենյակի արևելյան և արևմտյան պատերը, ինչպես նաև առաջին տոփոնված հատակը, որը գտնվում էր անմիջապես ճիմահողի տակ: Ֆիքսվել է նաև դրան հաջորդող երկրորդ նման հատակը: 2016 թ. գրեթե ամբողջությամբ բացվել է սենյակ 002-ի հյուսիսային երկշար պատը (Նկար 5, 6, 8): Ցավոք, գյուղացիների՝ սեփականատերերի հետ համաձայնության գալուց հետո արշավախումբը որոշեց ապահովության համար չընդլայնել պեղավայրը¹⁶: Այդ պատճառով չբացվեց Մենյակ 002-ի հյուսիսարևմտյան պատի անկյունը: Մենյակ 002-ում նույն սենյակի և Մենյակ 001-ի բաժանարար պատի տակ կենտրոնում, առաջին հատակի վրա, գտնվեց դրան կրնկակոխ (Աղյուսակ 1, բ.): Գտածոներն իրենցից ներկայացնում են խեցեղենի բեկորներ, որոնք առավելապես թվագրվում են հետուրարտական ժամանակաշրջանով: Բացի այդ՝ հայտնաբերվել են վանակատի ցլեպներ, կենդանական ոսկորներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2015-2016 թթ. պեղումները տեղամաս C-ում բավականին կարևոր արդյունքներ են գրանցել: Հայտնաբերվել է արտաքին բնակավայրի մի հատվածը: Կարելի է փաստել, որ այստեղ բացվել են Օձաբերդի արտաքին բնակավայրի կամ քաղաքային հատվածի առաջին սենյակները: Ըստ երևույթին, դրանք հանդիսանում են մեկ ընդհանուր կառույցի մաս: Ըստ վերջին պեղումների արդյունքների՝ սենյակներ 001 և 002-ը հետուրարտական ժամանակաշրջանի կառույցներ են: Ըստ Մենյակ 001-ում արված հնագիտական պեղումների արդյունքների՝ կարելի է ենթադրել, որ վերը նշված սենյակները կառուցվել են ավելի վաղ կառույցի վրա, որը հավանաբար վերաբերում է միջին երկաթի Ք. ա. VIII-VII դարերին: Ըստ ամենայնի՝ այդ կառույցի վրա կատարվել են խճաքարային լցումներ՝ արհեստականորեն բարձրացնելով հողի մակարդակը: Այնուհետև կառուցվել է հետուրարտական առաջին կավածեփի հատակը: Հաշվի առնելով հատակների ցածր մակարդակը հիմնապա-

¹⁶ Բանն այն է, որ, ցավոք, ամբողջ տարածքը հատկացված է որպես տնամերձ հողատարածք:

տից՝ կարելի է ենթադրել, որ սենյակները կարող էին նաև լինել կիսագետնավոր: Ճարտարապետական առումով սենյակները ունեն գուգահեռներ համաժամանակյա այլ հուշարձանների հետ: Այս առումով նման ամենամոտ համաժամանակյա հուշարձանը Կարճաղբյուրի բնակավայրն է (Նկար 10), որը Օձաբերդից գտնվում մոտ 5 կմ հեռավորության վրա: Այստեղ պեղումներ են իրականացվել Բ. Կարապետյանի ղեկավարությամբ¹⁷: Տեղամաս C-ում սենյակներ 001-ը և 002-ը հավանաբար չեն սահմանափակվել նշված երկու սենյակներով: Այդ են վկայում կառույցի հարավարևելյան անկյունից դուրս եկող և դեպի հարավ շարունակվող պատը, ինչպես նաև պեղավայրի հյուսիսարևմտյան մասում գտնվող հարթեցված քարերով հատակը: Պեղումների արդյունքում սենյակներ 001-ից և 002-ից գտնված նյութական մշակույթին վերաբերող առարկաներն առավելապես հետուրարտական ժամանակաշրջանին են պատկանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օձաբերդի տարբեր հատվածներում արված պեղումների արդյունքում ֆիքսվել են գլխավորապես հետուրարտական ժամանակաշրջանի կառույցներ և շերտեր, ապա, կարելի է ենթադրել, որ տվյալ ժամանակահատվածում ևս Օձաբերդը եղել է կարևոր կենտրոն և բնակավայր՝ իր ամրոցով, միջնաբերդով և արտաքին բնակավայրով:

ARTUR MIKAELYAN (YSU)
ARMAN YEGHIAZARYAN (ASPU)

**THE MAIN RESULTS OF THE EXCAVATIONS OF ROOMS 001 AND 002 OF
THE OUTER TOWN OF ODZABERD (BRIEF REVIEW)**

Odzaberd is located on the South-Eastern shore of Lake Sevan (Republic of Armenia). The cuneiform inscription situated on the North-Western cliff of the fortress testifies that the Urartian king Rusa I built a fortress named after the Urartian Storm God (Teišeba). The current article focuses on the results of the excavations of the rooms 001 and 002 of the Outer town of Odzaberd, situated in south of the fortress. According to the

¹⁷ Կարճաղբյուրի բնակավայրի պեղումների մասին տե՛ս Կարապետյան Բ., Կարճաղբյուրի պեղումները (1975-1978), էջ 268-277, նույնի՝ Հայաստանի նյութական մշակույթը. մ. թ. ա. VI-IV դդ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, 19, Երևան, 2003, էջ 17:

results of the excavations, the above mentioned rooms can be dated to the Post-Urartian period (end of VIIth century-first half of the VIth century B.C.). Deep sounding was done in Room 001, which showed that both rooms 001 and 002 were built on the bases of an earlier structure, dating to the VIII-VII centuries B.C.

Քարտեզ 1. Սևանի հարավային ավազանը Երկաթի դարաշրջանում: Քարտեզի հեղինակ՝ Ն. Դանիելյան:

Նկարների ցանկ

Նկար 1. Օձաբերդը հարավ-արևմուտքից: Օղալուսանկար:

Նկար 2. Օձաբերդ: Օղալուսանկարներով օրթոֆոտո: Հեղինակ՝ Մ. Տրուժշկովսկի:

Նկար 3. Օձաբերդի հատակագիծը:

Նկար 4. Ը տեղամասը պեղումների նախնական փուլում:

Նկար 5. Ը տեղամասը 2015 թվականի պեղաշրջանից հետո: Օղալուսանկար:

Նկար 6. Ը տեղամաս: Մենյակ 001-ը և 002-ը՝ հյուսիս-արևելքից: 2016 թվական:

Նկար 7. Ը տեղամաս: Մենյակ 001-ը պեղումների վերջնական տեսքը:

Նկար 8. Ը տեղամասը 2016 թվականի պեղաշրջանից հետո: Օղալուսանկար:

Նկար 9. Ը տեղամասի հատակագիծը: Չափագրված է Օձաբերդի հնագիտական արշավախմբի ճարտարապետ Ն. Կյուրեղյանի կողմից:

Նկար 10. Կարճաղբյուրի բնակավայրի հատակագիծը: Չափագրված է Կարճաղբյուրի բնակավայրի հնագիտական արշավախմբի ճարտարապետ Ա. Կանեցյանի կողմից: Հաջորդիվ՝ Kanetsian A., Khachatryan Յ., Ai Piedi Dell'Ararat. Artaxatael'Armenia Ellenistico-Romana, a cura di A. Invernizzi, Torino, 1998, p., 31, fig. 19.

Աղյուսակների ցանկ


Աղյուսակ 1. Տեղամաս Ը-ից գտածոներ: ա) աղորիքի հատված, Մենյակ 001, Context 015, բ) կրնկակող, Մենյակ 002, Context 004, գ) «վիշապանման» քարի հատված, Մենյակ 001, Context 017, դ) ձկան կարթի ծանրոց, Մենյակ 001, Context 015, ե) խաղաքար, Մենյակ 001, Context 015, զ) բրոնզե օղ, Context 011, է) երկաթի գամի հատված, Context 001:

Աղյուսակ 2 Տեղամաս Ը-ից հայտնաբերված առանձնացված խեցեղենի զծանկարներ:

Աղյուսակ 3 Տեղամաս C: Հարավային կտրվածք: Նշված են նաև յուրաքանչյուր շերտին բնորոշ խեցեղենի տեսակները:


Ապրիլ








5





6



7




8





Աղյուսակ 1





Այլուսակ 3





ԱՆՇԵԼԱ ԵՐԻՑՑԱՆ
(ԵՊՀ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ԹԱՂՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԻ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Անդրշիրիմյան կյանքի մասին պատկերացումներն ու մահվան ծիսակարգին առնչվող սովորույթները շատ մեծ դերակատարում են ունեցել այս կամ այն մշակույթի ձևավորման գործընթացում: Մարդու համար ամենահանելուկայինը միշտ եղել է մահը, որը հանգեցնում է թաղման կատարման անխուսափելիության հանգամանքին և իր հերթին առաջ բերում բազմաթիվ չբացահայտված հարցեր: Այդ ամենը խթանում է թաղման տարատեսակ եղանակների ձևավորմանն ու զարգացմանը: Դեռևս հնագույն ժամանակներից, ինչպես մահվան, այնպես էլ թաղման մասին պատկերացումները տարբեր են եղել: Դրանք կապվում են և՛ կրոնական հայացքների, և՛ սոցիալական դիրքի հետ: Դրա վառ ապացույցն են տարատեսակ դամբարաններն ու դրանց վերգետնյա նշանները, կմախքների դիրքերը և թաղման ժամանակ կատարված ծեսերը, որոնք ցույց են տալիս այդ ժամանակաշրջանի կրոնական հավատալիքների բուն էությունը:

Հայկական լեռնաշխարհի վաղագույն շրջանի Թաղումներն օժտված են եղել որոշակի հատկանիշներով և պահպանվել են մինչև միջնադար, ինչպես նաև արտացոլվել են քրիստոնեական թաղման ծեսում: Թաղման կարևորագույն բաղադրիչներից է նրա ծիսակարգը, որտեղ դրսևորվում է հուղարկավորողների վերաբերմունքը ննջեցյալի հանդեպ: Ծիսակարգը բաղկացած է մի քանի տարրերից՝ թաղման եղանակից, տեսակից, աճյունի տեղադրությունից, կմախքի դիրքից, դիակի և դեմքի ուղղվածությունից, աճյունի հանգչելատեղից և այլն¹: Ըստ Պիոտրովսկու՝ միննույն դամբարանադաշտի համաժամանակյա Թաղումներում ծիսակարգի բազմաձևությունը կարող է լինել նաև սոցիալական անհավասարության կամ մահվան հանգամանքների արդյունք²: Առանձնացվում են թաղման հետևյալ եղանակները՝ դիաթաղում, դիամասնատում, գլխի թաղում, երկրորդվող դիաթաղում,

¹ Элиаде М., Космос и история, Избранные работы, Москва, 1987, с. 203.

² Пиотровский Б., Археология Закавказья. С древнейших времен до 1 тысячеления до н. э., Ленинград, 1949, с. 87.

դիակիզում, հուշադամբարանային «թաղում»: Բնորոշ գծերից է նաև հանգուցյալին կողքի պատկեցրած, կծկված վերջույթներով թաղելը³: Ուրարտուում ընդունված են եղել ժայռափոր դամբարանները, որոնք սովորաբար կազմված էին լինում մի քանի սրահներից և որոնցում դրվում էին հանգուցյալի աճյունը իր ունեցվածքով հանդերձ: Այդպիսի դամբարաններ կան Վանա ժայռի կառույցներում, Լիճ, Օշական, Նոր Արեշ, Արծկե, Չրմես, Պատնոս, Ալիշար հնավայրերում⁴: Մեկ այլ տեսակ են անձավային դամբարանները, որոնցից հանդիպում ենք Արգիշտիիսինիլի, Թեյշերանիի անձավներում,⁵ ինչպես նաև Բոռտան կայա, Կայալի Դերե և Գեդիովիտ հնավայրերում⁶: Գրեթե բոլոր ուսումնասիրողները՝ Պիտրովսկին, Բաքի Օգյունը, Էմին Բիլշիքը, Չարլզ Բուրնեյը, Կուֆտինը, Օնիկ Խնկիկյանը, Միմոն Հմայակյանը և այլ անվանի գիտնականներ, եկել են այն եզրահանգմանը, որ Ուրարտուում լայն տարածում են գտել թաղման դիակիզման, դիաթաղման և դիամասնատման եղանակները⁷:

Թաղումների ուսումնասիրման համար կարևորվում է Իզդիրի մոտ գտնվող Մալաքլու գյուղի դամբարանադաշտը, որը հայտնաբերվել է 1914 թ. Պ. Պետրովի կողմից: Այստեղ պեղված 14 դամբարաններից մեկում կատարվել է դիաթաղում, իսկ մյուսներում՝ դիակիզում⁸: Մ. Վան Լունը, խոսելով ուրարտական մշակույթի մասին, նկատել է, որ ուրարտական դամբարանային կառուցվածքների հորինվածքային առանձնահատկությունների և թաղման ծիսակարգի վրա ազդեցություն է ունեցել իսթական մշակույթը. այդ մասին վկայում են Փոյուզիայի ճարտարապետական լուծումներին բնորոշ տարրերի տարածումը Ուրարտու և քարերի միջև թաղված դիակիզման աճյունասափորները,

³ Ögün B., Die urartäischen Bestattungsbräuche in: Studien Zur Religion and kultur kleinasiens, Geburtstag, 1978, p. 650-677.

⁴ Մելքոնյան Մ., Ուրարտական ժայռափոր դամբարանները, նկարագրություն և վերլուծություն, Երևան. 1995, էջ 59:

⁵ Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ., Արգիշտիիսինիլի սարկոֆագը, Պատմա-բանասիրական հանդես, 1989, հ. 3, էջ 221-227:

⁶ Մելքոնյան Մ., նշվ. աշխ., էջ 59:

⁷ Հմայակյան Մ., Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 78-82: Խնկիկյան Օ., Հայաստանի հնագիտություն, Երևան, 2009, էջ 186-188: Пиотровский Б., նշվ. աշխ., с. 93:

⁸ Туманян М., Культурные растения урартского периода в Армянской ССР, Ереван 1948, N1, с. 76:

որոնք առկա են նաև խեթական աշխարհում: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի խեթական թաղումները համեմատելով Իգդիրի թաղումների հետ՝ Մ. Վան Լունը կարծում է, որ դիակիզման ծեսը խեթական մշակույթից է տարածվել Ուրարտուում⁹: Բաքի Օգյունը և Էմին Բիլջիքը, դիտարկելով Արծկեում դիակիզմամբ կատարված թաղումները, համամիտ են Վան Լունի կարծիքին, քանի որ դրանք նման են խեթական թաղումներին¹⁰: Մակայն բացատրված չէ այն տեսակետը, որ դիակիզման ծիսակարգը ունեցել է տեղական ծագում: Հայաստանում այս ծիսակարգով թաղումները կատարվել են մինչև վաղ միջնադար¹¹: Երևանյան դամբարաններից մեկում հայտնաբերվել են հանգուցյալի մասնատված ոսկորներ, ինչը վկայում է դիաթաղման մեկ այլ ձևի՝ դիամասնատման մասին¹²:

Հայտնի են Արգիշտիխինիլի թաղումները, որտեղ գտնվել են սարկոֆագներ (երկարությունը՝ 1,52 մ, լայնությունը՝ 0,75-7 մ, խորությունը՝ 0,65 մ), որոնք ծածկված են եղել երեք սալերով: Սարկոֆագի մեջ դրված են եղել չորս աճյունասավորներ, որոնց մեջ գտնվել են մարդկանց կոտրված ոսկորներ¹³: Դրանց կողքին դնում էին այն իրերը, որոնք հանդերձյալ աշխարհում տվյալ մարդու համար անհրաժեշտ է: Սարկոֆագները ունեին անցքեր, որոնք հիմք են տվել Բ. Ա. Կուֆտինին ենթադրելու, որ Ուրարտուում գոյություն է ունեցել այն պատկերացումը, թե հոգին անմիջապես չի լքում հանգուցյալի աճյունը, նույնիսկ դիակի մոխրանալուց հետո և կարիք ունի հաղորդակցվելու արտաքին աշխարհի, մասնավորապես՝ դամբարանում դրված իրերի հետ: Բ. Ա. Կուֆտինը հայտնում է նաև, որ հանգուցյալին սովորաբար այրել են իր

⁹ Burney C., The ancient Near East, London, 1968, p. 51.

¹⁰ Ögün B.; Bigic E., Recent Archaeological Research in Turkey Adilcevaz, Anatolian Studies, 23, British institute of Archaeology at Ankara, London, 1973, p. 14-15.

¹¹ Մարտիրոսյան Հ., Հայաստանի միջին բրոնզեդարյան մշակույթի բնույթն ու զարգացման ուղիները, Հայ Ժողովրդի պատմություն, Երևան, 1971, էջ 161-162; Խաչատրյան Մ., Դիակիզումը Հայաստանում (մ.թ.ա. 2-րդ-3-րդ դդ.), Լրաբեր ՀՄՄՀ, ԳԱ, 1975, հ. 2, էջ 57-69:

¹² Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա., Ուրարտուի հնագիտություն, Երևան, 2010, էջ 170-175:

¹³ Մարտիրոսյան Հ., Թորոսյան Ռ., Արգիշտիխինիլի սարկոֆագը, Պատմաբանասիրական հանդես, 1989, հ. 3, էջ 221-227:

հագուստով և զարդերով հանդերձ¹⁴: Այս հարցի շուրջ Գ. Ղափանցյանը կարծում է, որ ուրարտական աստվածություններից Իրմուշինին կյանքի խորհրդանիշն է, իսկ հոգիներ տեղափոխող աստվածությունը՝ մահի: Հանդերձյալ աշխարհի սահմանին մարդու հոգին հանդիպում էր մեկ այլ աստվածության՝ Շերիթուին, որը պահպանում էր հանդերձյալ աշխարհի մուտքը:

Ուրարտում կար ևս մեկ պատկերացում, ըստ որի՝ երկրից դեպի հանդերձյալ աշխարհ տանող ճանապարհը անցնում է ժայռերի մեջ եղած բնական կամ արհեստական անձավների ճեղքվածքների և հնարավոր է նաև դարպասների (ժայռախորշերի) միջով: Այս են վկայում թաղումների այն ձևերը որոնք կատարված են քարայրներում կամ արհեստական ժայռափոր սրահներում¹⁵: Թաղման ծեսի և ձևերի բազմազանությունը վկայում է, որ Ուրարտում ապրող տարբեր էթնիկ տարրեր, չնայած պետական կրոնի առկայությանը, պահպանում էին իրենց յուրահատուկ պատկերացումները հանդերձյալ կյանքի մասին:

Մինչև միջնադար Բաքի Օգլունը և Կուֆտինն առանձնացնում են միայնակ, գույգ, մոր և մանկան, խմբային թաղումների տեսակները¹⁶: Սակայն միջնադարում օգտագործվել է միայնակ թաղման տեսակը. առանձնացնում են՝ տղաթաղ, քահանայաթաղ և աշխարհաթաղ թաղման տեսակները: Այստեղ թաղման ծեսի խնդիրն էր սիրաշահել, գոհացնել հանգուցյալի հոգին: Մինչև մարմինը հողին հաձնելը այն սավառնում է նրա շուրջ, տեսնում, լսում կատարվածը, ապա միայն հանգրվանում հանդերձյալ աշխարհում¹⁷: Միջնադարում հավատում էին, որ մարդու մահվան օրը նախապես որոշված և գրված է ճակատին¹⁸: Այդ օրերի հաշիվը պահվում է երկնքում, հավաքվում կճուճներում, որոնց մեջ յուրաքանչյուր տարի մի կաթիլ ջուր է կաթում: Երբ կճուճը լցվում է, մարդը մահանում է¹⁹: Եթե մահացողը բարի է, բարի հրեշտակը գալիս էր հոգին առնելու՝ մի փունջ ծաղիկ տալով մեռնողին, իսկ եթե չար է, չար հրեշտակը երկար տանջելով, հարվածներով

¹⁴ Куфтин Б. А., Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский неолит, Вестник Гос. Музея Грузии, вып. 13 в., 1994, с. 69-70:

¹⁵ Ղափանցյան Գ., Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 94-99:

¹⁶ Ögün B., նշվ. աշխ., S. 650-667; Куфтин Б., նշվ. աշխ., с. 60-70.

¹⁷ Լալայան Ե., Ծիսական կարգեր, Թիֆլիս, 1913, էջ 31:

¹⁸ Харатян З., Культурные мотивы семейных обычаев и обрядов у армян /Հայ ազգագրություն և բանահյուսություն հ. 17/, Երևան, 1989, էջ 50-54:

¹⁹ Լալայան Ե., Երկեր, հ. 4, Երևան, 1988, էջ, 186:

տանում էր մեռնողին²⁰: Երբ մարդը հոգին ավանդում է, բոլոր ազգականները սաստիկ լալիս են, իսկ որոշներն էլ մահացողի երեսը դարձնում են դեպի արևելք, շորերը հանում են, կզակին մի թաշկինակ կապում, եթե աչքերը բաց է մնում, ասում են, թե պանդուխտ բարեկամի էր կարոտում, ապա աչքերը փակում են, ձեռքերը կրծքին խաչաձև ծալում՝ աջ ձեռքը ձախ ձեռքի վրա, վրան մի շոր են գցում և հաց դնում սրտին, բացում են պատուհանները և դռները, որպեսզի հոգին առանց խոչընդոտների դուրս գա²¹:

Այնուհետև գալիս է քահանան, օրհնում է ջուրն ու պատր: Լողացնելուց հետո ննջեցյալի ձեռքերին մում են դնում, որպեսզի մյուս աշխարհում իր բարեկամներին ճրագի լույսով տեսնի: Հետո պատանում են սպիտակ կտորով, հետագայում, երբ հագուստ են հագցնում, պատանքը դնում են բարձի տակ, քանի որ առանց պատանքի չէր կարելի ներկայանալ Քրիստոսին: Նաև փաթաթում էին մի կարպետով, որը հողին հանձնելուց հետո իրենց հետ վերադարձնում էին տուն: Հարուստները պատվիրում էին դագաղներ. ծերերի համար անում էին սև, հասակավորներին՝ կապույտ, իսկ երիտասարդներին՝ կարմիր, գույնզգույն ծաղիկներով զարդարված: Հետագայում դագաղի տակ դնում էին նախշազարդ գորգեր, որն այսօր ևս օգտագործվում է թաղման ծիսակարգում: Տղամարդիկ առանց կանանց, քահանայի և խաչվառի առաջնորդությամբ տանում էին ննջեցյալին գերեզմանատուն, դնում էին աջ կողմում, իսկ ավարտից հետո թին և բահը խաչաձև դնում էին գերեզմանի վրա, որպեսզի սատանաները չմտնեն ներս: Այդ ամենից հետո վերադառնում էին սգավորի տուն ճաշելու: Վեց օր ննջեցյալի ընտանիքի անդամները անվա էին մնում, հարազատները վեցերորդ օրը կրկին հավաքվում էին և լվանում էին սգավորների գլուխները: Յոթերորդ օրը գնում են գերեզմանատուն, որտեղ քահանան օրհնում է գերեզմանը²²: Եթե մի ննջեցյալից հետո ընտանիքի անդամներից մեկը հիվանդանում է, սկսում են կարծել, թե ննջեցյալը իսկապես մեռած չէ և ընտանիքի անդամներից յոթ հոգի տառապելու է:

Որոշելու համար մեռած է, թե ոչ, գերեզմանի վրա գարի են գցում և ձի են տանում այնտեղ: Եթե ուտում է, ուրեմն իսկապես մահացած է, իսկ եթե ոչ, այդ դեպքում բաց են անում գերեզմանը, ննջեցյալի գլուխը

²⁰ Grabar A., *Christian Iconography*, New York, 1968, p. 155.

²¹ Մամուլեյան Խ., *Հայ ընտանեկան պաշտամունքը*, Ա.Հ., գ. 12, էջ 216:

²² Լալայան Ե., *Երկեր*, հ. 5, Երևան, 1988թ., էջ, 148:

ջախջախում են կամ մեխ են խփում գլխին, մեկն էլ սրտին: Երբեմն էլ մեռելի սրտից մի կտոր կտրում են և հիվանդին են տալիս, որ ջրով ընդունի և առողջանա²³: Հետագայում հավատում են, որ Հոգին հանգստանում է մարմնի Թաղումով և հաջորդ առավոտյան հեռանում է: Հոգու թռիչքը տևում է 7 կամ 40 օր: Դրա համար, յոթից քառասուն օր գերեզման են այցելում, մեռելատանը ճրագ վառում, որ մահացածի ճանապարհը լուսավոր լինի²⁴: Թաղման արարողությունները կատարվում են մինչև արևի մայր մտնելը, հիմնականում արևի հայտնվելուն պես: Թաղման ծեսը հայ ժողովրդի համար քրիստոնեական կրոնի ընդունումից հետո բաժանվում է մի քանի փուլերի, որոնք ձևավորվելով հնագույն ժամանակներից՝ մինչև օրս օգտագործվում են թաղման ծիսակարգում. Դրանք են՝

- Հոգեվարքում գտնվող հիվանդի հետ վարվելու ձևերի ամբողջությունը. դրա համար օգտագործում են մինչև հիմա Հայ Եկեղեցու խորհուրդներից մեկը՝ կարգ հիվանդացը,

- հանգուցյալի մարմնի նախապատրաստումը, նախնական լաց ու սուգը,

- մեռելատանը կատարվող գործողություններ, քանի դեռ հանգուցյալը տանն է է

- դիակի տեղափոխում գերեզմանատուն, թաղումը,

- հոգեհացը, հիշատակի արարողությունները²⁵:

Մինչև մեր օրերը պահպանվել են հանդերձյալ կյանքի մասին պատկերացումները, ինչպես նաև միջնադարում կատարվող թաղման որոշ ծեսեր, որոնք եկել են հնագույն շրջանից: Թաղումը՝ որպես ծիսակարգ և նրա զարգացման առանձնահատկությունները ներկայացնելով, կարող ենք նշել, որ վաղ շրջանից մինչև միջնադար թաղման ծիսակարգի մեջ նկատվում են փոփոխություններ, որոնք, անշուշտ, կապված են հնագույն հավատալիքների և քրիստոնեական կրոնի հետ: Թաղման ծեսը, իր մեջ պահպանելով հնագույն շրջանի ավանդույթները, ժառանգականորեն հասել է մինչև մեր օրերը: Սակայն ակնհայտ

²³ Լալայան Ե., Գանձակի գավառ, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1901թ., էջ, 146-151:

²⁴ Հարությունյան Ե., Հայ ժողովրդական սգո երգեր, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 24, Երևան, 2001, էջ 65-68:

²⁵ Պողարեան Արք. Նորայր, Ծիսագիտութիին, Նիւ Եորք, 1990թ, էջ, 113-119:

երևում են վաղ շրջանի և միջնադարյան հանդերձյալ աշխարհի մասին պատկերացումների, մահվան գաղափարի շուրջ եղած տարակարծիքների և հանգուցյալի աճյունի նկատմամբ վերաբերմունքի տարբերությունները:

ANJELA YERITSYAN
(YSU)

**SOME FEATURES OF THE BURIAL RITUAL
IN THE ARMENIAN HIGHLANDS**

Studying funeral as a ritual, presenting its development, we can say that during the early Middle Ages some changes are observed in the ritual, which are related to the ancient beliefs and Christianity. The funeral ritual has maintained the ancient traditions and has reached our days through generations. However, the difference between early and medieval iconography, the idea of death and the treatment of the deceased's body is obvious.

ՌՈՒԶԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
(ՃՇՀԱՀ)

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՌԴԱՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(ԹԱՄԱՆՑԱՆԱԿԱՆ ՈՃԻ) ՄԵԶ

Խորհրդահայ ճարտարապետության մեջ միջնադարյան եկեղեցական ճարտարապետական տարրերի կիրառման փորձերը հաջողությամբ են պսակվել խորհրդահայ անվանի ճարտարապետներ Ա. Թամանյանի, Գ. Թամանյանի, Գ. Աղաբաբյանի, Ռ. Իսրայելյանի, Մ. Գրիգորյանի և այլոց կողմից: Մասնավորապես, Ա. Թամանյանի ստեղծագործական նկրտումները՝ ազգայինը դարձնել գերակա հայեցակարգ նորակերտ քաղաքի կերպարի ձևավորման գործընթացում, հանգեցրեց նոր ոճի՝ ազգային նեոդասականության կամ «թամանյանական ոճի» ստեղծմանը: Խորհրդահայ ճարտարապետական ժառանգությունը զգալի տեղ է գրավում հայ ազգային մշակույթի մեջ՝ մնալով կարևոր առ այսօր: Խորհրդային ժամանակաշրջանում ձևավորվեցին այնպիսի ճարտարապետական ուղղություններ, ինչպիսիք են ազգային նեոկլասիցիզմը¹, խորհրդային մոդեռնիզմը² և կոնստրուկտիվիզմը³: Վերջինս XX-րդ դարի երեսունական թվականներին խիստ քննադատության է արժանանում՝ որակվելով որպես խորհրդային ժողովրդի համար օտար ուղղություն⁴: Վերոնշյալ ոճերի դերը անհնար է համեմատել: Սակայն, հարկ է առանձնացնել ազգային նեոդասականությունը՝ որպես հայկական միջնադարյան ճարտարապետության ժամանակակից մեկնաբանություն կամ այլ կերպ ասած՝ ազգային ճարտարապետական ավանդույթների վերածնունդ:

Այս ոճի երկրորդ անվանումը «թամանյանական» է: Հարկ է նշել, որ հենց Թամանյանը կատարեց առաջին քայլերը նեոդասական և հայ-

¹ Praz M., On Neoclassicism. London, 1972.

² Vienna Centre of Architecture, Soviet Modernism 1955-1991: Unknown History, Park Books 2013.

³ Chernikov Y., Architectural Fantasies in Russian Constructivism, Dom publisher, 2013.

⁴ Арутюнян В., Оганесян К., Архитектура Советской Армении, Ереван 1955, с. 13-14.

կական միջնադարյան ճարտարապետության միաձուլման գործում: Այդ փորձերի լավագույն նմուշներն են Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի (նախկինում՝ ժողովրդական տան), Կառավարության շենքերը⁵, Ազգային գրադարանի շենքը և այլն, որոնցում Թամանյանը լայնորեն կիրառում է հայ վաղ միջնադարյան ճարտարապետական տարրեր:

Օպերայի շենքի երկրորդ հարկի շքապատշգամբի սյունաշարային տարրերն ազդված են Տեկորի (V-VI-րդ դարերի գմբեթավոր եռանավ բազիլիկ) եկեղեցու շքամուտքի ճարտարապետական ձևերից: Նույնկերպ Երերույքի տաճարի (V-VI-րդ դարեր՝ եռանավ բազիլիկ)⁶ շքամուտքի ձևը կիրառվել է Կառավարական տան շենքի ճակատային հորինվածքի մեջ, իսկ վաղմիջնադարյան լուսամուտների կամարունքները (Քասախի տաճար, Պտղնիի տաճար)⁷ օգտագործվել են վերջինիս ճարտարապետական լուծման մեջ՝ որպես գերակա տարր: Հատկանշական է նաև եկեղեցական ուղղաձիգ որմնախորշերի կիրառումը Թամանյանի կողմից, մասնավորապես, կնշեինք կենտրոնաձիգ ակոսներով խորշերը, որոնք վերաբերում են ավելի ուշ շրջանի (տես՝ նկ. 1, Արատես, Ս. Աստվածածին եկեղեցի 11-րդ դար): Ինչ վերաբերում է խոյակներին, ապա այստեղ կիրառվել է Արգնիի և Զվարթնոցի խոյակազարդային հորինվածքը⁸: Այս խոյակազարդերը կիրառել են նաև Ա. Մազմանյանը և Հ. Մարգարյանը Գրքերի պալատի (1940 թ., նախագծվել է 1935թ.-ին) շենքի ճակատային հատվածի պերիստիլի լուծման մեջ: Անդրադառնալով այս կառույցին՝ հարկ է նշել, որ վերոնշյալ շինության պերիստիլի քիվի ձևը բնութագրական է վաղմիջնադարյան ճարտարապետությանը, մասնավորապես, Բագարանի և Թարգմանչաց վանքերի տիպերին⁹: Սակայն այդ հնարքը ավելի վաղ կիրառել է Ա. Թամանյանը (Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքի ճակատ, Ազգային գրադարանի շենքի ճակատ): Հետագայում նմանատիպ լուծումներ կարելի է նկատել բազմաթիվ շինությունների վրա:

⁵ Арутюнян В., Асратян М., Меликян А., Москва, 1968, с. 96.

⁶ Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Ե., 1992, էջ 89:

⁷ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 89-90:

⁸ Գրիգորյան Մ., Ոլորագարդով խոյակները հայ ճարտարապետության մեջ, Պատմա-բանասիրական հանդես, 1959, N 1-2, էջ 258:

⁹ Токарский Н., Архитектура Армении 4-14 вв., Ереван, 1961, с. 152.

Չնայած այն հանգամանքին, որ միջնադարյան ճարտարապետական պահպանված շինությունների զգալի մասը կրոնական կառույցներ են, այնուամենայնիվ, մեզ են հասել նաև որոշ պալատական շինությունների, հյուրատների, բաղնիքների կիսավեր հատվածներ, որոնց զարդատարրերը նույնպես կիրառվեցին ազգային նեոդասական ոճի հարստացման համար: Այսպես, օրինակ, Մատենադարանի գլխավոր ճակատի (ճարտարապետ Մ. Գրիգորյան 1955թ.) շքամուտքի հատվածը հիշեցնում է Անի պատմական մայրաքաղաքում գտնվող Մարգաի (տես՝ նկ. 2) և Պարոնի պալատների շքամուտքերի դռների բացվածքների երեսապատումը, որոնք կատարված են աստղաձև և ռոմբաձև (վերակազմությունը՝ Թ. Թորամանյան, որոնք վերաբերում են Ջաքարյանների շրջանին)¹⁰: Ինչպես Թամանյանը, այնպես էլ Գրիգորյանը ճակատի գեղազարդման համար կիրառել է որմնախորշեր: Թորոս Թորամանյանը, ով թե՛ Թամանյանի, և թե՛ Գրիգորյանի համար ուղեցուց էր հանդիսանում, առաջարկեց Մ. Գրիգորյանին ուսումնասիրել Մր. Առաքելոց եկեղեցու գծագրերը: Գրիգորյանը նշում է, որ շինության համաչափության և գեղարվեստական ձևերում օգտագործել է հենց այդ եկեղեցու սկզբունքները: Այստեղ հեղինակը կիրառում է պարզ որմնախորշեր՝ բնորոշ 7-րդ դարին¹¹ (Մր. Հռիփսիմեի տաճար, 618թ):

Միջնադարյան եկեղեցական ներքին հատվածի սյունախորձերը օգտագործեց Է. Տիգրանյանը Երևանի երկաթուղային կայարանի շենքի սպասարանի ներքին տարածության հարդարման համար: Միջնադարում այս ճարտարապետական տարրերը կատարելագործման էին հասել 10-րդ դարի հանձարեղ ճարտարապետ Տրդատի կերտած շինություններում (Արգինայի տաճար, Անիի Մայր տաճար): Վերոնշյալ օրինակները հիմնականում վերաբերում են 1930-1955 թթ.:

1960-ական թթ. խորհրդահայ ճարտարապետությունը հակվում է դեպի մինիմալիզմ: Շինությունները զրկվում են իրենց մոնումենտալությունից և ճարտարապետական տարրերի առատությունից: Շատ դեպքերում մնում է միայն եզրագարդը կամ քիվը: Սակայն սկզբունքային նրբերանգները, օրինակ, կամարա-թաղային հորինվածքը, մնում են անփոփոխ: Հաճախ այս ոճում, ճակատը զարդարելու նպատակով, օգտագործվում են կեղծ որմնակամարներ, որոնք ևս հանգում են մեր միջ-

¹⁰ Հարությունյան Վ., Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 72- 88:

¹¹ Թորամանյան Թ., Նյութեր Հայկական ճարտարապետության Պատմության, Երևան, 1942, էջ 93-95:

նադարյան ճարտարապետական ավանդույթներին. այդպիսի որմնակամարների կարելի է հանդիպել միջնադարյան եկեղեցիների աբսիդային հատվածում, օրինակ, Արթիկի եկեղեցու աբսիդի վրա գտնող որմնակամարները:

Այս շրջանի կատարյալ օրինակ է Ռ. Բարայեյանի նախագծած Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը: Այն ամբողջովին արտացոլում է հայ միջնադարյան հարուստ մշակութային ժառանգությունը: Ներքին հարդարման համար, սակայն, Բարայեյանը չի կիրառել եկեղեցական կառույցներին բնորոշ կոնստրուկտիվ ձևեր, մասնավորապես, միջնադարյան եկեղեցիներին բնորոշ ծածկաձևեր:

Բացի ճարտարապետական ձևերի և տարրերի կիրառումից, նեոկլասիցիսի ազգային բնույթը բնորոշվում է տեղական այնպիսի քարատեսակների օգտագործումով, ինչպիսիք են տուֆը և բազալտը: Դեռևս միջնադարյան ճարտարապետության մեջ կարելի է հանդիպել զանազան տիպի տուֆերի կիրառման, որոնք հետագայում օգտագործվեցին նաև նեոդասական ոճում: Մինչխորհրդային ժամանակաշրջանում օգտագործվող սև տուֆը 1930-ական թթ. իր տեղը զիջեց Արթիկի տուֆին¹²: Տուֆի այս տեսակը հայտնի է դեռևս 3-4-րդ դարերից, որը կիրառվել է բազմաթիվ եկեղեցիների շինարարության մեջ՝ Հառիճավանք (7-13-րդ), Արթիկի Մբ. Աստվածածին եկեղեցի (5-րդ)¹³: Գաղտնիք չէ, որ հայկական ճարտարապետությունը քարակերտ է: Բացի հրաբխային տուֆերից (Արթիկի վարդագույն, Գեղաքարի բաց վարդագույն, մարմնագույն, Լոռու կարմրավուն), կիրառվում էին նաև ֆելզիտային տուֆեր (Լոռի, Տավուշ, Վայոց ձոր):¹⁴ Լայն կիրառում ստացան նաև բազալտը և գրանիտը:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ թամանյանական ոճը ավանդական և ազգային ոճերի նոր վերածնունդ էր: Այն ձևավորեց Հայաստանի ճարտարապետական դիմագիծը: Առ այսօր այն չի կորցնում իր արդիականությունը և հետաքրքրությունը: Թերևս ամենամեծ առավելությունը և գրավչությունն այն է, որ Թամանյանը և այլ ճարտարապետներ, որոնք ստեղծագործում էին այս ոճում, ոչ թե կրկնեցին միջնադարյան ճարտարապետության առանձին էլեմենտներ, այլ հայե-

¹² Арутюнян В., Оганесян К., Архитектура Советской Армении..., с. 28.

¹³ Հայաստանի բնաշխարհ (Ընտանեկան հանրագիտարան մատենաշար), Երևան, 2006, էջ 65:

¹⁴ Նույն տեղում, էջ 98:

ցակարգային մոտեցում ցուցաբերեցին հնի և նորի՝ նեոդասականությանն հետ միաձուլման հարցում՝ հստակ գիտակցելով ազգային նրբերանգների շեշտադրման կարևորությունը տվյալ ժամանակաշրջանի համար:

Աղյուսակ 1 (Աղյուսակը ներկայացնում է հայ միջնադարյան ճարտարապետական տարրերի ազդեցությունները խորհրդահայ ճարտարապետության նեոդասական ոճի վրա)

Ա. Սպենդիարյանի անվանօպերայի և բալետի թատրոնի շենք (նախագծման ժամանակ ժողովրդական տուն)	Տեկորի տաճարի շքամուտք
Կառավարական տան շենք	Երեբունյքի, Քասախի և Պտղնիի տաճարներ
Գրքի պալատ	Բագարանի, Թարգմանչաց վանքերի քիվեր
Մատենադարանի շենք	Առաքելոց եկեղեցի, Հռիփսիմեի տաճար, Սարգսի և Պարոնի պալատներ
Երևանի երկաթուղային կայարանի շենք	Արգինայի տաճար, Անիի մայր տաճար

**RUZANNA MIKAYELYAN
(NUACA)**

**THE MANIFESTATION OF TRADITIONS OF THE ARMENIAN
MIEVIAL ARCHITECTURE IN NATIONAL NEOCLASSICAL
(TAMANIAN) STYLE**

The Middle Ages have been the most fruitful period of the Armenian architecture. Masterpieces of the Armenian medieval architecture still remain unsurpassed by their elegance, careful planning and thought as well as symbolic interpretation. One of the purposes of the Armenian Soviet architecture was the restoration of these traditions and delivering them to viewers as a unity of old and new. This

fusion has brought a new style named national neoclassicism. The celebrated Armenian architect Alexander Tamanian was the creator of this style, whose ideas became a guideline for the whole generation of architects.

In her article, the author attempts to show reflection of the distinctive features of the Armenian medieval architecture (such as idea, expressiveness, decorative solutions, etc.) in the Armenian Soviet architecture.



Նկ. 1, Չախ կողմում՝ Արատես Ս. Աստվածածին եկեղեցու որմնախորշ, աջ կողմում՝ Կառավարական տան շենքի ճակատի որմնախորշ (ճարտ.՝ Ա. Թամանյան)



Նկ.2, Մարգսի պալատի շքամուտքից հատված

ԼԻԱՆԱ ԱՂԱԲԵԿՅԱՆ

(ՀՊՄՀ)

ՍՐԲԱԶԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12-ՐԴ Դ. 80-ԱԿԱՆ ԹԹ.

12-րդ դարի վերջին քառորդին Մերձավոր Արևելքում քրիստոնյա և մահմեդական տարբեր քաղաքական ուժերի դրսևորած հավակնությունները և դրանց իրագործման ուղղությամբ մշակած ծրագրերն իրենց ազդեցությունը թողեցին նաև Սրբազան Հռոմեական կայսրության և Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների վրա՝ հիմք դնելով երկու քրիստոնյա պետությունների միջև դիվանագիտական փոխառնչությունների հաստատմանը:

Տրամաբանական պետք է համարել խաչակրաց արշավանքների դարաշրջանում երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների ուսումնասիրության շրջանակներում հատկապես 12-րդ դ. 80-ական թթ. տեղի ունեցած զարգացումների շեշտադրումը, քանզի խաչակրաց առաջին երկու արշավանքների ժամանակ Սրբազան Հռոմեական կայսրության և Կիլիկիայի հայոց իշխանության միջև որևէ լուրջ դիվանագիտական առնչության օրինակ մեզ հայտնի չէ: Ի թիվս այլ հանգամանքների, դա թերևս պայմանավորված էր նախ նրանով, որ խաչակրաց առաջին արշավանքի ժամանակ Կիլիկիայի հայկական իշխանությունը դեռևս որպես անկախ պետություն կայացման փուլում էր: Ինչ վերաբերվում է Սրբազան Հռոմեական կայսրությանը, ապա վերջինս՝ ի տարբերություն հաջորդող արշավանքների, երկրորդ արշավանքի ժամանակ ներքին և արտաքին որոշակի դրդապատճառներից ելնելով, դեռևս բացահայտ կերպով չէր արտահայտում սեփական քաղաքական ծրագիրը: Այսպիսով, Շտաուֆենների և հայերի՝ գերմանացի պատմաբան Պ. Հալֆթերի կողմից դիպուկ կերպով «էկզոտիկ» որակված փոխհարաբերությունները¹ պայմանավորված էին այն քաղաքական շահերով, որոնցով առաջնորդվում էին կողմերը խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին: Բնականաբար, քննարկվող

¹ Halfter P., Die Staufer und Armenien, Von Schwaben bis Jerusalem. Facetten staufischer Geschichte (Veröffentlichungen des Alemannischen Instituts 61), Sigmaringen, 1995, S. 187.

ժամանակաշրջանում Հոհենշտաուֆենների և Ռուբինյանների միջև դիվանագիտական փոխհարաբերությունների հաստատման և պահպանման հարցում կողմերից յուրաքանչյուրն ուներ սեփական դրդապատճառները:

1. Կիլիկիայում վասալական գերակայությունը կամ նրա հետ դաշնակցային հարաբերությունները Շտաուֆեններին կտար կայսրության գերիշխանությունը դեպի Արևելք ընդարձակելու հնարավորություն՝ տարածաշրջանում կայսրության և պապականության համար ստեղծելով շահեկան դիրք:

2. Մերձավոր Արևելքում Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինի տարած հաղթանակներից հետո կայսրությունը Կիլիկյան Հայաստանը դիտարկում էր որպես արևելյան քրիստոնեական մշակութային համակարգի ներկայացուցիչ, որը դառնալու էր քաղաքակրթական կամուրջ արևմտյան և արևելյան քրիստոնեական միջավայրերի միջև: Կայսրության համար հայոց իշխանության հետ հարաբերությունների հաստատումն ուներ ավելի շատ քաղաքակրթական, քան գուտ քաղաքական նշանակություն:

3. Լևոն Բ-ն ուներ Արևմտյան կայսրության աջակցության կարիքը՝ իր իշխանությունը խաչակրաց պետությունների համակարգում ընդգրկելու համար:

4. Շտաուֆենները և Ռուբինյաններն ի դեմս Բյուզանդիայի ունեին ընդհանուր հակառակորդ:

Երկու քաղաքական ուժերի միջև դիվանագիտական հարաբերությունների զարգացման և որպես վերջնարդյունք Սրբազան Հռոմեական կայսրության թագով թագադրվելու հարցում Կիլիկյան Հայաստանի տեսանկյունից առաջնային էին նաև հետևյալ գործոնները.

1. Թագադրվելով արևմտյան թագով՝ Լևոն Բ-ն Կիլիկյան Հայաստանը կներառեր տարածաշրջանում դեռևս ակտիվ դերակատարում ունեցող խաչակրաց համակարգի մեջ:

2. Արևմուտքից ստացած թագը Լևոն Բ-ին հնարավորություն կտար իրագործել իր՝ հայ-անտիոքյան միացյալ պետություն ստեղծելու ծրագիրը՝ միավորելով նույն կրոնը դավանող, բայց տարբեր քաղաքակրթական միջավայրեր ներկայացնող (խաչակրաց և արևելյան քրիստոնեական) քաղաքական ուժերին:

Պատահական չէր, որ հենց նշված ժամանակահատվածում, երբ ստեղծվել էր նման նպաստավոր արտաքին և ներքին իրավիճակ, հայ հասարակական-քաղաքական շրջանակներում սկսեց քննարկվել հա-

յոց թագավորության վերականգնման հարցը, ինչպես նաև, որպես այդ հարցի լուծման առաջին քայլ, արքայական խորհրդանիշները Բյուզանդական կայսրությունից (Արևելքից) կամ Սրբազան Հռոմեական կայսրությունից (Արևմուտքից) ստանալու խնդիրը: Միջնադարում ընդունված քաղաքական ընկալումների համաձայն իշխանին որպես թագավոր կարող էին օժել միայն Հռոմի պապը կամ կայսրը²: Ըստ այդմ, Կիլիկիայի հայկական իշխանությունը ևս՝ որպես միջազգային հարաբերությունների սուբյեկտ, պետք է ընտրեր այս ուղին, քանզի միայն նման ճանապարհով նրա կողմից ձեռք բերված թագավորության կարգավիճակը կարող էր ստանալ միջազգային ճանաչում:

Միջնադարյան իրավաքաղաքական գիտակցության մեջ սովորաբար թագադրությունը ենթադրում էր նաև որոշակի քաղաքական կողմնորոշում: Ճիշտ է, որպես կանոն դա պայմանավորված էր լինում կոնկրետ ուժերի փոխդասավորվածությամբ, այնուամենայնիվ Ռուբինյան իշխանները պարտավոր էին ավելի, քան երբևէ հետևողականություն ցուցաբերել արտաքին քաղաքական կողմնորոշման հարցում՝ հաշվի առնելով հայոց պետության համար դրանից բխող բոլոր հնարավոր հետևանքները: Անշուշտ, իրադարձությունների նման ընթացքը ձեռնտու էր նաև Սրբազան հռոմեական կայսերը առաջին հերթին այն պատճառով, որ կայսրությունից Կիլիկյան Հայաստանի վասալական կախվածության հնարավորությունը, առավել ևս, էթե հեռանկարում խոսքը լինելու էր ոչ թե սոսկ իշխանության, այլ Հռոմի պապի և կայսեր կողմից ճանաչված քրիստոնեական թագավորության մասին, կարող էր դառնալ հերթական գործնական քայլը համաքրիստոնեական գաղափարախոսության կենսագործման ճանապարհին:

Ըստ պատմագիտական գրականության մեջ շրջանառվող առավել ընդունված տեսակետի՝ Սրբազան Հռոմեական կայսրության և հայոց իշխանության միջև դիվանագիտական հարաբերությունների առաջին հավանական փորձերը թվագրվում են 12-րդ դ. 80-ական թվականներով՝ մասնավորապես 1184 թվականով³: Խոսքը Հռոմի Լուկիոս Գ պապի (1181-1185 թթ.) կողմից հայոց կաթողիկոս Գրիգոր Դ Տղային (1173-1193 թթ.) ուղարկված նամակի մասին է, որում արժարժվում էր հայոց եկեղեցու կողմից կաթոլիկ եկեղեցուն կատարվելիք

² Այս մասին մանրամասն նույն տեղում, Տ. 195:

³ Halfter P., Die Staufer und Armenien, S. 190: Հմմտ. Halfter P., L'Église arménienne entre la papauté et les Byzantins aux XII et XIII siècles, Paris, 2009, p. 67.

դավանաբանական զիջումների հարցը⁴. «Ընդ կարգաց գրոցս յիշի առանձինն ի խորագրի թղթոցն և Ձեռնադրութեանն կարգ ըստ Լատինաց, որում համաձայն գտանին բազում մասամբ...»⁵:

Նամակի ուղարկման տարեթիվը համընկնում է այն ժամանակահատվածի հետ, երբ Ֆրիդրիխ Շիկամորուսը գտնվում էր Վերոնայում, և սրբազան կայսեր ու Հռոմի պապի միջև ընթանում էին ակտիվ բանակցություններ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները վերջնականապես հստակեցնելու, ինչպես նաև խաչակրաց նոր արշավանքի կազմակերպման հետ կապված խնդիրների շուրջ: Ուստի, չի բացառվում, որ կայսրության և Կիլիկյան Հայաստանի միջև արդեն այս ժամանակ տեղի ունեցած լինեն դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին փորձերը:

Վարդան Վարդապետի վկայությամբ, քննարկվող ժամանակաշրջանում պապական արքունիք է ներկայացել հայկական պատվիրակությունը՝ Փիլիպոպոլիսի հայ պատվիրակի գլխավորությամբ, որի նպատակն էր ներկայացնել Բյուզանդական կայսրությունում հայ եկեղեցական համայնքի ծանր վիճակը: Ստեղծված իրավիճակը հաշվի առելով՝ Գրիգոր Դ-ն Փիլիպոպոլիսի պատրիարքին, ում եկեղեցական ծուխը Արևելահռոմեական կայսրությունում ամենակարևորներից էր, հանձնարարում է օգնության խնդրանքով դիմել պապին: Ըստ Վարդանի՝ Լուկիոսը ոչ միայն ջերմ ընդունելության է արժանացնում պատվիրակությանը, այլև ժողովում է Արևմուտքի հոգևոր և աշխարհիկ մեծամեծերին՝ «եւ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս»⁶ (ըստ հեղինակի՝ նրանց թվում էին Անգլիայի և Ֆրանսիայի թագավորները,

⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Հ. Բ., Հաւաքածոյ, Վիեննա, 1963, էջ 78-79: Հմմտ Բոզոյան Ա., Պապությունն ու հայերը վաղ և զարգացած միջնադարում (առաջին շփումներից մինչև 1198 թ. եկեղեցական միության հաստատումը), «Էջմիածին», 1996, դեկտեմբեր, ԺԲ, էջ 121-22:

⁵ Դ. Ալիշան, Միսուան, Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 466: Հմմտ Գ. Հովսեփյան, Հովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց. Հ. Ա., Ե դարից մինչև 1250 թ., Անթիլիաս, 1951, էջ 537: Ներսես Լամբրոնացու կողմից կատարված նամակի ամբողջական թարգմանությունը ներկայացված է Մ. Չամչյանի «Պատմություն հայոց» աշխատության մեջ: Չամչյանց Մ., Պատմութիւն հայոց, Հ. 3, Վենետիկ, 1786, էջ 142-144:

⁶ Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Լուսաբանեալ ի Վենետիկ, 1862, էջ 134:

Մրբազան Հռոմեական կայսրը և նույնիսկ Երուսաղեմի լատինական և Իսպանիայի պատրիարքը⁷⁾ և ընդհանուր նամակով դրական պատասխան է տալիս կաթողիկոսին:

Բհարկե, հայ պատմագրի այս տեղեկատվությունը չափազանցված էր և չէր կարող զերծ մնալ սուբյեկտիվ գործոնների ազդեցությունից. «Ցանկությունը՝ հնարավորինս ապահովելու սեփական գործի պաշտոնական հիմքերը, այստեղ իրավունք է տալիս հայկական ժամանակագիրներին՝ առաջնորդել փետուրին»⁸⁾:

Չափազանցությունը կայանում է նրանում, որ Ֆրիդրիխ Շիկամորուսը չէր կարող ներկա լինել վերոնշյալ ժողովին, երբ Լուկիոս Գ-ն նամակ էր գրում հայոց կաթողիկոսին: Պահպանվել է նամակի հայերեն թարգմանությունը, և այն թվագրված է դեկտեմբերի 3-ով, իսկ որպես ժողովի անցկացման վայր մատնանշված է Վերոնան⁹⁾: Ֆրիդրիխի և պապի հանդիպումը տեղի էր ունեցել դեռևս հուլիսի 22-ին, մինչդեռ քննարկվող ժամանակահատվածում գերմանական կայսրը ժամանակավորապես լքել էր Վերոնան ու գտնվում էր Ցիվիդալում, որտեղից նա Վերոնա վերադարձավ ավելի ուշ: Բհարկե, սա ամենևին չի բացառում հայկական պատվիրակության և Ֆրիդրիխ Շիկամորուսի հանդիպման հնարավորությունը, սակայն փոքրացնում է դրա հավանականությունը:

Շտաուֆենյան տիրակալի հետ Փիլիպպոլիսի եպիսկոպոսի հանդիպումը տեսականորեն կարող էր տեղի ունենալ հոկտեմբերի կեսից մինչև նոյեմբերի սկիզբ ընկած ժամանակահատվածում կամ դեկտեմբերի երկրորդ կեսին, երբ կայսրը վերադարձել էր Վերոնա, չնայած նման հանդիպման մասին որևէ արժանահավատ տեղեկություններ չեն պահպանվել¹⁰⁾:

Հարկ է նշել, որ եթե անգամ ընդունենք, որ 12-րդ դարի 80-ական թթ. սկզբին Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ գործնական հարաբերությունները մտացածին էին և չէին համապատասխանում իրականությանը, այնուամենայնիվ, հայ հեղինակների կողմից այդ հարաբերությունների կարևորումը հերթական անգամ վկայում է այն նշանակության մասին, որ հայ իրականության մեջ տրվում էր կայսրության հետ դիվանա-

⁷⁾ Նույն տեղում:

⁸⁾ Halfter P., Die Staufer und Armenien, S. 191.

⁹⁾ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 466:

¹⁰⁾ Այս հնարավոր հանդիպման վերլուծության մասին նաև P. Halfter, Die Staufer und Armenien, S. 190-191:

գիտական փոխառնչությունների հաստատմանը: Ընդ որում, ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ հերթական անգամ փորձ էր արվում այդ հարաբերություններն օգտագործել որպես հակակշիռ՝ Բյուզանդական կայսրության դեմ մղվող քաղաքական և մշակութային պայքարում:

Մրբազան Հռոմեական կայսրության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները կարևորելու միտումը տեսանելի է նաև արևմտյան հեղինակների մոտ: 12-րդ դարի 80-ական թթ. կեսերին Ֆրիդրիխ Շիկամորուսի և Ռուբինյան իշխանության միջև դիվանագիտական փոխհարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկատվություն է հաղորդում գերմանական ժամանակագիր Գոթֆրիդ Վիտերբացին (Գոթֆրիդ ֆոն Վիտերբ): Վերջինս կայսերական պալատում և պապական արքունիքում դիվանագիտական առաքելության մեջ գտնված հույների, սարացիների և պարսիկների կողքին հիշատակում է նաև հայերին, ովքեր իրեն ապահովել են արժեքավոր տեղեկատվությամբ¹¹: Այս ընդհանրական տեղեկությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նույնիսկ եթե հայկական դեսպանությունը Եվրոպայում գտնվելու ընթացքում անմիջական հանդիպում չի ունեցել Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ, այնուամենայնիվ, որոշակի ուշադրության է արժանացել կայսերական արքունիքի կողմից¹²:

Պահպանված տեղեկությունները վկայում են այն մասին, որ սրբազան հռոմեական կայսրը ևս քննարկվող ժամանակահատվածում պատրաստ էր փոխշահավետ պայմաններով ընդառաջ գնալ Ռուբինյանների քաղաքական ծրագրերին: Այս առումով հիշատակության արժանի են դարձյալ Վարդանի մոտ պահպանված տեղեկություններն այն մասին, որ Շիկամորուսը դեռևս մինչև խաչակրաց արշավանքը Լևոնի մոտ է ուղարկում երեք պատվիրակների. «Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լևոն, և ոչ հասաւ առ նա»¹³: Ցավոք, հեղինակը չի նշում, թե որտեղից էին այդ պատվիրակները, ինչը հնարավորություն կտար ավելի ամբողջական պատկերացում կազմել պատվիրակության առաքելության մանրամասների մասին¹⁴:

¹¹ P. Halfter, *Die Staufer und Armenien*, S. 191.

¹² Böhmer J. F., *Regesta imperii*, IV, 2, *Die Regesten des Kaiserreichs unter Friedrich I. 1122 (1152)-1190*, Wien, Köln, Weimar, 2011, S. 330:

¹³ Հաւարքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 136:

¹⁴ Vartan le Grand, *Extrait de l'histoire universel*, RHC, Documents Arméniens T. 1,

Ուշագրավ է, որ Ֆրիդրիխ Շիկամորուսի կենսագիր Օտտոն Ֆրայզինգենցու (Օտտոն ֆոն Ֆրայզինգեն) «Ժամանակագրության» մեջ նույնիսկ պահպանվել է վկայություն, ըստ որի՝ դեռևս Եվգենիոս Գ պապի (1145-1153 թթ.) և հայոց Գրիգոր Գ կաթողիկոսի (1113-1166 թթ.) միջև հաստատվել է նամակագրություն, և ըստ գերմանացի հեղինակի՝ նրանց միջև «շփումը ջերմ էր»¹⁵:

Արևմտյան կայսրության և Կիլիկիայի հայոց իշխանության միջև դիվանագիտական շփումների հաջորդ ուշագրավ դրվագը թվագրվում է 1189 թվականով, երբ Տարսոնի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին հոգեգալստյան տոնին հանձնարարություն է ստանում Լևոն Բ-ից գնալ Հռոմկլա և այնտեղ կաթողիկոսի հետ քննարկել դեպի Արևելք արշավող սրբազան կայսեր ընդունելության հարցը: Լամբրոնացուն չի հաջողվում ավարտին հասցնել Ռուբինյան իշխանի հանձնարարությունը, քանի որ արքեպիսկոպոսը Մարաշ քաղաքի մոտակայքում հարձակման է ենթարկվում թուրքմենների կողմից, որի արդյունքում սպանվում են նրա պահակախմբի անդամները և 20 կուսակրոն հոգևորականներ¹⁶: Չնայած այս առաքելության ձախողմանը՝ Ներսեսի հաղորդած տեղեկատվությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Լևոնն արդեն նախապես տեղեկացված է եղել Ֆրիդրիխ Շիկամորուսի ժամանման մասին¹⁷:

Ժամանակակից մի շարք հեղինակների կարծիքով Լևոնը իշխանը, Ներսես Լամբրոնացին և Գրիգոր Դ-ն ընդառաջ են գնացել գերմանական կայսեր բանակին, որից հետո նրանք լսել են, որ Ֆրիդրիխ Ա-ն մոտենում է Սելևկիա քաղաքին¹⁸: Թերևս սա ամենահավանական տարբերակն է Շիկամորուսի արևելյան արշավանքի ժամանակի և ուղղության մասին հայկական կողմի տեղեկացվածության վերաբերյալ, քանզի մեզ հասած պատմագիտական նյութը հնարավորություն չի տալիս այս հարցի շուրջ կատարել որևէ այլ եզրակացություն: Առավել ևս, որ, ի տարբերություն քննարկվող ժամանակաշրջանի մի շարք հեղինակների, որոնց հաղորդած տեղեկությունները Սրբազան Հռոմեա-

pp. 440-441: Հմմտ Հալաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, էջ 136:

¹⁵ Roma-Armenia sous la direction de Mutaftian C., Rome, 1999, p. 126.

¹⁶ Tournebize F., Histoire politique et religieuse de l'Arménie depuis les origines des Arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393), Paris, 1900, p. 272.

¹⁷ Ներսես Լամբրոնացու այս հիշատակության մասին մանրամասն Recueil des historiens des croisades, Documents Arméniens T. 1, Paris, 1869, p. 564.

¹⁸ Halfter P., Die Staufer und Armenien, S. 194.

կան կայսրության և Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական հարաբերությունների լուսաբանման տեսանկյունից շատ հարցերում միանշանակ չեն, պետք է բարձր գնահատել Ներսես Լամբրոնացու ճշմարտասիրությունը և պատմական նյութը հնարավորինս օբյեկտիվ շարադրելու ձգտումը:

Պատմագիտության մեջ շրջանառվող տեսակետներից մեկի համաձայն՝ Լեոնը ոչ թե մեկ, այլ երկու կամ նույնիսկ ավելի անգամներ է պատվիրակներ ուղարկել Արևելք արշավող Ֆրիդրիխ Շիկամորուսին ընդառաջ: Մասնավորապես Ս. Պապիկյանը նշում է. «Հայերը անձկանօք կը սպասէին մեծ վեհապետին: Լեոն ետեւէ ետեւ պատգամաւորներ կը դրկէր անոր, որոնք դժբախտաբար չէին հասներ՝ Թուրքմէններէն խափանուած»¹⁹: Հավանական է, որ հեղինակը նկատի է ունենում ոչ միայն խաչակիրներին ընդառաջ գնացած պատվիրակությունը, այլև ավելի վաղ Եվրոպա ուղևորված դեսպաններին, որոնք, ըստ էության, հետապնդում էին նույն նպատակը:

Կիլիկյան Հայաստանի՝ խաչակրաց արշավանքի շրջանակներում Սրբազան Հռոմեական կայսրությունից ունեցած սպասելիքները պատկերացնելու տեսանկյունից կարևոր են նաև խնդրո առարկա ժամանակաշրջանում Ներսես Լամբրոնացու մշակած երկու թագավորօրհներքները, որոնցից մեկը կազմված է «ըստ մեծի եկեղեցւոյն Հռոմայ», իսկ մյուսը՝ «ըստ Հայաստանեացս արիւնաց»²⁰: Ինքը՝ Լամբրոնացին, վերոնշյալ թարգմանության առնչությամբ գրում է. «Աղաչեմ զիմաստուն ընթերցողսդ ոչ անելորդ համարել զմեր ի սոյն վաստակ, որ ծարաւի էաք եւ Հռոմայ եկեղեցւոյն կարգացն, ընդ այլ գիտութեանց, եւ սովաւ գովացաք եւ թողաք զկնի եկելոց»²¹՝ ակնարկելով, որ ինքը լատինական եկեղեցու ծեսերը թարգմանել է սոսկ հայ ծիսագետներին ծանոթացնելու, ոչ թե գործածության համար: Սակայն ակնհայտ է, որ Տարսոնի արքեպիսկոպոսի աշխատանքն ավելին էր, քան սոսկ թարգմանությունը: Իրականում այն հայ կրոնաքաղաքական շրջանակների կողմից

¹⁹ Պապիկեան Ս., Հայերը եւ խաչակիրները, Հանդես ամսօրեայ հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 1965, էջ 376-377:

²⁰ Կիլիկյան Հայաստանում հռոմեական եկեղեցու կարգաց գրքի կիրառության մասին մանրամասն՝ Ակինեան Հ., Ներսէս Լամբրոնացի, կյանքն ու գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց ու Լամբրոնի Հեթումեանց, Վիեննա, 1956, էջ 304-305:

²¹ Նույն տեղում, էջ 306:

արևմտյան հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ զիջողականության և հնարավորության սահմաններում դրանք նաև հայկական ազգայինի հետ համադրելու փորձերի հերթական դրսևորումն էր՝ հանուն առաջնային նպատակի կենսագործման, այն է՝ հայոց թագավորության վերականգնման:

Ինչ վերաբերվում է խաչակրաց երրորդ արշավանքի նախօրեին Մրբազան Հռոմեական կայսրության և Ռուբինյան իշխանության միջև փաստացի դիվանագիտական հարեբերություններին, ապա, դարձյալ անդրադառնալով հայկական պատվիրակության և կայսեր միջև սպասվող հանդիպմանը, հարկ է նշել, որ, բնականաբար, այս հանդիպման մասին այլևս խոսք լինել չէր կարող, քանի որ Ֆրիդրիխ Շիկամորուսը 1190թ. հունիսի 10-ին մահացավ Սելևկիա քաղաքից ոչ հեռու²²:

Ուշագրավ է, որ խաչակրաց արշավանքի շրջանակներում Ֆրիդրիխի կողմից Կիլիկյան Հայաստանի նկատմամբ դրսևորած հետաքրքրությունը միանշանակ գնահատականի չի արժանացել միջնադարյան հեղինակների կողմից՝ երբեմն մեկնաբանվելով ընդհուպ որպես փորձ՝ Արևելամիջերկրածովյան ավազանում հերթական պետությունը նվաճելու ուղղությամբ: Այս առումով յուրահատուկ է Անանուն Եդեսացու «Ժամանակագրության» մեջ պահպանված հիշատակությունը Ֆրիդրիխի արշավանքի մասին, որտեղ այն դիտարկվում է գրեթե որպես թշնամական ներխուժում Կիլիկյան Հայաստան. «Իսկ այնտեղից նա չարաբաստիկ կերպով մտավ Կիլիկիո երկիրը: Եթե ներխուժեր մահմեդականների երկրները, գուցե կարողանար որևէ օգուտ տալ, քանի որ հողը դորդում էր նրա առջև, և ողջ Ասորիքի մահմեդականները ահուդողի մեջ էին ընկել // նրա գալու պատճառով»²³:

Կարևոր է փաստել սակայն, որ չնայած կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ուղղությամբ կատարվող փորձերի փաստացի արդյունքները տեսանելի դարձան միայն Ֆրիդրիխ I-ի մահից հետո՝ Հենրիխ VI-ի օրոք, սակայն դրանց հիմքերը դրվել են դեռևս Շիկամորուսի կառավարման տարիներին: Ավելին, 12-

²² Ֆրիդրիխ Ա Շիկամորուսի անսկնկալ մահվան հանգամանքների մասին մանրամասն Venetz D., Kaiser Friedrich I. Barbarossa, Tod und Mythos, Norderstadt, 2008, S. 6-7:

²³ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական աղբյուրներ, Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, Երևան, 1982, էջ 156:

րդ դարի 90-ական թթ. Կիլիկյան Հայաստանի և Սրբազան Հռոմեական կայսրության միջև գործնական հարաբերությունների հաստատումը Ֆրիդրիխի արևելյան քաղաքականության տրամաբանական հետևանքն էր²⁴:

Կիլիկյան Հայաստանի հետ կայսրության դիվանագիտական փոխհարաբերությունների հեռանկարի վերաբերյալ Ֆրիդրիխ Շիկամորուսի ունեցած ծրագրի մասին հետաքրքիր տեսակետ է արտահայտում Է. Այկոֆֆը: Վերջինիս կարծիքով չի կարելի վստահաբար փաստել, թե այն զարգացման ընթացքը, որ ունեցավ Կիլիկյան Հայաստանի նկատմամբ Հենրիխ VI-ի վարած քաղաքականությունը 12-րդ դարի 90-ական թթ., կազմում էր կայսրության՝ մի քանի դար շարունակ մշակվող արտաքին քաղաքական հայեցակարգի տրամաբանական շարունակությունը: Ավելին, հեղինակի կարծիքով միանշանակ չի կարելի եզրակացնել, թե «արդյո՞ք Ֆրիդրիխն ընդհանրապես մտորում էր այն գաղափարի մասին, որն իր որդի Հենրիխը հետագայում իրականացրեց՝ կապված հայկական իշխանությունը թագավորություն հռչակելու հետ»²⁵:

Մակայն, Հենրիխ VI-ի՝ 12-րդ դարի վերջին տասնամյակում Արևելամիջերկրածովյան ավազանում վարած քաղաքականության վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել այն փաստը, որ կայսրն իսկապես առաջնորդվում էր իր նախորդների կողմից արդեն մշակված գաղափարախոսությամբ՝ նպատակ ունենալով տրամաբանական ավարտին հասցնել Ֆրիդրիխի կողմից գործնական հիմքերի վրա դրված ծրագիրը: Այլ կերպ ասած՝ Արևմուտքի կայսեր միջոցով Լևոնի կարգավիճակի բարձրացումը և որպես թագավոր օծումը սոսկ Ռուբինյան իշխանի և Հենրիխ VI-ի միջև բանակցությունների առարկա չէր, այլ արդեն մշակված քաղաքականության արդյունք: Այսպիսի տեսակետ արտահայտում է նաև Ֆ. Տուրնեբիզը, ըստ որի «Այս մահը պարզապես հետաձգեց Լևոնի նախագծի իրականացումը: Գերմանա-

²⁴ Հենրիխ VI-ը շարունակում էր Ֆրիդրիխ Ա-ի քաղաքականությունը ոչ միայն Կիլիկյան Հայաստանի հետ փոխհարաբերություններում, այլև փորձում էր ամբողջությամբ կյանքի կոչել նրա կողմից գործնական հիմքերի վրա դրված համընդհանրական գաղափարախոսությունը: Հենրիխ VI-ի համընդհանրական քաղաքականության մասին Лампрехт К., История германского народа, т. 2, часть. III и IV, Москва, 1895, с. 115-120:

²⁵ Eickhoff E., Friedrich Barbarossa im Orient, Kreuzzug und Tod Friedrichs I, Tübingen, 1977, S. 152.

կան կայսր Հենրիխ VI-ը կատարելու էր իր հոր կողմից տրված խոստումը»²⁶: Ըստ Բակուրանի՝ «Ահա այս առթիվ²⁷ Լևոնի հետևած քաղաքականության արդիւնքը կը լինի՝ նորօրինակ թագ Ալման (գերմանացի) կայսրէն, թէն Ֆրետերիք Պարպարոսայի ջրահեղձ մահուան պատճառով թագադրութիւնը կը յապաղի»²⁸: Նման տեսակետ է հայտնում նաև Ռ. Հիշթանդը, ում կարծիքով Կիլիկյան Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների զարգացումը Ֆրիդրիխի համար պակաս առաջնային չէր, քան իրենց՝ հայերի համար: «Երկուստեք անհապաղ, հրատապ դիտարկվող հանդիպմանը Կիլիկյան Հայաստանի Լևոն II-ի հետ խանգարում է կայսեր մահը»²⁹:

Ուշագրավ է, որ Ֆրիդրիխ Շիկամորուսի մոտեցումը Կիլիկյան Հայաստանի հետ փոխհարաբերությունների հարցում փորձեց զարգացնել նաև Հենրիխ VI-ի որդին՝ Ֆրիդրիխ II-ը (1212-1250թթ.), ով ևս գտնում էր, որ իր մերձավորարևելյան քաղաքականության շրջանակներում Կիլիկյան Հայաստանին որպէս տարածաշրջանում կայսրության հենարան պահելու ամենաարդյունավետ տարբերակը Սրբազան Հռոմեական կայսեր կողմից ուղարկված թագով թագադրության փաստի շրջանառումն է³⁰: Հարկ է նշել սակայն, որ վերջինիս փորձերի արդյունքում որևէ շոշափելի հաջողություն չարձանագրվեց:

²⁶ Tournebize F., նշվ. աշխ., էջ 185:

²⁷ Հեղինակը նկատի ունի այն, որ հաշվի առնելով նախկինում խաչակիրներին հայերի ցուցաբերած օժանդակությունը՝ Կղեմես Գ պապը խաչակրաց նոր արշավանքի նախօրեին նորից ակնկալում էր Ռուբինյան իշխանի և հայոց կաթողիկոսի աջակցությունը և «հայոց քրիստոնեական պարտաճանաչության վերստին կոչում կ'ընէ»: Բակուրան, Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանության վրայ, Նիկոսիա, 1904, էջ 16:

²⁸ Նույն տեղում, էջ 16-17:

²⁹ Hiestand R., *Precipua tocius christianismi columpna: Barbarossa und der Kreuzzug, Friedrich Barbarossa, Handlungsspielräume und Wirkungsweisen des staufischen Kaisers* / Hrsg. von A. Haverkamp, Sigmaringen, 1992, S. 92. Նույն տեսակետն է հայտնում նաև Մ.- Ա.Շեվալիեն: Chevalier M.-A., *Les orders religieux-militaires en Arménie cilicienne: Templiers, hospitaliers, teutoniques Arméniens à l'époque des croisades*, Paris, 2009, p. 113:

³⁰ *La couronne d'Arménie: Un document récemment découvert, illustrant les relations entre l'empereur Frédéric II et le roi Hét'oum I^{er}*, La Méditerranée des Arméniens XIIe-XVe siècle, sous la direction de Mutafian C., Paris, 2014, pp. 101-120:

Այսպիսով, չնայած երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունները փաստացի հիմքերի վրա դրվեցին միայն 12-րդդ. 90-ական թթ. վերջին, սակայն ի դեմս ստեղծվելիք Կիլիկիայի հայոց թագավորության Արևելքում վստահելի քրիստոնյա ուժ ձեռք բերելու գաղափարը Սրբազան Հռոմեական կայսրության քաղաքական շրջանակներում դեռևս շտաուֆենյան առաջին կայսրերի օրոք մշակված քաղաքական ծրագրի անբաժանելի մասն էր կազմում: Դրա մասին է վկայում այն փաստը, որ Մերձավոր Արևելքի, մասնավորապես Կիլիկյան Հայաստանի նկատմամբ Հենրիխ VI-ը հիմնականում պահպանեց և զարգացրեց Ֆրիդրիխ Շիկամորուսի քաղաքականության սկզբունքները³¹: Այս քաղաքականության տրամաբանական արդյունքն էլ եղավ Լևոն Բ-ին ուղարկված թագավորական թագը:

LIANA AGHABEKYAN
(ASPU)

**DIPLOMATIC RELATIONS BETWEEN THE HOLY ROMAN EMPIRE AND
CILICIAN ARMENIA IN THE 80'S OF THE XII CENTURY**

In the 80's of the 12th century, the Holy Roman Empire and Cilician Armenia began to undertake practical steps towards the establishment of diplomatic relations between the two States. This would enable Friedrich I to extend the boundaries of Empire's political and cultural domination to the East and get him one step closer to the implementation of a universal ideology.

The development of diplomatic relations with the Western Empire had not only political but also a civilizational significance for the Armenian State, as it would also solve a cultural orientation problem of Cilician Armenia. In fact, the establishment of allied relations with the Western empire presupposed that under the conditions of the East-West civilizational conflict the Armenian State will lean toward the Western cultural environment.

³¹ St'u Toeche T., Kaiser Heinrich VI., Leipzig, 1867, S. 369-396:

ՍՈՒՍԱՆԱ ԱՂԱՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)

ՆՈՐԱՀԱՅՑ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱԿՔԱՐ ԳՅՈՒՂԻՑ
(ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ)

ՀՀ Գեղարքունիքի մարզը հարուստ է պատմաճարտարապետական կոթողներով (մոտ 5270 միավոր)¹, որոնց ուսումնասիրումը սկսվել է դեռևս XIX դարում (Հովհ. Շահխաթունյանց, Ս. Ջալալյանց, Մ. Սմբատյանց, Ղևոնդ Ալիշան, Ե. Լալայան): Նորագույն շրջանում այդ հուշարձանների ուսումնասիրությունը կատարվեց համակողմանի. հնագիտական պեղումներին զուգահեռ ուշադրություն դարձրեցին նաև վիմական արձանագրություններին, որոնք հետազայում ամփոփվեցին Դիվան հայ վիմագրության Գեղարքունիքի պրակում² (թվով 1546 արձանագրություն): Քանի որ գիտական վերջին ուսումնասիրություններն այստեղ կատարվել են XX դարի 70-ական թթ., ուստի անհրաժեշտություն կար հայտնաբերել նոր կոթողներ, ինչպես նաև արձանագրություններ: Արդյունքում, 2014-2016 թթ. ընթացքում մարզի բնակավայրերից մեզ հաջողվեց հավաքել մոտ 60 վիմագիր, այդ թվում՝ 9-ը Մարտունու տարածաշրջանի Ծակքար գյուղից, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Ծակքար (Կած, Կռակածն, Կռակիծ, Կոռքար, թուրք. Դալիկղաշ³) գյուղը գտնվում է Մարտունի քաղաքից 9 կմ հյուսիս-արևմուտք: Ըստ XIII դ. եկեղեցական հարկացուցակի՝ գյուղը կոչվել է Կածիք⁴՝ լինելով Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Գեղարքունի գավառի կազմում:

Փաստենք, որ պատմական Գեղարքունիքի էթնոժողովրդագրական կազմը դարեր շարունակ փոփոխվել է՝ կապված արտաքին քաղաքական իրավիճակի հետ: Սելջուկ-թուրքերի, մոնղոլ հրոսակների, Լենկ-Թեմուրի և թուրք-պարսկական անընդմեջ պատերազմների,

¹ Հակոբյան Ս., ՀՀ մարզերը, Գեղարքունիք, պատմական հանրագիտարան, Երևան, 2010, էջ 9:

² Դիվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1974:

³ Համանուն բնակավայրեր կան Մեքաստիայի և Ակնի շրջաններում (Արևմտյան Հայաստան): Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հատոր 2, Երևան, 1988, էջ 831:

⁴ Օրբելյան Մտ., Սյունիքի պատմություն, Երևան, Սովետական գրող, 1986, էջ 397:

ջալալիների ասպատակությունների (1590-ական թթ.), սովի (1606-1609 թթ.) հետևանքով գավառը մեծ վնասներ է կրել, ծաղկուն բնակավայրերն ամայացել են, բնակչությունը՝ բռնի տեղահանվել: Հիշատակություն կա, որ 1319-1320 թթ. Գեղարքունի գավառում թալանվեցին եկեղեցիները, գերվեցին բնակիչները, որոնց մի մասը կարողացավ ապաստանել քարանձավներում⁵: 1639 թ. Հայաստանի թուրք-պարսկական երկրորդ բաժանումից հետո գավառն անցավ Պարսկաստանին՝ դառնալով Երևանի խանության մահալներից՝ վերանվանվելով Գեղչալ⁶: Հայ բնակչությունն այստեղ աստիճանաբար դառնում էր փոքրամասնություն, հայկական բնակավայրերի անուններն աղավաղվում ու հնչյունափոխվում էին: Մատենագրական աղբյուրների և վիմական արձանագրությունների շնորհիվ միայն հնարավոր եղավ վերականգնել դրանց մի մասի հայկական տարբերակները⁷: 1813 թ. անգլիացի ճանապարհորդ, ճարտարապետ, դիվանագիտական ներկայացուցիչ Ջեյմս Մորիերը (1780-1849 թթ.) նշում է. «Երևանից Սևան ճանապարհին, ոչ մի բնակեցված վայր չտեսանք... լիճը շրջապատված է վայրի լեռներով ու բնակչություն չունի»⁸: Ռուս-պարսկական (Թուրքմենչայ, 1828 թ.) ու ռուս-թուրքական (Ադրիանապոլիս, 1829 թ.) պայմանագրերը հնարավորություն տվեցին հազարավոր արևելահայերի ու արևմտահայերի վերաբնակվել ոչ միայն հին ու լքված, այլև նոր հիմնված բնակավայրերում:

Ներկայիս Ծակքար գյուղը հիմնադրվել է 1828 թ. Մուշի և Ալաշկերտի մի քանի գյուղերի բնակիչների կողմից: Գյուղում համանուն գետի⁹ վրա կա երկթռիչք մի կամուրջ, «որոյ անունովն և գիւղն էր յիշուում, այն Աստուածաշէն բնական կամրջի պատճառաւ, որ փոքրիկ գետակի վերայ էր բնութիւնից յարմարուած»¹⁰: Հայտնի է նաև, որ Ծակքար գետակի վրա գործել է 7 ջրաղաց: 1957 թ. գյուղից հայտնաբերվել է

⁵ Գևորգյան Դ., Թագազյուղ, Երևան, էջ 13:

⁶ Նշվ. աշխ., էջ 19:

⁷ Հակոբյան Ս., նշվ. աշխ., էջ 8:

⁸ Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008, էջ 30:

⁹ Ծակքար գետը սկիզբ է առնում Գեղամա լեռներից: Երկարությունը 12 կմ է, հարուստ է կողակ ձկնատեսակով, որի պատճառով էլ անվանում են Կողագետ: Տե՛ս ՀՀՇՏԲ, հատոր 2, էջ 831:

¹⁰ Սմբատյանց Ս., Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 515:

Արտաշեսյան սահմանաքար¹¹, իսկ Բախտակ գետի ափին (գյուղից հյուսիս- արևմուտք) բացվել է անտիկ բնակատեղի՝ կարասային և քարակղային թաղումներով¹²: Միջնադարյան հուշարձաններից պահպանվել են Ս. Աստվածածին¹³ կամ Ս. Ստեփաննոս եկեղեցին, որը վերանորոգվել է 1884 թ., Թուխ մանուկ (1997 թ. վերանորոգված) և «Լույս գերեզման» մատուռները, միջնադարյան գերեզմանատունը (IX-XX դդ.), տասնյակ խաչքարեր:

Ծակքար մտնող ճանապարհի ձախ մասում է IX-XX դդ. Գերեզմանատունը, որտեղ գերակշռում են հիմնականում անմշակ տապանաքարերը, կան նաև խաչքարեր (IX-XVI դդ.), օրորոցաձև տապանաքարեր: Այստեղից մեզ հաջողվեց ընդօրինակել հինգ արձանագրություն: Կենտրոնում է գտնվում XIX դարում կառուցված մի մատուռ, որն ըստ ավանդության կառուցվել է քրիստոնյայի նահատակության վայրում, այստեղ երկնքից լույս է իջել, որի պատճառով էլ մատուռը կոչվել է «Լույս գերեզման»: Այն ուղղանկյուն հատակագծով, փոքր և անշուք շինություն է, միակ մուտքը հարավից է:

Կոթողներից առավել աչքի է ընկնում XIII-XV դդ. մի խաչքար, որի արձանագրությունը կոտրված քիվին է, 1 տող (գրչագիր 1).

1. ՄԲ ԽԱՉ ԲԱՐԵՆԱՎԻՍՂ...

Խաչքարին կպած է օրորոցաձև մի տապանաքար, հարավային կողմում չորս խաչաքանդակներ են, հյուսիսային կողմում՝ աշխատանքային գործիքներ¹⁴, հիշատակագիրը՝ հյուսիսային և հարավային կողերին, 6 տող, (գրչագիր 2).

2. ԱՅՍ Է ՀԱՆԳԻ/ՍՏ ՈւՄՆԻՍԻՆ ՈՐՂԻ ՊԱՊԻՆ / ՍՈՔԱՆԻՆ / ԵՂՍ ՊԱՊԱՃԱՆ / ԿԱՆԳ ԽԵՆՑԻ / ՄԲ ԽԱՉ ԲԱՐԵՆԱՎԻՍՂ

¹¹ ՀՀՇՏԲ, հատոր 2, նույն տեղում: Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան, 1979, էջ 107:

¹² Խաչատրյան Ժ., Քալանթարյան Ա., Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները, Էրաբեր, 1972, թիվ 1, էջ 59:

¹³ Ղևոնդ Ալիշանը հիշատակում է Ս. Աստվածածին: Տե՛ս Ալիշան Ղևոնդ, Միսական, տեղագրություն Միւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893 թ., էջ 53: Հովհ. Շահխաթունյանցը հիշատակում է Ս. Ստեփաննոս: Տե՛ս Շահխաթունեանց Յովհ., Ստորագրություն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ Ա. Տեր-Ստեփանյանի (վերահրատարակություն), Մայր Աթոռի Ս. Էջմիածին, 2014, էջ 373:

¹⁴ Տապանաքարի թեքվածության պատճառով հյուսիսային կողի արձանագրությունը լուսանկարել և գրչագրել հնարավոր չեղավ:

ՀՈԳՈՅ ՈՐՂԻՆ ԻՒՐ / ԾՆՈՂԱՅ ՊԵՎՍԱԻԹՄԱՆ /

Արձանագրության մեջ Ուանիսը նույն Հովհաննեսն է, Պապին անձնանունը հանդիպում ենք XVII դարից սկսած, նշանակում է «մեծ հայր»: Պէկսաւթան անձնանունը թուրքերեն է, նշանակում է թագավոր, իշխան, գործածական է XVII դարից¹⁵: 4-րդ տողի ԵՍ-ի Ե-ն հողի տակ լինելու հետևանքով չենք գրչագրել: Փաստորեն, տապանաքարը XVII դ. գործ է:

«Լույս գերեզման» մատուռի կողքին կա փոքրիկ տապանքար, արձանագրությունը 2 տող (գրչագիր 3).

3. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ/ԽԱԻՍ ՈՂՈՐ ՍԱԻԹԱՆԻՆ

Ինչպես ցույց են տալիս մատենագիտական աղբյուրները, Մաւթանը կամ Սուլթանը Ամիրբեկի որդին և Մանուել քահանայի եղբայրն է, նրա պատվերով Կած գյուղում Հովհաննես Արծկեցին գրել է Ճաշոց (1465 թ.)¹⁶: Գրիչ Հովհաննես Արծկեցին գործել է XV դարում Կտուց անապատի կղզում, հետագայում նաև՝ Գեղարքունիքի Կած գյուղում: Մեզ հայտնի է նրա հեղինակած 3 ձեռագրերը, որոնք պահվում են Մատենադարանում¹⁷: Հետևապես, Սուլթանի տապանաքարը XV դարի գործ է:

Մի օրորոցաձև տապանաքար էլ կա, որի հարավային կողին խրախճանքի տեսարան է, իսկ արձանագրությունը հարավային կողին է, վերջին մասը հողմահարված, 2 տող, (գրչագիր 4).

4. ԱՅՍ Է ՀԱՆ/ԳԻՍՏ ԽԱՆԲԱՊԵՒ, ՈՐ Է ՈՐՂԻ ՆԱՏԱՐ ԱՂԻՆ, ՈՐ ՏՂԱՅ / ՀԱՍՄԿԱԻ /.....

Խանբապ անձնանունը պարսկերեն է, նշանակում է «թագավորահայր», մոնղոլական տիրապետությունում այն խնամակալի տիտղոսն էր: Իբրև անձնանուն հանդիպում ենք 1680 թ. Նոր Բայազետի ձեռագրերից մեկում: Ենթադրում ենք, որ այն XVII դարի կոթող է:

Գերեզմանատանն է գտնվում Նորատուսից բերված մեծադիր մի խաչքար, որը գյուղի նախկին քահանա Բադեյ Սիսակի թոռը հողի տակից հանելով սելով թաքուն տեղափոխել է Ծակքար, ապա տարիներ

¹⁵ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 413:

¹⁶ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր 4, էջ 579:

¹⁷ Ձեռագիր 4883, ՅԱՅՄՄԱԻՈՒՐՔ, գրված՝ 1462 թ. Կտուց անապատում: Ձեռագիր 3758, ՃԱՇՈՑ, գրված՝ 1465 թ. Կած գյուղում, ստացող՝ տեր Մանուել և տեր Ստեփաննոս: Ձեռագիր 4153, ԱԻԵՏԱՐԱՆ, գրված՝ 1499 թ. Կածիք գյուղում, ստացող՝ Ջանիբեկ:

անց կանգնեցրել է պապիկի՝ տեր Սիսակի գերեզմանի վրա¹⁸: Խաչքարն իր հորինվածքով X-XI դդ. կոթող է, իսկ արձանագրությունը, որը դժվարընթեռնելի է (12 տող), հավանաբար փորագրվել է հետագայում¹⁹:

Գյուղի կենտրոնում է գտնվում թաղածածկ, անմշակ քարերից կառուցված Ս. Ստեփաննոս կամ Ս. Աստվածածին եկեղեցին: Կիսավեր կառույցն ունի մկրտության ավազան, ավազ խորան՝ բարձր բեմով, երկու ավանդատուն: XIX դարի վերանորոգման ընթացքում կառույցի պատերի մեջ որպես շինաքարեր տեղադրվել են միջնադարյան մի քանի խաչքարեր: Եկեղեցու մուտքը հարավից է, բարավորի խաչքարի վրա պահպանվել է (գրչագիր 5).

5. ՋԸ (1459 թ.)

Եկեղեցու ձախակողմյան ավանդատան վերնամասում հորիզոնական դիրքով տեղադրված է խաչքար, որի ստորին մասում կա ելնդագիր արձանագրություն, 2 տող, (գրչագիր 6).

6. Վ Ա Ձ Ս Ո Ղ / Ղ Ա Վ Ի Թ / Թ Ո Է (1558 թ.)

Դավիթ կազմողը գործել է Գեղամա ծովի հարավային շրջաններում, մեզ հայտնի է նրա կերտած մի տապանաքարը (1528 թ.), որը գտնվում է Վարդենիսի Կարճաղբյուր (նախկին՝ Գյոդակ բուլաղ) գյուղի տարածքում²⁰: Փաստորեն, սա մեզ հայտնի նրա երկրորդ գործ է:

Մեկ այլ խաչքար էլ ագուցված է եկեղեցու բեմի կենտրոնում, արձանագրությունը խաչի հորիզոնական թևերից վերև է, 7 տող (գրչագիր 7).

**7. Ե Ս / Ս Ո Ւ Ք Ի / Ա Ս / Կ Ա Ն / Գ Ն / Ե Ց Ի /
Թ Վ / Ո Շ Է (1658 թ.)**

Եկեղեցուց քիչ հեռու գյուղաբնակ Նորիկ Եղոյանի տան մոտ գտնվում է մի մատուռ, որի ներսում կան տապանաքարի երեք բեկորներ՝ պարսկերեն արձանագրությամբ. «ԷՍՄԱՅԻԼ ՀԱԶԻ ՂԱԶԱԼԻ»²¹:

Խաչքարի ստորին մասում պահպանվել է հողմահարված արձանագրություն, 4 տող.

8. Ե Ս Գ Ր Ի Գ Ո Ր ... / Կ Ա Ա Ր Ե Ղ Բ / ... Բ Ա Ր Ե Ն / Ո Ւ Թ

¹⁸ Այս տեղեկությունը մեզ փոխանցել են տեղացիները:

¹⁹ Այն ուսումնասիրության կարիք ունի, ուստի նպատակահարմար չենք գտնում հրատարակել:

²⁰ Իվան հայ վիմագրության, պրակ IV, Երևան, 1973, արձ. 1262:

²¹ Վիմագիրն ընթերցելու համար մեզ օգնեց ԳԱԱ ՀԱԻ Արդիականության և ազգաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող Տիգրան Մարգարյանը:

Ծակքար գյուղի բնական կամրջի հարևանությամբ, տնամերձի տարածքում վերջին տարիներին բացվել է անմշակ քարերից կառուցված մի կառույց, հավանաբար մատուռ է: Այստեղից հայտնաբերվել են X-XI դդ. երկու մեծադիր խաչքար և XIII-XVII դդ. խեցեղենի բեկորներ:

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

– Գծիկով նշված են բնագրում համապատասխան քանակի եղծված կամ կոտրված գրերը:

... Կետերով նշված են եղծված կամ կոտրված գրերը՝ անկախ քանակից:

[] Փակագծով նշված են եղծված կամ կոտրված տառերի

վերականգնումները:

[] Փակագծով նշված են փորագրողի բաց թողած, «պատիվ» նշանով

կամ առանց դրա հապավված տառերի վերականգնումները:

/ տողանջատման գիծ

SUSANNA ADAMYAN

(IAE)

**NEW INSCRIPTIONS FROM TSAKQAR
(GEGHARQUNIQ REGION)**

Gegharkunik region is rich with historical and architectural monuments, which number reaches 5270. In the XIX century Armenian surveyors and foreign authors studied the monuments in the province of Bayazet. During the Newest period the monuments were studied comprehensively. Particularly the study of epigraphic inscriptions gave a new source to the historical studies of Gegharkunik region. These are summarized in epigraphy materials of Gegharkunik Divan. Since recent scientific studies had been done in the 70s of XX century, it is necessary to explore the region to identify new records. As a result, we managed to record more than 40 epigraphs from monuments of Martuni region, and only 9 from Tsakqar village.


Tsakqar village was still mentioned in the XIII century. The village was founded in 1828 by the residents of several villages of Mush and Alashkert. The famous Natural Bridge, S. Astvatcatcin or St. Stephen church (1884 renovated), Tux Manuk chapel (1997 rebuilt), medieval cemetery of

khachkars are preserved in the village. In 1957 Artashesyan boundary was found in the residence.


ԳՐԱԳԻՐ




գրագիր 1




գրագիր 2



գրագիր 3




գրագիր 4



գրագիր 5



գրագիր 6



գրչագիր 7

**ԻՐՄԱ ԽՈՄԻՏԱՇՎԻԼԻ
(ՎՁԱԿ)**

**ՎԱՄՆ ԿԱՐՆՈՑ ՔԱՂԱՔԻ
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՂՈՊՏՈՒՄՆ
ԸՍՏ ՀԱԿՈՒԲ ԿԱՐՆԵՑՈՒ (17-ԴԴԴ.)**

Հակոբ Կարնեցին XVII դարի ժամանակագիր է: Նրա գրչին են պատկանում մի քանի երկեր՝ ժամանակագրությունը¹, նրա հոր՝ Գևորգի կենսագրությունը², «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատությունը³ և 1653 թ. Կարինի վանքերից մեկի կողոպտման պատմությունը:⁴ Հակոբ Կարնեցու կենսագրությունից ցատքիչտվյալներ են մեզ հասել: Այդ տվյալների համաձայն՝ նա ծնվել է «գեղեցկաշէն Թեոդոսուպօլիս»-ում, հետագայի Կարին քաղաքում նա քահանա է եղել Սուրբ Աստուածածին եկեղեցում: Իր տեղեկության համաձայն՝ ծնվել է 1618 թ.: Թե երբ և որտեղ է մահացել Հակոբ Կարնեցին, ցավոք, մեզ հայտնի չէ: Ինչպես գիտենք, իր «ժամանակագրության» մեջ հիշված իրադարձություններից վերջինը («վերջին եզրը») տեղի է ունեցել 1672 թ., հենց այդ պատճառով ենթադրում ենք, որ Կարնեցին 1672 թ. Դեռ կենդանի է եղել, և նրա մահը կարող է եղած լինել միայն այդ թվականից հետո:

Հակոբ Կարնեցու հայրը Կարինի ավագ է եղել, այդ մասին քիչ ներքևում կ'իտեսենք: Հակոբը գրում է, որ նա ստացել է ժամանակի լավագույն աստվածաբանական կրթությունը և քաջածանոթ է եղել հայկական մատենագրությանը: 1641 թ. Էջմիածնում Փիլիպոս Ա Աղբակեցի (1633-1655) կաթողիկոսի հրամանով Հակոբը ձեռնադրվել է քահանա, վերադառնալով Կարին՝ «եղեն ժամասացք ի դեմ հօրն իւրեանց Գեորգա»:

¹ Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., շ. 1, 1951, էջ 239-244:

² Նույն տեղում, շ. 1, էջ 246-149:

³ Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., շ. 2, 1956, էջ 541-582:

⁴ ԿոստանեանցԿ., Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 53-60:

Կարինի եկեղեցիներից մեկի կողոպտման մասին պատմությունը պահպանված է Մատենադարանի ձեռագրերում՝ համար NN 2995⁵ և 6483⁶։ Ուշագրավ է այն, որ նշված պատմությունը կցված է Հակոբ Կարնեցու աշխատությանը՝ «Շինուած Կարնոյ Քաղաքին»։ Այդ աշխատություն մեզ հասել է 4 ձեռագրով (NN 4542, 8184, 2995, 6483, ձեռագրերը ընդօրինակված են XVIII-XIX դարերում)։ Բայց դրանցից միայն երկու ձեռագրում է պահպանված Կարինի եկեղեցու կողոպտման պատմությունը (N 2995՝ 1752 թ., իսկ N 6483՝ 1757 թ.)։ Ինչպես տեսնում ենք, Հակոբի աշխատություն գրելուց հետո չորս ձեռագիրն էլ կարճ ժամանակաշրջանում է արտագրված, և այս փաստը վկայում է աշխատության հանրաճանաչության մասին։

Եկեղեցու կողոպտման պատմությունն առաջին անգամ հրատարակել է Կոնստանյանցը 1903 թ. Վաղարշապատում։⁷ Ձեռագրերում պահպանված պատմությունը մի փոքր տարբերվում է հրատարակված բնագրից, այդ պատճառով, հնարավոր է, որ Կոնստանյանցի բնագիրը հրատարակելիս պետք է օգտագործեր ուրիշ ցուցակով (ձեռագրով), թեև ներածության մեջ այդ մասին նա ոչ մի բացատրություն չի տալիս։

Ինչ վերաբերում է Կարինի պատմությանը, այն գրված է միջին հայերենով, սակայն հանդիպում ենք աշխարհաբարի նշաններ։ Եթե ավելի ճշգրիտ լինենք, աշխատությունը գրված է կարինյան բարբառով, լեզուն հագեցած է թուրքական բառապաշարով։

Սուրբ Աստվածածին եկեղեցու կողոպտման մասին պահպանված պատմությունը հետաքրքիր օրինակ է հանդիսանում XVII դարի հայկական եկեղեցու ու Օսմանյան Թուրքիայի հարաբերությունների վերաբերյալ։

Աշխատության սկզբում հեղինակը ճշգրտում է այն ժամանակաշրջանը, երբ այդ փաստը տեղի է ունեցել՝ «Յատուրս իշխանութեանն Տաճկաց ի մեծ ինքնակալ կայսերին Ստամպուլայ Սուլթանն Մահմէտին, որ տիրեալ է մինչև ի Կարս և զԿաղզվան, յունիս ամսոյ Ի. սուրբ Լուսաւորչի պահոցն, հինգշաբթի երեկոյն ի մեջ զիշերին կատարեցաւ այս պատահմունք...»⁸։ Պատմության մեջ հիշատակված սուլթանը Մեհմեդ IV-ը (1642-1693 թթ.) է, ով գահակալել է Օսմանյան կայսրությունում

⁵ Ցուցակ ձեռնագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, շ. 1, էջ 450։

⁶ Նոյն տեղում, շ. 2, էջ 164։

⁷ Կոստանեանց Կ., Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903, էջ 53-60։

⁸ Կ. Կոստանեանց, Տեղագիր... էջ 54։

1648-1687 թթ.: Ինչ վերաբերում է պասին, դա փոքր պասն է եղել, որը «Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի» տոնից առաջ էր կատարվում: Այլ կերպ այն «ամառային պահք» էին կոչում: Այնուհետև Հակոբ Կարնեցին պատմում է, որ գողերը լուսամուտից մտել են եկեղեցի, չարդախի կողմից: Այն ժամանակ եկեղեցում հինգ պահակ կար, որոնք քնած էին և չկարողացան տեսնել գողերի մտնելը: Գողերը վերցրել են եկեղեցու սպասքը՝ «անօթս, խաչ, սկիհ, արծաթե բուրվառ, ավետարան, շուրջառ»:⁹ Մինչ նրանք սպասքները էին հավաքում, պահակները արթնացել են, դուրս փախել և թաղամասում սկսել գոռալը: Վախեցած գողերը փախել են:

Վաղ առավոտյան գուժկանները եկել են Հակոբ Կարնեցու հոր՝ ավագերեց տեր Գևորգի մոտ և պատմել գիշերը տեղի ունեցած կողոպուտի մասին: Տեր Գևորգը տաճարի մոտ է հավաքել հոգևորականներին և ամբողջ ժողովրդին: Նրանք աղոթելուց հետո դիմել են *Արգրուսի* փաշա Մուրթազային, որը, ինչպես հեղինակն է բնութագրում, «էր տեսլեամբն գեղեցիկ և հասական միջակ»: Երբ փաշան իմացել է, որ գողերը տաճիկներ (թուրքեր) էին, շատ է բարկացել և հրամայել է դահճապետին ու այլ զորավարներին գողերին որոնել, իսկ եթե զորավարները չկարողանային նրանց գտնել, գողերի փոխարեն զորավարները կդատապարտվեին: Փաշան այդպիսի հրաման սվեց քաղաքին:

Երրորդ օրը փաշային ուրախալի լուրհասավ այն, որ 12 գողերին բռնել են Կեղի գավառում, Լակզի գյուղում, որին Ղզլճան էին կոչում: Ուրախացած հայերը Աստծուն շնորհակալություն էին հայտնում օգնության և աջակցության համար: Հակոբն իր «Շինուած Կարնոյ քաղաքին» աշխատության մեջ նկարագրում է նշված ձորը և ասում է, որ «գաւառք գովելիքի ձորն Լակզի կոչեցեալ, ունի բազում գուղս, ծաղկաւէտ եւ խոտալիր... Եւ ունի գիւղաքաղաք գԿեղի փոքր դղեակ մի, եւ էայժմ պարոնանիստ եւ կարի ախորժահայք վարդապետաց սրբոց երաժշտականաց եւ բնակարան, դամբարան. Եւ կայվանք Բ (2), այժմ միաբանակեցաց տեղիք, մինն անուն սուրբ Կարապետին եւ միունս՝ սրբոյ կուսին Մարիամ ու Աստուածածնին. Եւանտիէ գաւառ մի գեղեցկաշէն յոյժ, պարոնանիստ, խոտալիր եւ ջրաւէտ, անասնօք եւ ոչխարօք լի եւ գեղերօք Հայոց, որ այժմ Ղըզըլջան կոչեն:»¹⁰

⁹ Նույն տեղում, էջ 54:

¹⁰ Հակոբյան Վ., Մանր..., շ. 2, էջ 550:

Կիրակի օրը փաշան դիվան էր հրավիրել, բերել էին 12 գողերին: Նրանց առաջնորդն էր թագավորի սպասավոր մի ազնվական մարդ, ով տիրում էր երեք գյուղի և նրան Պարմագուզին էին կոչում: Իսկ երկրորդը մոլլա էր Շապան անունով: Փաշան ասաց, որ նրանք հայտնի մարդիկ էին և վարվում էին Սուլթանի անունով: Այդ պատճառով պետք է խոստովանեն, մեղավորներն են, թե ոչ: Նրանք հրաժարվեցին ընդունել այդ մեղադրանքը: Դրանից հետո փաշան հրաման տվեց պատժել նրանց: Այնուհետև միայն մոլլան խոստովանեց իր հանցանքը: Մոլլայի համախոհները փորձում էին արդարանալ, նրանք ասում էին, որ մոլլան սովորեցրել է, որ հայկական ոչխարը և եկեղեցու ապրանքը թուրքի համար հալալ է («Շապան մոլլան մեզ գիր էտուր թե հայի մալն և եկեղեցույ ապրանքն թուրքին հալալ է. նորա համար գայդ արարինք»):¹¹ Բարկացած փաշան գողերից մեկի ուղեկցությամբ գորք ուղարկեց Լակզ գողացած իրերը բերելու համար: Իրերը ստանալուց հետո փաշան հրավիրեց հոգևորականներին և թուրքերի առջև փոխանցեց նրանցից գողացված ապրանքը: Փաշան նաև ավելացրեց, որ հայերի խաչն այնքան ուժեղ է, որ այն երբեք կորած չի լինի, իսկ փաշայի անունը մեծացավ նրա գորությամբ:

Այս պատմությունից երևում է, որ թուրք Մուրթագա փաշայի շնորհիվ գողերը ձերբակալվում և արժանի պատիժ են ստանում, իսկ եկեղեցու գողացված սպասքներն ու անոթները վերադարձվում են:

Փաշան դատապարտեց գողերին և այդ գործի համար և վճար չվերցրեց: Ինչպես նշում է Հակոբ Կարնեցին, այդ գործավարությունը ընթանում էր 3-4 օրվա ընթացքում: Ուրախացած հայերն ասում էին, որ այդ գործն իրականացնող փաշան իսկական քրիստոնյա էր:

Կրոնավորի համեստությամբ Հակոբ Կարնեցին հիշատակարանի վերջին գրում է, որ նա գրել է այդ պատմությունը հաջորդ սերունդների և այդ վանքի ծառայողների համար, որպեսզի գիտենան և զգույշ լինեն: Հիշատակարանի վերջում հեղենակը մատնանշում է այդ փաստի ժամանակը. «Այս եղև ի թուականութեանն մերում ՌՃԲ. ի ժամանակս հայրապետութեան Մուրթ Էջմիածնայ Տեառն Փիլիպպոսի երիցս երանեալ կաթողիկոսին և առաջնորդութեան Կարնոյ քաղաքիս Սարգիս վարդապետին, որ բազում շինուածով զարդարեաց զվանքս մեր. զարդարեսցէ Տէր Աստուած զհոգի նորա երկնային լուսովն, ամէն:»¹²

¹¹ Կոստանեանց Կ., Տեղագիր... էջ 58:

¹² Կոստանեանց Կ., Տեղագիր... էջ 60-61:

Այսինքն, այդ պատմությունը տեղի է ունեցել 1102 (1653 թ.) թ., Փիլիպոս III-րդի կաթողիկոսության ժամանակ, որը ձեռնադրել է Հակոբ Կարնեցուն որպես քահանա Էջմիածինում և Կարին քաղաքի կառավարիչը Սարգիս վարդապետի ժամանակ: Այս Սարգիսը է եղել վանքի նորոգիչը:

Ինչո՞ւ է այդ պատմությունը կարևոր և հետաքրքիր մեզ համար: Առաջին հերթին նրանով, որ պատմության մեջ անվանված են պատմական անձինք, թուրք և հայ աշխարհիկ գործիչներ ու հոգևորականներ: Ընդհանրապես, պատմությունը կազմված է աղբյուրների հիման վրա, իսկ այդ աղբյուրները առաջնային նշանակություն ունեն: Այդ պատմության երկրորդ և շատ կարևոր գործոնն այն է, որ փաստերը մանրամասնորեն են նկարագրված: Այդ բոլորը պարզ պատկերացում է տալիս Օսմանյան Թուրքիայի այն ժամանակաշրջանի սոցիալական ու քաղաքական դրության մասին:

Ինչպես նշել ենք, Հակոբ Կարնեցին գրել է «Շինուած Կարնոյ քաղաքին», որի մեջ բացի Կարին (Արզրում) քաղաքի հիմնադրման և հետագա պատմությունից, տրված է «Վերին Հայոց» (Արզրումի վիլայեթի) պատմական-աշխարհագրական նկարագրությունը, նրա քաղաքական ու սոցիալական վիճակը: Հենց այդ պատճառով է, որ նշված աղբյուրը շատ կարևոր է այդ ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրելու համար:

Դարերի ընթացքում Արզրումը եղել է Օսմանյան կայսրության սահմանամերձ գլխավոր բերդաքաղաքը հյուսիսարևելյան կողմում: Այն գլխավոր հենարանը է եղել ոչ միայն Վրաստանի, այլ նաև Արևելյան Հայաստանի ու Իրանի վրա հարձակվելու համար:

Թեոդոսիոպոլիս-Կարին-Արզրում-Էրզրումը գտնվում է Փոքր Ասիան ու Իրանը կապող գլխավոր ճանապարհին, այդ պատճառով եղել է Արևմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքը, իսկ հիմա այն Արևելյան Թուրքիայի գլխավոր քաղաքներից մեկն է:

1049 թ. Սելջուկների կողմից Արծն քաղաքի ավերումից հետո քաղաքի բնակչությունը տեղախոփվել է Թեոդոսիոպոլիս, դրա համար քաղաքին կոչեցին Արզան Ար-Ռում՝ նույն է թե՛ Հռոմի Արզանը: Դա արաբական անունն է, որտեղից հետագայում ծագել է Էրզրում անունը:

Ինչպես գիտենք, ամբողջ XVI-XVII դարերի ընթացքում Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև անդադար պատերազմներ էին ընթանում: Իսկ այդ պատերազմների ասպարեզ էին դարձել Վրաս-

տանը և Հայաստանը, ինչը չափազանց ծանր հետևանքներն է ունեցել այս երկրների հետագա զարգացման համար:

XVI դարիառաջին կեսին Օսմանյան կայսրությունն աշխարհի ամենահզոր պետություններից մեկն էր: Այդ ժամանակաշրջանում է Օսմանյան կայսրությունն սկսում նվաճումները Իրանի, Անդրկովկասի և արաբական երկրների տարածքների հաշվին: Օսմանյան կայսրությունը հատկապես շահագրգռված էր գրավելու Անդրկովկասով անցնող առևտրային ճանապարհները և վերահսել այնտեղ բնական պաշարներն ու հարստությունը:

Օսմանյան կայսրությունը նոր գրավված տարածքները բաժանում էր սանջակների, կազմում էր օրենքագրքեր (Կանուն-Նամեներ): Այդ միջոցառումով Սուլթանը ցանկանում էր միացնել գրավված տարածքները և այնտեղ հաստատել օսմանյանսոցիալ-քաղաքական համակարգը: Հակոբ Կարնեցին իր աշխատության մեջ նկարագրում է Օսմանյան կայսրության կառավարման համակարգը և ասում է, որ ի տարբերություն քրիստոնյաների ու հրեանների, որոնք մեծամիտն են և միշտ հակադրվում են թագավորին, թուրքերը հավատարիմ են և բոլորը իշխաններն ու բեկլարբեկները կամ գերագահները հնազանդվում են թագավորին: Այսպիսի համակարգը խիստ քաղաքական կառավարման արդյունքն էր: Մակայն, թուրք-պարսկական պատերազմների մասին խոսելիս հեղինակ նշում է, որ պարսիկներն ավելի բարբարոս էին, քան թուրքերը: Հատկանշական է, որ թե Արևելքում, թե Արևմուտքում մղված անդադար պատերազմների ընթացքում օսմանյանսուլթանը որոշ դեպքերում հարկադրված էր զիջումների գնալնվաճված երկրներին: Օսմանյան կայսրությունը չէր կարողանում իրականացնել իր նախանշած նպատակը, և հնարավոր է այդ պատճառով էր նվաճված երկրների «օսմանացման» գործընթացը ընթանում դանդաղ դարերի ընթացքում:

Վրաստանի օրինակով կարող ենք տեսնել, թե օսմանյան կառավարությունն ինչպիսի ճկուն և զգույշ քաղաքականություն էր վարում վրացի ֆեոդալների (ավատատերների) նկատմամբ: Այն մահմեդական վրացիներին դասակարգային արտոնություններ էր տալիս, սակայն որոշ դեպքերում հանդուրժում էր նաև մի շարք ֆեոդալների քրիստոնյա լինելը: Այսպիսի քաղաքականությունը պետք է մասնատեր տեղական ֆեոդալական ուժերը, աթաբեկից պետք է հեռացնր քրիստոնեությունը պահպանած ազնվականներին և նրանց իր կողմն գրավեր:

Օսմանյան կայսրության այդ քաղաքականության միակ նպատակն էր հակառակորդներին պատակտելը՝ որոշ զիջումների ու արտոնությունների միջոցով իր կողմը քաշելով հակառակորդներին մասին և հենց նրանց աջակցությամբ հնազանդեցնելով երկիրը: Հասկանալի է այն, որ օսմանյանությանը այդ զիջումներն ու արտոնությունները երկարաժամկետ չէին և հետզհետե վերացնում էր դրանք:

Ինչ վերաբերում է հայկական համայնքին, Հակոբ Կարնեցին մի քանի անգամնշում է, որ պետության մեջ խիստ իրավունք է գործում. «Ամենայն շրջակայ բերթորայքս եւ գաւառքս, զորս պատմեցից կարգաւառ հասարակ հուքմի եւ հրամանի ներքեւ ի սորա են, զի ոչ ոք կարէ կիալ ընդդէմ հրամ[ան]աց սորա, ոչ պարոն, եւ ոչ իշխան, այլ հնազանդեալ ամենեքեան... Եւ թէ մեծ պատերազմ կամ թագաւորի հրաման լինի իւր կերւացքովն ամենայն ՃՌ (100.000) Թուրքի ձիաւորելան է քաղաքէս»:¹³ Մեր բնագրի օրինակից երևում է, որ կողպտված տաճարի հոգևորականներն ու ժողովուրդը արդարություն գտնելու համար գնացել էին փաշայի մոտ: Աշխարհիկ իշխանությունը ներկայացնող փաշան, օրենքի պաշտպանն է եղել նրանց: Ավելին, նա ոչ մի նվեր չի ստանում այդ գործը իրականացնելու համար և հրապարակային է պատժում մեղավորներին: Եվ հակառակը, մոլլան՝ մուսուլման հոգևորականը ոչ միայն չի օգնել վերջիններիս, այլև հակառակը. դրդել է այս հանցանքի կատարողներին չարիք գործելու:

Այս պատմությունը բարու հաղթանակն է չարի հանդեպ, պատմություն արդարության ու ամենօրյա փորձություններից խուսափելու, մահմեդական ու քրիստոնյա ազգերի խաղաղ համակեցության վերաբերյալ: Հենց այդ պատճառով է, որ նշված պատմությունը շատ ուրախալի ու հատկանշական էր այնքան, որ սրանից առանձին պատմություններ էին հյուսում և ավանդում սերնդից սերունդ:

¹³Հակոբյան Վ., Մանր..., շ. 2, էջ 560:

**IRMA KHOSITASHVILI
(GNCM)**

**ON THE ROBBERY OF HOLY VIRGIN`S CHURCH
ACCORDING TO JACOB OF KARIN (17TH C.)**

Armenian author Jacob of Karin (17th c.) has written several compositions. Among them is the story of robbery of Holy Virgin`s church in Karin. The author is the eyewitness of the events happening in the story therefore, the socio-political picture of Ottoman Empire drawn in this composition bears much importance and credibility.

As Jacob of Karin writes, it happened in the times of the Sultan of the Ottoman Empire Mehmed IV (1648-1687). Among the several events described in detail, there are some interesting aspects worth to mention. For the reason of the Armenian Church robbery in Ottoman Empire the Armenian community makes complaints. The complaints were rejected by the local Turkish cleric. On the contrary, it even motivated robbers. Despite such unfair bearing Armenian community and clergy do not give up and go to supreme leader of the Empire to judge, unearth truth and execute justice. As Jacob writes in his another composition "Beautifully Built City of Karin", Ottomans had supreme justice in their empire, unlike Christians and Hebrews who were always opposite to their leader. So, here, in this case also, the supreme leader of the empire helps the community, executes justice, put to death robbers and do not takes any present from thankful Armenians.

This is a story of victory of good over evil, story of justice and about Christians and Muslims living together in peace. That is reason why this story was so pleasing and important to tell others, so, they used to write it as a separate narrative and give from generation to generation.

**ԽԱԹՈՒՆԱ ԳԱՓՐԻՆՂԱՇՎԻԼԻ
(ՎՁԱԿ)**

**XIX ԴԱՐԻ I ԿԵՍԻ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ (H-60)**

Վրաստանի Ձեռագրերի ազգային կենտրոնում պահպանվել են վրացական գրություններով մի քանի հայերեն ձեռագրեր, որոնց մեծամասնությունը հիմնականում ընդօրինակվել է XVIII-XIX դարերում: Այդ ձեռագրերը կարևոր աղբյուր են վրաց-հայկական հարաբերությունների, գրականության և լեզվի ուսումնասիրության տեսանկյունից:

Դրանցից առավել հետաքրքիր է մի ձեռագիր, որը պահպանվել է Վրաստանի ձեռագրերի Իժոդովածուում, համարը՝ 60 (H-60): Այդ ձեռագիրը թվագրված է 1836 թվականով, բաղկացած է 324 էջից, գրված է թղթի վրա, մուգ շագանակագույն թանաքով: Ըստ ձեռագրի հիշատակարանի՝ գրիչը Մովսես Կորդանովն է.

«Ձայս գիրս երբ գրեցի ես, Մովսես Կորդանով, ով եք կարդաք, յիշեցեք զիս մեղաւորս և դուք յիշյալ լիջիք առաջի Աստուծու և Քրիստոս մարդասիրն փառք յաւիտեանս, Ամէն, 1836 Մարտի ամսին»: (54r)

Մինչ Մովսես Կորդանովի գործունեությանն անդրադառնալը պետք է նշել, որ ցավոք, Մովսես Կորդանովի կենսագրությունից քիչ տեղեկություններ են պահպանվել: Վրաստանի ձեռագրերի ազգային կենտրոնում պահպանվել է նրա գրած ութ ձեռագիր: Հենց այդ ձեռագրերի հիշատակարաններն են չնչին տեղեկություններ հաղորդում Մովսես Կորդանովի մասին: Մասնավորապես, որ նա ծնվել է 1774 թ., ինքն իրեն կոչում է Բախուտայի որդի, ունեցել է երեք որդի, որոնցից միայն երկուսի անուններն են հայտնի՝ Սերգեյ և Միխեյլ, մի դուստրը՝ Նինոն և թոռնուհին՝ Աննուշկան (Աննա):

Ո՞վ է Մովսես Կորդանովը, ի՞նչ պաշտոն է զբաղեցնում և որևէ կապ ունի՞ արդյոք հռչակավոր դիվանադպիրներ Կորդանաշվիլիների ազգատոհմի հետ: Գիտական ուսումնասիրություններից հայտնի է, որ Կորդանաշվիլիների ազգատոհմի մեջ այդ պաշտոնը ժառանգական էր¹:

Պատմական փաստաթղթերի համաձայն՝ XVII դարից Կորդանաշվիլիները Վրաց թագավորներ Սիմոնի (1619-1631 թթ.), Ռոստոմի

¹ա. Զախրաձե, յարտցեղ մձուցան-մწուցնոձրեձտան ձաքաջմուրեձուլու Ֆուգուերու սաքուտու // Նեղնաճերտա օնստուտլուտու մուամձե, II, 1960, ձք 75.

(1633-1658 թթ.), Վախթանգ 5-րդի (Շահնավազի) (1658-1675 թթ.) և Գիորգի Բատունիշվիլիի (1676-1688 թթ.) արքունիքում դիվանադպիրներ էին և նրանց պաշտոնը ժառանգական էր: XVII դարի փաստաթղթերում հանդիպում է Հաղպատի եպիսկոպոս Բարսեղ Կորղանաշվիլին և նրա եղբայր Գոգիան՝ Բոլնիսիի տանուտերը²:

Դժվար է ասել, ունեցե՞լ է արդյոք Մովսես Կորղանովը որևէ ազգակցական կապ հռչակավոր դիվանադպիր Կորղանաշվիլիների հետ, մանավանդ, որ XVIII դարի վրացական վավերագրերը դեռ ուսումնասիրված չեն և չգիտենք, թե ինչպես է ընթացել նրանց գործունեությունը: Մակայն պետք է ենթադրենք, որ Կորղանաշվիլիներն իրենց ժառանգական պաշտոնը չէին կորցնի և հետագայում էլ կշարունակեին գրադեցնել այդ պաշտոնը:

Դիվանադպիրը, առաջին հերթին, լավ գեղագիր, կրթված և դպրության մեջ վարպետացած անձ պետք է լիներ, այդ պատճառով վրաց թագավորների արքունիքում գործող դիվանադպիրները հայտնի գրագետ ու գրագիրներն էին:

Շենց այդպիսի գրագիր էր XIX դարի I կեսի գործիչ Մովսես Կորղանովը, որն ինքն իրեն ազնվական է կոչում:

Եթե ուշադրություն դարձնենք Մովսեսի գրած ձեռագրերի բնույթին, կտեսնենք, որ ձեռագրերի մեծամասնությունը աշխարհիկ է, միայն երկու ժողովածուներն են (H-58, H-60), որոնք պարունակում են ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր բնույթի երկեր: Մովսես Կորղանովը վրաց գրիչ է, նրա գրած բոլոր ձեռագրերը վրացերեն են, միակ բացառությունն է մեր ձեռագիրը՝ H-60-ը, որը վրացերեն տառերով գրված հայերեն ժողովածու է:

H-60 ձեռագրի հիմնական բովանդակությունն է.

1. Առաքել Բաղիշեցու «Տաղ Յովասափու» (13r-54r):

2. Լուսնոտությունը և երազների մեկնաբանությունը (55r-59v):

3. Հայ և օտար սրբերի ու տոների տարբեր ընթերցումներ Հայսմավուրքներից, Ավետարաններից և տարբեր հեղինակների աշխատություններից: Այդ ընթերցումները գրվում են ժողովածուի մեծ մասը և բաղկացած են 92 աշխատությունից (60r-309v):

² Յորտա ანოტირებული ლექსიკონი, V, (მასალები).

4.«Վիճակագիր», այսինքն «ճակատագիր» (310v-320v): Ժողովածուի վերջում կցված է վրաց ժամանակագրությունը (322r-324v):

Այն, որ գրիչը լավ տիրապետում է վրաց լեզվին, արդեն ասել ենք: Մովսես Կորղանովի գրած ութ ձեռագրից, ինպես նշել ենք, միայն մեր ժողովածուն է հայերեն, բայց վրացական գրադարձությամբ: Հետաքրքիր է, թե ինչպիսին է գրչի լեզուն, ինչ ձևեր և ինչ գրավոր տարրեր է օգտագործում Մովսես Կորղանովը հայերեն բառը վրացական տառերով արտահայտելիս:

ա) Հաճախ են այնպիսի դեպքերը, երբ գրիչը «ո» տառի փոխարեն գրում է «ու» („ւ“) տառը.

Օրինակ, **թագաւորի** – տագავորո, **քարոգութիւն նորա** – յարոջոտոյն **նշրահորդի էր** - շորոճո յեր:

բ) Գրիչը «ե» տառն արտահայտելիս երբեմն կիրառում է «ի» («օ») տառը.

Օրինակ, **Եպիսկոպոսին** - օձօկօձօնօն, **Ստեփաննեսի** - ստօցանցօն, **Աւետարանս** - աճօտարանս, որդի էր **մեծատան** իշխանի - շորոճո յեր **մօհօճան** օմբանօ և այլն:

գ) Հայկական «և» շաղկապը ամեն տեղ «իվ» («օջ»)ձևով է ներկայացված:

դ) «-**ութիւն**» վերջավորության փոխարեն որոշ դեպքերում հանդիպում է «-յն» վերջածանցը. Օրինակ, **պատմութիւն- Յօճոյտոյն, վկայարանութիւն - Յճօձանյտոյն**:

ե) ը (ջ) տառը, որը չկա վրացերենում, բնագրում կիրառվում է «**ըստ**» նախդիր արտահայտելիս և հիմնականում «ի» տառով, հազվադեպ «ե» տառով է նշված.

Օրինակ, **ըստ** Յոհաննէս- օստ օձանց, **ըստ** գրողիս սորա - օստ ճրօճօն **նշրահ**, **ըստ** Մարկոսի - յետ մարջոնօ և այլն:

Մեր նպատակը չի եղել բնագրի լեզվական վերլուծությունը, մի քանի օրինակ նշել ենք, քանի որ մեր կարծիքով, շատ հետաքրքիր է: Ցավոք, մենք չենք գտել Մովսես Կորղանովի հայերեն տառերով գրված ձեռագիրը, որպեսզի մեր բնագիրը համեմատեինք լեզվական առումով և որոշեինք, թե ինչ քերականական նորմերի է հետևում կամ խախտում XIX դարի I կեսի հայ գրիչը: Նա շատ լավ տիրապետում է հայերենին և իր ժողովածուն է գրում Թբիլիսիի հայկական բարբառով:

Ո՞րն է գրչի նպատակը, և ինչու է Մովսես Կորղանովը հայերեն բնագիրը գրել վրացական տառերով: XVIII-XIX դարերում վրաց գրադարձությամբ (տրանսլիտերացիայով) կատարված հայկական ձեռագրերի տարածումը հազվադեպ երևույթ չէր: Այդպիսի ձեռագրերը

հարևան ժողովուրդների՝ հայերի ու վրացիների երկարատև և բարեկամական հարաբերությունների մասին են վկայում: XIX դարի սկզբին Կովկասում վրաց լեզուն իր առաջատար դիրքն էր պահպանում: Վրաստանում ապրող հայերի համար վրացերենը ինչպես պետական, այնպես էլ գրական լեզու էր հանդիսանում: Հայերի խոսակցական լեզուն հայոց լեզուն էր, բայց նրանք գրում էին վրացերենով: Հենց այդ պատճառով որոշ պահանջներ բավարարելու համար գրվում էին հոգևոր բովանդակությամբ հայերեն ձեռագրեր՝ վրաց գրադարձությամբ:

XIX դարի հայկական մամուլը լցված է նման բովանդակության նամակներով: Թերթերի խմբագրերը համարյա ամեն համարում կոչ են անում հոգևորականներին կրթություն ստանալու անհրաժեշտության մասին: «Մշակ» թերթի խմբագրությունը 1874 թ. №11 համարում հրատարակել է հոդված, որտեղ նշված է հոգևորականների (հատկապես գյուղերի քահանաների) կրթության ցածր մակարդակի մասին, որ աշխարհիկ մարդիկ ավելի կրթված և զարգացած են, քան հոգևորականները³:

Սակայն եթե աչքի անցկացնենք այդ ժամանակաշրջանի մամուլի նյութերը, կրթության ցածր մակարդակը և հայոց լեզվի չիմացությունը Վրաստանի հայերի ընդհանուր բնութագրիչն էր: «Մշակ» թերթի 1876 թ. №42 համարում հրատարակվել է նամակ Գորիում Անդրկովկասի մանկավարժական դպրոցի բացման վերաբերյալ: Այդ ուսումնարանի նպատակն էր ուսուցիչներ պատրաստել գյուղական դպրոցների համար: Ղեկավարությունը որոշել էր ուսումնական ձեմարանի հետ միասին հիմնադրել երեք սկզբնական տարրական ուսումնարան՝ ռուսական, հայկական և վրացական, որպեսզի Վրաստանի այդ երեք հիմնական ազգություններեխաններն ուսումնառությունն սկսեին մայրենի լեզվով, այն լեզվով, որով նրանք խոսում էին ընտանիքում: Չնայած, որ Գորիում մեծ թվով հայեր էին ապրում, պարզվել էր, որ հայ երեխանները չգիտեին հայերեն և նրանց խոսակցական լեզուն վրացերենն էր: Այդ պատճառով չհաջողվեց հայկական տարրական դպրոցի հիմնադրումը և միայն վրացական տարրական դպրոց բացվեց⁴:

Այդ տեղեկությունները XIX դարի 70-ական թթ. մամուլի տվյալներն են: Մովսես Կորդանովի գործունեության ժամանակաշրջանում

³«Մշակ», 1874 թ., № 11, 21 Մարտի, էջ 1:

⁴«Մշակ», 1876 թ., № 42, 4 (16) Նոյեմբեր, էջ 1:

նույն դրությունը պետք է լիներ, մանավանդ, որ այդ տվյալների և մեր ձեռագրի ստեղծման միջև ընդամենը 40 տարվա տարբերություն է: Ինչպես երևում է, մեր գրչի նպատակը հենց հոգևոր բնույթի երկեր պարունակող հայերեն ժողովածուի ստեղծումն էր հայ հասարակության համար հասկանալի լեզվով և հասկանալի գրությամբ:

**KHATUNA GAPRINDASHVILI
(GNCM)**

**ON THE EXAMPLE OF GEORGIAN-ARMENIAN LITERATURE
AT THE BEGINNING OF 19TH CENTURY (MS. H-60)**

Several Armenian manuscripts those have the Georgian transliteration are preserved at the Georgian National Centre of Manuscripts. Most of them were copied in 18th-19th centuries. These manuscripts are very important source in terms of studying of Georgian-Armenian relations, literature and language.

One of the most interesting manuscripts (H-60) is preserved at the collection of Georgian manuscripts. H-60 manuscript is dated back to 1836. According to the colophon, scribe is Movses Korganov. He was good at both Georgian and Armenian languages. H-60 manuscript is written in Armenian with Georgian transcripts and it uses dialect of Tbilisi.

At the beginning of 19th century Georgian language maintained its leading position in the Caucasus. For Armenians living in Georgia, the Georgian language was both a state and a literature language. Generally, Armenians used to speak in Armenian, but they used to write in Georgian.

In our opinion, the main goal of Movses Korganov was to create theological writings containing Armenian manuscript (H-60) for Armenian community in the comprehensible language and on comprehensible script.

ԼՅՈՒԴՎԻԳ ՄԻՐԶՈՑԱՆ

(ԵՊՀ)

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ «ՄԱՍՆԱ ԾՈՒՆ» ԷՊՈՍՈՒՄ

Պաշտամունքային երևույթների ակունքների ընկալման ու բացահայտման համար պարտադիր է նրա ընդգրկման տարածքի հնագիտական և ազգագրական, անգամ քաղաքական իրականության վերհանումը:

Երկնային լուսատուների պաշտամունքային դրսևորումները պատմամշակութային առումով կարևորվում են ժայռապատկերների, էպոսի աղերսները, որ ցուցանում են հայոց հոգևոր կերտվածքի, մտածողության և հավատքի լուսապաշտական հիմքերը:

Լուսային և առհասարակ տիեզերքին և լուսատուներին առնչվող պատկերացումներն ու հատկանիշները բազմազանորեն են արձանագրված հայոց մշակույթի գրեթե բոլոր ոլորտներում՝ նախնադարյան արվեստ և պաշտամունք, լեզու և բանահյուսություն, գիր և գրականություն, երաժշտություն և պար, շինարվեստ և կերպարվեստ, կիրառական արվեստ և տեխնիկա, գիտություն, կրթություն, իրավունք և այլն¹: Մշակույթում ուղղակի և խորհրդանշանային ձևերով արտացոլման հիմքում Արևի լույսի կարևորության գիտակցումն է, որ ծագել է վաղնջագույն ժամանակներում: Այս գիտակցման պատկերային արտահայտությունն են Հայկական լեռնաշխարհի բյուրավոր ժայռապատկերները, որ նախաքրիստոնեական շրջանի հայոց արարող ոգու վառ դրսևորումն են (մ.թ.ա. VII-I հազ.): Դրանցում առկա արևանշաններն ու կեռիսաչերը (սվաստիկա) մատնանշում են մեր նախնյաց աշխարհընկալումային համակարգում Արևի գրաված կենտրոնական տեղը: Ժայռապատկերներում դրանք պատկերված են թե՛ մեկուսի շքեղ ու խոշոր և թե՛ մարդու առօրյան ցուցադրող կտավներում²:

¹ Վարդումյան Գ., Թոխատյան Կ., Լույսի և արևի պաշտամունքի դրսևորումները «Մասնա ծոեր» էպոսում, Հայկական «Մասնա ծոեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգություն. - Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2004, էջ 89:

² Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1981, աղ. 64-3, 80, 61, 3: Իսրայելյան Հ., Պաշտամունքն ու հավատալիքը ու բրոնզեդարյան

Ղևոնդ Ալիշանը հայոց պաշտամունքային համակարգի հիմքում Արեգակն է տեսնում: Նա հայոց «Արեգակնապաշտ» լինելու բազմաթիվ վկայություններ է բերում՝ «Տարոնի Արեգակնաձագ բլուր», «Մյունյաց Արևիք գավառ», «Կաղզվանի կողմերում Արևորդի լեռներ», «Արեգակնապաշտների աղանդ», որ «Արևորդիք» են կոչվել և այլն³:

Հնագիտությունը, ազգագրությունը և հատկապես բանահյուսությունը լուսարևային պատկերացումների բազմապիսի վկայություններ են արձանագրել⁴: Այն առավել ընդգծված է արտացոլվել ազգային էպոսում. գործրինակ՝ սրբազան երկվորյակներ Սանասարն ու Բաղդասարը հրեղեն են՝ «մենք, որ կանք խրեղենից ծներ ենք»⁵, «Սանասար աղբրի ջուր խմեց – չորացավ – լցվավ, դարձավ հրեղեն»⁶: Ոսկեհեր Դեղձունը՝ նույն ինքն արեգակն է, որին հավիշտակել էր ծովային Վիշապը, և վիշապին սպանելուց հետո «անձրև-հեղեղ եկավ, կայծակ-փայլակ շամփրեց», «իսկ առավոտուն ինչ լույս բացվավ, տեսան Դեղձուն Ծամին պատուհաններ բացվե. Էնոր լույս տվեր ի քաղաք»⁷:

Առյուծ Մհերն արևի աստված Միհրի նախատիպն է, որը «պաշտվել է որպես ամռան արևի աստված»⁸ նրա կին Արմաղանն էլ «Արևու պես փել կիտա»⁹:

Հայաստանում, Երևան, 1973, նկ. 17, էջ 47:

³ Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 50-52:

⁴ Հայ բանահյուսությունը՝ թե՛ արձակ պատմողական, թե՛ չափածո երգային, և թե՛ բանաձևային ու առակ, զրույց, հուշապատում և այլ ժանրերում Արևի և Լույսի ուշագրավ արտացոլումներն են արձանագրել. - «Ապրի արևդ» (օրհնանք), «էն արդար ըրեքնակը վկայ» (երդում), «Յերկեն արև էղնիս» (բարեմաղթանք), «Իդա արև տայք ու պատիժ» (անեծք), «Արև ես, ամա ուրիշին լույս կիտաս» (առած), «Ով մերը մեր արեգակ, դու հասնիս օգնության», «Լույսը բացվի՛ բարին հետը» (աղոթք) կամ ժողովրդական ասություններից՝ «Լույսը բացվի՛ բարին հետը», «Լույսը քեզ տեսնողին» և այլն (Հարությունյան Ս., Ժողովրդական բանահյուսություն, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 291):

⁵ Մասնա Ծոեր, հ. Ա, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյան, Երևան, 1936, էջ 1032: Մասնա ծոեր, աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 562:

⁶ Մասունցի Դավիթ. Հայ ժողովրդական հերոսավեպ, առաջաբան, բառարան, ծանոթագրություն Ս. Հարությունյանի, Երևան, 1981 (այսուհետ՝ չԺՀ), էջ 40:

⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, էջ 417, Մասունցի Դավիթ, չԺՀ, էջ 70:

⁸ Իսրայելյան Հ., նշված աշխատություն, էջ 34, 62, 64-65:

Կ. Մելիք-Օհանջանյանը «Մասնա Ծոեր» էպոսի մի շարք անձնատուններ **Հոտոտ-մոտոտ, Խոր Մանուկ**, Ծովինար համոզիչ կերպով վերլուծում և կապում է Միհրի առասպելների և պաշտամունքի ոլորտներին, բացահայտում նրանց, ինչպես նաև Մեծ ու Փոքր Մհերների դյուցազնական արարքների առնչությունը Միհրական հնագույն առասպելների հետ, փորձում է հարցադրման կարգով ֆունկցիոնալ ու ժառանգական աղերսներ սահմանել մի կողմից դյուցազուն Հայկի և իրանական ու հունական երկնքի ու ժամանակի աստվածություններ Զովանի, Ուրանոսի և Տիտան Քրոնոսի միջև, մյուս կողմից՝ Հայկի, վիպական Դավթի ու Քեռի Թորոսի միջև, վերջիններիս դիտելով իբրև Հայկի տարբեր ֆունկցիաների ժառանգորդներ¹⁰:

Դյուցազնավեպում գլխավոր հերոս Դավիթն արևամարտիկ է՝ «պայծառ, գեղեցիկ, լուսավոր և ամենաուժեղ, ամենակարող, որ կռվում է Արևու շողերի հետ ու փորձվում ոսկու և կրակի շեղջերով: Նրա կին Խանդութը՝ կանացի սիրո և հավատարմության, անձնագոհության և արժանապատվության մարմնավորում է՝ «Առյուծն առյուծ է, թե կին, թե մարդ, այսինքն՝ էգ, թե որձ»¹¹, և անունից բխող՝ խանդի, խանդավառության ու խանդադատանքի միաձույլ անձնավորումը (Խանդութ՝ վառվռուն, փայլուն, խանձող)¹²: Էպոսում Խանդութը ներկայացված է իմաստնությամբ, Մհերամայր-Արևամայր և շատ այլ գծերով Խանդութն աղերսում է արևային Դեղձուն-Ծամին, իսկ Մհերի կերպարն ինքը երկատված է Մեծ և Փոքր Մհերների միջև¹³:

Առավել ցայտուն արտահայտված է Փոքր Մհերի արևային էությունը, որը էպոս մտած Միհր-Արեգակն է¹⁴: Նա աստվածամարտիկ է. «Դարձավ աստծուց խնդրեց՝ որ կամ կռիվ մի տա իրեն, կամ իրեն

⁹ Մասնա Ծոեր, աշխ. Ս. Հարությունյանի, էջ 145:

¹⁰ Մելիք-Օհանջանյան Կ., Միթրա-Միհրը «Մասնա Ծոերի» մեջ, Գրական-բանասիրական հետազոտումներ, գիրք I, Երևան, ՀՍՄՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրակ. ինստ., 1946, 269-327 էջ:

¹¹ Մասնա Ծոեր, հ. Բ, մաս Ա, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1944, էջ 316:

¹² Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հտ. Բ, Երևան, 1973, էջ 328-330:

¹³ Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական էպոս, Երևան, 1939, էջ XXVII:

¹⁴ Գրիգորյան Գր., Սասունցի Դավիթ էպոսի զարգացման շրջանները և պատմական շերտերը, Երևան, 1989, էջ 79:

ամանաթ առնի»¹⁵, արդարության, ճշմարտության և փրկության գաղափարակիր՝ Արևի հանգրվան քարաժայռում փակված: Իսկ նրա կին Գոհարը նախագգուշացնում է Մհերին. «տե՛ս արևը չը գարնի»¹⁶, կրելով էպոսի հայ կանանց բնորոշ միավորող խորհրդատու կեցուցիչ էությունը:

Երկնային և լուսարևային հատկանիշներ են կրում նաև էպոսի մյուս կերպարները՝ Վերգոն (ցռան-անձրև) և Մասնա Պառավը (արտատեր), Աստղու Ցուլածինը, Խոռ Մանուկը, Ճնճղափորիկը և Չմշկիկը:

Արևի պաշտամունքի կենդանակերպ դրսևորումներն են ձին, արծիվը, առյուծը, որոնց միահյուսվածքն է Քուռկիկ Ջալալին, որ թռչում է արծվի, կռվում՝ առյուծի նման: Նա «ծովային հրեղեն է, նույն ծովից, որից Մանասարը թռչում է ամպերն, արեգակ, քամի է ու քամու պես սլանում է իբրև փոթորիկ, շնչով կոտորում»¹⁷, խոսում մարդու նման՝ «Մեր ազգին ի վերուստ ա. ձիանքն իմաստուն են»¹⁸, և որպես երկնային աստվածություն, արև-հուր, նա իրար է կապում նախասկզբնական երեք տարերքը՝ ջուրը, երկիրը, երկինքը: Քուռկիկ Ջալալուց անբաժան է «Երկնուց իջած Թուր կեծակին»¹⁹:

Պատերազմի ու հաղթանակի աստծու գծերով օժտված Քեռի Թորոսը, որին էպոսագետները դիտում են որպես արևի արբանյակների հայր, սկզբնապես հանդես է եկել որպես արևի աստված, մարդկանց առողջություն և անմահություն պարզևող ոգիների տիրակալ²⁰: Նա, սատարելով Մասնա դիցապատումի բոլոր հերոսներին, իբրև հավիտենական՝ անսկիզբ և մշտագոյ, խորհրդատու կեցուցիչ էություն, միահյուսում է դյուցազուններին:

Էպոսում արտացոլված հնագույն հավատալիքներից են աստղահմայությունը կամ աստղագուշակությունը՝ կապված հերոսների ճակատագրերի փոփոխության հետ (Մասնա աստղ Դավիթ, Մսրա աստղ Մելիք) հոգեպատությունը:

Ջրի պաշտամունքային դրսևորումներ. նախնիների մասին պատկերացումները կազմում են նաև կրոնի վաղնջագույն ձևերից մեկի՝

¹⁵ Մասունցի Դավիթ. ՀԺՀ, էջ 314:

¹⁶ Մասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 305, 307:

¹⁷ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, էջ 415:

¹⁸ Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, էջ 411:

¹⁹ Մասունցի Դավիթ, ՀԺՀ, էջ 39:

²⁰ Գրիգորյան Գ., նշված աշխատություն, էջ 83:

տոտեմիզմի առասպելաբանական կերպարների համակարգը, ըստ որի մարդկային տոհմը կամ ցեղն իր ընդհանուր արյունակցական մերձությունը և ծագումը կապում է կենդանիների, բույսերի, բնության երևույթների և առարկաների հետ²¹: Տոտեմ նախնիները շատ հաճախ իրական մարդիկ չեն, այլ հիմնականում սերում են կենդանիներից կամ բույսերից, հազվադեպ՝ բնության երևույթներից կամ տարրերից՝ ծովից, ջրից, որոտից, կայծակից և այլն²²:

«Սասնա ծռեր» էպոսի տարբեր պատումներում քողարկված և բացահայտ ձևով արտահայտված են ջրի՝ որպես տոտեմական նախնու պաշտամունքի դրսևորումներ²³: Էպոսն սկսվում է երկվորյակներ Սանասարի և Բաղդասարի առասպելով. վերջիններիս նախամայրը տիեզերքի ջրային տարերքն անձնավորող մայր դիցուհին է՝ Ծովինար, Ծովյալ կամ Ծովիան խաթունը՝ անունը բաղադրված հայերեն «ծով» բառից: Ծովինարը, ում անվան ստուգաբանությունը ցույց է տալիս նրա կապը ծովի, ջրային տարերքի հետ²⁴, ամուսնությունից առաջ, Համբարձման տոնին, դուրս է գալիս զբասանքի աղջիկների և իր քեռմոր հետ, հետո նրանք առանձնանում են աղջիկներից, երկար զբոսնելուց հետո հասնում են աղի մի ծովի, այդ ժամանակ Ծովինարը ծարավում է և աստծուց մի աղբյուր խնդրում. Աստծո կամքով ծովը բացվում է և մի կանթաղբյուր է բխում²⁵: Ծովինարն աղբյուրի ջրից հղիանում է: Սա բավական ծանոթ պատկեր է, որն ամիջապես հիշեցնում է աշխարհի ժողովուրդների առասպելաբանությունը, ըստ որի՝ հրաշագործ աղբյուրներից ծնվում են երկվորյակ հերոսներ:

²¹ Հարությունյան Ս., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցաբանությունը, Երևան, 2001, էջ 7:

²²Токарев С., Религия австралийцев, - Народы мира. Народы Австралии и Океании, Москва, 1956, с. 223-224.

²³ Ծատուրյան Ջ., Ջուրը որպես տոտեմ նախնի «Սասնա ծռեր» էպոսում, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Երևան, 2007, էջ 101:

²⁴ Ըստ Մ. Աբեղյանի «ծովյան» բառը՝ չի կարելի այլ կերպ ստուգաբանել, քան կազմված ծովարմատից և հաճախ գործածվող յան վերջածանցով, որը ցույց է տալիս սերում, ծագում: Ծովինար անունը ածանցված է ծովյան բառից՝ ար վերջածանցով (Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական հավատքը, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ե, Երևան, 1975, էջ 71): Իսկ Վ. Բդոյանի համոզմամբ՝ «մեր էպոսի Ծովինարը նույնպես ջրային տարերքի աստվածուհի Նարից (Հուրի-փերիից) է ծագում» (Վ. Բդոյան Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 497):

²⁵ Սասունցի Դավիթ, Հայ ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 25:

Այժմ քննարկենք ջրի պաշտամունքի տեղն ու դերը հայ ժողովրդի հավատալիքներում: Ուշագրավ է, որ ժողովուրդը այնքան է հավատում ջրի ամենագոր ուժին, որ զանց է առնում տղամարդուց հղիանալու հնարավոր տարբերակը և իրական է համարում կնոջ հղիացումը կապել տոտեմական նախնիների, ինչպես օրինակ՝ ջրի, կենդանիների, բույսերի, բնության տարրերի հետ: Ի դեպ էպոսում ոչ միայն ջրային ծագում ունի Օովինարը, այլև Սասնա տան Քեռի Թորոսը: «Թորոս» անունը կապվում է խոնավություն և անձրև հասկացությունների հետ²⁶: Այստեղից կարելի է հետևություն անել, որ ջրային ծագում ունեցող նախնիներից պետք է ջրային ծագում ունեցող սերունդներ ծնվեն: Ժողովրդական պատկերացումների համաձայն ջրային ծագում ունեցող հերոսները սովորական մարդիկ չեն, նրանք առասպելական հզոր հսկաներ են, որոնք և՛ արտաքինապես, և՛ բնությամբ տարբերվում են մյուսներից:

Էպոսի հերոսների ջրային ծագումը ցայտուն դրսևորվում է նաև վեպի այն հատվածում, թե Սանասարը և Բաղդասարն ինչպես են որոշում տուն կառուցելու վայրը: Հեռանալով խալիֆի մոտից, երկար թափառելուց հետո հասնում են մի մեծ գետի և զարմանում են՝ տեսնելով, որ նրա միջով մի բարակ առվակ է կտրում անցնում՝ չխառնվելով գետի ջրերին: Այստեղ ուշագրավ է երկու եղբայրների երկխոսությունը.

- Էդ ջուր ազնացորդ ջուր է,
Ով որ էդոր ական ջուրըն խմե,
Էդպես կտրիճ կըլնի,
Էնոր մեջքըն գետին տվող չիլնի²⁷:

Վեպի տարբեր պատումներում ի հայտ է գալիս կաթնաղբյուրների նկատմամբ հայ ժողովրդի հավատը: Վեպի մյուս հերոսները՝ Սանասարը, Մհերը, Դավիթը, իրենց գորությունը ստանում են ջրից, հատկապես կաթնաղբյուրներից:

Ըստ էպոսի տվյալների՝ ջուրը նաև օժտված է բուժիչ հատկությամբ, ինչի նկատմամբ հայ ժողովրդի խոր հավատը ցայտուն դրսևորվում է հատկապես էպոսի այն դրվագում, երբ Քուռկիկ Ջալալին խնդրում է Դավիթին իր վիրավոր կողերին ջուր լցնել: Այդ մասին է վկայում Մ. Աբեղյանը. «Հայերի մեջ ևս աղբյուրների պաշտամունքը

²⁶ Петросян Э., Боги и ритуалы древней Армении, Ереван, 2004, с. 89.

²⁷ Սասունցի Դավիթ, 1961, էջ 17:

կապված է այն հավատալիքի հետ, թե դրանք առողջություն են պարզևուրում»²⁸:

Ժողովրդական գրույցներում ըստ ականավոր բանագետ Ս. Հարությունյանի²⁹ Ծովինարը ամպրոպային ոգի է, ձիավոր հեծյալ, որ ամպրոպի ժամանակ հրեղեն ձիով շրջում է ամպերի մեջ, կայծակ ու որոտ արձակում՝ անձրև կամ կարկուտ ուղարկելով երկիր: Ծովինարը մտել է հերոսավեպ՝ պատմականացել, դարձել հայոց թագավորի (Գագիկի) դուստր: Ծովից բխող աղբյուրներից խմած երկու բուռ ջրից հղիանում է և ծնում երկվորյակ դուստրներ: Ջուրը դառնում է ժառանգորդային կարևոր սկզբունք. Սանասարն իր դուստրական գորությունը, հրեղեն ձին, թուր կայծակին ձեռք է բերում ծովի հատակից՝ այնտեղ բխող կաթնաղբյուրից ջուր խմելով. երկվորյակներն իրենց տունը շինում են հզոր ակունքի վրա, ունենում հզոր ժառանգ: Սանասարի որդի Մեծ Միերը մարտից առաջ լողանում է հայրենի Կաթնաղբյուրի ջրով, նույնը կատարում է նրա որդի Դավիթը, որն անգամ սպանվում է ջրի մեջ լողանալիս: Հետաքրքիր է, որ վեպի հերոսները կաթնաղբյուրներում լողանալով առնականանում են, ընդունում ֆիզիկական մեծ չափեր, դառնում գրեթե անխոցելի, այսինքն՝ վերածնվում են:

Էպոսի մեկ այլ հատվածում, երբ Դավիթը հորեղբորից ստանում է հոր գեները, Քուռկիկ Ջալալին և Խաչ Պատերազմին, Քառասուն ճյուղ Ծամբ՝ նրա տատը, իմանալով դա, դուրս է գալիս սզից և դիմավորելով Դավթին, խնդրում է Քուռկիկ Ջալալուն Դավթին տանել հոր կաթնաղբյուրի մոտ, որպեսզի նա լողանա ու գերբնական ուժ ստանա, դրանից հետո նրան տանի հոր փորձության սյան մոտ, որպեսզի իր զարկով փորձի իր ստացած գորությունը: Այսինքն՝ սա ևս նվիրագործման մի յուրահատուկ ծես է, որն անցնելուց հետո միայն նա գնում է մելիքի (Մարա) դեմ: Այսպիսով, էպոսի գլխավոր հերոսների մեջ արտացոլվում են ժողովրդի իդեալները, որոնց արտահայտողը պետք է ունենա սովորական մարդկանցից տարբերվող նախնիներ՝ կիսաառասպելական, աստվածային: Սանա տան հիմնադիր նախնիների՝ Սանասարի և Բաղդասարի ծագումնաբանության մեջ վառ կերպով արտահայտվում

²⁸ Աբեղյան Ս., Հայ ժողովրդական հավատքը, էջ 52:

²⁹ Հարությունյան Ս., «Սանա Ծոբեր»-ի ծիսաառասպելական մի քանի հատկանիշների մասին, Պատմաբանասիրական հանդես, 2001, թիվ 1, էջ 76-77:

են հայ ժողովրդի նախնական հավատալիքներից մեկի՝ ջրի, որպես տոտեմական նախնու պաշտամունքի դրսևորումներ:

Ջրի պաշտամունքի հետքերը դրսևորվում են նաև էպոսի մյուս հերոսների՝ Ձենով Հովանի և Յոան Վերգոյի կերպարներում: Հայտնի է, որ Ձենով Հովանին, նաև Քեռի Թորոսին համարում են ամպրոպի աստված, նրա անվան մեջ ակնհայտորեն արտահայտվում է կապը որոտի և անձրևի հետ: Հ. Օրբելին երկնային ջրերի առաքողի կերպարի արտացոլում է տեսնում Յոան Վերգոյի մականվան մեջ, ըստ որի՝ «ցոան» հայերենում նշանակում է ջրաղացի փողրակ, որը ջուր է մղում ջրաղացի անվացրանքի վրա, հետևաբար մականվան մեջ կարող է թաքնված լինել ջրի ժայթքման հասկացությունը³⁰:

Էպոսի իր գրած տարբերակի առնչությամբ Գ. Սրվանձտյանցը հակիրճ ակնարկներով անդրադառնում է գրեթե բոլոր այն էական խնդիրներին՝ վիպասանների և վեպի տիպը, լեզուն, պատմական հիմքն ու հիշատակները, աշխարհագրական տեղավայրերը, գործող անձինք ու անունները, հիմնական բովանդակությունը, գեղջկական ազգային կենցաղի ու սովորույթների արտացոլումը, գեղարվեստական պատկերավորումը և այլն, որոնք հետագայում դարձան վեպը հետազոտող մասնագետների հիմնահարցերը: Դրանցից մեկն էլ Մհերի մասին առասպելն է: Առասպելն ինքնին շատ է արժեքավոր ու տիեզերագիտական, նույնքան արժեքավոր է Սրվանձտյանցի խորամիտ կռահումը այն մասին, որ Մհերն, ըստ առասպելի, հանդես է գալիս իբրև տիեզերքի բախտը տնօրինող աստվածություն: Մհերի կերպարի մեջ նա զգում է ու տեսնում է Միհր կամ Միթրա աստծու անվան ու գործառույթի արտացոլանքը: Ավելին, Սրվանձտյանցը, ելնելով Մհերի դրան հարավ նայող արևահայաց դիրքից, միանգամայն ճիշտ է կռահում այդ հուշարձանի երբեմնի պաշտամունքատեղի լինելը³¹:

Հայագիտության մեջ հետագայում հիմնավոր կերպով ապացուցվեց, որ իսկական վիպական Մեծ և Փոքր Մհերի կերպարներում արտացոլվել են հին Միհր-Միթրա աստվածության անունն ու գործառույթները, իսկ Ի. Դյակոնովի կողմից 1980-ական թթ. առաջ քաշվեց մի ուշագրավ տեսակետ, ըստ որի՝ Վանի քարայրից միջնամասի «Մհերի դուռ» անվանումը նույնական է ուրարտական արձանագրություններում հաճախակի հիշատակվող «Խալդիի դարբասներ» անվան հետ,

³⁰ Սասունցի Դավիթ, 1961, էջ LII-LIV:

³¹ Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 84-86:

կառուցված Իշպուհինի և նրա որդի Մենուայի կողմից, որ Միերի դուռը հնում եղել է Խալդի աստծու պաշտամունքատեղի և միայն հետագայում հայացվել և համադրվել է Միհր աստծու անվանն ու պաշտամունքին³²:

Երկնային լուսատուների այսօրինակ առատությունն ու բարձրարժեքությունն առհավատյան են հայոց «Մասնա Ծռեր» ժողովրդական վեպի ակունքների վաղնջականության, թեպետ էպոսի վաղնջական ձևավորումը վերագրվում է X դարին:

Հոգևոր կտրվածքի, մտածողության և հավատքի այսօրինակ լուսեղեն ոլորտներում կայացած, հարատևած և զարգացող, ի սկզբանե Արեգակն արդար և Լույս պաշտած հայերս այժմ էլ ի գորու են շարունակելու մարդկային ճշմարիտ արժեքների մնայուն աշխարհը:

Էպոսի տարբեր պատումներում ի հայտ են գալիս ջրի՝ որպես տոտեմ նախնու պաշտամունքի դրսևորումներ՝ սկսած Մասնա տան հիմնադրումից: Ջրի ամենագոր Էության, հրաշագործ աղբյուրների (Կաթնաղբյուր) մասին հայ ժողովրդի խոր հավատի այն արտահայտությունն է, որ հայոց պատկերացումներում հնարավոր է համարվում աղջկա հղիանալը ջրից: Սա վկայում է հայոց մեջ տոտեմական հավատալիքների կենսունակության մասին, քանզի տոտեմական առասպելաբանությանն է բնորոշ նախնու սերումը բխեցնելը կնոջ և բնության կապից՝ սերնդագործության վառ արտահայտություն է:

LYUDVIG MIRZOYAN
(YSU)

SOME CULTIC ASPECTS IN THE EPIC OF “DAREDEVILS OF SASUN”

The Armenian national epic, “Daredevils of Sasun”, was first discovered and presented in 1873 by Garegin Srvandztyants. The present article focuses on some cultic aspects attested in the above mentioned epic. In this respect, discussing the images of the main heroes of the epic, we single out certain aspects such as that of sun and water. Another section is related to the cult of ancestors.

³² Дьяконов И.М.. К вопросу о символе Халди. – Древний восток, 4, Ереван, 1983. с. 191-192.

**ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(ՀԱԻ)**

ԿԱՄԱՎՈՐ ՊԱՍԵՐՆ ՀԱՅՈՑ ՄԵՋ

Մենդից և կենցաղավարման ինչ-ինչ նորմերից որոշակի ժամանակով ամբողջովին կամ մասամբ հրաժարվելը պատմական տարբեր փուլերում զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող, տնտեսական և հավատալիքային ուրույն համակարգ ունեցող էթնիկ հանրությունների մոտ ունեցել է զանազան ընկալումներ և նպատակներ:

Հայոց քրիստոնեական գրավոր մշակույթում դեռևս V դ. այդ երևույթն անվանվում է պաս: Պասը հավատացյալի հոգևոր-բարեպաշտական կյանքի կարևոր մաս է: Այդ ընթացքում քրիստոնյան պետք է առավել զգոն լինի հոգևոր, մտավոր և մարմնավոր մեղքերի նկատմամբ, ժամանակավոր զսպվածությունն ցուցաբերի կենցաղավարման մեջ:

Հայոց եկեղեցական տոնացույցը բաղկացած է Տերունական և սրբերին նվիրված տոներից և պասի օրերից: Կանոնականացված են շուրջ 160 սննդային պահքի օրեր¹: Տոնացուցային պահքերն են օրապասերը (չորեքշաբթին և ուրբաթը), Զատիկին նախորդող Քառասներդաս պասը, որոնք սահմանվել են դեռևս հայոց տոնացույցի առաջին խմբագրությունում՝ կատարված Սահակ Ա. Պարթև Հայրապետի կողմից²: Շաբաթապասերը տոնացույցում ներդրվել են տարբեր ժամանակներում³:

Հայոց մեջ, բացի եկեղեցական գրավոր կանոններով սահմանված վերոնշյալ պասերից, կենցաղավարել են նաև կամավոր պասեր: Դրանց մասին հիշատակություններ կան մատենագրական, ազգագրական

¹ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Երևան, 1993, էջ 206:

* Եկեղեցու ծիսական կյանքում առանձնանում են ծիսական և սննդային պահքեր, որոնք հաճախ համընկնում են: Ծիսական են այն պահքերը, որոնց ժամանակ եկեղեցում կատարվում է պահքի օրվան համապատասխան ծես: Հնարավոր է, որ լինի սննդային պահք, իսկ ծիսական պահք չլինի, օրինակ՝ Վարագա շաբաթապասը հինգ օր պաս է կերակրի մատով, իսկ եկեղեցականը՝ երկու օր, նույնը՝ Սուրբ Հակոբինը և այլն (տե՛ս Օրմանեան Մ., Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 37):

² Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18-րդ դդ.), Երևան, 1999, էջ 616, 622:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 616-621, 627-639:

սկզբնաղբյուրներում, ժողովրդական կենցաղը պատկերող գեղարվեստական գրականության մեջ: Մակայն դրանց նվիրված ուսումնասիրությունն մեզ հայտնի աղբյուրներում բացակայում է: Ուստի սույն հոդվածի նպատակն է վերոնշյալ սկզբնաղբյուրներից քաղված հիշատակությունների հիման վրա վեր հանել միջնադարից մինչև XX դարասկիզբ հայոց մեջ տարածված մի շարք կամավոր պասեր, դրանց տևողությունը և նպատակները:

Կամավոր կերպով պահել են ինչպես *օրապասեր*, այնպես էլ *եռօրյա*, *շաբաթական*, *յոթնօրյա* և *քառասնօրյա* պասեր: Օրապասերը եղել են թե՛ օրացույցով պասից ազատ հայտարարված չորեքշաբթին և ուրբաթը⁴, թե՛ շաբաթվա այլ օր: Նույնը վերաբերում է նաև քառասնօրյա պասին: Անձը կարող էր կամավոր կերպով պահել և՛ Սուրբ Ծնունդին, և՛ Վարդավառին նախորդող Քառասնորդաց կամ Հիսնակաց պասերը⁵, և՛ քառասնօրյա պաս՝ տարվա ցանկացած ժամանակ: Այսպիսի պասի հանդիպում ենք VI դ. վերաբերող հիշատակությունում: Վարդ Պատրիկի կողմից կառուցվելիք եկեղեցում Ստեփանոս Նախավկայի մասունքը տեղադրելու նպատակով Երուսաղեմ մեկնած Սիմեոն Միայնակյացը սրբի մասունքը ստանալուց հետո քառասուն օր պաս է պահել. «Սիմեոն, այրըն Աստուծոյ, յորժամ եկն՝ առեալ զնշխար սրբոյ վկային, օրհնեաց զամենայն յեկեղեցիքն և կացեալ ի պահս արուրս .Խ. վասն տեպեանն»⁶: Նման պասի օրինակներ միջնադարյան աղբյուրներում հաճախ են հանդիպում:

Կամավոր օրապասերը շատ են վկայվում ազգագրական աղբյուրներում: Սուրբ Սարգսի (խոսքը Սուրբ Սարգսի տոնին նախորդող

⁴ Օրացույցային պասից ազատ են հայտարարված Սուրբ Ծննդյանը հաջորդող ութ, Զատիկին հաջորդող քառասուն, Աստվածածնի Վերափոխմանը հաջորդող ինը և Խաչվերացին հաջորդող յոթ տոնական օրերի ընթացքում ընկած չորեքշաբթին և ուրբաթը:

⁵ Այս պասերի մասին տե՛ս Աբրահամյան Հ., Վարդավառի Քառասնորդաց (Հիսնակաց) պահքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, Երևան, 2017, 2, էջ 345-354: Նույնի՝ «Աստվածահայտնության Քառասնորդաց (Հիսնակաց) պահքը» (պատմական համառոտ ակնարկ) հոդվածն առաջիկայում լույս կտեսնի ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից 2015-ին անցկացված «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում» խորագրով գիտաժողովի հոդվածների ժողովածուում:

⁶ Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921, էջ 34-35: Պատմութիւն Անանուն գրուցագրի, կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Երևան, 1971, էջ 107:

Առաջավորաց պասի մասին է - Հ. Ա.) պասի շաբաթվա շաբաթ օրը⁷ պաս պահողները հավատում էին, որ այլևս խոլինջ⁸ չէր առաջանա⁹:

Հաջորդ կամավոր օրապասը Համբարձման տոնին նախորդող չորեքշաբթի օրվա պասն էր, որը հիմնականում կանայք էին պահում, որպեսզի երեխաները *ծաղիկ* հիվանդությամբ չբռնվեն¹⁰: Այս պասը, ինչպես նաև դրա նպատակը, ունեն տրամաբանական բացատրություն: Այսպես. Համբարձման տոնի ժողովրդական ծիսաշարի մաս կազմող խաչաձև ծաղկեփունջը կոչվում է Ծաղկամեր, իսկ տոնը հայտնի է նաև Ծաղկամոր տոն անունով¹¹: Վ. Բդոյանը Համբարձման Ծաղկամերը նույնացնում է Վառվառա կույսի հետ¹²: Վերջինս մի բարեպաշտ աղջիկ է, ով քրիստոնեություն ընդունելու համար հոր կողմից հալածվել է և ապաստանել Արայի լեռան փեշին գտնվող այրում: Սակայն հովիվները նրան մատնել են: Նահատակվելուց առաջ կույսն անիծել է հովիվներին և Աստծուն խնդրել, որ ծաղիկ հիվանդություն ունեցողներն իր անունով բժշկվեն: Դրանից հետո քարայրը կոչվել է Ծաղկեվանքի կամ Վառվառա կույսի քարայր¹³: Այն տոնի ամենահայտնի ուխտավայրն է¹⁴: Հետևաբար՝ մայրերը Ծաղկամոր տոնին պաս են պահել՝ զավակներին ծաղիկ հիվանդությունից զերծ պահելու ակնկալիքով:

Մայրերը նաև մի քանի տարի շարունակ կամավոր պաս են պահել շաբաթվա որոշակի՝ ոչ պահոց օրերի, օրինակ՝ երկուշաբթի կամ երեքշաբթի՝ ցանկանալով, որ նախախնամությունը պահպանի և շնորհք տա իրենց որդուն¹⁵:

Բացի պահոց օրերից, հաճախ հավատացյալները ցանկացած ուտիքի օր (պասից դուրս օրեր, երբ կերակրի սահմանափակումներ

⁷ Ըստ եկեղեցական օրացույցի՝ Սուրբ Մարգարիտ տոնը շաբաթ օրն է, և այդ օրը պասից ազատ է:

⁸ Խոլինջը կամ կոլինջը մեջքի մկանային ցավ է (տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), Կ. Բ, Երևան, 2002, էջ 346):

⁹ Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 48:

¹⁰ Լալայեան Ե., Բորչալուի գաւառ, ԱՀ, գիրք X, Թիֆլիզ, 1903, էջ 225:

¹¹ Մկրտչյան Ս., Հայոց տոնաձիսական մշակույթ, Երևան, 2016, էջ 105:

¹² Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 455-456:

¹³ Մկրտչյան Ս., նշվ. աշխ., էջ 106:

¹⁴ Նույն տեղում, էջ 106:

¹⁵ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 223:

չկան – չ. Ա.) կամավոր պաս են պահել, որը վանեցիներն անվանել են բըռնողաց-չբբըռնողաց¹⁶: Այս պասն ապաղաս են պահել, որը «թեթև կամ անկարևոր և ըստ կամս լուծելի պահք»¹⁷ է: Պասի այս ձևը հիշատակում է դեռևս Հովհան Մանդակունին¹⁸:

Երեք կամ հինգ օր տևողությամբ պաս պահել են նշանված կամ նշանվելիք աղջիկները՝ *ճէհիզնը* (օժիտը) ավելացնելու և հարստանալու նպատակով¹⁹:

Կամավոր շաբաթապահքերի մեջ հայտնի են *Աթոռ(ք)* կամ *Փոխ* կոչվող պասերը: Դրանք սովորաբար պահում են տարիքն առած կանայք տոներին նախորդող շաբաթապասերից առաջ²⁰: Հայտնի են Սուրբ Մարգարի²¹, Աստվածածնի²², Խոտհունձի, Եղիական փոխերը, Սուրբ Հակոբի Աթոռը²³, Խաչվերացի²⁴, Վարդավառի փոխը կամ Աթոռը²⁵ և այլն:

Աթոռք պասի մեզ հայտնի ամենահին վկայությունը XIV դարի է. «Ի ՊԼԵ (հայոց 835 և Քրիստոսի 1386 թթ. - Չ. Ա.) թվին Լանկթամուրը եկն ի Թավրեզ և ի Նախչուան՝ և անտի ի միում աւուր կալաւ մինչև ի Կարբի և ի Բջնի, ի Գառնի՝ Սուրմարի, ի Կողբ. և անտի գնաց ի Վրացտուն՝ և արար դագայ զՏփխիս քաղաք, և կալեալ զթագաւորն

¹⁶ Մեսրոպյան Չ., Պահեցողության անշվող բառերը հայերենի բարբառներում, Հայոց լեզվի պատմության հարցեր, Միջազգային հայրենագիտական ութերորդ գիտաժողովի զեկուցումներ, Ստեփանակերտ, 2008, էջ 66:

¹⁷ Աճառեան Չ., Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 227: Տե՛ս նաև Գամբաճեան Ս., Նոր բառգիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 151: Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 67:

¹⁸ Յովհան Մանդակունի, Ճառք, Թուղթ վասն պահոց պնդութեան, Մատենագիրք հայոց, Կ. Ա, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 1171-1172:

¹⁹ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրուք, 1961, էջ 1136:

²⁰ Մշեցի կինը (համառօտ ուսումնասիրութիւն), Բ, «Բիրակն» լրագիր, 8 յունուար, 1898, էջ 57: Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 223:

²¹ Մշեցի կինը, էջ 57: Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 223: Հակոբյան Գ., Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, 1974, էջ 246:

²² Մշեցի կինը, էջ 57: Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 223: Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, ԱՀ, գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 124: Տէր-Մինասեան Վ., Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, Կ. Բ, Կ. Պոլիս, 1904, էջ 147: Կարապետյան Ե., Մասուն. ազգագրական հետազոտություններ, Երևան, 1962, 204 էջ:

²³ Մշեցի կինը, էջ 57:

²⁴ Տէր-Մինասեան Վ., նշվ. աշխ., էջ 147:

²⁵ Մշեցի կինը, էջ 57: Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, էջ 124:

Բագրատ տաճկացոյց. և գնացեալ ձմերեաց ի Մուղան, և ի գալ տարւոյն՝ յաւուրս աւագ գատկին ել ի Միւնիս, և սփռեալ տարածեցաւ, և գնաց հետ Թուրքմընին մինչ ի յԱմթայ ջուրն, և դարձեալ եկն ի Վանայ վերայ, և խսարեաց գնա գաւուրս ԻԵ. և առեալ գնա յաւուր Ե. շարաթոջ, յաթոռաց պահոքց ս. Խաչին, և զամենեսեան իբերդն ի վերայ ելից...»²⁶: Այս վկայությունը եզակի է նախ նրանով, որ վերաբերում է Խաչ-վերացին, քանի որ այս տոնի Աթոռքը ավանդական կենցաղում հազվադեպ է հանդիպում, երկրորդ՝ այդ ժամանակաշրջանում Աթոռք պահքի մասին սակավ վկայություններից է:

Ենթադրելի է, որ պասի *Աթոռ* անվանումը տվյալ դեպքում նշանակում է *գլխավոր*²⁷ և խորհրդանշում է անհատի համար տվյալ տոնը կարևոր լինելու հանգամանքը: Հետևաբար՝ դրանից սպասվող ակնկալիքները կատարված տեսնելու նպատակով անհատը ևս մեկ շաբաթ կամավոր ինքնազրկումի է դիմում: Այս համատեքստում հասկանալի է դառնում նաև պասի *Փոխ*²⁸ անվանումը, երբ մարդն իրեն,

²⁶ Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքումն ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 171:

²⁷ *Աթոռ* բառը, բացի մերօրյա հիմնական նշանակությունից, ունի նաև գահ, նստարան, հանգըստարան, իշխանություն իմաստները (տե՛ս Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, Վենետիկ, 1869, էջ 4: Մուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, 2009, էջ 9): Հաջորդ բացատրությունը համապատասխանում է ժողովրդական ընկալմանը, այսինքն՝ Աթոռքը՝ որպէս կամավոր շաբաթապահք, որ պահում են ավագ տոներին նախորդող շաբաթապահքից առաջ (տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 14): *Աթոռ* բառին եզակի և պաս երևոյթին առնչվող բացատրություն է տալիս Մ. Ջախջախյանը. «Աթոռ: Կազմած կամ անօթ արարեալ ի մաքրումն յաւելուածոյ որովայնին»: Seggetta, sedia da camera, il comodo (Ջախջախեան Մ., Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 8):

²⁸ *Փոխ* նշանակում է ժամանակավորապէս որևէ մեկից վերցված, որևէ մեկին տրված կամ փոխարինաբար կատարված ինչ-որ բան (տե՛ս Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926, էջ 510-511: Ճիզմէճեան Պ., Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1957, էջ 1404: Հայոց լեզուի նոր բառարան, Տէր-Խաչատուրեան Ա. եւ այլք, Պէրոյթ, 1968, էջ 871: Աղայան Է., Արդի հայերէնի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1524: Ճէրճէրեան Գ., Հայոց լեզուի նոր բառարան, Պէրոյթ, 1992, էջ 1046):

Փոխ նշանակում է նաև փոխհատուցել: *Աստված փոխ անի* արտահայտությունը նշանակում է *Աստված հատուցի* (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացա-

մեկ հավելյալ շաբաթ ինչ-որ բաներից զրկելով, «նվիրում է» տվյալ տոնին կամ սրբին՝ իր խնդրանքը ստանալու ակնկալիքով:

Կան կամավոր պասեր, որոնք սովորության ուժով ավանդական կենցաղում դարձել են ամենամյա, օրինակ՝ Վարդավառի Աթոռքը: Այն հորդորել են պահել նաև տղաներին՝ ս. Կարապետից շնորհք և իմաստություն ստանալու ակնկալիքով²⁹: Վարդավառին նախորդող Մեծ պասը կապվել է Հովհաննես Մկրտչի անվան հետ, ով իր անվան պասը պահողներին շնորհել է իմաստություն, լարախաղացներին՝ ճարպկություն, աշուղներին՝ մտքի թռիչք և այլն³⁰: Այս համատեքստում հասկանալի է դառնում, որ Փոխը և Աթոռքը, թերևս, լավագույն վկայություն են նաև տվյալ տոներից առաջ երբեմնի պահվող հիսնօրյա պասերի (Վարդավառի և Աստվածահայտնության): Աթոռքները, թեև տոնացույցում չեն ամրագրվել, սակայն ընդհուպ մինչև մեր օրերը եկեղեցու ծիսական կյանքին մոտ կանգնած հավատացյալների շրջանում կենցաղավարում են:

Ավանդական կենցաղում շատերն ուխտի գնալուց առաջ մեկ շաբաթ պաս են պահել³¹:

Երևանում պահել են կենտապաս, որը շաբաթապաս է³²: Կենտապասը որպես շաբաթապահք են բացատրում նաև Հ. Աճառյանը³³, Ա.

տրական բառարան, Երևան, 1980, էջ 659):

Փոխ՝ Արարատյան բարբառում նշանակում է կամավոր պահք՝ իսկական պահքից մեկ շաբաթ առաջ (տե՛ս ՀԼԲԲ, հ. 7, Երևան, 2012, էջ 14: Մալխասեանց Սո., նշվ. աշխ., էջ 507): *Փոխ երթամ*՝ արտահայտությունը նշանակում է մատաղ լինեմ, իսկ *արյան փոխն առնել*, նշանակում է վերժը լուծել (Աճառեան Հ., Հայերեն գալառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու (այսուհետև՝ ԷԱԺ), Թիֆլիս, 1913, էջ 1076: Վերջին իմաստը տես նաև Մալխասեանց, Սո., նշվ. աշխ., էջ 507): *Փոխս ոսկւոյ*՝ մտանել արտահայտությունը նշանակում է փոխի տակ մտնել (տե՛ս Ջախջախեան Ս., նշվ. աշխ., էջ 8): Տամ զգա փոխ Տեառն զամենայն ատուրս, և եղիցի գա փոխ տեառն: Հատուցէ քեզ Տէր զաւակ փոխանակ փոխոյնէ զոր ետուր Տեառն (տե՛ս Աւետիքեան Գ., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837, էջ 945):

²⁹ Տէր-Մինասեան Վ., նշվ. աշխ., էջ 147:

³⁰ Մխիթարեանց Աղ., Փշրանք Շիրակի ամբարներից, ԷԱԺ, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 272: Լալայեան Ե., Նոր Բայազետի գաւառ, էջ 124: Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, Գահիրէ, 1937, էջ 1748-1751: Բաֆֆի, Սալբի, Երկերի ժողովածու, հ. երկրորդ, Երևան, 1983, էջ 34:

³¹ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 125:

³² Մեսրոպյան Հ., նշվ. աշխ., էջ 67:

Սուքիասյանը՝ կենտապասի հոմանիշ ունենալով նաև չորապահքը, որը ևս շաբաթապաս է³⁴: Ստ. Մալխասյանը կենտապասը բացատրում է որպես շաբաթվա կենտ օրերին պահվող պաս³⁵: Կենտապասը միննույն ժամանակ բացատրվում է նաև թե՛ որպես կենտ օրերին պահվող պաս, թե՛ որպես շաբաթական պաս³⁶:

Կարծում ենք, որ կենտապաս կարող է լինել թե՛ շաբաթվա կենտ օրերին պահվող պասը, թե՛ մեկ, այսինքն՝ կենտ շաբաթ պահվող պասը: Սակայն երկրորդ բացատրությունն ավելի տրամաբանական է, քանի որ սկզբնաղբյուրները խոսում են հոգուտ շաբաթական պասի:

Ղարաբաղում պասատոն էին պահում, որը ցանկացած շաբաթվա ընթացքում պահվող պահք էր³⁷:

Եզակի մի պասի դեպք է գրանցվել Դարալագյազի (Վայոց Ձոր) Կորադիզ, Մերս և այլ գյուղերում. հարսանիքից հետո փեսան *յոթ օր պաս է պահել*՝ յոթ արու զավակ ունենալու նպատակով³⁸:

Կեսարիայի որոշ բնակավայրերում (Չոմախլուում և գավառի մյուս բոլոր ավաններում և քաղաքներում) շատերը կամավոր պասներ են պահել, մասնավորապես հիվանդների առողջության և այլ նպատակների համար ուխտ անելով³⁹:

Ուշագրավ է ի հիշատակ Վարդանանց նահատակների պահվող հնգօրյա պասը: Վարդանանց նահատակների հիշատակը տոնվում է Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը⁴⁰, հետևաբար՝ տոնին

³³ Աճառեան Հ., Հայերեն գաւառական բառարան, էջ 563:

³⁴ Սուքիասյան Ա., նշվ. աշխ., էջ 320, 496:

³⁵ Մալխասեանց Ստ., նշվ. աշխ., 426:

³⁶ ՀԼԲԲ, հ. 3, Երևան, 2004, էջ 77: Սուքիասյան Ա., նշվ. աշխ., էջ 518:

³⁷ Մեսրոպյան Հ., նշվ. աշխ., էջ 67: Պասատոնը որպես պահոց շաբաթ են բացատրում Հր. Աճառյանը (տե՛ս Հայերեն գաւառական բառարան, էջ 897), Ս. Մալխասյանը (տե՛ս Հայերեն բացատրական բառարան, էջ 55), ՀԼԲԲ-ն (հ. 5, Երևան, 2008, էջ 34):

³⁸ Քաջբերունի, Հայկական սովորութիւններ, ԱՀ, գիրք VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 201:

³⁹ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 1747-1748:

⁴⁰ Վարդանանց տոնն ունեցել է երեք ժամկետ. V-VIII դդ. 20-ական թթ. Սկզբներին այն տոնել են Վաչէյանների և Մակաբայեցիների տոնի հետ միասին՝ օգոստոսի 1-ին, VIII-XIV դդ., համաձայն Հովհան Օձնեցու կանոնի, տոնել են Բուն Բարեկենդանին նախորդող երեքշաբթի, և XIV դ-ից մինչ օրս նշվում է Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը (տե՛ս Սարգսյան Լ., Սար-

նախորդող պասը լինում է Առաջավորաց պասից մինչև Մեծ պաս ընկած երկշաբաթյա շրջանի երկրորդ շաբաթվա ընթացքում⁴¹: Թեև այդ այդ հաստվածում Եկեղեցական տոնացույցը երբևէ պաս չի սահմանել, իսկ ըստ ազգագրական աղբյուրների՝ այդ երկու շաբաթները կերուխումի ու զվարճանքների բարեկենդանյան շրջան է եղել, բայց կամավոր պաս պահողները երկրորդ շաբաթից հրաժարվել են: Այսպիսով՝ Մեծ պասը նրանց համար ոչ թե յոթ, այլ ութ շաբաթ է տևել⁴²: Այդ պասը կոչվել է Սուրբ Վարդանի պաս: Հնգօրյա պասն ավարտվել է շաբաթ օրը դեպի Ալափարսի Սուրբ Վարդանի (Սըվարդան) վանք ուխտագնացությունը⁴³: Հետաքրքրական է այն, որ ուխտագնացությունը եղել է շաբաթ օրը, այլ ոչ թե տոնի օրը՝ հինգշաբթի: Այս պասը գլխավորապես պահել են հողացավ (քամի) ունեցողները՝ Սուրբ Վարդանի վանքից բժշկություն հայցելու հույսով⁴⁴:

Ուշագրավ է, որ մեր օրերում Ալափարսի Սըվարդան Ձորավար եկեղեցու ուխտի օրը հոկտեմբերի վերջին կիրակին է, եթե այն չի

զըսյան Գ., Վարդանյան Ռ., Վարդանանց տոնի կանոնականացումը, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Բ, Երևան, 2007, էջ 20-27): Նշված ժամկետներից ոչ մեկի դեպքում տոնին պաս չի նախորդել:

⁴¹ Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, էջ 124:

⁴² Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 246:

⁴³ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 124: Ալափարսում կա ս. Վարդանի քար: Այդ քարը գաղթի ժամանակ տեղացիները բերել են Մոկսից: Ասում են, թե այդ քարի վրա ժամանակին թափվել է Վարդան Ձորավարի արյունը (տե՛ս Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 52): Ալափարսի Վարդան Ձորավար եկեղեցին կոչվել է նաև Սուրբ Ծիրանավոր վանք (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 69), կառուցվել է 901 թ. Գրիգոր իշխանի կողմից: Վերանորոգվել է 1857 թ. (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 852):

⁴⁴ Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, էջ 124: Մի շարք ավանդազրույցներում Վարդան Մամիկոնյանի սրբավայրերին վերագրվում է բուժելու հատկություն, մանավանդ նրանց, որտեղ ջուր կա (տե՛ս Ղանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 388: Աբրահամյան Հ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), Ակունք (Գեղարքունիք), 2004: Գալստյան Հ., ԴԱՆ, Վարդենիս (Գեղարքունիք), 2009: Աբրահամյան Հ., Վարդավառի տոնախմբությունը և Անգեղակոթի Սուրբ Վարդան զորավար եկեղեցին, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում, Հայ ժողովրդական մշակույթ, XV, Երևան, 2010, էջ 304-305):

գուգադիպում տվյալ ամսի 30-ին⁴⁵: Իսկ Վարդանանց տոնին Մըվարդան եկեղեցի ուխտի գնալու, առավել ևս պաս պահելու մասին գյուղում տեղյակ չեն:

Հայտնի է, որ քրիստոնեության առաջին դարերում, երբ դեռ դավանաբանական ու ծիսական հարցերը խմորման փուլում էին, սահմանված չէին նաև պասի հստակ ժամանակամիջոցները: Մեծ պասը տևում էր տասը շաբաթ՝ Առաջավորաց պասից մինչև Ջատիկ⁴⁶: Վարդանանց տոնին նախորդող այս պասը, ըստ ամենայնի, երբեմնի յոթանասուն օր տևած պասի մնացուկ է, որը հետագայում ժողովուրդը կամավոր կերպով պահել է սիրելի սրբի տոնից առաջ:

Որոշ բնակավայրերում ավանդական կենցաղում (Մարաշ, Համշեն, Նոր-Բայազետ և այլն) Համբարձումից մինչև Հոգեգալուստ պաս են պահել, որը հայտնի է եղել Համբարձման պաս անվամբ⁴⁷: Մարաշում, մինչև XIX դ. վերջը, այն կոչվել է նաև Սուրբ Հոգու պահք⁴⁸, Հուգուպոք, Հոգուե պահք և պահվել է Հոգեգալստից ութ օր առաջ⁴⁹: Համշենում այն հայտնի է եղել նաև որպես ինը դաս հրեշտակի պաս⁵⁰: Համբարձման պաս կոչվելու հանգամանքը եզակի է նրանով, որ մինչ այժմ մեզ հայտնի տվյալներով տոնի անունով է կոչվում դրան նախորդող, այլ ոչ թե հաջորդող պասը, ինչպես՝ Առաջավորաց պասը՝ Սուրբ Մարգսի պաս, ս. Հակոբի տոնի նախընթաց պասը՝ Սուրբ Հակոբի պաս և այլն: Նույն օրինաչափությունը առկա է նաև այս պասի դեպքում, քանի որ այն նախորդում է Հոգեգալստյան տոնին: Օրինակ՝ Մարաշի հայերը Սուրբ Հոգու հիշատակը հատուկ հանդիսավորությամբ են տոնել և ամբողջ շաբաթ պաս են պահել: Սակայն XX դարասկզբին միայն տարիքն առած կանայք են շարունակել այդ սովորությունը, և այն

⁴⁵ Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ ՀԱԻ գիտաշխատող Լիլիթ Սիմոնյանին՝ սույն տեղեկությունը հաղորդելու համար:

⁴⁶ Գրիգոր Տաթևացի, Քարոզգիրք, Ձմեռան հատոր, Երուսաղեմ, 1998, էջ 352: Կիլիկեերեան Բ., Ժողովուրդին տօնացոյցը, Կ. Պոլիս, 1901, էջ 52:

⁴⁷ Վարժապետեան Յ., Մարաշի մէջ նշանաւոր օրեր իրենց ծէսերով, «Բիւրակն» լրագիր, 24 սեպտեմբեր, 1898, էջ 585: Մուրադեանց Յ., Համշենցի հայեր, ԱՀ, գիրք Զ, Թիֆլիս, 1900, էջ 158: Լալայեան Ե., Նոր-Բայազետի գաւառ, էջ 124: Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 36:

⁴⁸ Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 341:

⁴⁹ Վարժապետեան Յ., նշվ. աշխ., էջ 585:

⁵⁰ Մուրադեանց Յ., նշվ. աշխ., էջ 158:

գրեթե մոռացության է մատնված եղել⁵¹: Տվյալ ժամանակաշրջանում այդ պատճառով եղել է կամավոր⁵²:

Պատճառահետևանքային անունով կոչվելը և իննսորյա տևողությունը, կարծում ենք, կապված է հետևյալ ավանդության հետ: Ըստ Հայ եկեղեցու պաշտոնական ավանդության՝ Քրիստոս Համբարձումի ժամանակ ինն օր ճանապարհին է մնացել՝ ամեն օր մի հրեշտակի մոտ հյուրընկալվելով: Մինչ Գրիգոր Լուսավորիչը գտնվել է Խոր վիրապում, նրան ամեն օր մի հրեշտակ է այցելել: Երբ Համբարձումը միշտ լինում է Հինգշաբթի – Հ. Ա.) հրեշտակը չի գնացել և հաջորդ օրը Լուսավորիչը հարցրել է բացակայության պատճառը, հրեշտակն ասել է, որ Քրիստոսի Համբարձումն առիթով հրեշտակների ինը դասերը հաջորդաբար տոնախմբություն են կազմակերպել: Այդ օրը եղել է չորրորդ դասի տոնախմբությունը, որին մասնակցելու պատճառով չի կարողացել այցելել Լուսավորիչին: Համաձայն այս ավանդության՝ Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսը սահմանել է Երկրորդ Ծաղկազարդի տոնը (նշվում է Ջատկին հաջորդող յոթերորդ կիրակի)⁵³: Այս ավանդությունը տարածված է եղել նաև ժողովրդի մեջ: Համշենցիները համարել են, որ Հիսուս Համբարձումից հետո յուրաքանչյուր օր մեկ հրեշտակի մոտ է մնացել, քանզի յուրաքանչյուր երկնքի վրա մեկ հրեշտակ է պետք⁵⁴:

Տոնացույցում Համբարձումից մինչև Հոգեգալուստ ընկած հատվածը երբևէ պահոց շրջան է եղել: Ռ. Վարդանյանը, համադրելով և վերլուծելով Հովհան Մանդակունու Է. (V դ.)⁵⁵, «Կանոնք առաքելականք»-ի

⁵¹ Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 341:

⁵² Մալխասեանց Ստ., նշվ. աշխ., էջ 124:

⁵³ Աղավնունի Մ., Սուրբ երկրին սրբալայրերու ւանդութիւնները, Երուսաղէմ, 1936, էջ 437: Մանուկեան Ա., Հայ եկեղեցու տօները, Թեհրան, 1372-1994, էջ 165: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 450-451: Ըստ Եկեղեցու Հայրերի մեկնության՝ Երկրորդ Ծաղկազարդի տոնը խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երկնային Երուսաղէմ:

⁵⁴ Աղավնունի Մ., նշվ. աշխ., էջ 204:

⁵⁵ «Ի Պենտակոստէէն յառաջի ծումոյն պահս ցուրբաթ ար պահել եւ յուրբաթուն ուտել՝ անկարգութիւն է. պահել պարտ է մինչեւ ցերեկոյն, եւ զուրբաթ որպէս կիրակէ պատուեն եւ ի գործոյ դատարկացուցանեն՝ մեղք են, եւ կոչեն զնա ծեր, եւ ոյր տեսեալ է զնորա ծերութիւնն, զի Ե արն աւագ են քան զնա» (տե՛ս Կանոնագիրք հայոց, հ. Ա, աշխատասիրութեամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 497-498):

ԺԱ. (V դ.) կանոնների⁵⁶ և Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 5667 ձեռագիր Տոնացույցի (1440 թ.) տվյալները, եզրակացնում է, որ V դ. 80-ական թթ-ից, իսկ ավելի հաստատուն կանոն դարձած 547թ-ից, Համբարձումից մինչև Հոգեգալուստ պահքի օրեր են եղել (հավանաբար շաբաթ և կիրակի օրերը հանած), մինչև նույնիսկ 1440 թ.⁵⁷: Տոնացույցը վկայում է, որ եթե չեն կարողանում պահել ամբողջ ընթացքը, կարող են պահել միայն չորեքշաբթին և ուրբաթը. «... Ձի ի Համբարձմանէ մինչև Պենդակոստն պահեացեն և թէ ծանր թուի գրովանդակն պահել զչորեքշաբթին և գուրբաթ պահոց են»⁵⁸:

Ներսես Շնորհալու սահմանած կարգի համաձայն՝ Համբարձմանը հաջորդող (մինչև Հոգեգալուստ – Հ. Ա.) երկու ուրբաթները և մեկ չորեքշաբթին պաս են եղել կերակրի մասով, իսկ եկեղեցում անփոփոխ պահվել է Տերունի տոնը⁵⁹ (խոսքը Հոգեգալուստյան տոնի մասին է, որի տոնական շրջանը ութ օր է⁶⁰):

Հոգեգալուստից առաջ պահվող յոթնօրյա պասը նշվում է նաև Մամուել Կամբջաձորեցու (X-XI դդ.) խմբագրած տոնապատճառում. «Որպես պահեմք զԷ. ար զկնի Պենդակոստէին»⁶¹:

Եվս մի հետաքրքիր տեղեկություն, որ հուշում է այս շրջանում երբևէ եղած պասի մասին: Դավիթ Ալավկա Որդին իր «Կանոնական արևտրություն» աշխատության ԿԶ կանոնում գրում է, որ հիվանդության պատճառով Աղուհացի, այսինքն՝ Ջատկին նախորդող Մեծ պասի օրերը խախտածների համար պահքը կարելի է լուծել այն ժամանակ, երբ բժիշկն ասի, թե հիվանդն «առանց կերակրոյ կմեռանի»: Իսկ երբ առողջանա, դրա փոխարեն հրամայում է պահել չորս յոթնյակ, եթե լուծածը չորեքշաբթի է, վեց յոթնյակ, եթե ուրբաթ է, և *Պենտեկոստեից* (Հոգեգալուստ – Հ. Ա.) *նախընթաց տասն օրերը*, եթե աղուհացից

⁵⁶ «Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թէ ի Ջատկեն մինչեւ ի Խերորդ ար վերացման նորա ուրախութիւն եւ ցնծութիւն եղիցի, զի արուրք յարութեան են եւ փեսայն յառագաստի. ապա յետ տանի վերացմանն պահեացեն, եւ դարձեալ Ծ-երորդ՝ տան կատարեացի, եւ իբրեւ զառաջին Ջատկին՝ զառն զենցի (տե՛ս նույն տեղում, էջ 34):

⁵⁷ Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 628:

⁵⁸ Նույն տեղում: Աղբյուրը՝ Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), թիվ 5667, թերթ 122բ-123ա:

⁵⁹ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 31:

⁶⁰ Նույն տեղում, էջ 27:

⁶¹ ՄՄ, թիվ 1007, թերթ 108բ:

օր էր: Բայց եթե հիվանդը մեռներ, այդ «սուկալի և անդառնալի հատուցումը» պետք է աներ նրա ընտանիքը⁶²:

Համբարձումից հետո պահվող պասի մասին վկայում է նաև Գրիգոր Տաթևացին: Նա գրում է, որ Հինանց շրջանում (Հինանցը Ջատկից մինչև Հագեգալուստ ընկած շրջանն է - Ն. Ա.)՝ Ջատկից մինչև Համբարձում, չորեքշաբթին և ուրբաթը չեն պահվում, քանի որ Աղուհացի շաբաթ և կիրակին պահվում են: Դրա համար Համբարձումից հետո պահվում են չորեքշաբթին և ուրբաթը կամ ինն օր, մինչև Հոգեգալուստ⁶³:

Համբարձումից հետո ընկած պասի մասին է վկայում նաև ավանդական կենցաղում շատ տարածված Համբարձումից կամ Հոգեգալուստից մինչև Վարդավառ յոթ տարի շարունակ պահվող պասը⁶⁴: Բանն այն է, որ Հոգեգալուստից մինչև Վարդավառ ընկած Վարդավառի Հիսնակաց կամ Մուրբ Կարապետի պասը տոնացույցում երբևէ չի ամրագրվել, սակայն ժողովրդի մեջ մինչև XX դարասկիզբ կենցաղավարել է: Հոգեգալուստից առաջ ընկած շաբաթական պասը կարող է լինել նաև Եղիական Աթոռք պաս, քանի որ Հոգեգալուստին հաջորդող շաբաթը Եղիական կամ Ամառնամուտի պասն է, որն ավարտվում է շաբաթ օրը՝ Եղիա մարգարեի հիշատակության օրով (ինչպես վերը տեսանք, մի շաբթ տոներին նախորդող կանոնական շաբաթապասերից առաջ ժողովուրդը մեկ շաբաթ ևս կամավոր Աթոռք պաս է պահել):

Վերը բերված փաստերի վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ Համբարձումից մինչև Հոգեգալուստ ընկած է եղել երկու պաս: Այսպես Մ. Օրմանյանը գրում է Համբարձմանը հաջորդող երեք օրերի կերակրի պասի մասին⁶⁵: Ըստ եկեղեցական օրացույցի՝ այդ երեք օրերից պաս է միայն Համբարձմանը հաջորդող ուրբաթը՝ որպես օրապաս, իսկ շաբաթը և կիրակին ուտիք են: Եթե դեռևս IV դ. եկող կարգի համաձայն Ջատկին նախորդում է յոթ շաբաթ տևողությամբ պասի շրջանը, ապա Ջատկից մինչև Համբարձում ընկած վեցշաբաթյա շրջանը պասից,

⁶² Հացունի Վ., Ճաշեր եւ խնճոյք Հին Հայաստանի մէջ, Վենետիկ, 1912, էջ 413: Աբրահամյան Ա., Դավիթ Ալավկա Որդու կանոնները, «Էջմիածին» ամսագիր, Մ. Էջմիածին, 1953, փետրվար, էջ 54-55:

⁶³ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուզաղէմ, 1993, էջ 654:

⁶⁴ Գաւառական սովորոյթք, Խուլթիկ գիւղ, Տարեկան սուտրոյթիւններ, «Մասիս» շաբաթաթերթ, 1885, մայիսի 18, էջ 1021: Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 246: Այս մասին վկայություններ սփռված են ազգագրական տարբեր աղբյուրներում:

⁶⁵ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 37:

նույնիսկ օրապասից, ազատ է, ինչը հրահանգված է Հովհան Մանդակունու է. կանոնով⁶⁶ և նրան հաջորդող եկեղեցական հայրերի կարգադրությամբ⁶⁷: Վերը տեսանք, որ Ներսես Շնորհալուց սկսած՝ Համբարձումից մինչև Հոգեգալուստ ընկած տասնօրյակում հանդիպող երկու ուրբաթները և մեկ չորեքշաբթին պաս են՝ կերակրի մասով, իսկ եկեղեցում անփոփոխ պահվում է Տերունի տոնը: Մա թույլ է տալիս ենթադրելու, որ իննօրյա տևողությամբ այս պասը եղել է երկու պաս. առաջինը պահվել է Համբարձումից հետո երեք օր, մինչև Երկրորդ Ծաղկազարդ, որը նշվում է Համբարձմանը հաջորդող կիրակի, իսկ Երկրորդ պասը եղել է շաբաթապաս, սկսվել է Երկրորդ Ծաղկազարդին հաջորդող երկուշաբթիից և ավարտվել Հոգեգալստյան տոնով: Առաջինը եղել է կամավոր պաս: Երկրորդը մինչև XV դ. հիշատակվել է նաև Տոնացույցում, սակայն պարտադիր պաս չի եղել: Դրանից հետո գոյատևել է կամավոր սկզբունքով: Կանոնական, տոնացուցային, ինչպես նաև վերը բերված մյուս վկայությունները հուշում են, որ Համբարձումից մինչև Հոգեգալուստ ընկած շրջանի պասը բավականին հին է, և այդ շրջանն ամբողջությամբ կամ միայն չորեքշաբթին և երկու ուրբաթները պաս պահելը թողնվել է անհատի կամքին: Ժամանակի ընթացքում այն վերածվել է պահոց մեկ շրջանի և նվիրված է եղել Համբարձման, Երկրորդ Ծաղկազարդի և Հոգեգալստյան տոներին, ինչը վկայում են այդ պասի անունները: XV դ. հետո մինչև XIX դ. վերջին և XX դ. սկզբները շարունակվել է պահվել սովորույթի ուժով՝ որպես կամավոր պաս:

Կամավոր պասի մի հետաքրքիր դրսևորում է սգավորների պասը: Մերձավորի մահվան դեպքում հանգուցյալի ազգականները սգի ողջ ընթացքում կամավոր կերպով հրաժարվել են փափուկ կերակուրներից⁶⁸: Այս պասը տեսնում ենք դեռևս Աստվածաշնչում, երբ Մավուղի մահվան առթիվ հրեաների յոթ օր պահք են պահում (Ա թագ., ԼԱ 13, Բ թագ., Ա 12), իսկ Հուդիթը (Ը 6) և Աննա մարգարեուհին (Ղուկ., Բ 37) ամբողջ այրիությունը պահքով են անցկացնում:

Հայոց մեջ այս պասը նույնպես բավականին հին է: Եղիշեն և Ղազար Փարպեցին նկարագրում են, որ պատերազմի ժամանակ ամու-

⁶⁶ Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 497-498:

⁶⁷ Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 436:

⁶⁸ Տվյալ դեպքում փափուկ կերակուրը նշանակում է քիմքին հաճելի, ոչ պասային կերակուր:

սիններին կորցրած տիկնայք, «իբրեւ այրիք սգաւորք», հրաժարվել են ճաշի սպասավորներից, լվացումներից, օծումներից և ազնիվ հանդերձներից: Նրանք սնվել են կորեկհատով, բանջարեղենով և միայն ջուր են խմել⁶⁹: Տաթևացին նույնպես վկայում է, որ հայերը սուգն անցկացրել են «ի սով եւ ի ծարաւ»⁷⁰: Տակավին XVI դ. Միմեոն Այրիվանեցին, ողբալով Տրդատի թախթը⁷¹, ասում է. «պահս կարդացէք՝ պահք արտասուաց»⁷²:

Ինքնին հասկանալի է, որ հանգուցյալի հարազատի կողմից պահվող այս պասը հանգուցյալի հոգու փրկության համար է:

Կամավոր պասերը պահվել են *մեկ անգամ*՝ որևէ նպատակի համար, կամ մի քանի տարի շարունակ, օրինակ՝ Սուրբ Կարապետի պասը և այլն:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել հետևյալը:

Կամավոր պասերը ոչ տոնացուցային պասերն են, որոնք պահվում են անհատի ցանկությամբ հիմնականում որևէ նպատակի իրականացման համար: Դրանց մասին հիշատակություններ են հանդիպում V դ. մինչև XX դարակից հիմնականում մատենագրական և ազգագրական սկզբնաղբյուրներում: Դրանք ունեցել են տարբեր տևողություններ (մեկօրյա, եռօրյա, շաբաթական, յոթնօրյա, քառասնորդական) և նպատակներ (ամուսնություն, որդեծնություն, բժշկություն, դժբախտությունից ազատում, սրբի բարեխոսությանն արժանացում, հանգուցյալի հիշատակի հարգում, ուխտագնացության նախապատրաստում և այլն): Կամավոր պասի մեզ հայտնի ամենահին վկայությունը հանգուցյալի հիշատակին պահվող պասն է, որը թվագրվում է V դ.: VI դ. հիշվում է քառասնօրյա, XIV դ.՝ Աթոռք կամավոր պասեր: Եզակի է ավանդական կենցաղում եղած Վարդանանց պասը, որը երբևէ տոնա-

⁶⁹ Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 446-447: Հմմտ.՝ Եղիշե, Վասն Վարդանայց եւ հայոց պատերազմին, Մատենագիրք հայոց, հ. Ա, Ե դար, էջ 764-765: Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Մատենագիրք հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս, 2003, էջ 2305:

⁷⁰ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 670:

⁷¹ Թախթը համարժեք է թախտ բառին, որը փոխաբեական իմաստով նշանակում է թագավորական իշխանություն (տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 413, սյունակ 1, 3):

⁷² Հացունի Վ., նշվ. աշխ., էջ 446-447: Հմմտ.՝ Ղևոնդ Ալիշան, Ողբանք ի վերայ թախթին Տրդատայ թագաւորին, Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց Վենետիկ, 1890, էջ 368:

ցույցում չի ամրագրվել, սակայն սիրելի սրբի բարեխոսությանն արժանանալու համար նրա անվան պաս են պահել, այն էլ տարվա մի ժամանակահատվածում, երբ ժողովուրդը տոնախմբել է հասարակական բոլոր նորմերը ժամանակավորապես վերադասավորող շրջանը՝ Բարեկենդանը: Համբարձումից մինչև Հոգեգալուստ տևող իննօրյա պասը նվիրված է եղել Համբարձման, Երկրորդ Ծաղկագարդի և Հոգեգալստյան տոներին, ինչը փաստում են այդ պասի անվանումներն ու ժամկետը: Մինչև XV դ. կեսերն այս պասը եղել տոնացուցային, բայց ամբողջ ընթացքը կամ միայն չորեքշաբթին և ուրբաթը պահելը թողնվել է անհատի կամքին: XV դ. մինչև XX դ. սկիզբը տոնացույցում բացակայել է, սակայն կենցաղում պահպանվել է՝ որպես կամավոր պաս:

Կամավոր պասերը հայոց մեջ

Պասը քրիստոնյայի հոգևոր-բարեպաշտական կյանքի կարևոր մաս է:

Ազգագրական, մատենագրական, կանոնագիտական բնույթի սկզբնաղբյուրները փաստում են, որ ժողովրդի մեջ, բացի եկեղեցական տոնացույցով սահմանված պասերից (օրապասեր, շաբաթապասեր և Քառասներդասց պաս), V դ. մինչև XX դարասկիզբ կենցաղավարել են նաև կամավոր պասեր: Կամավոր են այն պասերը, որոնք մարդիկ պահել են սեփական կամքով, որևէ նպատակի համար, տարվա ցանկացած ժամանակահատվածում:

Վերոհիշյալ աղբյուրների հիման վրա առաջին անգամ ուսումնասիրվել են կամավոր պասերի տևողությունը և նպատակները: Կամավոր կերպով պահել են ինչպես օրապասեր, այնպես էլ եռօրյա, շաբաթական, իննօրյա, քառասներօրյա և այլ պասեր: Կամավոր պաս հիմնականում պահել են ամուսնության, զավակ ունենալու, առողջանալու, դժբախտությունից հեռու լինելու, սրբի բարեխոսությանն արժանանալու, հանգուցյալի հիշատակը հարգելու, ուխտագնացության նախապատրաստվելու, որևէ շնորհքով օժտվելու և այլ նպատակներով: Ուշագրավ են հատկապես Վարդանաց պասը, որը պահել են Բարեկենդանի շրջանում, Համբարձման կամ Հագեգալստյան պասը, որը մինչև XV դ. հիշատակվել է տոնացույցում, սակայն ամբողջ ընթացքը պահելը պարտադիր չի եղել, իսկ դրանից հետո պահպանվել է ժողովրդի մեջ որպես կամավոր պաս:

HASMIK ABRAHAMYAN
(IAE)

**KAMAVOR (THE VOLUNTARY) FASTS IN THE
ARMENIANS DAILY LIVING**

Fast is an important part of a Christian's devotional life. Ethnographical, biblical and canonical sources affirm that in the period of V-XX centuries except of the canonical fasts (one-day fast, one-week fast, The Lent), among the people were established the kamavor (voluntary) fasts. People kept the voluntary fasts by their sole discretion, for any purpose, at any time in the year.

Based on the above sources, the duration and goals of voluntary fasts have been studied for the first time. They have been voluntarily kept as regular, as well as three-day, weekly, nine-day, forty-day. These fasts had different aims: marriage, childbirth, recover, to avoid misfortune, to be the saint's intercessor, to commemorate the deceased, to prepare to pilgrimage, bringing in remembrance of the deceased, to have some kind of grace and other goals. Two fasts are more interesting: Vartanants fast, which was kept during the Barekendan, and the Ascension or the Pentecost fast. This fast was mentioned in the Church calendar until the XV century, but the whole process was not mandatory, and after that it was kept in the people as a voluntary fast.

ՎԱՐԴԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԱՂԻԲԵՋԱՆԻ ՔՐԴԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՉՈՒԼՄԱՆ ԽՆԴԻՐԸ
2017 Թ. ԻՐԱՔԻ ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱՆՎԱԽՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ

Աղբբեջանում քրդերը հանդիսանում են բազմաթիվ էթնիկ խմբերից մեկը, որոնց թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները մշտապես ենթարկվել են քաղաքական նպատակներով պայմանավորված զեղծարարությունների, տարբեր ժամանակներում նույնիսկ նրանց գոյությունը կասկածի տակ է դրվել: Ի տարբերություն հարաբերականորեն ավելի ակտիվ թալիշների և լեզգիների, քրդերը ժամանակակից Աղբբեջանում խոշոր հասարակական-քաղաքական ընդվզումներ, բողոքի ցույցեր չեն նախաձեռնում: Հետխորհրդային Աղբբեջանում թալիշաբնակ և լեզգիաբնակ շրջաններում ժամանակ առ ժամանակ ի հայտ էին գալիս էթնիկ խտրականության և ձուլման դեմ բողոքի քողարկված կամ բացահայտ դրսևորումներ, որոնք հաճախ ուղեկցվում էին իշխանության կողմից բռնություններով և ձերբակալություններով¹: Քրդերի դեպքում խտրականության և ասիմիլյացիայի խնդիրն Աղբբեջանում մշտապես նույնքան արդիական է եղել, սակայն այդ գործընթացին դիմադրությունը եղել է շատ ավելի թույլ և պակաս կազմակերպված: Աղբբեջանում քրդերը նույնիսկ խուսափում են բարձրա-

¹ Օրինակ՝ Թալիշ-Մուղանական Հանրապետության հռչակումը 1993 թ., տարբեր տարիների թալիշ գործիչների (Նովրուզալի Մամեդով, Հիլալ Մամեդով) քաղաքական հետապնդումները և ձերբակալությունները: 2017 թ. թալիշ գործիչներից լրագրող Շահին Միրզոևի և նրա ընտանիքի փախուստը Վրաստան, ապա Հայաստանից ապաստան հայցելը: Լեզգիների ազատագրական՝ նաև զինված պայքարը, որը գլխավորում էր «Մադվալ» կազմակերպությունը: Այս կազմակերպությունը 1990-ական թվականներին նաև զինված պայքար էր մղում լեզգիների էթնիկ և մշակութային իրավունքների համար:

ձայնել իրենց ինքնության մասին: Այս տեսանկյունից ուշագրավ և վերջին տարիների համար անսովոր դրսևորմներ եղան 2017 թ. Իրաքի քրդերի նախաձեռնած անկախության հանրաքվեից առաջ և հետո:

Իրաքի Քրդական ինքնավարությունում 2017 թ. սեպտեմբերի 25-ին անցկացված անկախության հանրաքվեն մեծ ոգևորություն առաջ բերեց ոչ միայն տեղի քրդերի մոտ: Այն համընդհանուր ցնծության և քրդական ինքնության վերելքի առիթ դարձավ նաև քրդաշատ Թուրքիայում, Իրանում, Սիրիայում, նույնիսկ քրդերի բնակության ավանդական արեալներ չհանդիսացող Եվրոպայում, ԱՄՆ-ում:

Քրդական հանրաքվեն խիստ չափավոր, բայց յուրատեսակ արձագանք գտավ նաև Ադրբեջանում՝ տեղի քրդերի շրջանում: Հարկ է միանգամից շեշտել, որ Ադրբեջանի քրդերի շրջանում ոգևորությունը չարտահայտվեց բացահայտ և զանգվածային հասարակական գործողություններով՝ տոնախմբություններ, հանրահավաքներ և այլն: Ինչպես հատուկ է ներկայիս Ադրբեջանին և նրա քաղաքացիական հասարակությանը, հաշվի առնելով երկրում խոսքի և հանրահավաքների՝ ազատության բացակայությունը, քաղաքական հետապնդումները՝ քրդական հանրաքվեի հասարակական արձագանքներն էլ արտացոլվեցին սոցցանցերում:

Ադրբեջանի հասարակական-քաղաքական դաշտում առավել լայն արձագանք ստացան համացանցում Ֆիզուլի Թանրըվերդիևի գրառումները: Դրանցում Թանրըվերդիևը աջակցություն էր հայտնում Իրաքի քրդերի քաղաքական նախաձեռնությանը, տարածում Քրդական ինքնավարության դրոշի և առաջնորդ Մասուդ Բարզանիի լուսանկարները: Տվյալ անձի գրառումները համացանցի ադրբեջանական սեզմենտում «պայթյուն» առաջացրին: Բազմաթիվ ադրբեջանցիներ քննադատում էին Ֆիզուլի Թանրըվերդիևին, պահանջում նրան ձերբակալել և վտարել Ադրբեջանից, ոմանք նույնիսկ մահվան սպառնալիքներ էին հնչեցնում: Նրա անձի շուրջ ստեղծված իրարանցմանն անմիջապես խառնվեցին ադրբեջանական՝ այդ թվում պետական ամենահայտնի լրատվամիջոցները: Նման աղմուկի պատճառը թերևս այն էր, որ Թանրըվերդիևը պետական պաշտոնյա էր: Նա այսպես կոչված «Լաչինի շրջանի ղեկավար մարմնում» էր իրավաբանական վարչության պետ էր²:

² Արցախյան պատերազմում հայակական տարածքների ազատագրումից և Ադրբեջանի կրած պարտությունից հետո այդ երկրում պահպանվել և այսօր էլ

Վերլուծելով հասարակ ադրբեջանցիների և լրատվամիջոցների արձագանքները՝ առաջին հերթին պետք է նշենք, որ իր քրդական ինքնությունն ու Իրաքի քրդերի ինքնորոշման նկատմամբ համակրանքը բարձրաձայնաձև անձին սպառնացողների մեծ մասը հանդես էր գալիս պանթուրքիզմի ժամանակակից գաղափարախոսությանը հատուկ պնդումներով: Դրանց էությունը կայանում էր նրանում, որ անջատողական քրդերը Թուրքիայի և Ադրբեջանի, ընդհանրապես «թյուրքական աշխարհի» թշնամիներն են: Ոմանք նույնիսկ բացառում էին ժամանակակից Ադրբեջանում քրդերի գոյությունը՝ պատճառաբանելով, որ նրանք դեռ 1-2 հարյուրամյակ առաջ պետք է ձուլված լինեին թյուրքերի հետ: Շատ ադրբեջանցիներ էլ քրդական հանրաքվեի դեմ էին հանդես գալիս՝ զուտ ելնելով եղբայրական Թուրքիայի շահերից: Ուշագրավ է, որ անհամեմատ ավելի քիչ թվով, այնուամենայնիվ կային օգտատերեր, որոնք այս կամ այն չափով պաշտպանում էին Ֆիզուլի Թանրըվերդիևին, արդարացնում Իրաքի քրդերի գործողությունը և հիշեցնում նորագույն շրջանի Ադրբեջանի սոցիալ-քաղաքական կյանքում քրդերի ունեցած դերի մասին: Տվյալ մարդիկ թերևս նույնպես էթնիկ քրդեր էին, որոնց համար առիթ էր ընձեռնվել սեփական ինքնությունը պաշտպանելու և դրա մասին բարձրաձայնելու համար:

Ֆիզուլի Թանրըվերդիևի՝ հանրաքվեին աջակցող լուսանկարները և դրանք քննադատող լրատվաչոցի գրառումը.



«գործում են» մինչև 1991-1994թթ. գոյություն ունեցած վարչատարածքային բաժանման հիման վրա ստեղծված տեղական կառավարման մարմինները (Լաչինի, Քելբաջարի, Ֆիզուլիի և այլն):

Ուշագրավ է, որ սոցցանցերում լայն տարածում գտած թեման գրավեց նաև ադրբեջանական բազմաթիվ լրատվամիջոցների ուշադրությունը³: Ադրբեջանի պետական լրատվական գործակալությունը (ԱՔԱ), որը համարվում է Ադրբեջանի իշխանությունների պաշտոնական օրգանը և զբաղվում է հիմնականում պետական մարմինների հայտարարությունների և պաշտոնական լրատվության տարածմամբ, առանձին կարճ հարցազրույց էր վերցրել Թանրըվերդիևի հետ: Գործակալությունը նաև հայտնել էր, որ Ադրբեջանի իրավապահ մարմինները քննում են Իրաքյան Քուրդիստանում անցկացված հանրաքվեին աջակցելու տվյալ դեպքը⁴: Մեկ այլ հարցազրույցում էլ քուրդ պաշտոնյան հայտարարել էր, որ եթե իր դիրքորոշման համար իրեն աշխատանքից ազատեն, ինքը կայրի ադրբեջանական անձնագիրն ու զինզրքույկը, կլքի Ադրբեջանը և միայն հպարտ կլինի, որ պատժվել է քրդական ինքնությունը պաշտպանելու համար⁵:

Քուրդ պաշտոնյայի դեմ սկսված արշավի տրամաբանական շարունակությունը դարձավ Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆայի ելույթը մեջլիսում: Պատգամավորը նիստի ժամանակ Ադրբեջանի գլխավոր դատախազին կոչ արեց հետաքննություն սկսել պետական պաշտոնյա հանդիսացող Թանրըվերդիևի նկատմամբ: Ֆազիլ Մուստաֆան իր ելույթում մասնավորապես նշել է. «Եթե որևէ մեկը չի հավանում Ադրբեջանը, ցանկանում է վառել իր անձնագիրը, թող կորչի գրողի ծոցը: Ահավորն այն է, որ նա դեռ պահպանում է Ադրբեջան պետությունում զբաղեցրած իր պաշտոնը»⁶: Գլխավոր դատախազին ուղղված նմանատիպ առաջարկով հանդես

³ Laçın rayon icra hakimiyyətinin kürd əsilli məmuru separatçılığı dəstəkləyir!!! <http://press-az.com/siyast/2648-lachin-rayon-icra-hakimiyyetinin-kurd-esilli-memuru-separatchiligi-destekleyir.html>; Чиновник, поддержавший референдум курдов: В Азербайджане есть свобода слова, <http://minval.az/news/123724937>, 26.09.2017.

⁴ Hüquq-mühafizə orqanları Laçın RİH-nin şöbə müdirinin İraq Kürdüstanında referendumunu dəstəkləməsi məsələsini araşdırır. <https://apa.az/xeber-az/hadise/huquq-muhafize-orqanlari-lacin-rih-nin-sobe-mudirinin-iraq-kurdustaninda-referendumunu-desteklemesi-meselesini-arasdirir-2306.html>

⁵ “Paspörtümü Yandırıb, Ölkəni Tərk Edərəm...” – Separatçı məmur meydan oxuyur, <http://azpolitika.info/?p=357057>, 26.09.2017.

⁶ “Kimsə Azərbaycanı bəyənmirsə, cəhənnəm olub getsin”, <https://www.meydan.tv/az/site/news/25422/>, 02.10.2017.

եկավ նաև մեկ այլ պատգամավոր Վահիդ Ահմեդովը⁷: Ի վերջո Ֆիզուլի Թանրովերդիևը հեռացվեց զբաղեցրած պաշտոնից:

2017 թ. սեպտեմբերի վերջին սոցցանցերում գրանցվեցին նաև այլ համեմատաբար ավելի պակաս հնչեղություն ստացած դեպքեր, երբ Ադրբեջանի քուրդ օգտատերերը բացահայտ աջակցում էին Իրաքի քրդերի անկախության հանրաքվեին: Վուգար Բանդալիօղլու անունով Ադրբեջանի քաղաքացուն ևս անդրադարձան ադրբեջանական լրատվամիջոցները քննադատող և անջատողականության համար մեղադրող հոդվածներով⁸:

Վուգար Բանդալիօղլուն.



Հրապարակվեցին նաև Նիջաթ Ջեբրայիլովի լուսանկարները, որոնցում քուրդ երիտասարդը հանդես էր գալիս Իրաքի Քուրդիստանի դրոշով և սեպտեմբերի 25-ի հանրաքվեի տոնական գրառումներով: Ջեբրայիլովը վերջին տարիներին ներկայանում է որպես 2011 թ. հիմնված և քիչ հայտնի «Ադրբեջանի քրդական երիտասարդական կազմակերպության» նախագահ: Նա և Ադրբեջանի քրդերի հասարակական միության ղեկավար Թահիր Սուլեյմանը 2013 թ. Թուրքիայի քրդերին պատկանող լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույ-

⁷ Milli Məclisdə "Kürdüstan"a dəstək verən məmura cəza tələbi, 02.10.2017, http://publika.az/news/nida_xeber/215429.html

⁸ Daha bir azərbaycanlı məmur Kürdüstanın "müstəqillik" referendumuna dəstək verdi <https://news.milli.az/society/585167.html> ; Azərvtoyol" işçisi də "kürd dövlətinə" dəstək verdi? – Rəsmi, <http://axar.az/news/toplum/211917.html>, 28.09.2017.

ցում բողոքել էին Ադրբեջանում քրդերի նկատմամբ վարվող ձուլման քաղաքականությունից և Իրաքի քրդական ինքնավարության ղեկավարությանը կոչ արել «տեր կանգնել» Ադրբեջանի քրդերին⁹:

Ջեբրայիլովի լուսանկարները տարածվում էին սոցցանցերի ադրբեջանական պանթյունիստական ուղղվածությամբ խմբերում, որոնցում նա ներկայացվում էր որպես Թուրքիայում գործող PKK-ի (Քուրդիստանի աշխատավորական կուսակցություն) ահաբեկիչ: Իրենց գրառումների համար քննադատվող և վարկաբեկվող ադրբեջանական քրդերը ի վերջո կամ ջնջում էին արած գրառումներն ու լուսանկարները, կամ ընդհանրապես հեռացնում անձնական էջերը:

Այսպիսով, 2017 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին հասարակական և պետական մակարդակով ակնհայտ ցուցադրվում էր, որ Ադրբեջանում քրդական ինքնությունը ոչ միայն չի խրախուսվում, այլև համարվում է ամոթալի, նույնացվում «ահաբեկիչների» հետ: Նման իրավիճակի հետ կարելի է համեմատել 1998 թ. հայտնի միջադեպը, երբ Ադրբեջանում նախագահական ընտրություններից առաջ թեկնածուներից Աշրաֆ Մեխտիևը գործող նախագահ Հեյդար Ալիևին անվանեց էթնիկ քուրդ և մեղադրեց Թուրքիայից քրդերին Ադրբեջան տեղափոխելու և ահաբեկչական համարվող Քրդական աշխատավորական կուսակցությանն աջակցելու մեջ: Ալիևի հասցեին հնչած այդ մեղադրանքը կրկնեց նաև նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը: Ալիևի պատասխանը եղավ քաղաքական օպոնենտների դեմ քրեական գործերի հարուցումը, որոնք ի վերջո կարճվեցին Ալիևի՝ երկրորդ անգամ նախագահ դառնալուց հետո¹⁰:

Վերոնշյալ օրինակները ցույց են տալիս, թե ինչպիսին է ժամանակակից ադրբեջանական հասարակության մեծամասնության մոտ վերաբերմունքը քրդական ինքնության նկատմամբ: Քրդերը դիտարկվում են որպես վտանգ ոչ միայն անմիջապես Ադրբեջանի տարածքային ամբողջականության և անվտանգության համար, այլև որպես համաթյուրքական վտանգ, որի տակ ենթադրվում են եղբայրական Թուրքիայի շահերը: Իրաքյան Քուրդիստանում սեպտեմբերի 25-ին անցկացված հանրաքվեն դարձավ յուրօրինակ կատալիզատոր, որի միջոցով

⁹ Azərbaycan kürdləri “Kürdüstan”dan kömək istədi. <http://www.virtualaz.org/dish/4553>

¹⁰ Велиев А., Курдская проблема в Азербайджане: угроза безопасности или очередная игра?, – Журнал «Центральная Азия и Кавказ», № 2, 2001, с. 122.

դրստորվեց Ադրբեջանում գրեթե չնշմարվող քրդական ինքնությունը և դրա նկատմամբ հասարակության և պետության անհանդուրժողականությունը:

Հարկ է նշել, սակայն, որ Ադրբեջանի քրդերի արձագանքը լայնածավալ չէր և մնաց առանձին անհատների մակարդակում: Մինչդեռ ժամանակակից Ադրբեջանի տարածքը երկար դարեր համարվել է քրդերի կոմպակտ բնակության տարածք: Հետևապես հարց է առաջանում՝ ինչու է տվյալ եթնիկ խումբը Ադրբեջանում այդքան պասիվ սեփական իրավունքների և ինքնության պաշպանության հարցում, որով էլ պայմանավորված է մեր նշած թույլ արձագանքը Իրաքի քրդերի պատմական քայլին և ծայրահեղ բացասական վերաբերմունքը իրեն թյուրք համարող արբեջանցի հասարակության կողմից:

Ժամանակից Ադրբեջանի տարածքի մեջ մտնող Արևելյան Հայաստանի մի մասում դեռևս 10-րդ դարում ստեղծվել էր տիրակալների Շադդադյան քրդական դինաստիան՝ պատմական հայկական Գանձակ քաղաք-կենտրոնով (այժմ Ադրբեջանի կազմում Գյանջա քաղաքը): Ամիրայությունը 10-11-րդ դարերում Այսրկովկասի ամենահզոր պետական միավորներից մեկն էր¹¹: Քրդական դինաստիայի տիրապետությունը անշուշտ նպաստել է Այսրկովկասում ոչ մեծ քանակով քրդական տարրի բնակեցմանը:

11-րդ դարում Շիրվանում հիշատակվում են քրդերի քոչավարները, ինչը նույնպես խոսում է տարածաշրջանում փոքրաքանակ, բայց որոշակի քրդական բնակչության մասին¹²:

16-17-րդ դարերում Սեֆյան կայսրությունը, ցանկանալով թուլացնել Սյունիքի և Արցախի հայկական մելիքությունների կապը և հզորությունը, ներկայիս Բերձորի և Քարվաճառի շրջաններում տեղահանում էր հայ բնակչությանը և բնակեցնում էր իրեն հավատարիմ քոչվոր քրդական ցեղերի¹³: Հետագայում էլ, արդեն ռուս-պարսկական պատերազմների արդյունքում տեղի էր ունենում հայ բնակչության արտագաղթ: Իսկ Փանահ խանի օրոք քոչվոր քրդերի և թյուրքախոսների

¹¹ Տես՝ Minorsky V., I. New Light on the Shaddadids of Ganja, II. The Shaddadids of Ani, III. Prehistory of Saladin, London, 1953, pp. 33-34; Аристова Т. Ф., Курды Закавказья, Москва, 1966, с. 22.

¹² Минорский В., История Ширвана и Дербенда X-XI вв., Москва, 1963, с. 58.

¹³ Шнирельман В., Войны памяти. Мифы, идентичность и политика в Закавказье, Москва, 2003, с. 199.

խմբերը, անցնելով Արաքս գետը, բնակություն էին հաստատում Քարվաճառի և Կովսականի միջև ընկած տարածքում:

Հայտնի է, որ 1807 թ. քուրդ ցեղապետ Մեհմեդ Սեֆի-սուլթանը 600 ընտանիքներով Պարսկաստանից անցել է Ղարաբաղի խանություն: Քրդերի առանձին խմբեր էլ Պարսկաստանից տեղափոխվել են Նախիջևան¹⁴:

Այսրկովկասի ռուսական նվաճումից հետո արդեն կազմվել են պաշտոնական վիճակագրական տվյալներ՝ հիմնականում մարդահամարների տեսքով, որոնք ընդհանուր պատկերացում են տվել Այսրկովկասում քրդերի քանակի և տեղաբաշխման մասին: 1871-1874 թթ. Կովկասի կամերալ նկարագրության համաձայն՝ Ելիզավետպոլի նահանգն ուներ 15 366 քուրդ բնակիչ: Երևանի նահանգում՝ ներառյալ Նախիջևանում, քրդերի թիվը 27 779 էր¹⁵: Ակադեմիկոս Շոպենը 19-րդ դարի կեսին ներկայացրել է Հայկական մարզի քրդերի տոհմացեղային կազմը, որը մեծապես համընկնում էր ընդհանուր Այսրկովկասում տվյալ էթնիկ խմբի տոհմացեղային կազմի հետ: Շոպենի ներկայացրած ցուցակում ընդգրկված էին քրդերի միլլի, կարաչորլի, հասանանլի, բարկուշատ, բաբալի, կուլուքչի, թարթառլի, սուլթանլի, կուլիխանլի, բոզլու, փուսիան և այլ ցեղեր¹⁶:

1886 թ. դրությամբ Ելիզավետպոլի նահանգում, որը ներառում էր նաև Չանգեզուրն ու Արցախը, որպես քուրդ էր գրանցված 34 162 մարդ: Այս թիվը կազմում էր ամբողջ նահանգի բնակչության 4,6 տոկոսը: Դրանցից մոտ 1 500-ը բնակվում էր Ջաբրայիլի գավառում, շուրջ 5 500 քրդեր՝ Չևանջիլի գավառում, 26 500-ը Չանգեզուրի գավառում¹⁷: 1886 թ. Այսրկովկասի պաշտոնական վիճակագրական տվյալներում Բաքվի նահանգում քրդեր չէին բնակվում:

Ուշագրավ է, որ 1897 թ. ամբողջ Ռուսական կայսրության տարածքում անցկացված մարդահամարում Ելիզավետպոլի նահանգում քրդերեն խոսողների թիվը 14 503 էր¹⁸: Փաստորեն 1886 թ. տվյալների

¹⁴ Аристова Т., Курды Закавказья, Москва, 1966, с. 36-37.

¹⁵ Распределение народностей, населяющих Кавказ, по губерниям и областям Кавказа, – Кавказский календарь на 1887 год, с. 220.

¹⁶ Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПб., 1852, с. 528.

¹⁷ Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольская губерния, Тифлис, 1893.

¹⁸ Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., Наличное

համաձայն նահանգում բնակվում էր 34 162 քուրդ, իսկ 10 տարի անց նույն նահանգում քրդերեն խոսողների թիվը շուրջ 20 հազարով պակաս է նշվում¹⁹: Այս առիթով կարելի է մի քանի ենթադրություն անել.

ա) 19-րդ դարի վերջին քրդերի մի մասը լեզվական առումով ձուլվել էր թյուրքախոսների հետ, և այդ գործընթացը շարունակվում էր,

բ) քրդերի թիվը դիտավորյալ կերպով նվազեցված էր նշվում,

գ) 19-րդ դարավերջի ռուսական ազգագրությունը բավարար չափով զարգացած չէր՝ քրդերին և Այսրկովկասի թյուրքախոսներին տարբերակելու համար՝ առավել ևս երկուսի միջև կրոնամշակութային ընդհանրությունների և քրդերի ասիմիլյացիայի պայմաններում²⁰: Թերևս դրանով էր պայմանավորված նաև մարդահամարի տվյալների դասակարգումը ոչ թե ըստ էթնիկական խմբերի, այլ մայրենի լեզվի:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին՝ 1923 թ. Մեծամասամբ քրդաբնակ Քարվաճառի (Քելբաջար), Բերձորի (Լաչին), Որոտանի (Կուրաթյու), Կովսականի (Ջանգելան) շրջանների հիման վրա Ադրբեջանի ԽՍՀ կազմում, Խորհրդային Հայաստանի և հայաբնակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի միջև տարածքում ստեղծվեց քրդաբնակ Քուրդիստանի գավառը (ուեզր)՝ որպես կիսաինքնավար շրջան, որը հայտնի էր նաև Կարմիր Քուրդիստան անունով²¹:

1926 թ. ԽՍՀՄ ամբողջ տարածքում անցկացված առաջին մարդահամարի համաձայն Ադրբեջանի ԽՍՀ տարածքում քրդերի թիվը 41 193 էր (ներառյալ 2 649 Նախիջևանի ԻՀ-ում)²²: Դրանցից 37 470-ը

население обоого пола по уездам, с указанием числа лиц преобладающих родных языков, Вып. 7, 1905 г., с. 6.

¹⁹ 1897 թ. համընդհանուր մարդահամարում բացակայում էր բնակչության դասակարգումն ըստ էթնիկ պատկանելության: Առկա էին միայն տվյալներն ըստ լեզվի և կրոնական պատկանելության:

²⁰ Ադրբեջանի քրդերը մեծամասամբ շիա իսլամադավան են: Սուննի են Նախիջևանում բնակվող քրդերը:

²¹ Бабаян Д., Красный Курдистан: Геополитические аспекты создания и упразднения, сб. 21 век, 2005, № 2, с. 115; Гейбуллаев Г., Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), Баку, 1986, с. 100; McDowall D., A Modern History of the Kurds, London-New York, 2007, p. 492.

²² Всесоюзная перепись населения 1926 года. Национальный состав населения по регионам республик СССР http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_nac_26.php?reg=2275

բնակվում էին Քուրդիստանի ինքնավար գավառում²³: 1926 թ. Դրոսթյամբ Ադրբեջանի ավելի քան 40 000 քրդերի միայն 17 տոկոսն էր քրդերենը համարում իր մայրենի լեզու, այսինքն նրանց ճնշող մեծամասնության համար ավելի հարագատ էր ադրբեջաներենը²⁴: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Քուրդիստանի գավառում բնակվող մոտ 35 հազար քրդերից կեսը քրդերենին չէր տիրապետում²⁵:

Ընդամենը 11 տարի անց՝ 1937 թ. մարդահամարի տվյալով Ադրբեջանի ԽՍՀ-ում իբր բնակվում էր միայն 10 878 քուրդ²⁶: Խաղաղ պայմաններում բնական աճի հաշվին քրդերի թիվը փոխանակ ավելանար, վիճակագրական տվյալների համաձայն ընդհակառակը՝ նվազել էր մոտ 4 անգամ: Այստեղ ակնհայտ է Խորհրդային Ադրբեջանի իշխանության վարած թյուրքացման քաղաքականությունը, երբ ամեն կերպ փորձ էր արվում նվազեցնել կամ գոնե այդպես ներկայացնել ոչ թյուրքական ծագմամբ բնակչության քանակական կշիռը: Հնարավոր է նաև, որ խորհրդային կենտրոնական իշխանության նման մոտեցման վրա իրենց ազդեցությունն են ունեցել 1920-30-ական թթ. հարևան Թուրքիայում քրդական մի քանի ապստամբությունները:

Նաև վերոնշյալ ապստամբությունների հետևանքով 1929 թ. Կարմիր Քուրդիստանի ինքնավար կարգավիճակը վերացվեց: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը ևս ցանկանում էր վերացնել առանձին քրդական վարչական միավորը: Քուրդիստանի տարածքը ներառվեց Ղարաբաղի օկրուգի մեջ, որի մեջ մտան նաև Ջաբրայիլի, Ֆիզուլիի, Աղդամի շրջանները²⁷: Քուրդիստան անունով նոր օկրուգը իրականություն չդարձավ, քանի որ արդեն ԽՍՀՄ ղեկավարությունը 1930 թ. որոշեց ամբողջ երկրում օկրուգները փոխարինել շրջաններով (ռայոն): Քրդական առանձին շրջան ևս չստեղծվեց:

Վերադառնալով մարդահամարներում քրդերի թվի նվազմանը՝ արձանագրենք, որ անշուշտ, խորհրդային վարչակարգի համար ավելի

²³ Бабаян Д., նշվ. աշխ., с. 116.

²⁴ McDowall D., նշվ. աշխ., p. 492.

²⁵ Müller D., The Kurds of Soviet Azerbaijan, 1920-91, Central Asian Survey, № 19, 2000, p. 50.

²⁶ Նույն տեղում՝ էջ 59:

²⁷ Бабаян Д., նշվ. աշխ., с. 116. Аристова Т., Курды Закавказья, Москва, 1966, с. 40.

ձեռնառու էր հարևան Թուրքիայում ապստամբ ազգակիցներ ունեցող և «անվստահելի տարր» համարվող Ադրբեջանի քրդերի թիվը պակասեցնել ի օգուտ նոր ձևավորված ավելի մեծաքանակ «տիտղոսային» էթնոսի ադրբեջանցիների²⁸:

ԽՍՀՄ ամբողջ գոյության շրջանում կազմակերպված մարդահամարներում ադրբեջանաբնակ քրդերի թիվը անընդհատ վայրիվերումներ է գրանցել չենթարկվելով բնակչության բնական աճի և առհասարակ որևէ տրամաբանության: Աղյուսակ 1-ում նշված թվերը մեզ հստակ թույլ են տալիս ենթադրելու, որ քրդերի իրական թվաքանակը խեղաթյուրվել է:

Աղյուսակ 1.

Մարդահամարի տարեթիվը	Ադրբեջանում քրդերի թվաքանակը
1926	41 193
1937	10 878
1939	6 005
1959	1 487
1970	5 488
1979	5 676
1989	12 226

Որպես պատմական իրողություն հաստատված է խորհրդային իշխանության քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր «տիտղոսային ազգությունների» ամրապնդումն ի հաշիվ «ավելորդ» փոքրաքանակ ազգային (էթնիկ) խմբերի²⁹: Մանավանդ, որ մեր ուսումնասիրության առարկա Ադրբեջանի քրդերը բնականորեն միտված էին և փաստացի նաև ոչ բռնի կերպով ենթարկվում էին լեզվական ասի-

²⁸ Steu` Gunter M., The A to Z of the Kurds, The Scarecrow Press, 2009, p. 123.

²⁹ Григорян В., Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992, с. 26; Мусабеков Р., Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства, Азербайджан и Россия: общества и государства, Вып. 4, Москва, 2001; http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_012.htm

միլյացիայի³⁰: Նոր ձևավորված ադրբեջանցի էթնոսի կայացմանն ու շատացմանը միտված տվյալ քաղաքականությունը լիովին տեղավորվում է ազգագրագետ-քաղաքագետների առաջ քաշած էթնիկական կոնստրուկտիվիզմի տեսության սահմաններում³¹:

Խորհրդային Ադրբեջանում 1930-ական թվականներից սկսած պետականորեն իրականացվում էր բազմէթնիկ բնակչության թյուրքացման քաղաքականություն³²: Տվյալ պայմաններում քրդական ինքնությունը չէր խրախուսվում: Այն քրդերը, ովքեր իրենց անձնագրերում նշում էին իրենց քրդական ազգությունը, ենթարկվում էին պետական խտրականության: Այդ իսկ պատճառով Ադրբեջանի բազմաթիվ քրդեր անձնագրերում իրենց ազգությունը նշում էին ադրբեջանցի³³: Ընդհուպ մինչև 1980-ական թթ. քրդերն Ադրբեջանում խուսափում էին իրենց ինքնությունը շեշտելուց: Եթե որևէ քուրդ Ադրբեջանում ցանկանում էր աշխատանքի ընդունվել կամ մասնագիտական առաջընթաց ունենար, ապա պարտավոր էր անձնագրում իր ազգությունը քրդականից փոխել ադրբեջանականի³⁴:

Խորհրդային միությունում ստալինյան բռնաճնշումները անդրադարձել են նաև Այսրկովկասի քրդերի վրա: 1937 թ. և 1944 թ. Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից մի քանի հազար քրդեր արտաքսվել են Ղազախստան և Միջին Ասիայի հանրապետություններ, Միբիր³⁵: Խորհրդային Ադրբեջանի տարածքից արտորված քրդերը հիմնականում Նախիջևանից էին և իսլամի սուննի ուղղության³⁶: Անշուշտ դա նաև լավ առիթ էր Ադրբեջանում միասնական էթնոսի ձևավորման քաղաքականությունը առաջ տանելու և «անվստահելի տարրերին» արտաքսելու համար:

³⁰ Steu` Müller D., The Kurds of Soviet Azerbaijan, 1920-91, Central Asian Survey, № 19, 2000, p. 58.

³¹ Կոնստրուկտիվիզմի վերաբերյալ մանրամասն տես` Б. Андерсон, Воображаемые сообщества, Москва, 2001; Андерсон Б., Бауэр О., Хрох М. и др., Нация и национализм, Москва, 2002.

³² Иванов С., Судьба советских курдов, сб. Восток (Oriens), 2014, № 6, с. 56.

³³ Gunter M., նշվ. աշխ., p. 123.

³⁴ Григорян В., Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992, с. 28.

³⁵ McDowall D., նշվ. աշխ., p. 492.

³⁶ Müller D., The Kurds of Soviet Azerbaijan, 1920-91, Central Asian Survey, № 19, 2000, p. 63.

Խորհրդային Ադրբեջանում ընթացող ձուլման գործընթացների վերաբերյալ անուղղակիորեն նշել է խորհրդային քրդագետ Արիստովան: 20-րդ դարի երկրորդ կեսին նա նշում էր, որ Հայաստանի տարածքում բնակվող քրդերը ավելի լավ էին պահպանել իրենց տոհմացեղային բաժանումը և էթնիկ նկարագիրը, քան Ադրբեջանի քրդերը³⁷: Մեր կարծիքով, սա նախևառաջ պայմանավորված էր Հայաստանի քրդերի դեպքում հոծ քրիստոնյա հայ բնակչությամբ շրջապատված լինելու հանգամանքով: Հայերի և քրդերի միջև սոցիալ-մշակութային, կրոնական տարբերություններն ավելի ցայտուն և շատ էին, քան թե ադրբեջանցիների (թյուրքախոս մահմեդականներ) և քրդերի: Հետևաբար բնական և արհեստական գործընթացներով պայմանավորված ինքնության և տոհմացեղային համակարգի տարրալուծումը ընթանում էր հենց Ադրբեջանում: Սակայն պակաս կարևոր չէ նաև հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանում քրդական ինքնությունը չէր ենթարկվում այնպիսի բռնաճնշումների, ինչպես Ադրբեջանում: Չորօրինակ, 1930-50-ական թվականներին քրդերենով տպագրված գրքերի և թերթերի 90 տոկոսը բաժին էր ընկնում հենց Հայաստանին, Երևանում գործում էր նաև քրդական թատրոն: Նույն այդ ժամանակամիջոցում Ադրբեջանում քրդերենով տպագրվել էին եզակի նմուշներ, ավելին, այդ երկրում քրդերի և քրդերենի գոյությունը հաճախ նույնիսկ հերքվում էր³⁸: Ադրբեջանում դիտավորյալ քրդական դպրոցներ չէին բացվում: Քրդական սակավաթիվ դպրոցներ գոյություն են ունեցել միայն 1931-1938 թթ. ընացքում³⁹: Խորհրդային շրջանից սկսած քուրդ երեխաները ուսում էին ստանում ադրբեջանական դպրոցներում, դառնում ադրբեջաներենի կրողներ: Այդ պատճառով ներկայումս քրդերենին տիրապետողներ Ադրբեջանում շատ քիչ կան⁴⁰:

Սակայն քրդերի մի մասը սկսեց վերագտնել իր ինքնությունը 1980-ական թվականների վերջին՝ գորբաչովյան «հրապարակայնության» շրջանում: Դրան նպաստեց նաև Արցախյան շարժումը: 1988 թ. շուրջ 1000 քրդեր ուղարկեցին իրենց անձնագրերը Մոսկվա և պահան-

³⁷ Аристова Т., Курды Закавказья, Москва, 1966, с. 46.

³⁸ Müller D., նշվ. աշխ., 64-65, Григорян В., նշվ. աշխ., с. 25.

³⁹ Бабаян Д., նշվ. աշխ., с. 127.

⁴⁰ Мусабеков Р., Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства, Азербайджан и Россия: общества и государства, Вып. 4, Москва, 2001; http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_012.htm

ջեցին դրանցում նշված «ադրբեջանցի» ազգությունը փոխարինել «ազգությունը՝ քուրդ» գրությամբ⁴¹: 1980-ականների վերջին Հայաստանի և Ադրբեջանի, նաև բռնաճնշումների հետևանքով Ռուսաստան ու Միջին Ասիա արտրված քրդերը սկսեցին հանդես գալ իրենց ինքնավարությունը վերականգնելու պահանջով: 1989 թ. մի խումբ քուրդ հասարակական գործիչներ գրավոր դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի քարտուղար Նիշանովին՝ խնդրելով Ադրբեջանի տարածքում վերականգնել Քրդական ինքնավարությունը⁴²: 1991 թ. Քրդական մշակութային կենտրոնի տնօրեն Բրուր դիմեց ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի քարտուղար Լուկյանովին՝ խնդրելով արագացնել երկրում քրդական հարցի լուծումը, վերականգնել ինքնավարությունը և ապահովել քրդերի ներկայությունը իշխանության բոլոր օղակներում⁴³: Սակայն նաև սկսված Արցախյան պատերազմի հետևանքով քրդերի պահանջները հետագա զարգացում չստացան:

Քրդերի ելույթները գորբաչովյան «վերակառուցման» շրջանում



⁴¹ McDowall D., A modern history of the Kurds, London-New York, 2007, p. 493.

⁴² Иванов С., Судьба советских курдов, сб. Восток (Oriens), 2014, № 6, с. 57.

⁴³ Նույն տեղում:



1992-1993 թթ. Արցախյան պատերազմի ընթացքում հայկական զինված ուժերը ազատագրեցին Բերձորի և Քարվաճառի շրջանները: Տեղի մեծամասամբ քուրդ բնակչությունը աղբրեջանական բանակի հետ լքեց տվյալ շրջանները: Ուշագրավ է, որ այդ տարիներին հայկական կողմը քրդերին առաջարկել է վերադառնալ իրենց բնակության շրջանները երաշխավորելով վերականգնել նախկին քրդական ինքնավարությունը (Կարմիր Քուրդիստան) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմում: Բերձորի շրջանի պարետ Ալեքսան Հակոբյանը, ով ևս մասնակցել է տվյալ առաջարկի ձևակերպմանն ու իրակա-

նացմանը, նշում է, որ Ադրբեջանի քրդերի շրջանում այդ առաջարկը ընդունելի դարձնելու և դրական արձագանք ստանալու համար ներգրավվել են նաև Հայաստանի քուրդ և եզդի մտավորականները: Մակայն ադրբեջանական կողմի հակազդեցության, ադրբեջանական քրդերի շրջանում իրենց հայաստանցի ազգակիցների ոչ ազդեցիկ լինելու, և ինչու չէ նաև պատերազմական գործողությունների պատճառով ադրբեջանական քրդերի մոտ ի հայտ եկած հակահայկականության հետևանքով տվյալ ուշագրավ ծրագիրը չի հաջողվել կյանքի կոչել:

Վերոնշյալը ուղղակիորեն գալիս են հաստատելու ադրբեջանցի հետազոտող և քաղաքական գործիչ Ռասիմ Մուսաբեկովի և ազգագրագետ Արիֆ Յունուսի մտքերը, որ հայկական իշխանությունները 1993-1995 թթ. ցանկանում էին Քարվաճառի (Քելբաջար), Բերձորի (Լաչին), Որոտանի (Կուբաթլուի), Կովսականի (Զանգելան) շրջանների հիման վրա ստեղծել իրենց կառավարմանը ենթակա քրդական ինքնավարություն՝ բուֆերային գոտի Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև⁴⁴: Հայկական կողմի այս նախաձեռնությունն ու տվյալ շրջանների քրդերի անհամաձայնությունն իր արտացոլումն է գտել նաև արևմտյան ուսումնասիրողների աշխատանքներում⁴⁵:

Վիճակագրական տվյալների զեղծարարության խորհրդային շրջանի ավանդույթները շարունակվում են նաև ժամանակակից Ադրբեջանում: Հետխորհրդային առաջին մարդահամարն այդ երկրում անց է կացվել 1999 թ.: Ըստ մարդահամարի՝ Ադրբեջանում բնակվում էր 13 019 քուրդ, որոնցից քրդերենը որպես մայրենի լեզու էր նշել 48,9 տոկոսը, մնացածի համար մայրենի էր ադրբեջաներենը⁴⁶: 2009 թ. անցկացված հաջորդ մարդահամարի համաձայն քրդերի թիվը նախորդի համեմատ 2 անգամ պակաս էր՝ 6 065⁴⁷:

⁴⁴ Мусабеков Р., Становление независимого азербайджанского государства и этнические меньшинства, Азербайджан и Россия: общества и государства, Вып. 4, Москва, 2001; http://old.sakharov-center.ru/publications/azrus/az_012.htm ; Юнусов А., Азербайджан в начале XXI века: конфликты и потенциальные угрозы, Баку, 2007, с. 147.

⁴⁵ Steu` McDowall D., նշվ. աշխ., p. 493.

⁴⁶ Юнусов А., Этнический состав Азербайджана (по переписи 1999 года), <http://www.demoscope.ru/weekly/2004/0183/print.php>

⁴⁷ United Nations Statistics Division, Demographic Statistics: Population by national and/or ethnic group, sex and urban/rural residence; <http://data.un.org/Data.aspx?d=POP&f=tableCode:26>

Աղյուսակ 2.

Մարդահամարի տարեթիվը	Քուրդ բնակչության թվաքանակը
1999	13 019
2009	6 065

Մինչդեռ ոչ պաշտոնական, փորձագիտական գնահատականներով 1990-ականներին և 2000-ականներին Ադրբեջանում քրդերի թիվը (ներառյալ նաև լեզվով ասիմիլացված) կազմում էր տարբեր հաշվարկներով 50-ից մինչև 200 հազար⁴⁸:

Բացի հողվածի սկզբում մեր նշած ինքնության դրսևորումներից, վերջին տարիներին՝ կապված նախևառաջ Սիրիայում քրդերի ռազմական և քաղաքական հաջողությունների, Իրաքում քրդերի դե ֆակտո անկախ կարգավիճակի հետ, Ադրբեջանում նկատվում են քրդական գործոնի ակտիվացման որոշակի ազդակներ:

Օրինակ, 2014 թ. Ադրբեջանի Ազգային անվտանգության նախարարությունը Բաքվի մզկիթներից մեկը այրելու մեղադրանքով ձերբակալեց 2 անձի, որոնք անմիջապես պիտակավորվեցին որպես PKK-ականներ (Քրդական աշխատավորական կուսակցության անդամներ): Պաշտոնական մեղադրանքի համաձայն՝ ձերբակալված Նամիք Նասիբովը և Էլնուր Ալեքբեբովը 2014 թ. այցելել էին Սիրիայի քրդերի վերահսկողության տակ գտնվող տարածքներ, մասնակցել քրդական ուժերի վարած ռազմական գործողություններին՝ մասնավորապես Կոբանիի պաշտպանությանը: Վերադառնալով Ադրբեջան՝ նրանք իբր պետք է տեղում ստեղծեին «Յեքբուն» (միություն) անունով PKK-ի ճյուղավորումը⁴⁹:

Ուշագրավ է, որ Նամիք Նասիբովը հանդիսանում էր Ադրբեջանում գործող «Ռոնախ» քրդական մշակութային կենտրոնի քարտուղարի տեղակալ⁵⁰: Ադրբեջանի քրդերի «Ռոնախ» կենտրոնը 2013 թ. մարտին

⁴⁸ Иванов С., նշվ. աշխ., с. 58; McDowall D., նշվ. աշխ., p. 490.

⁴⁹ Prokuror Bakıda məscidi yandıran PKK-çılara cəza istədi. <http://news.lent.az/news/225137>

⁵⁰ Bakıda məscidi yandıran PKK-çı Milli Qəhrəmanın oğludur. <https://sizinyol.com/2014/12/bakida-m%C9%99scidi-yandiran-pkk-ci-milli-q%C9%99hr%C9%99manin-oglundur/>

Բաքվում Ֆախրեդդին Փաշանի գլխավորությամբ կազմակերպել էր քրդական համաժողով, որի ժամանակ քննարկվել էին Ադրբեջանի քրդաշատ շրջաններում քրդերենի դասընթացների կազմակերպումը, Իրաքյան Քուրդիստանի, Եվրոպայի և ԱՄՆ քրդական շրջանակների հետ կապերի ակտիվացման անհրաժեշտությունը, քրդերենով թերթի տպաքանակի ավելացումը և այլ հարցեր: Փաշանի խոսքով համաժողովին մասնակցել էր 100-ից ավելի մարդ⁵¹: Համաժողովի անցկացման լուրը և դրանում արձարժված հարցերը աղմուկ և բացասական արձագանք էին առաջացրել Ադրբեջանում: Ինչպես բնորոշ է ադրբեջանական լրատվամիջոցներին և այդ երկրի իշխանական շրջանակներին, համաժողովի մասնակիցներին և կազմակերպիչներին որակեցին որպես քուրդ «ահաբեկիչներ» համախոհներ:

Ադրբեջանում շրջանառվում է նաև «Ադրբեջանի քրդերի հասարակական միություն» կազմակերպության անունը: Սակայն այս կազմակերպության անունից մշտապես հանդես է գալիս դրա ղեկավար Թահիր Սուլեյմանը: Տպավորություն է ստեղծվում, որ տվյալ կառույցը մեկ անձից է բաղկացած: Թահիր Սուլեյմանը ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս հարցազրույցներով և հոդվածներով, որոնցում հիմնականում հանդես է գալիս Ադրբեջանի իշխող վարչակարգի քաղաքական ուղեծրի մեջ տեղավորվող թեզերով, հաճախ քննադատում Թուրքիայի քրդերի գործողությունները և մշտապես անում հակահայկական կոչեր՝ հայերին անվանելով ամբողջ աշխարհի քրդերի թշնամիներ⁵²:

Այսպիսով վերլուծելով և ի մի բերելով Ադրբեջանի տարածքում քրդերի պատմությունը կարելի է գալ մի քանի կարևոր եզրահանգումների.

1) Մինչև խորհրդային կարգերի հաստատումը, կապված Արևելյան Այսրկովկասում հաստատված քրդերի և տեղի թյուրքախոսների միջև կրոնական, մշակութային, կենսակերպի (քոչվոր և կիսաքոչվոր) նմանության, հաճախ նաև քաղաքական նպատականների համընկնման

⁵¹BAKIDAKI KÜRD QURULTAYI PKK-nın SAYTINDA.

http://musavat.com/news/g%C3%BCnd%C9%99m/BAKIDAKI-K%C3%9CRD-QURULTAYI-PKK-n%C4%B1n-SAYTINDA_145738.html

⁵²Azərbaycan Kürdləri İctimai Birliyi erməniləri kürd düşməni elan etdi. <http://strateq.az/siyaset/2868/az%C9%99rbaycan-kurdl%C9%99ri-ictimai-birliyi-erm%C9%99nil%C9%99ri-kurd-dusm%C9%99ni-elan-etdi.html>; Son döyüşlərdə 6 kürd əsilli Azərbaycan vətəndaşı şəhid olub HDP sədrinə tutarlı cavab, 07.04.2016, <http://hafta.az/index2.php?m=yazi&id=175568>

հետ, տեղի է ունեցել ավելի փոքրաթիվ տարրի՝ քրդերի լեզվական, երբեմն նաև ինքնության ձուլումը: Սա հանդիսացել է տեղի քրդերի ասիմիլյացիայի բավական ինտենսիվ և ոչ բռնի գործընթացը:

2) Ադրբեջանի խորհրդայնացումից սկսած՝ քրդերի ասիմիլյացիայի գործընթացը արհեստականորեն արագացվել և ուժեղացվել է: Չնայած խորհրդային առաջին տարիներին քրդական հարցի նկատմամբ ուշադրությանը և Ադրբեջանում քրդական կիսաինքնավար շրջանի ստեղծմանը՝ Խորհրդային կենտրոնական իշխանությունը ելնում էր համեմատաբար փոքր էթնիկ խմբերին «տիտղոսային ազգությունների» կազմում կլանելու պետական քաղաքականությունից, իսկ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը վարում էր թյուրքացման հետևողական քաղաքականություն: Նման պայմաններում քրդական ինքնությունը գրեթե արգելված էր: Պետական և հասարակական խտրականության չենթարկվելու, առավել ևս չաքտրվելու համար քրդերի շրջանում խրախուսելի էր «ադրբեջանցի» նորաստեղծ ինքնությունը:

3) Ժամանակակից Ադրբեջանում քուրդ լինելը շարունակում է մնալ անցանկալի երևույթ: Ի տարբերություն խորհրդային շրջանի՝ խտրականությունը ձեռք է բերել առավել քաղաքականացված երանգ, երբ քրդական ինքնությունը կապվում է անջատողականության և ահաբեկչության հետ: Պետական քարոզչության հետևանքով Ադրբեջանի հասարակության մեջ արմատավորվել է այն տեսակետը, որ 21-րդ դարում Ադրբեջանում քրդեր չեն կարող լինել:

4) Իրաքի Քրդական ինքնավարությունում անցկացված անկախության հանրաքվեն ցույց տվեց, որ Ադրբեջանում քրդերն ու նրանց ինքնությունը վերջնականապես վերացած չեն: Շատ քրդեր, բացահայտ չցուցադրելով և չչեշտելով իրենց էթնիկ պատկանելությունը, ներքուստ պահպանում են այն: Ադրբեջանում գործող որոշ կազմակերպությունների և խմբերի գործունեությունը թույլ է տալիս ենթադրելու, որ Ադրբեջանում կենտրոնական բռնապետական իշխանության թուլացման պայմաններում քրդերը՝ ի թիվս այլ էթնիկ խմբերի՝ լեզգիների, թալիշների, բարձրացնելու են իրենց էթնիկ իրավունքների վերականգնման և պաշտպանության հարցը: Մանավանդ, որ նման պատմական օրինակը կա, երբ ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին քրդերը բացահայտ և զանգվածաբար սկսեցին բարձրաձայնել խորհրդային երկրում քրդական հարցի գոյության և իրենց իրավունքների ոտնահարման մասին:

VARDAN GALSTYAN
(IOS of NAS RA)

**THE PROBLEM OF THE IDENTITY AND ASSIMILATION OF THE KURDS
IN AZERBAIJAN IN THE CONTEXT OF THE INDEPENDENCE
REFERENDUM IN IRAQI KURDISTAN**

The independence referendum in Iraqi Kurdistan on 25th September became a peculiar event for researching the modern problems of the Kurds in Azerbaijan. Before and after 25th September some Azerbaijani Kurds put the flags of Iraqi Kurdistan and its leader Masut Barzani on their social network profiles. Those activities provoked the severe reaction of the majority of the Azerbaijani part of social networks. The users who associate themselves with Azerbaijani Turks blamed the supporters of the Kurdish referendum for being sympathizers of terrorism and separatism. It became clear that for many Azerbaijanis even the fact of the existence of Kurds in their country is something unusual and absurd. That opinion is the result of the long-term state policy of ignoring the ethnic, cultural and linguistic rights of the Kurds in Azerbaijan since the sovietization of the territory.

This article is an attempt to represent the history of the discrimination of the Kurds in Azerbaijan and to analyze the possible struggle of this ethnic minority for its rights nowadays.

**ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)**

**ԶԼՄ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ
(ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

2011 թվականին Սիրիայում սկսված պատերազմը ճակատագրական եղավ սիրիահայ համայնքի և հազարավոր սիրիահայերի համար: Չղադարող ռազմական գործողությունների պատճառով նրանք աստիճանաբար սկսեցին հեռանալ ապահով վայրեր՝ Լիբանան, Իրան և ավելի հեռու՝ եվրոպական երկրներ: Սիրիահայերի տարերային ներհոսք սկսվեց նաև դեպի Հայաստանի Հանրապետություն:

Պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ միայն 2013 թվականին Հայաստան է եկել 6000-7000 մարդ: Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տրամադրած տվյալների¹՝ 2014 թվականի փետրվարի դրությամբ Հայաստանում բնակվել են շուրջ 11000 սիրիահայեր՝ մոտ 2800 ընտանիք: 2017 թվականին արդեն շրջանառվում է այն տեղեկատվությունը, որ սիրիական պատերազմի բռնկվելուց ի վեր մոտ 22000 սիրիահայեր են եկել Հայաստան²:

Նրանք, տեղափոխվելով Հայաստան, հայտնվում են թեպետ իրենց հարազատ էթնիկ, սակայն այլ սոցիալ-մշակութային միջավայրում, որին ադապտացվելու ինչպես խնդիրները, ինչպես էլ միջոցները բազմաթիվ են և ուսումնասիրության արժանի: Սիրիահայերի համար հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու գործում կարևոր դեր ունեն հատկապես զանգվածային լրատվամիջոցները (ԶԼՄ), քանզի նրանց մեծ մասը³ միջին և ավելի բարձր մակարդակով հասկանում և կարողանում է կարդալ լրատվամիջոցների լեզվով:

Արդեն երկար տարիներ հայաստանյան լրատվությունը արբան-

¹ Տվյալները փոխանցվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2014 թ. փետրվարի 13-ի թիվ 2470-34 գրության համաձայն:

²<https://armenpress.am/arm/news/895509/22000-syrian-armenians-re-locate-to-armenia-since-beginning-of-syrian-war.html>, 23.06.2017, ժամը՝ 15:58:

³ Ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների՝ արևելահայերեն լեզուն հասկանում են հարցման մասնակիցների 90,2%-ը, իսկ կարդալ կարողանում են 75,0%-ը:

յակային հեռարձակմամբ տարածվում է ամբողջ աշխարհով՝ հանդես գալով որպես հայկական սփյուռքի հայախոս հատվածի սպառման աղբյուր: Միրիահայ համայնքը ևս անմասն չի մնացել այս առումով: «Միրիահայերի մեծ մասը արբանյակային հեռարձակման շնորհիվ դիտել է Հ1-ը և հայաստանյան այլ ալիքներ: Միրիայում դիտել են նաև լիբանանյան հեռուստալիքներից մեկով հեռարձակվող հայկական լուրերի «Ժամը»: Միրիայում հայկական թերթեր չեն հրատարակվել, փոխարենը հայերը հետևել են Լիբանանում տպագրվող հայկական թերթերին՝ «Ազդակ», «Զարթոնք», «Արարատ» և այլն»⁴:

Բնականաբար, Հայաստանում ապրող հայը և արտերկրում ապրող հայը նույն մտածողությունն ու խնդիրները չունեն: Դժվար չէ ենթադրել, որ Միրիայում ապրող հայը ևս հայկական հեռուստաթերթից առաջին հերթին ակնկալել է Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին լրատվություն, ինչպես նաև ազգային մշակույթի մասին հաղորդաշարեր, նաև այնպիսի հաղորդումներ, որոնք կնպաստեին նրանց հայերենն ընկալելու, սովորելու և կիրառելու հմտությունների զարգացմանը: Այլ հարց է, թե Հայաստանում հեռարձակվող հեռուստածրագրերը, նույնությամբ հեռարձակվելով արբանյակով, ինչքանով են բավարարել սփյուռքում ապրող հայերի պահանջմունքները: Ամեն դեպքում, հայկական տեղեկատվական միջոցները կարևոր դեր են ունեցել սիրիահայության ինքնապահպանման և հայրենիքի հետ կապերի ամրապնդման գործում: Սակայն նույն հայկական լրատվամիջոցներն այսօր սիրիահայերի համար այլ դերակատարություն և գործառույթներ են իրականացնում:

Գիտական գրականության մեջ ՁԼՄ-ները դասվում են սոցիալական կոմունիկացիների թվին՝ իրենցից ներկայացնելով յուրահատուկ, ինստիտուցիոնալացված տեսակ, որոնք կազմակերպում են զանգվածային տեղեկատվության արտադրությունն ու տարածումը: ՁԼՄ-ները մի շարք գործառույթներ են իրականացնում, որոնցից հիմնականները՝ հաղորդակցական և տեղեկատվական, բնորոշ են նրանց՝ ըստ սահմանման, և կարող են համարվել անբաժանելի հատկություն, առանց որոնց անհնար է այլ գործառույթների կատարումը⁵: Ամերիկացի հե-

⁴ Փաշայան Ա., Հարությունյան Լ., Միրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, էջ 36-37:

⁵ Фомичева И., Социология СМИ. М., 2007, с. 41.

տագնուող Գ. Լասուելը առանձնացրել է զանգվածային լրատվամիջոցների չորս հիմնական գործառույթներ՝

- Տեղեկատվության հավաքում և տարածում,
- Տեղեկատվության խմբագրում,
- Հասարակական կարծիքի ձևավորում,
- Մշակույթի տարածում:

ԶԼՄ-ների կատարած գործառույթներն անհրաժեշտ է դիտարկել սոցիալական կառուցվածքի տարբեր մակարդակներում: Յու. Լևադան առանձնացրել է այդպիսի երեք մակարդակ՝

1) անձ,

2) սոցիալական խումբ,

3) սոցիալական ինստիտուտ, որոնց նկատմամբ ԶԼՄ-ները տարբեր գործառույթներ են իրականացնում:

ԶԼՄ-ներն իրականացնում են սոցիալական խմբում *անձի* ինքնահաստատման, սոցիալականացման, ներդաշնակ և հավասարակշիռ գոյության, սոցիալական դերերին ենթարկվելու գործառույթները, որոնք ակտուալացվում և անձին կապում են այդ համակարգին: Անհատի համար ԶԼՄ-ները նաև արժեքակարգավորման և հոգեբանական կարգավորման գործառույթ են իրականացնում: Արժեքակարգավորման գործառույթն իրականացվում է ոչ միայն իրականության մասին գիտելիքի փոխանցման, այլ նաև դրա նկատմամբ վերաբերմունքի ձևավորման շնորհիվ⁶: Հոգեբանական կարգավորման գործառույթի էությունը կայանում է նրանում, որ լրատվամիջոցները որոշակի զգացմունքային-հոգեբանական մթնոլորտ են ստեղծում՝ ազդելով մարդկանց տրամադրության և զգացմունքների վրա⁷:

Սոցիալական խմբի շրջանակներում ԶԼՄ-ները նպաստում են խմբի ինտեգրացիային, այսինքն՝ նրա ներառմանը ավելի լայն սոցիալական կառուցվածքներում: *Սոցիալական ինստիտուտների* մակարդակում ԶԼՄ-ները այն հիմքն են հանդիսանում, ըստ որոնց՝ սոցիալական նորմերը դառնում են հասանելի անձանց համար, որի օգնությամբ ստեղծվում է ակտիվ մոբիլիզացնող սոցիալական միջավայր՝ զգացմունքային, ռացիոնալ և գնահատող տարրերով⁸:

⁶ Նույն տեղում, էջ 60:

⁷ Նույն տեղում, էջ 110:

⁸ Функции и роли средств массовой коммуникации. <http://studme.org/>, 04.06.2017:

ԶԼՄ-ների միջոցով նոր սոցիալ-մշակութային միջավայրին հարմարվելու⁹ արդյունավետության վրա ազդում են կոնկրետ գործոններ, որոնք բաժանվում են երկու խմբի՝ սուբյեկտիվ և միջավայրային: Սուբյեկտիվ գործոնների թվին են դասվում մարդու ժողովրդագրական (տարիք, սեռ), ֆիզիոլոգիական և հոգեբանական բնութագրիչները, իսկ միջավայրային գործոնների թվին՝ կենսագործունեության պայմանները, գործունեության ռեժիմը և բնույթը, սոցիալ-մշակութային միջավայրի յուրահատկությունը:

Ադապտացիայի գործընթացը կարող է տեղի ունենալ և՛ ակտիվ, և՛ պասիվ: Ադապտացիայի պասիվ ձևն իրականացվում է սպոնտան, ենթագիտակցական մակարդակի վրա, իսկ ակտիվ ձևի դեպքում մարդ նպատակաուղղված ձգտում է փոխել իր գիտակցությունը, գործողությունները, կենսաձևը, սոցիալական դիրքը, որպեսզի հարմարվի նոր սոցիալական և մշակութային միջավայրին¹⁰:

Միրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի վրա ԶԼՄ-ների ունեցած դերի բացահայտման նպատակով իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն՝ սոցիոլոգիայում կիրառվող քանակական և որակական մեթոդաբանությամբ¹¹: Հաշվի առնելով հետազոտական օբյեկտի յուրահատկությունը, բնակության վայրի վերաբերյալ սուղ տեղեկատվությունը, Հայաստան տեղափոխվելուց հետո տարածական ցրված ձևով ապրելը և այլ հանգամանքներ՝ սիրիահայ տնային տնտեսությունների հետ կապ հատատելու համար օգտագործվել է «ձևակույտի» մեթոդը: Կիսաստանդարտացված հարցազրույցի դեպքում հարցվողների սեռատարիքային կազմի ներկայացուցչությունն ապահովելու համար ընտանիքից պատահականորեն ընտրվել է մեկ հոգի՝ ըստ ծննդյան օրվա սկզբունքի, իսկ խորին հար-

⁹ Լ. Շպակի կարծիքով՝ սոցիալ-մշակութային ադապտացիան սուբյեկտի և սոցիալ-մշակութային միջավայրի փոխադարձ հարմարվելն է հոգևոր-պրակտիկ հնարավորությունների և գործունեության արդյունքների փոխանակման շնորհիվ: Տե՛ս Ս. Պակ Լ., Социокультурная адаптация: сущность, направление, механизмы реализации. Кемерово, 1992, с. 106.

¹⁰ Реан А., Кудашев А., Баранов А., Психология адаптации личности. Анализ. Теория. Практика, СПб.: прайм-ЕВРОЗНАК, 2002, с. 40-41.

¹¹ Ընդհանուր առմամբ, իրականացվել է 184 կիսաստանդարտացված և 36 խորին հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում, մասնավորապես, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Շիրակի մարզերում:

ցագրույցներն անցկացվել են ըստ սեռի, տարիքի և զբաղվածության չափանիշների:

Քանի որ ժամանակակից ՁԼՄ-ների համակարգում հեռուստատեսությունն առանցքային տեղ է զբաղեցնում, ամենամատչելին է և ամենամեծ լսարան ունեցողը, սույն թեմայի ուսումնասիրությունը կենտրոնացած է հեռուստատեսության, մասնավորապես, հետևյալ խնդիրների շուրջ.

- Միրիահայ հեռուստալսարանի բացահայտում՝ ըստ հեռուստալիքների նախընտրության,
- Հեռուստալսարանի սեռատարիքային կազմի նկարագրություն,
- Հեռուստալսարանի նկարագրություն՝ ըստ զբաղվածության,
- Հեռուստածրագրերի նախընտրություն՝ ըստ հեռուստաալիքների,
- Միրիահայերի մասին հեռուստատեսային հաղորդումներ, լրատվություն:

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ սիրիահայերի շրջանում ամենամեծ դիտողականությունն ունեն հայկական հեռուստալիքները. Հայաստանում գտնվող սիրիահայերի մեծ զանգվածը՝ 71,0%-ը, հետևում է հայկական հեռուստալիքներին՝ մի կողմից ակտիվ դերակատար հանդիսանալով սեփական սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում, մյուս կողմից, հաղորդակցության պասիվ սուբյեկտ դառնալով հայկական իրականությանն ու մշակույթին: Հայկական հեռուստալիքների մեջ բարձր դիտողականություն ունեն հատկապես Արմենիա, Շանթ և Հ1 (համապատասխանաբար, 19,0%, 19,0%, 17,5%), այնուհետև՝ Կենտրոն, Հ2 և Երկիր մեդիա հեռուստաընկերությունները:

Հայաստանում արաբական հեռուստալիքներին հետևողները ևս որոշակի զանգված են կազմում ընդհանուր հեռուստալսարանի մեջ՝ 15,3%: Մեր կարծիքով, այս զանգվածը ավելի մեծ կլիներ, եթե արբանյակային հեռուստատեսությունը հասանելի լիներ նրանց մեծ մասին: Միրիահայերի մի որոշ մաս այսօր հետևում է նաև թուրքական և այլ հեռուստալիքների (համապատասխանաբար, 1,5% և 2,7%): Չնայած թուրքական հեռուստալիքները շատ փոքր դիտողականություն են գրանցել, այնուամենայնիվ, նրանք ծառայում են ավելի շատ լրատվությանը, հետո նաև երաժշտական հաղորդումներին հետևող լսարանի համար:

Այստեղ ուշադրության է արժանի նաև այն ցուցանիշը, որը վկայում է ընդհանրապես հեռուստացույց չդիտելու/չունենալու մասին՝


9,5%: Հեռուստացույց չդիտողների մեծ մասը նախապատվություն է տալիս համացանցին՝ հետևյալ հիմնական պատճառներով.

1. Համացանցի ֆիզիկական հասանելիություն՝ պայմանավորված նրանց աշխատանքի բնույթով:
2. Արբանյակային հեռուստալիքների բացակայություն, ինչի պատճառով շատ սիրիահայեր, ովքեր ցանկանում են արաբական հեռուստալիքներով հետևել առավելապես Սիրիային վերաբերող նորություններին, հնարավորություն չեն ունենում:
3. Արաբալեզու էլեկտրոնային մամուլի և ժամանցային նյութերի առկայություն, ինչը համացանցն ավելի գերադասելի է դարձնում այլ լրատվամիջոցների նկատմամբ:

Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այս երկու լրատվամիջոցներն իրար չեն բացառում, փոխարենը, լրացնում ու ավելացնում են տեղեկատվության հավաստիության ստուգման հնարավորությունները. *«Որ տեղեկատվության միջոցը, որ ճիշտ լինի, դրանից եմ օգտվում: Կարող է մի օր ինտերնետը սխալ բան գրի, ճիշտը հեռուստացույցով դիտես, և հակառակը»* (տղամարդ, 39 տ.)¹²:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, հայկական հեռուստալիքների դիտողականության առումով սիրիահայ կանանց և տղամարդկանց շրջանում էական օրինաչափություն չի բացահայտվել, սակայն նույնը չենք կարող ասել արաբական և թուրքական հեռուստալիքների պարագայում՝ արաբական հեռուստալիքներին հետևողները մեծամասամբ սիրիահայ կանայք են (ընդհանուրի մեջ 72,4%), իսկ թուրքական հեռուստալիքներին հետևողները՝ մեծամասամբ սիրիահայ տղամարդիկ (ընդհանուրի մեջ՝ 66,7%): Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արաբերենի դեպքում սիրիահայերի գերազանց մեծամասնությունը (95,6%), իսկ թուրքերենի դեպքում կեսից ավելին (61,0%) միջին և ավելի բարձր մակարդակով տիրապետում են լեզվին:


¹² Հակոբյան Գ., Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետ՝ ԴԱՆ), ք. Աբովյան, 2014 թ.:



Գծապատկեր 1

Հեռուստալիքների նախընտրությունը՝ ըստ հեռուստալսարանի սեռի, %

Հեռուստալսարանի համեմատաբար պասիվ զանգվածը կազմում են տղամարդիկ՝ կանանց (համապատասխանաբար, 57,1% և 42,9%, տե՛ս գծապատկեր 1) և երիտասարդները՝ միջին և ավագ սերնդի ներկայացուցիչների համեմատ (ընդհանուրի մեջ 50%, տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2

Հեռուստալիքների նախընտրությունը՝ ըստ հեռուստալսարանի տարիքի, %

Շարունակելով վերլուծությունը տարիքային չափանիշի հետ փոխկապվածության մեջ՝ նկատենք, որ հայկական հեռուստալիքներ դիտողների մեջ համեմատաբար պասիվ զանգված կազմում են ավագ սերնդի ներկայացուցիչները (22,2%), այնուհետև՝ երիտասարդները (28,9%), իսկ միջին տարիքային խումբն այն մեծ զանգվածն է (48,9%), որը կա մ նպատակաուղղված, կա մ ենթագիտակցորեն գործողություններ է իրականացնում հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու ուղղությամբ: Այլ հեռուստալիքների սպառողների մեջ երիտասարդները կա մ փոքր զանգված են կազմում կա մ բացակայում են (արաբականի դեպքում 20,7%, թուրքականի դեպքում՝ 0,0%, տե՛ս գծապատկեր 2):

Որոշակի առանձնահատկություն է բացահայտվել նաև զբաղվածության հարցի հետ փոխկապվածության վերլուծության արդյունքում. տնտեսապես պասիվ զանգվածը, որի մեջ մտնում են գործազուրկները, տնային տնտեսուհիներն ու թոշակառուները, առաջին հերթին, բացառապես թուրքական հեռուստատեսության լսարանն է կազմում, այնուհետև՝ արաբական, իսկ վերջում՝ հայկական (համապատասխանաբար, 100,0%, 75,9%, 65,9%): Այս զանգվածը պասիվ է նաև ընդհանրապես հեռուստատեսության սպառման հարցում. հեռուստացույց չունեցողները բացառապես նրանք են (100,0%), հեռուստացույց չդիտողների մեջ ևս մեծամասնությունը նրանք են (57,1%):

Միրիահայերի կողմից նախընտրելի հեռուստահաղորդումների հիմնական թեմատիկայի և ուղղվածության վերլուծության արդյունքում էլ հենց բացահայտվում է ՁԼՄ-ների կատարած գործառնությունները նրանց համար, ինչպես նաև որոշակի հիմքեր տալիս՝ նկարագրելու նրանց սոցիալ-մշակութային աղապատացիայի առկա վիճակը: Ընդհանուր առմամբ, սիրիահայերի կողմից դիտվող հեռուստատեսային հաղորդումները հետևյալ կշիռն ու դասավորվածությունն ունեն ընդհանուր հաղորդումների մեջ:

Հեռուստահաղորդումների դիտողականությունը՝ ըստ
 հեռուստալիքների, %

Հեռուստահա- ղորդումներ	Բոլոր հեռուստա- լիքներով	Հայկական հեռուստա- լիքներով	Արաբական հեռուս- տալիքներով
Լուրեր, քաղաքական մեկնաբանություններ	25,7	29,8	32,1
Մշակութային, երաժշտական հաղորդումներ	20,9	23,5	14,3
Մարզական հաղորդումներ	8,0	8,8	3,6
Գեղարվեստական ֆիլմեր	7,4	7,0	5,4
Հումորային, զվարճալի հաղորդումներ	6,7	8,8	8,9
Հայկական սերիալներ	6,7	8,4	0,0
Գիտատեղեկատվական , ինտելեկտուալ հաղորդումներ	4,3	5,6	3,6
Շոուներ/թոք շոուներ	3,1	4,2	3,6
Արաբական սերիալներ	3,1	0,0	16,1
Սյլ (այլ սերիալներ, կրոնական, խոհարարական հաղորդումներ)	3,1	3,9	12,4
Չկան նախընտրելի հաղորդումներ	11,0	–	–
Ընդամենը	100,0	100,0	100,0

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, սիրիահայերն իրենց ուշադրությունը հիմնականում սևեռում են **տեղեկատվական, վերլուծական հաղորդումների** վրա՝ դրանով առաջին հերթին բավարարելով Սիրիայի վերաբերյալ տեղեկատվության ստացման իրենց պահանջ-

մունքը: Եվ պատահական չէ, որ արաբական հեռուստալիքներով հեռարձակվող լուրերի նկատմամբ պահանջը (ընդհանուրի մեջ 32,1%) մեծ է սիրիահայերի մոտ՝ ի համեմատ հայկականով հեռարձակվողի (ընդհանուրի մեջ 29,8%), քանի որ, ըստ նրանց, արաբալեզու հեռուստալիքները տրամադրում են ամենաթարմ լուրերը, և այն Միբիայի իրականության մեջ մնալու համար կարևոր պայման է հանդիսանում. *«Ամեն օր լսում եմ Հայկայի մասին լուրերը: Մեր հոգեկանը երբեք հանգիստ չէ, մարմնապես այստեղ ենք, բայց հոգով՝ այնտեղ»* (տղամարդ, 37 տ.)¹³:

Սակայն միանշանակ չէ հեռուստատեսության հանդեպ վստահության հարցը. սիրիահայերը, հաշվի առնելով ՋԼՄ-ների քաղաքական ուղղվածության փաստը, այն չեն համարում տեղեկատվության հավաստի աղբյուր. *«Վերջերս այս լրատվական տարափը աշխարհում՝ ոչ ճիշտ տեղեկատվություն, ոչ լիարժեք գիտելիքներ, անտեղյակ լրագրողներ, ոչ մի լավ բանի չի տանում: Կան հատուկ լրատվական արաբական կայաններ, որոնք նման են գործակալների՝ նրանք հաղորդում են այն, ինչ ուզում են մեծ ուժերը: Դրա համար էլ ես չեմ վստահում»* (կին, 62 տ.)¹⁴:

Կան սիրիահայեր, որ փորձում են նաև համեմատական անցկացնել հայկական ՋԼՄ-ների հետ՝ փաստելով, որ չնայած վերջիններիս վրա ճնշումներ կան, այնուամենայնիվ, Հայաստանում լրատվական դաշտը ազատ է քաղաքական ազդեցությունից՝ ի համեմատ Միբիայում տիրող իրավիճակի. *«...Այնտեղ այսօրվա Հայաստանի իրավիճակը չէ: Թեկուզ շատ լսում եմ, որ լրատվամիջոցների վրա ճնշումներ կան, բայց ես, քանի որ լավ ապրել եմ սիրիական տարբերակը, ասում եմ՝ այստեղ շատ հանգիստ է»* (տղամարդ, 41 տ.)¹⁵:

Հետևելով լուրերին, հրատապ իրադարձություններին, ինչպես նաև վերլուծություններ անելով հեռուստատեսության որակի և ազատության հարցերի շուրջ՝ սիրիահայերը որոշակի իմաստով մասնակցություն են ունենում նաև Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքին:

Հեռուստահաղորդումների մեջ մեծ դիտողականություն ունեն նաև *մշակութային, երաժշտական հաղորդումները* (բոլոր հեռուստալիքներով՝ 20,9%, իսկ հայկական հեռուստալիքներով՝ 23,5%, տե՛ս

¹³ Նույն տեղում, ք. Երևան:

¹⁴ Նույն տեղում, ք. Երևան:

¹⁵ Նույն տեղում, գ. Առինջ:

աղյուսակ 1): Միրիահայերի հետ խորին հարցազրույցների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայկական-արաբական երաժշտության նախընտրության հարցում միջավայրի փոխվելուց հետո էլ էական փոփոխություններ չեն եղել, և նրանց կարելի է բաժանել երեք խմբի՝

- Հայկական երգ-երաժշտության սպառողներ. «*Ինձ համար հայկական երաժշտությունը գլխավորն է՝ ըլլա՛ ժողովրդական երգեր, ըլլա՛ Մայաթ-Նովայի գործերը, ըլլա՛ ազգակցական երգեր: Այնտեղ էլ նույն երգերն են լսել. ես չեմ սիրել արաբական երաժշտությունը*» (կին, 58 տ.)¹⁶:
- Արաբական երգ-երաժշտության սպառողներ. «*Արաբերեն երաժշտություն եմ լսում: Հայերեն սիրում եմ, բայց ես այնտեղ էլ արաբերեն երաժշտություն եմ լսել: Մերիալները, որ նայում եմ, էլի արաբերեն են*» (կին, 27 տ.)¹⁷:
- Խառը լսարան՝ «*Ամեն սրտիկ մոտիկ երաժշտություն ես լսում եմ՝ արաբերեն, հայերեն: Շատը հայկական ենք լսում, բայց արաբականն էլ կարոտում ենք: Երբեմն-երբեմն լսում ենք և ուզում ենք մեր փոքրիկ Աննայի ականջը լցնենք, որովհետև մենք կկարծենք, որ ետ պիտի էրթանք Միրիա*» (կին, 55 տ.)¹⁸:

Միրիահայերի կողմից սպառվող հաղորդումների մեջ որոշակի կշիռ ունեն նաև հայկական (6,7%) և արաբական (3,1%) արտադրության **հեռուստասերիալները**, ընդ որում, արաբական հեռուստալիքներով ցուցադրվող արաբական սերիալները երկրորդ ամենապահանջված հեռուստարտադրանքն է՝ լուրերից հետո (16,1%): Հայկական եթերն այսօր լի է բազմապիսի հայկական ու արտասահմանյան հեռուստասերիալներով, որոնք հասարակության համար կարևոր ինստիտուտների մասին (ընտանիք, կրթություն, տնտեսություն, եկեղեցի և այլն) իրենց պատկերացումներն են քարոզում՝ հաստատելով կամ վերաբժնորելով հասարակության մեջ արդեն իսկ առկա արժեքները: Եվ, բնականաբար, սերիալները խորը ազդեցություն են ունենում ոչ միայն հայ հասարակության, այլ նաև Հայաստանում բնակվող սիրիահայերի արժեհամակարգի ձևավորման և փոխակերպման վրա:

Հայկական հեռուստալիքներով ցուցադրվող **մարզական և ժա-**

¹⁶ Նույն տեղում, ք. Երևան:

¹⁷ Նույն տեղում, ք. Երևան:

¹⁸ Նույն տեղում, ք. Երևան:

մանցային հաղորդումները հետաքրքրության հավասար դաշտում են գտնվում սիրիահայերի համար (մարզական՝ 8,8% և հումորային/զվարձալի 8,8%, տե՛ս աղյուսակ 1), որոնց միջոցով նրանք ոչ միայն հարստացնում են արևելահայերեն լեզվի իմացության գիտելիքները, այլ նաև առօրյա-խոսակցական արտահայտությունների պաշարը՝ նպաստելով հայաստանաբնակ հայերի հետ հեշտ հաղորդակցությանը:

Ընդհանուր առմամբ, սիրիահայերի կողմից հայկական մշակույթի սպառումը տեղի է ունենում ՁԼՄ-ների, մասնավորապես, հեռուստատեսության շնորհիվ, ուստի անփոխարինելի է վերջինիս դերը նրանց մշակութային ադապտացիայի գործընթացում:

Բացի հայ մշակույթի սպառողներ լինելուց, նրանք նաև սիրիահայ մշակույթի ակտիվ տարածողներ են՝ ի շնորհիվ հայկական հեռուստալիքների ընձեռած հնարավորությունների, որի արդյունքում նրանք կա՛մ որպես հեռուստահաղորդման սյուժեի հերոսներ, կա՛մ որպես հյուրեր (հիմնականում հասարակական ու մշակութային գործիչներ) այդ մշակույթը կրողներին բնորոշ հպարտության զգացողություններ են առաջացնում էկրանից այն կողմ գտնվող սիրիահայերի մոտ: Իսկ, ընդհանրապես, սիրիահայերի վերաբերյալ նմանատիպ հաղորդումները, ինչպես նաև տնտեսության, մշակույթի և այլ ոլորտներում նրանց առնչվող իրադարձությունների լուսաբանումը Հայաստանում ապաստան գտած սիրիահայ, նաև հայաստանցի հեռուստալսարանի համար ապահովում են հետևյալ գործառույթների իրականացումը.

– Սիրիահայերի առողջապահական, կրթական, տնտեսական, սոցիալական, իրավական, մշակութային և այլ բնույթի հիմնախնդիրների բացահայտում, տարածում, ակտուալացում:

– Առևտրի, տնտեսության, գիտության և այլ ոլորտներում սիրիահայերի արձանագրած հաջողությունների, նորարարությունների մասին տեղեկատվության տրամադրում:

– Հայաստանաբնակ հայերին սիրիահայ մշակույթի հետ ծանոթացում (մասնավորապես, արևմտահայերեն լեզու, ուտեստներ, ավանդույթներ, սովորություններ, նյութական ու հոգևոր արժեքներ և այլն):

– Մոցիալ-մշակութային ադապտացիայի առկա մակարդակի նկարագրում՝ խթանելով և նոր աղբյուրներ առաջարկելով հետագա ընթացքի համար:

Այսպիսով, սիրիահայերի շրջանում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծությունը փորձ էր՝ բացահայտելու այն դերը, որ ՁԼՄ-ներն ունեն սիրիահայերի կյանքում,

հիմնականում այն գործառույթները, որ կատարում է հեռուստատեսությունը սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում:

Ամփոփում

Շուրջ հինգ տարի է, ինչ սիրիահայերը Սիրիայում տիրող պատերազմի հետևանքով լքել են երկիրը և տեղափոխվել Հայաստան: Նրանց համար հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքին հարմարվելու խնդիրները բազմաթիվ են և ուսումնասիրության արժանի:

Որպես նոր միջավայրին հարմարվելու գործիք՝ կարևոր դեր ունեն ՁԼՄ-ները: Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի վրա ՁԼՄ-ների ունեցած դերի բացահայտման նպատակով իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն՝ քանակական և որակական մեթոդաբանությամբ: Անցկացվել է 184 կիսաստանդարտացված և 36 խորին հարցազրույցներ սիրիահայերի հետ Երևանում և մարզերում՝ պարզելու սիրիահայ հեռուստալսարանի կազմը, նրանց կողմից նախընտրելի հեռուստալիքներն ու հեռուստահաղորդումները, հիմնական գործառույթները, որ կատարում է հեռուստատեսությունը նրանց սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում: Թեմայի ուսումնասիրությունը կենտրոնացած է հեռուստատեսության շուրջ, քանզի ժամանակակից ՁԼՄ-ների համակարգում ամենամատչելին և ամենամեծ լսարան ունեցողը հեռուստատեսությունն է:

Ըստ հետազոտության արդյունքների՝ սիրիահայերի շրջանում ամենամեծ դիտողականությունն ունեն հայկական հեռուստալիքները. սիրիահայերի 71,0%-ը հետևում է հայկական հեռուստալիքներին՝ մի կողմից, ակտիվ դերակատար հանդիսանալով սեփական սոցիալ-մշակութային ադապտացիայի գործընթացում, մյուս կողմից, հաղորդակցության պասիվ սուբյեկտ դառնալով հայկական իրականությանն ու մշակույթին: Արաբական հեռուստալիքներին հետևողները ևս որոշակի զանգված են կազմում ընդհանուր հեռուստալսարանի մեջ՝ 15,3%:

Երբ խոսքը վերաբերում է ժամանցին, մշակութային հաղորդումներին, սիրիահայերը նախընտրում են հայկական հեռուստալիքները, իսկ երբ խոսքը վերաբերում է լուրերին, ապա նրանք ավելի շատ նախապատվություն տալիս են արաբական հեռուստալիքներին: Սիրիահայերի կողմից դիտվող հեռուստահաղորդումների բազմազանությունը արտացոլում է նրանց ինքնությունը՝ մի կողմից, կապվածություն հայկական մշակույթի հետ, մյուս կողմից, նախ պատկանելիություն

արաբական հասարակությանը, հետո՝ ներքին պարտավորվածություն նրա հանդեպ:

Հեռուստատեսության դերը սիրիահայերի ներգաղթի առաջին տարիներին երկակի է՝ նոր քաղաքացիական պատկանելիության ձևավորում՝ նախկին ինքնության պահպանման պայմաններում: Սակայն այդ երկակիությունը ներքին հակասություն չի առաջացնում: Հայկական լրատվամիջոցները, մի կողմից, ամրապնդում են սիրիահայերի գիտելիքները հայկական մշակույթի մասին, մյուս կողմից, նպաստում են ինտեգրացիային՝ նոր ինքնագիտակցության ձևավորման հիման վրա ներքաշելով նրանց հայ հասարակության արդիական հիմնախնդիրների մեջ:

**GAYANE HAKOBYAN
(IAE)**

**THE ROLE OF MASSMEDIA IN THE PROCESS OF SOCIO-CULTURAL
ADAPTATION OF SYRIAN ARMENIANS**

(By TV example)

It has been around 5 years Syrian Armenians left their country as a result of the war in Syria and moved to Armenia. There are numerous issues for their adaptation to Armenian socio-cultural life worth studying.

Mass media plays an important role as a tool to adapt to the new environment. In order to identify the role of mass media in the process of socio-cultural adaptation of Syrian Armenians an ethno-sociological research has been conducted by using qualitative and quantitative methodologies applied in sociology. Overall, 184 semi-standardized and 36 in-depth-interviews have been conducted with Syrian Armenians in Yerevan and other regions to define the structure of Syrian-Armenian audience, their choice of TV channels and programs, and the main functions television plays in the process of their socio-cultural adaptation. The research is focused on television, as it is the most affordable among modern mass media system and has the largest audience.

According to the result of the research Armenian channels have the highest watch rate amongst Syrian Armenians: 71.0% of them follow Armenian channels on the one hand acting as an active player in the process of their own socio-cultural adaptation, on the other hand playing passive

communication role in Armenian reality and culture. Those who follow Arabic TV channels also comprise a certain segment of the overall TV audience – 15.3%.

When it comes to entertainment and cultural programs, Syrian Armenians prefer Armenian channels, where as in terms of news they prefer Arabic channels. The variety of TV programs watched by Syrian Armenians reflects their individual identity: on the one hand, their attachment to Armenian culture, on the other hand their bonding roots into the Arabic society, as well as internal commitment towards it.

The role of the television during the first years of immigration of Syrian Armenians is dual: the formation of a new civic identity mean while maintaining the previous identity. However, that duality does not cause internal conflict. On the one hand, Armenian Media streng then the knowledge of Armenian culture among Syrian Armenians; on the other hand contribute to their integration based on the creation of new identity by engaging them into the up-to-date issues of Armenian society.

ARAM ABAJYAN
(IOS NAS RA)

**CHINA'S DIPLOMATIC AND STRATEGIC MOVES IN THE
MIDDLE EAST DURING THE COLD WAR PERIOD**

The article analyzes China's strategic involvement, fundamental interests and foreign policy objectives in the Middle East during the second half of the 20th century. Examination of main facts, tendencies and patterns is important in order to completely understand the development of Sino-Arab relations. This phenomenon can be useful for making some basic predictions about future ties. Thus, China's diplomatic and strategic moves in the region during the Cold War period will be examined. In fact, the evolution of Beijing's foreign policy in the Middle East is not thoroughly investigated, and we can argue, that the debate among the scholars about this issue has been conducted in a historical vacuum. The debate is mainly focused around how the Chinese are acting while having participation in the region's affairs. Moreover, the validity of Chinese policy here has been examined less carefully. A deep analysis of Chinese foreign policy in the Middle East can help us to fill in some of these important gaps. As we know, China has neither borders nor military troops in the Middle East. At the same time, there is no state or government in the region called 'pro-Chinese', in the same way, that some governments are known as 'pro-American' or 'pro-Russian.' Chinese influence on revolutionary movements in the region has been weak and minimal as well. On the other side, the region of the Middle East has never been as significant for China as, for instance, Asian region or the Soviet Union. Nevertheless, as a growing socialist power, the People's Republic of China (PRC) aimed to present its huge potential in the Middle East, attempting to spread its influence both in political and economic issues.

From the historical point of view, one of the keystones of Communist China's engagement and further policy development in the Middle East started with its full sympathy and support of the Algerian liberation movement. Even before the National Liberation Front (FLN) had created to liberate the country from the French rule (November 1, 1954), China already had exerted all its efforts to support the Algerians. They recognized the Algerian FLN and the Palestinian movement even before the Soviet Union

did. Chinese government together with its support of Palestinians against Israel launched to assist the 'Guerrilla' movement in Dhofar (Oman) as well.¹

By softly penetrating into the Middle East, China gradually maintained its own foreign policy objectives and specific interests in the region. Furthermore, an establishment of diplomatic relations with the Arab countries let China break out of the diplomatic isolation imposed by the Western powers after its independence in 1949. In general, during the Cold War period for the Chinese policymakers and strategists the Middle East was viewed as an important area of the united front against the two confronting superpowers, social-imperialism influence in particular. Thus, without the clarification of China's real position, basis of cooperation and coming perspectives in the Middle East it is impossible to evaluate the region's significance for Beijing. In the Middle East region Israel appeared to be the first country to recognize China in January 1950. Some months later, however, the Arab League (Egypt, Lebanon, Syria, Iraq) decided to maintain relations with Taiwan, without recognizing China.²

China's real understanding and received official information about the Middle Eastern affairs was not clear enough, meanwhile the information was sometimes different. Arguably, China's first diplomatic steps and approaches towards the Middle East region started from 1953, once the Korean War ended. In April 1955, Chinese Prime Minister Zhou Enlai and Egyptian President Gamal Abdel Nasser met at the Bandung conference of Non-Aligned Nations. During the conference Zhou expressed his country's sympathy for the Palestinian refugees. China's overall interests in the Middle East started to be characterized on political, economic and cultural fronts. The Bandung Conference of April 1955 in a true sense can be viewed as a starting point of China-Middle East ties, and it opened a new stage in Sino-Arab cooperation. During this conference Beijing's interest in the Middle East became apparent.³ After the Suez Crisis in 1956 China's interests in the Arab world increased tending to grow steadily since then. Later, the Chinese engagement and activity in the region quickened by establishing permanent

¹ Joseph E. Khalili, Sino-Arab relations. *Asian Survey* 8 (8), 1968, p. 684.

² Disney N., China and the Middle East, Middle East Research and Information Project Reports No. 63 (December), Washington, DC: MERIP, 1977, p. 8.

³ Masannat G., Sino-Arab Relations. *Asian Survey* 6 (4), 1966, p. 220.

organization of the Afro-Asian People's Solidarity Headquarters in Cairo, Egypt.⁴

China gradually established its first diplomatic and trade relations with the region's countries. In that year China and Egypt signed cultural and trade agreements. Egypt broke off relations with Taiwan and recognized China in May 1956. Syria first signed a trade agreement and then recognized China in July 1956. China-Syria diplomatic relations were established in October. Yemen in 1956, Morocco in 1957, Iraq and Sudan in 1958 also recognized China. Moreover, China became the first country to recognize the Provisional Revolutionary Government of Algeria in September 1958.⁵

So, until the end of the Cold War relations between China and Middle Eastern states developed positively and quickly since the establishment of the PRC. Perhaps the first diplomatic victory of Beijing in the Arab world can be viewed its establishment of diplomatic ties with Egypt in 1956. Then China developed strong and stable relations with most of the liberated Arab countries in the 1960s.⁶ Beijing's first chance to demonstrate its support for the growing anti-imperialist sentiment in the Arab world was in November 1956, when the joint coalition of the British-French-Israeli forces invaded Egypt. China's official political stance about this event was the following: the Suez Canal issue must be settled only through the peaceful negotiations.⁷ Later Chinese moves and reactions appeared to be negative during the Anglo-American invasion of Lebanon and Jordan in July 1958. Growing moods towards national liberation movements in the Middle East and the subsequent withdrawal of Iraq from the imperialist 'Baghdad pact' were warmly welcomed by China.⁸

The year of 1956 can be considered as a crucial shift in the politics of both the Middle East and China. This year put the end of the European (British-French) hegemony in the region and the United States replaced its partners. After 1956 there has been a dynamic increase in Communist China's diplomatic and economic activities in the Middle East. Beijing first showed its

⁴ Khalili, *ህጋዊ. ሠጋኪ.*, ኔጋ 678:

⁵ Disney, *ህጋዊ. ሠጋኪ.*, ኔጋ 4:

⁶ See Yitzhak Shichor, *The Middle East in China's Foreign Policy, 1949-1977*, London, Cambridge, 1979.

⁷ Masannat, *ህጋዊ. ሠጋኪ.*, ኔጋ 221:

⁸ Disney, *ህጋዊ. ሠጋኪ.*, ኔጋ 5:

willingness to enter into trade-aid programs with the United Arab Republic, Syria, Yemen, Morocco, Sudan, Algeria and Tunisia. China's such a drive into the region perhaps was based on the theory, that the newly independent countries could be influenced by rising China's pattern and loosen their economic ties with both the West (especially the United States) and the Soviet Union⁹.

Chinese economic drive made Beijing's foreign policymakers put forward some basic objectives in regard to Sino-Arab relations. Four main goals of Beijing's policy were the followings:

- Beijing's most important foreign policy objective was an international recognition of Communist China as the sole legitimate government: the acceptance of this fact and support by the Arabs was necessarily important for China;
- Use the potential of the Arab world as a significant revolutionary arena against the Western imperialism;
- Get the Arabs' support for Communist China's policies with both of the superpowers (the United States and the Soviet Union). Create better conditions for spreading an international Communist movement;
- Get the Arabs' support to strengthen China's position among the Afro-Asian nations, jointly fight against imperialism, colonialism and neocolonialism.¹⁰

Sino-Arab relations were developing in a positive way. They both were sharing many identical viewpoints on the issues, such as support for the national liberation movements, fight against colonialism, full respect for fundamental rights of people to self-determination, peaceful coexistence with all nations regardless of differences in social or political systems. The both sides were eager to create friendly relations between states without the sphere of political domination or influence. Their views regarding to the progress of economic development were identical as well¹¹.

In 1963 Zhou Enlai's tour to the Middle East and North Africa was China's next diplomatic step. His mission was to get support from those countries to hold the second Bandung conference without the participation of

⁹ Masannat, ስጊላ. ሠጊኪ., ኔጊ 216:

¹⁰ Khalili, ስጊላ. ሠጊኪ., ኔጊ 679:

¹¹ Ibid, p. 688.

the Soviet Union: Sino-Soviet relations became bitter during the 1960s. Most countries supported China to become a member of the UN. They also recognized Taiwan as a part of China. Zhou's visit led to the establishment of diplomatic relations with Tunisia as well. During this tour he expressed China's support for the Palestinian Arab people and restoration of Palestinian rights. During the June war in 1967 between the Arab states and Israel, China once again showed its sympathy and support to the Arab people. Later, in the 1970s, the Sino-Soviet relations became much bitter, and Chinese leaders were using every opportunity to blame Soviet Union for escalating confrontation and the whole situation in the Middle East¹².

In 1971 China took its rightful place in the UN. China's such a political change and shift was symbolized by the American President Richard Nixon's visit to China in 1972. This historical event was a great victory for China. The United States, which was refusing to recognize the existence of the PRC for more than twenty years, had no other choice than to accept the reality. After admission to the UN Security Council China started its open trade and diplomatic missions in the Middle East, which was laying groundwork for Deng Xiaoping's economic reforms a decade later. During the Cold War period China's overall analyses and the dynamic of changing relations with the superpowers were obvious. For instance, in the 1960s for China the main contradiction was that between the imperialist and socialist camps. Later, in the 1970s, in the eyes of China both the United States and the Soviet Union could escalate conflicts, confrontation and threats throughout the whole world in general, and in the Middle East in particular. In this context, China launched its new and unique policy by supporting oppressed nations and national liberation movements. In China's perspective, in order to meet the challenges and the threat of world domination merely by two superpowers, it had to foster relations (also diplomatic) with the Third World countries supporting them to broaden the united front. As a result, China's foreign policy in the Middle East shifted towards supporting national liberation movements and armed struggle. China was gradually giving an equal weight to both of the superpowers, which were confronting for the world hegemony and domination.¹³

Beijing's foreign policy and views of the Gulf States also changed with

¹² Disney, ሲጊቢ. ሠጊሁ., ኒጊ10:

¹³ Ibid.

its support of the 'Guerrilla' movement in Oman in 1972. The skewed version of events in the Middle East made China maintain consciousness paying attention to all possible details. In general, China opposed the Zionism, supported the Palestinians' rights, rejected any US-Soviet attempt to settle issues in the region, and viewed the Soviet Union as the main threat and enemy of the Middle East. Taking into account Washington-Moscow-Beijing triangular influence in the Middle East, the behavior of any Middle Eastern state towards those powers was becoming disputing issue, as it was significant to clear up not only a particular country's desire, but also what benefits could be possible to gain. It was important to determine, which of those powers would change the course of events to the full extent of willingness of the country's leaders. Also, it is worth to mention, that although historical movements are mostly driven by economic and social forces, however, they are carried through by people, and their states of mind therefore become important for the future cooperation. In this context, China surely played its role very well. It established and gradually developed relations with the region's states, meanwhile it used various tactics to balance the superpowers' dominating influence in one of the most complicated and chaotic regions of the world, in the Middle East.¹⁴

During the Cold War period rapidly changing global environment, and in view of the possibility of a shift in the balance of power in the region, the PRC leaders would have to reevaluate their role and position for the coming future. There were existing viewpoints, that the easiest way for China was to become a satellite of the Soviet Union, but the Chinese appeared to be too proud for accepting such a secondary role. China not only tried to prevent and stop the Soviet's spreading influence in the region, but also made additional moves for safeguarding its influence and perspectives in the region. Guided by realism, China chose a middle course while cooperating with the superpowers. Chinese policymakers and diplomats could change the balance of power in the Middle East, if they aimed to involve themselves more actively in revolutionary movements, meanwhile making innovations in their tactics and strategy. One real possibility which can emphasize this statement was during the Islamic Revolution of Iran in 1979, when China could fuse its

¹⁴ Schuster A., A Scenario for the future: Communist China and the Middle East, *World Futures. The Journal of New Paradigm Research* 20 (3-4), 2010, p. 192. <http://dx.doi.org/10.1080/02604027.1985.9972004>

Communist ideas with religious ones. If that occurred, China probably would have chance to achieve some daring successes and profitable results. Using the ability of its smart leadership, the appropriate ideology and the manipulation of religion, China, despite the country's military backwardness, could gain significantly great material obstacles.¹⁵

Russian revolutionist Lenin said: "give me a group of revolutionaries and I will turn Russia upside down."¹⁶ Therefore, if Chinese diplomatic service had some efficient revolutionaries in the Middle East, maybe they also could have a chance to turn the region upside down. In order to create this kind of conditions and arouse the Arab masses, such revolutionaries surely had to employ sensational unusual propaganda methods: they would have to implement a new strategy, approach and quick-tempered ideas mixing the Chinese version of Marxism-Leninism with Islamic religion and beliefs.¹⁷

While strengthening its relations with the region, China has been facing both positive and negative outcomes. Beijing gradually developed its ties with strategically important Middle East, establishing friendly contacts with both the region's players and with great actors involved in region's affairs. Nevertheless, China-Middle East economic relations did not play an important role regarding the PRC international activities until the late 1970s. Economic relations between the sides were limited meanwhile they were basically determined by political, strategic and ideological considerations. After the death of China's Communist leader Mao Zedong most of these constrains have been removed. Giving top priority to overall modernization programs, foreign economic relations became indispensable. China's economic transactions with the Middle East clearly emphasize the dramatic expansion of such relations. However, although during the Cold War period China succeeded in creating new alliances in the Middle East, it was unable to entirely capitalize on these relationships because of turmoil of the Cultural Revolution (1966-1976) at home.¹⁸

¹⁵ Ibid., p. 199.

¹⁶ Ibid.

¹⁷ Ibid.

¹⁸ Harding H., China's American Dilemma. *The Annals of the American Academy of Political and Social Science*, 519 (1), China's Foreign Relations., 1992, p. 13. <http://journals.sagepub.com/doi/abs/10.1177/0002716292519001002?journalCode=anna>

a

Another case is that during the Cold War period dynamically growing relations between China and the Middle East in some degree interrupted because of two main significant events: fallout of Tiananmen Square in China in 1989, and instability in the Gulf region followed by Iraq's invasion of Kuwait in 1990. Later Chinese moves towards the region entered new phase, meanwhile the Gulf region's importance grew dynamically. After Chinese leader Deng Xiaoping's economic modernization reforms Beijing gave an importance to expand especially its economic ties. Particularly, after becoming a net oil importer in 1993, China accepted the significance of oil-rich Gulf region more seriously. At regional level, complex developments seemed crucial for China. It had to respect, also find proper responses to them expecting for new desirable achievements and favorable results while seeking to expand its relations in the Middle East. China was searching appropriate ways and means for restoring its image, and relatively good opportunity was provided by Iraq's invasion of Kuwait. Beijing manipulated skillfully enough to turn event to its own advantage. Since Tiananmen incident negative international repercussions and imposed sanctions on Beijing seemed unbearable for further development. Gulf crisis 'opened Chinese door' to return as a major player in the game of international politics. Regaining its global power status China succeeded in consolidating its identity as Third World nation, thus becoming more representative actor.

So, while China was looking for new methods for recovering its international image, perhaps 'the best opportunity' was that of Iraq's invasion of Kuwait on 2 August, 1990. The PRC regarded Iraq's actions as a violation of the United Nations (UN) Charter and of the norms of international relations, therefore absolutely unacceptable. China's such a decision was based on two main principles: first, Beijing resolutely opposes the Iraqi violent actions and annexation of Kuwait, and second, it constantly maintains its policy in the Gulf region, that is every effort must be made for finding merely peaceful solutions between conflicting states.¹⁹

Beijing's another significant strategic move in the region was its 'arms sales strategy.' Particularly, during Iran-Iraq war (1980-1988) it was providing military technology to both of confronting sides. Arms' legitimate export item

¹⁹ Shichor Y., China and the Middle East Since Tiananmen, *The Annals of the American Academy of Political and Social Science* 519 (1), China's Foreign Relations, 1992, p. 93.

for China was based on some basic reasons. First, Beijing could afford to sell weapons and in some degree, reduce threat feeling. Second, such a new policy could help the country to remove ideological constraints. The third option was the lack of defense industry's strength and in its drive to modernize military capability China found the Gulf region which demonstrated itself as 'real partner.' Thus, availability of customers became significant for Chinese.

Since the establishment of the PRC in 1949 and throughout the whole period of 1950-1960, while dealing with Beijing Washington was attempting to implement a policy of mixture diplomatic isolation, economic embargo and military encirclement. When such kind of policy gave no desirable result and the failure became evident, the United States (US) changed its strategy by taking advantage of China's 'new policy of opening up to outside world' in the periods of 1970s and 1980s. Americans started to employ economic and cultural exchange programs with China to encourage their 'peaceful evolution' from socialism to capitalism. Later, after the Tiananmen crisis of 1989 the US had shifted its tactics once again by implementing economic sanctions, as well as diplomatic pressure to force changes in China's domestic policy. Although the consequences of the Tiananmen crisis were painful, however, within a year of the incident China managed to rebuild and improve its base of operations in the Middle East and, no less important, its 'injured' international image.²⁰

In fact, in June 1989 the PRC became more isolated from international community than at any time after its independence in 1949. Only a year and a half later since Tiananmen incident, by early 1991, Beijing once again could recover its global image by taking part in international politics and playing a role of great power, which already could not be ignored. The significance of the Middle East for China in a true sense increased since the Tiananmen incident. At the same time, Beijing's foreign policy objectives towards the region mainly consisted of these three main spheres:

- Political sphere: the PRC got ample opportunities for taking more active role in settling outstanding regional issues, meanwhile it started to play a greater role in international politics;
- Economic sphere: the Middle East had swallowed a huge slice of China's exports of civilian labor and goods, while providing loans

²⁰ Calabrese J., *Peaceful or Dangerous Collaborators? China's Relations with the Gulf Countries*. Pacific Affairs, University of British Columbia 65 (4), 1992-1993, p. 475.

and funds for investments. In this connection, they could reduce the deficit in the Chinese balance of payments;

- Military sphere: the Middle Eastern states became the largest customers for Chinese military equipment and arms. The returns of unprecedented amounts of precious hard currency by these sales, accessibility to advanced military technologies and intelligence, also the significant experience gained during battlefield operations appeared to be extensively useful facts for China's defense modernization.²¹

During the Cold War period the PRC in some degree was disengaged from the Middle East. China had a small presence in the region in comparison with that of two superpowers. Nevertheless, by the 1980s, the PRC gained significant influence here by enlarging its activities. Beijing gradually became ready to compete with the Soviet Union and the United States, and it succeeded in achieving more internationally responsible recognition in world politics.²²

Actually, China still remains a developing country with a large dependence on Western economies, capital and technology. Beijing's foreign policy is not as dependent as Chinese would like to see. Anyway, China would inevitably continue its efforts for ensuring the country's future development and prosperity. Political, economic or religious confrontation between states and the various tides of history often lead states not to peace, but to global instability. There are views, that the Communists understand history better than democratic Western politicians, because Marxism always claimed about the importance of taking history more seriously. Self-deception in some cases prevails in the Western World, and few look back to history trying to learn anything from the past. Indeed, certain patterns can repeat again and again. Although the past and the present are sometimes viewed as

²¹ Neill A., China and the Middle East, Adelphi Series 447 (8), 2014, p. 87. <https://www.iiss.org/en/publications/adelphi/by%20year/2014-de9e/middle-eastern-security--the-us-pivot-and-the-rise-of-isis-ab65/ap447-448-11-neill-e1c6>

²² Scobell A., Nader A., China in the Middle East: The Wary Dragon, RAND Corp., Santa Monica, Calif., 2016, p. 4. https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR1200/RR1229/RAND_RR1229.pdf

quite similar, however, some differences could always be found between them.²³

China and the Middle Eastern states are both traditional and old societies with relatively long and outstanding history, culture and civilization. While initiating certain cooperative moves towards the Middle East, China takes this phenomenon seriously enough, paying attention to all details relating to history. China is known to be a close country, therefore traditional Chinese society's knowledge about the outside world was little and limited. Within the centuries Chinese leaders were apprehensive about the country's domestic security. They were avoiding to establish extensive contacts with foreign states. First during the mid-Qing dynasty and then during the late Maoist period the Chinese government was imposing absolute limitations on both economic and cultural relations with the West in order to protect the country from destabilizing influences coming from abroad. In the post-Mao period Beijing's new leadership has acknowledged the limitations to such policy implementation. Furthermore, in 1984 China's leader Deng Xiaoping went so far that he blamed China's backwardness on its international isolation in the past arguing that "any country that closes its door to the outside world cannot achieve progress."²⁴ He and his colleagues recognized the importance of expanding economic, scientific and cultural exchanges with outside world, including the United States. By implementing such a policy China could become a more developed and powerful country.²⁵

The result of China's policies liberalization on foreign relations throughout the 1980s helped the country to achieve dramatic expansion of trade, tourism, investment, as well as academic exchanges with the United States. By the late 1980s many Chinese were hoping that the country's relations with the US could be transformed from a geopolitical alignment into an economic partnership. These hopes were related to Beijing's much needed economic reforms and modernization programs. Washington's huge potential for providing China with capital, markets, advanced technology and scientific know-how were viewed as significant opportunities.²⁶

Despite Beijing's Marxist ideology and sympathetic stand towards

²³ Neill, ስጊላ. ሠጊኩ., ኔጊ 87:

²⁴ Harding, ስጊላ. ሠጊኩ., ኔጊ13:

²⁵ Ibid

²⁶ Schuster, ስጊላ. ሠጊኩ., ኔጊ201:

postcolonial countries, its Middle Eastern policy in a true sense aimed to ensure China's own strategic interests free of ideological issues, without opposing the West directly. In this regard, Beijing's key concern appeared to be oil: China became a net oil importer in 1993.²⁷

While developing its formal policy towards the Middle East region, China always mentions its 'Five Principles of Peaceful Coexistence'. Beijing continuously let the region's states choose their own political and social systems, supported their sovereignty, territorial integrity, independence, meanwhile it opposed other countries' external interventions in those states' internal affairs. By adopting such a strategy, Beijing gradually developed good relations with the region's governments and made all possible efforts to secure the country's vital energy needs.²⁸

This position China staked out in Bandung during Asian African Conference of nonaligned states in 1955. Later, in 1974, China's leader Deng Xiaoping addressed his speech on the United Nations General Assembly by the following idea: "China is a part of Third world, in contrast with a US-led capitalist bloc of First world and a Soviet-led socialist bloc of Second world". Anyway, these principles of peaceful coexistence were obviously correct in China's foreign policy only during four decades after its independence, as that time Beijing had little and limited interest, involvement and activities in developing world. The 'Five Principles of Peaceful Coexistence' became challenging for Beijing to uphold since the 1990s, when China increased its global moves in international arena.²⁹

China's own Muslim population, basically based in its Xinjiang province, is considered to be another concern. Nevertheless, Chinese global moves are directed not to involve religious issues in its Middle Eastern policy. On the face of it, Beijing never makes a definitive choice between Shiite and

²⁷ Yuan L., China's Strategic Interests in the Gulf and Trilateral Relations among China, the U.S. and Arab Countries, in *China's Growing Role in the Middle East: Implications for the Region and Beyond*, Washington, DC: Nixon Center, 2010, p. 24.

²⁸ Weitz R., How China Sees the Middle East, *The Diplomat*, September 6, 2011 <https://thediplomat.com/2011/09/how-china-sees-middle-east/>

²⁹ See Shichor Y., Fundamentally Unacceptable yet Occasionally Unavoidable: China's Options on External Interference in the Middle East, *China Report*, Vol. 49, No. 1, 2013.

Sunni states. The best illustrative example for this case is China's flourishing relations with both Iran and Saudi Arabia.³⁰

In the Middle East region any shift is quite possible. In accordance with China's modernization, Beijing determined to coexist with a more revolutionary line in the Middle East, meanwhile its foreign policy and strategy was directed to prevent the Soviet Union's hegemony. On the other hand, taking advantage of the Arabs' reaction against the Western dominating power and influence, Chinese leadership decided to deepen their cooperation with the Middle Eastern powers, thus combining two phenomena together: developing technological innovations at home, and denunciation of 'cultural imperialism' created by the West. But in fact, such kind of rapid shift seemed impossible at that time. Such a dramatic change in Beijing's party line and in diplomacy could take place only in future. It could occur only after China gains special place and increasing influence in the region. China's quest for economic reforms, technological development and stable policy in the Middle East, however, soon made its leaders realize about the need of normalization of Sino-American relations.³¹

Chinese leaders did not hurry in their steps avoiding to take such a serious responsibility. They decided to develop relations with the Middle Eastern states a little bit slower, but in regular and constant way. Thus, by the time of the Islamic Revolution of Iran in 1979, China's foreign policy adopted a neutral approach. Beijing's objective was based on the principles of not involving in the internal affairs of other states. China avoided costly responsibilities, at the same time it had no intention for becoming hegemon in the region. Chinese government remained neutral during the Iraq-Iran War (1980-1988) as well, although its enthusiasm for trade drove the country to sell weapons to both of the sides.

Indeed, in China-Middle East relations energy cooperation has its unique place, however, it is not the whole story. Being a significant supplier of resources to global economy, Middle East is going to remain of key importance to Beijing's sustainable economic drive, as more than half of China's oil comes from this region. Accordingly, more stable Middle East is

³⁰ Chubin S., *Iran and China: Political Partners or Strategic Allies*, in *China's Growing Role in the Middle East: Implications for the Region and Beyond*, Washington, DC: Nixon Center, 2010, p. 68.

³¹ Neill, ԵԶՎ. աԶԽ., էԶ208:

vital for China, because its energy supplies do not depend on one single country, but on the region as a whole. Also the Middle East is an arena where China demonstrates its power as a responsible global player. In peaceful solutions of Middle Eastern regional disputes China's diplomacy works well being an important part of Beijing's national image-building strategy. Beijing's such kind of policy could be viewed as a contrast with its support for national liberation movements in the region during the 1950s-1970s.³²

When speaking about China's interests and objectives in the Middle East, perhaps the most fundamental options are the followings: Energy security, geostrategic ambitions, great power status, and external linkages to internal stability. Indeed, Beijing's continued drive for accessing the region's energy resources is of prior significance.³³ Since the late 1970s China's stable economic growth along with the country's appetite for energy and other natural resources is a remarkable reality, and Beijing's number one source of imported oil is the Middle East starting from 1995.³⁴

In the new era China is launching a long-term approach to the Middle East, expecting to ensure its global access to resources and trade, as well as develop cooperation with the United States on Chinese terms. Such a strategy can minimize the US influence in the region, meanwhile political and economic advantageous position can turn into Beijing's own favor. In some degree China's Middle Eastern policy is based on the principle not to repeat what China sees as US mistakes.³⁵ Internal crises are rocking many states, and the Middle Eastern states are not exclusion as well. Here comes a debate about China's future approach towards the Middle Eastern issues. There were developing some possible versions about this phenomenon. For instance, would China join the West trying to prevent revolutionary upheavals? In this case, China could automatically lose its respect and prestige among the Third World countries. On the other hand, if Beijing continued its neutral policy

³² Liangxiang J., China's Middle East Policy is not determined by oil, China.org.cn, April 19, 2010. http://www.china.org.cn/opinion/2010-04/19/content_19853288.htm

³³ Shulong C., Wei J., Zhongguowaijiaozhanlue he zhengce [China's Foreign Affairs Strategy and Policy], Beijing: ShishiChubanshe, 2008, pp. 263-264.

³⁴ Alterman J., Garver J., The Vital Triangle: China, the United States, and the Middle East, Washington, DC, Center for Strategic and International Studies, 2008, p. 7.

³⁵ Dorsey J., China and the Middle East: Embarking on a Strategic Approach, China Policy Institute: Analysis, February 23, 2015. <https://cpianalysis.org/2015/02/23/china-and-the-middle-east-embarking-on-a-strategic-approach/>

without any concrete step, it would be ignored. Therefore, China's leaders aimed to continue and strengthen the country's further beneficial cooperative ties with the Middle Eastern states, adopting a bold campaign to turn the balance of power in the region towards Beijing's advantage. China could oppose the Soviet-inspired revolutions by opening way to Chinese-directed ones. It employed its diplomatic arsenal, meanwhile manipulated among religion and revolutionary upheavals. Such a risky choice obviously helped China to spread its influence in the Middle East, meanwhile it assisted Chinese for more to gain, and less to lose. Accordingly, Chinese statesmen believe, that it is not the most powerful who win, but the need to act clever enough to use existing opportunities can be regarded as the most significant option.³⁶

ԱՐԱՄ ԱԲԱՋՅԱՆ (ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՄԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է Սառը Պատերազմի ժամանակ Մերձավոր Արևելքում ՉԺՀ-ի հիմնարար հետաքրքրությունների, ինչպես նաև դիվանագիտական և ռազմավարական քայլերի ուսումնասիրմանը: Հիմնական փաստերի և տեղեկությունների հետազոտման արդյունքում չին-արարական հարաբերությունների հաստատման և զարգացման դինամիկան կստանա ամբողջական տեսք, որն էլ իր հերթին օգտակար կլինի հետագա համագործակցության վերաբերյալ ընդհանրական պատկեր ստանալուն:

Մերձավոր Արևելք տարածաշրջանում ներքին ճգնաժամերը ներկայումս նույնպես հաճախ հանդիպող երևույթներ են հանդիսանում: Այս առումով շատ կարևոր է դառնում Չինաստանի մերձավորարևելյան քաղաքականության և մտեցումների ուսումնասիրման հետագա տեսլականը: Իհարկե այս հարցում գոյություն ունեն մասնագետների տարբեր վարկածներ, սակայն ըստ մեզ, չին ղեկավարությունը կշա-

³⁶ Schuster, նշվ. աշխ., էջ201:

րունակի իր տարածաշրջանային քաղաքականությունն ավելի սկզբուն-
քային և մեծ քայլերով: Դրա արդյունքում ապագայում մենք կտեսնենք
չին-արաբական փոխշահավետ համագործակցության նոր ալիք:
Չինաստանն իր նոր քաղաքական հայեցակարգերով տարածաշրջանի
ուժերի հավասարակշռության առանցքը կփորձի տեղաշարժել դեպի
Պեկին:

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԿԱՏԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍ. ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

2017 թ. հունիսի 5-ին Սաուդյան Արաբիայի Թագավորությունը (ՍԱԹ) և նրա դաշնակիցները Կատարը բոյկոտի և շրջափակման ենթարկեցին: Նախաձեռնությունը ՍԱԹ-ից էր, որին մտահոգում էր վերջին տարիներին Կատարի հարաճուն հավակնությունները տարածաշրջանային ազդեցիկ պետություն դառնալու համար: Նշենք, որ դեռևս 2014 թ. մարտին Սաուդյան Արաբիան, Բահրեյնը և Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ) Դոհայից հետ կանչեցին իրենց երկրների դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին, քանի որ Կատարի իշխանությունները, ըստ էության, չէին կատարել առաջ քաշված պահանջները¹: Կատարը մեղադրվում էր «Մուսուլման եղբայրներին», այդ թվում՝ Եգիպտոսում Մուհամմադ Մուրսիին (2012-2013) աջակցելու և, առհասարակ, Թուրքիայի և Իրանի հետ վտանգավոր համագործակցություն հաստատելու մեջ: 2013 թ. նոյեմբերի 23-ին Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդում (ԾԱԵՀԽ) ընդունված ամփոփիչ հայտարարության մեջ կոչ էր արվում չաստարել այն ուժերին, որոնք պայթյունավտանգ գործունեություն են ծավալում արաբական աշխարհում՝ նկատի ունենալով «Մուսուլման եղբայրներ» շարժմանը Կատարի փաստացի և տևական աջակցության փաստը: Համարվում էր, որ եթե Կատարը շարունակեր աջակցել «Մուսուլման եղբայրներին», ապա ԱՄՆ-ը ևս կփակեր իր օդային ճանապարհը Qatar Airways-ի համար, իսկ ԾԱԵՀԽ-ում և Արաբական պետությունների լիգայում հարց կբարձրացվեր Կատարի անդամակցությունը կասեցնելու մասին²:

Չնայած եղբայրության և բարեկամության բազմաթիվ հավաստիացումներին, մասնավորապես Կատարի ու Սաուդյան Արաբիայի իշխող ընտանքիների միջև առկա էին բազմաթիվ սուր ու կնճռոտ հար-

¹ UAE, Saudi Arabia and Bahrain recall their ambassadors from Qatar, March 5, 2014, <https://gulfnews.com>.

² Александров А. И., Катар и Саудовская Аравия: отношения обостряются, 11 марта, 2014, www.iimes.ru.

ցեր, այդ թվում՝ սահմանային: 1965 թ. երկու պետությունների միջև կնքվեց դեմարկացիոն պայմանագիր, սակայն 1992 թ. հոկտեմբերի սկզբին Սաուդյան Արաբիայի Թագավորությունը գրավեց Կատարի հետ սահմանային պլ-Խուսֆուս բնակավայրը³: 1995 թ., երբ պալատական հեղաշրջման արդյունքում Կատարում իշխանության եկավ Էմիր Թամիմի հայրը՝ Համադ Ալ Թանին, Կատարը մեղադրեց Սաուդյան Արաբիային իր երկրի ներքին գործերին միջատելու մեջ: Կատարական Մուրրա ցեղի մի քանի հարյուր ազդեցիկ ներկայացուցիչներ գրկվեցին քաղաքացիությունից և վտարվեցին երկրից⁴:

Հատկանշական է, որ Կատարը լայնորեն ներգրավված է եղել նաև «արաբական գարնան» գործընթացները հրահրելու և խթանելու մեջ, որի հետևանքով արաբական մի շարք վարչակարգեր հեռացվեցին իշխանությունից, իսկ Մերձավոր Արևելքը հայտնվեց քաղաքական ու տնտեսական վայրիվերումների հորձանուտում: Համաձայն առանձին տեղեկությունների՝ «արաբական գարնան» գործընթացները նախապատրաստվել էին Կատարում գտնվող ամերիկյան գիտա-վերլուծական կենտրոնների կողմից, իսկ հետագայում ներդրվել իշխող ընտանիքի աջակցությամբ⁵:

Դոհան նպատակ ուներ Թուրքիայի օգնությամբ «Մուսուլման եղբայրներին» արաբական երկրներում իշխանության բերել, որի դեպքում շեշտակիորեն կմեծանար Կատարի դերակատարությունը արաբական երկրների քաղաքական և տնտեսական գործընթացներում⁶: Պատահական չէ, որ «արաբական գարնան» շրջանում 2012 թ.-ից Կատարում սկսեց գործել և հովանավորվել «Մուսուլման եղբայրների» հետ ուղղակի առնչություն ունեցող պաղեստինյան «Համասի» մասնաճյուղը, որը մինչ այդ գտնվում էր Դամասկոսում: Նույն շրջանում Եգիպտոսում իշխանության եկավ «Մուսուլման եղբայրներ» շարժումը ի դեմս Մուհամմադ Մուրսիի, որը կարճ ժամանակ անց՝ 2013 թ. հուլիսի 3-ին, զինվորականների կողմից հեռացվեց իշխանությունից ու բանտարկվեց:

³Qatar Says Saudis Seized Its Border Post, October 2, 1992, <http://www.nytimes.com>.

⁴ The long-running family rivalries behind the Qatar crisis, <https://www.theguardian.com>.

⁵ Александров А. И., նշվ.աշխ., www.iimes.ru.

⁶Նույն տեղում:

Եվ ահա, 2017 թ. հունիսին Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն, Բահրեյնը և Եգիպտոսը խզեցին դիվանագիտական հարաբերությունները Կատարի հետ, օդային, ցամաքային և ջրային շրջափակման ենթարկեցին այդ փոքր, բայց քաղաքական ու տնտեսական առումով կարևորություն ձեռք բերած երկիրը, որը մեղադրվում էր ծայրահեղականությանն ու ահաբեկչությանը աջակցելու մեջ:

Հատկանշական է, որ Կատարի և նրա հարևանների միջև հակամարտության նոր ալիքը սկսվեց 2017 թ. մայիսի 21-ին Էր-Ռիյադում ԾԱԵՀԽ և ԱՄՆ-ի համատեղ գազաթաժողովից և ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի՝ տարածաշրջան կատարած այցելությունից մոտ երկու շաբաթ անց⁷: Գազաթաժողովում ընդունված ամփոփիչ հռչակագրում «դատապարտվեց Իրանի ապակառուցողական դերը Մերձավոր Արևելքում» և «միջամտությունը տարածաշրջանի գործերին»⁸: ԱՄՆ-ի նախագահի այցը Սաուդյան Արաբիա ավելի ընդգծեց հակաիրանական ճակատն ակտիվացնելու կողմերի և մասնավորապես Վաշինգթոնի ցանկությունը, որի նպատակներից մեկն էլ Սաուդյան Արաբիայի և Իսրայելի մերձեցումն էր: Միևնույն ժամանակ, դժվար է պատկերացնել, որ Էր-Ռիյադը ԱՄՆ-ին չէր զգուշացրել Կատարի հետ հարաբերությունները խզելու քայլի մասին և ձեռք չէր բերել նրա համաձայնությունը, եթե նկատի ունենանք նաև Դ. Թրամփի անթաքույց աջակցությունը Մուհամմադ բին Սալմանին:

Կատարի և քառյակի երկրների առճակատման համար հիմք դարձավ Կատարի պետական լրատվական գործակալության կայքում հայտնված էմիր Թամիմ բին Համադ Ալ Թանիի՝ տարածաշրջանային համագործակցության մասին հայտարարությունը, որտեղ մասնավորապես նշված էր. «Խոհեմ չի լարված հարաբերություններ ունենալ Իրանի հետ, որը հզոր պետություն է և տարածաշրջանում կայունության երաշխավոր»: Հետագայում, Կատարի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը նշեց, որ կատարական գործակալության կայքէջը ջարդվել է, իսկ Կատարի էմիրի խոսքը տեղադրվել է հաքերների կողմից⁹:

⁷ US, GCC Summit communique condemns Iran's regional interferences, <http://english.alarabiya.net>.

⁸ Նուն տեղում:

⁹ Шмелёва Т., Истоки конфликта между Саудовской Аравией и Катаром, 5 июня, 2018, www.iimes.ru.

Մաուրյան Արաբիան և նրա դաշնակիցները Դոհայի հետ հարաբերությունները վերականգնելու համար որպես նախապայման առաջ քաշեցին տասներեք պահանջ¹⁰։ Դրանց մի մասը վերաբերում էր Իրանին։ Նրանք պահանջում էին, որ Կատարը նվազեցնի Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունների մակարդակը, Իրանում փակի Կատարի դիվանագիտական ներկայացուցչությունը, Իրանի հեղափոխության պահապանների կորպուսի աշխատակիցներին և կորպուսի հետ կապ ունեցողներին վտարի Կատարից, Իրանի հետ տնտեսական հարաբերությունները սահմանափակի միջազգային և ամերիկյան պատժամիջոցներին համապատասխան, այնպես, որ դրանք բացասական ազդեցություն չունենան Օոցի երկրների համագործակցության խորհրդի անդամ պետությունների անվտանգային իրավիճակի վրա, ինչպես նաև դադարեցնի ամեն տեսակի ռազմական և հետախուզական համագործակցությունն Իրանի հետ¹¹։

Պահանջների մյուս մասն առնչվում էր Թուրքիային։ Քառյակի պետությունները պահանջեցին Կատարից անմիջապես փակել երկրի տարածքում գտնվող թուրքական ռազմաբազան, ընդհանրապես դադարեցնել Կատարի տարածքում Թուրքիայի հետ ռազմական համագործակցությունը¹²։

Եվ վերջապես, կատարական թղթածրարի մեկ այլ՝ կարևոր մաս առնչվում էր այդ երկրի կողմից միջազգային ահաբեկչությանը և ծայրահեղականությանը աջակցելուն¹³։ Կատարից պահանջվում էր խզել կապերը ահաբեկչական, ադանդավորական և գաղափարականացված կազմակերպությունների, մասնավորապես՝ «Մուսուլման եղբայրների», «Իսլամական պետության», «ալ-Կաիդայի», «Ջաբհաթ ֆաթհ ալ-Շամի» («Ջաբհաթ ալ-Նուսրա») և «Հիզբալլահի» հետ։ Քառյակի երկրները Կատարից պահանջում էին դադարեցնել ֆինանսավորել ահաբեկիչների, այդ թվում՝ ահաբեկչական խմբավորումների, որոնք ներառված են քառյակի, ԱՄՆ-ի և միջազգային ցանկերում, արտահանվել բոլոր նրանց, որոնք ներառված են ահաբեկչությանը վերաբերող ցանկերում, բանտարկել, բռնագրավել նրանց շարժական և անշարժ գույքը, չթաքցնել ու հովանավորել նման մարդկանց նաև ապագայում։ Նշվում

¹⁰ What are the 13 demands given to Qatar?, June 23, 2017, <https://gulfnews.com>.

¹¹ Նույն տեղում։

¹² Նույն տեղում։

¹³ Նույն տեղում։

էր, որ Կատարը պարտավոր էր հարցման դեպքում տեղեկություն տրամադրել նման մարդկանց տեղաշարժի, բնակության վայրի, ֆինանսական իրավիճակի մասին, արտահանձնել կամ հայրենիք վերադարձնել բոլոր այն անձանց, որոնք Կատարի կողմից ազատ էին արձակվել քառյակի երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո¹⁴:

Առաջ քաշված պահանջներից մի քանիսն էլ վերաբերում էին կատարական «ալ-Ջազիրայի» և նրա քույր կառույցների փակմանը: Համարվում էր, որ «ալ-Ջազիրան» «արաբական գարնան» գործընթացների ժամանակ ծառայել է որպես տեղեկատվական և քարոզչական հարթակ: Առհասարակ, Սաուդյան Արաբիան և նրա դաշնակիցները Կատարից պահանջում էին դադարեցնել միջամտությունը օտար պետությունների ներքին գործերին, կատարական հպատակությունից զրկել քառյակի անդամ պետությունների վտարանդի քաղաքացիներին, տեղեկատվություն և համապատասխան ապացույցներ տրամադրել Կատարի հետ կապեր ունեցող քառյակի անդամ պետությունների քաղաքացիների մասին: Բացի այդ, Կատարը պարտավորվելու էր գործընկերային քաղաքականություն վարել ՕԱԵՀԽ-ի անդամ երկրների և արաբական երկրների հետ բոլոր մակարդակներում (ոազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգային)¹⁵:

Քառյակի առաջ քաշած փաստարկները, մասնավորապես միջազգային ահաբեկչությանն աջակցելու հետ կապված, սուր քննադատության ենթարկվեցին Կատարի իշխանությունների կողմից՝ որպես չհիմնավորված և չապացուցված¹⁶: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ նույնիսկ մեկ տարի անց Կատարի կառավարությունն այդպես էլ չընդունեց և ընդառաջ չգնաց քառյակի առաջ քաշած պայմաններից և ոչ մեկին: Հարևան պետությունների կողմից շրջափակման մեջ հայտնված Կատարի իշխանությունները, որքան էլ անսպասելի էր, քաղաքական ճգնաժամի ողջ ընթացքում բավական ինքնավստահ քաղաքականություն վարեցին՝ ի ցույց դնելով, որ Կատարի դեմ իրականացված քայլերը շոշափելի հետևանքներ չեն կարող ունենալ և չեն կարող վնաս հասցնել Կատարի ինքնիշխանությանը և ազդեցության ընդլայնմանը:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ What is the Qatari crisis?, <https://www.dw.com>.

Ճգնաժամի ընթացքում Կատարն ունեցավ 43 միլիարդ դոլարի կորուստ, բայց երկրի տնտեսությունը զարմանալիորեն ոչ թե տնտեսական անկում, այլ աճ գրանցեց: Վերջին տարիների 2.3-2.5 տոկոսի փոխարեն 2018 թ. համար կանխատեսվում է տնտեսական աճի 2.8 տոկոս ցուցանիշ¹⁷: 2018 թ. դրությամբ Կատարի գազի տարեկան արտահանման ծավալը կազմում է 77 միլիոն տոննա: 2022-2024 թթ. Կատարը ծրագրում է այդ թիվը հասցնել 100 միլիոն տոննայի¹⁸:

Փաստ է, որ ճգնաժամը Կատարին հաջողվեց հաղթահարել առաջին հերթին Իրանի և Թուրքիայի աջակցությամբ: Կարելի է ասել, որ բավական կայուն են Կատարի հարաբերությունները Քուվեյթի և Օմանի հետ: Մաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի հետ ապրանքաշրջանառության ընդհատումից հետո կատարցիները փոխհատուցեցին կորուստները Իրանի և Թուրքիայի հետ ապրանքաշրջանառության ծավալների մեծացմամբ: Ինչպես հայտնի է, Իրանը շրջափակումից ի վեր իր նավահանգիստներն ու օդանավակայանները բացեց ամենատարբեր տեսակի ապրանքներ Կատար հասցնելու համար, որի արդյունքում Իրանի ապրանքաշրջանառությունը դեպի Կատար ավելացավ 117 տոկոսով¹⁹, իսկ առևտուրը Թուրքիայի և Կատարի միջև ավելացավ 30 տոկոսով՝ կազմելով տարեկան 1.5 միլիարդ դոլար²⁰:

Փաստացիորեն, մի շարք գործոններ օգնեցին Կատարին հաղթահարել արաբական երկրների շրջափակումը: Առաջին, 320 միլիարդ պահուստային ֆոնդի առկայությունը: Երկրորդ, Կատարի էմիրության՝ որոշակիորեն բազմավեկտոր արտաքին քաղաքականությունը: Կատարը ԱՄՆ-ի ռազմավարական գործընկերն է և դաշնակիցը: Ալ-Ուդեյդում է գտնվում է Մերձավոր Արևելքում ամերիկյան ամենամեծ ավիաբազան և ԱՄՆ-ի կենտրոնական հրամանատարության (Centcom) նստավայր-գրասենյակը²¹:

Հենց այս ռազմաբազայի փաստը օգնեց էմիրությանը դիմակայել ճգնաժամը, քանի որ ՍԱԹ-ը և նրա դաշնակիցները չէին կարող Կա-

¹⁷ Qatar's GDP forecasts revised up for 2018, <http://www.gulf-times.com>.

¹⁸ Qatar to boost gas production by 30% to 100 million tonnes a year, <https://www.thepeninsulaqatar.com>.

¹⁹ S. Arefmanesh, Iran Exports to Qatar Up 117%, <https://financialtribune.com>.

²⁰ Qatar-Turkey trade grows by 30 per cent since Gulf crisis, <https://www.middleeastmonitor.com>.

²¹ For Qataris, US air base is best defense against Trumps attacks, <https://www.washingtonpost.com>.

տարի դեմ պատերազմ վարել այդ գործոնը շրջանցելով: 2018 թ. փետրվարին Կատարի պաշտպանության նախարար Իսալեդ բին Մուհամմադ Ալ-Ատիյան հայտարարեց, որ Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն ծրագրել էին ռազմական միջամտություն իրականացնել Կատարում՝ իշխանափոխության նպատակով, որին խանգարեց Կատարում գտնվող թուրքական ռազմաբազան: Այն, ի դեպ, սկսել էր կառուցվել դեռևս 2014 թ. սաուդա-կատարական առաջին լուրջ առճակատումից հետո: Նշենք նաև, որ Կատարը վերջին շրջանում մեծացրել էր նաև ռազմական բյուջեն՝ մրցակցելով Սաուդյան Արաբիայի հետ²²:

Հատկանշական է, որ հունիսի 6-ին Le Monde-ը մի տեղեկություն հրապարակեց, ըստ որի՝ թագաժառանգ արքայազն Մուհամմադ բին Սալմանը նամակ էր գրել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մաքրոնին՝ տեղեկացնելով, որ եթե Կատարը գնի ռուսական C-400 զենիթահրթիռային համակարգեր, ապա սաուդական հակաօդային պաշտպանության ուժերը կոչնչացնեն դրանց դիրքերը: Ըստ ամենայնի, Կատարը ոչ թե պատրաստվել է դրանք գնել, այլ սաղորել է ՄԱԹ-ին: Իրականում Կատարը՝ այդ գաճաճ, բայց մեծ հավակնություններ ունեցող պետությունը, Մերձավոր Արևելքում լուրջ զինավազքի մեջ է: 2017 թ. Կատարը 12 միլիարդ դոլլարի պայմանագիր ստորագրեց ԱՄՆ-ի հետ²³: Ոչ պակաս կարևոր է նաև Ֆրանսիայի հետ ռազմական համաձայնագիրը²⁴:

Հատկանշական է, որ, լինելով ԱՄՆ-ի դաշնակիցը, Կատարը երբևէ չի միացել ԱՄՆ-ի՝ հակաիրանական քարոզարշավին, այլ, ընդհակառակը, ընդլայնել է համագործակցությունը Թեհրանի հետ: Կատարը Իրանի հետ համատեղ տնօրինում է Մերձավոր Արևելքի ամենամեծ գազային հանքավայրը, որը գտնվում է Ծոցի ջրերում և հայտնի է Հյուսիսային գմբեթ, իսկ իրանական տարբերակով՝ Հարավային Պարս անունով: 2000 թ.-ին Կատարը, ընդառաջ գնալով Թեհրանի և ՄԱԹ-ի ճնշմանը, փակեց 1996 թ.-ից Կատարում գործող Իսրայելի առևտրային կենտրոնը:

²² A huge military buildup is underway in Qatar. But who will man the systems?, December 15, 2017, <https://www.defensenews.com>.

²³ US and Qatar seal \$12bn deal for F-15 fighter jets, www.aljazeera.com.

²⁴ Qatar flexes financial muscle with 12 billion euros of French deals, <https://www.reuters.com>.

Կատարը հաջողությամբ կարողացավ հակազդել քառյակի ճնշումներին նաև քարոզչական պատերազմը գրագետ վարելու շնորհիվ²⁵: Որոշ տվյալների համաձայն՝ ԱՄՆ-ում և Արևմտյան Եվրոպայում Կատարը փիար (PR) ակցիաների վրա ծախսել է 1.5 միլիարդ ամերիկյան դոլար, որի նպատակը ահաբեկչության հետ Կատարի կապերը հերքելն էր: Նշենք, որ Կատարի և քառյակի հարաբերությունների կարգավորման խնդիրներով ԱՄՆ-ում զբաղվել է նախկին պետքարտուղար Ռեքս Թիլերսոնը, որը մինչ այդ պաշտոնը լքելը՝ 2018 թ. մարտը, այդ առաքելության մեջ այդպես էլ չհաջողեց²⁶: ԱՄՆ-ի միջնորդությունը ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ, կարելի է ասել, սպասել է իրեն: Չհաջողեց նաև Քուվեյթի նախաձեռնությունը²⁷: Այդ մասին եղավ Քուվեյթի պաշտոնական հայտարարությունը²⁸:

Այսպիսով, Կատարը կարողացավ դիմակայել Սաուդյան Արաբիայի և դաշնակիցների հակազդեցությանը իր բազմաթիվ ռեսուրսների շնորհիվ: Կատարի ճգնաժամը նպաստեց Մերձավոր Արևելքում թե՛ Թուրքիայի և թե՛ Իրանի դիրքերի ամրապնդմանը, որի դեմ այդքան հետևողականորեն պայքարում էր տարածաշրջանում գերակայության ձգտող Սաուդյան Արաբիան: Դեռևս 2015 թ. Սաուդյան Արաբիան և նրա դաշնակիցները, այդ թվում՝ Կատարը, ներքաշվեցին եմենական ճգնաժամի մեջ, որպեսզի հակազդեն Իրանի առաջխաղացմանը, սակայն՝ անարդյունավետ: Վերջին տարիներին Սաուդյան Արաբիան և նրա դաշնակիցները ձախողվեցին Սիրիայում, Իրաքում և Լիբանանում Իրանի դիրքերին շոշափելի վնաս հասցնելու հարցում:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա պետք է ասել, որ եթե Իրանը ՄԱԹ-ի համար թշնամի է, ապա Թուրքիան տարածաշրջանում նրա հիմնական մրցակիցն է: Նշենք, որ 2017 թ. նոյեմբերի վերջին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան երկու մրցակցային գործընթացներ: Թեհրանում ստորագրվեց առևտրային գործարք Իրանի, Թուրքիայի և

²⁵ Кузнецов А., Катарский кризис: год спустя, 15 июня, 2018, www.iimes.ru.

²⁶ Top U.S. diplomat ends talks in Gulf; no sign Qatar crisis resolved, <https://www.reuters.com>.

²⁷ Kristin Smith Diwan, Qatar's Domestic Agenda and the Gulf Crisis, February 25, 2018, <https://www.lawfareblog.com>.

²⁸ Kuwait: Not resolving GCC crisis is destructive to region, <https://www.aljazeera.com>.

Կատարի միջև²⁹, իսկ դեռևս 2015 թ. դեկտեմբերին ՄԱԹ-ի նախաձեռնությամբ ստեղծված Իսլամական ռազմական հակահարկաչափական դաշինքի (The Islamic Military Counter Terrorism Coalition) պաշտպանության նախարարները, որի անդամակցում են մոտ քառասուն պետություններ, Էր-Ռիյադում մայիսի 26-ին գումարեցին առաջին գագաթաժողովը³⁰:

Այսպիսով, եթե նախկինում Կատարի և Իրանի որոշակի մերձեցումը մտահոգում էր ՄԱԹ-ին, ապա Կատարի շրջափակումից հետո երկկողմ հարաբերությունները նոր փուլ մտան: Կատարում բացվեց մի նոր ու հսկա նավահանգիստ, որը կոչված է դառնալու Իրանի ծովային դարպասը: Այս հանգամանքը, բնականաբար, կնպաստի երկկողմ ապրանքաշրջանառության մեծացմանը 2022 թ. Կատարում անցկացվելիք ֆուտբոլի աշխարհի առաջնությանն ընդառաջ: Բացի այդ, Թեհրանը տրամադրել է իր օդային տարածքը կատարական օդանավերին և մասնավորապես Qatar Airways-ին՝ չվերթներ իրականացնելու համար³¹:

Կատարի, Թուրքիայի և Իրանի դաշինքը ստեղծում է ուժերի նոր հաշվեկշիռ Մերձավոր Արևելքում՝ բացահայտ կերպով ձեռնոց նետելով տարածաշրջանում Սաուդյան Արաբիայի գերակա դիրքերին: Կատարին առաջարկված վերջնագիրը ոչ միայն լուրջ մարտահրավեր էր այդ երկրի ինքնիշխանությանը, այլև ուղղված էր տարածաշրջանում Իրանի և Թուրքիայի ազդեցության դեմ: Կատարի և Սաուդյան Արաբիայի ու նրանց դաշնակիցների միջև սկիզբ առած առճակատումը նաև բանկային՝ ֆինանսավարկային պատերազմ էր, որն ի ցույց է դնում մրցակցությունը առհասարակ տարածաշրջանում³²: Ճգնաժամի պատճառները անմիջական կապ ունեն նաև Կատարում, ՄԱԹ-ում և ԱՄԷ-ում իշխանության եկած նոր՝ երիտասարդ և հավակնոտ առաջնորդների հանգամանքի հետ, որոնք դարձել են իրենց երկրների արտաքին քաղաքականության նոր ուղենիշներ գծող ճարտարապետները: Այդ

²⁹ Turkey, Iran and Qatar sign new trade-transport agreement, <https://www.middleeastmonitor.com>.

³⁰ Closing Declaration of the Inaugural Meeting of the IMCTC Ministers of Defense Council, <https://imctc.org>.

³¹ Qatari flights to use Iran's airspace, <https://en.mehrnews.com>.

³² Ласкарис Ф., Катар - Саудовская Аравия: война в финансово-кредитной сфере, 13 октября, 2017, <http://www.iimes.ru/?p=38353>.

նոր քաղաքականության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱՄՆ-ը և դաշնակիցները կարողանում են լավագույնս օգտագործել Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող ներքին հակասությունները՝ տարածաշրջանը հերթական լարվածության և երկփեղկվածության մեջ ներքաշելու համար:

ARAKS PASHAYAN

(IOS)

**QATARI CRISIS. THE CAUSES AND THE
CONSEQUENCES**

The article deals with Qatari crisis, which began when several countries abruptly cut off diplomatic relations with Qatar in June 5, 2017. These countries, including Saudi Arabia, United Arab Emirates, Bahrain and Egypt, imposed land, sea and air blockade on Qatar.

The Saudi-led coalition referred to Qatar's alleged support for terrorism and extremism. They have criticized Qatar's dangerous relations with Iran and Turkey. Qatar did not agree to any of the Saudi-led coalition's 13 demands. The demands included breaking ties with Iran, stopping military coordination with Turkey, stopping supporting "Muslim Brotherhood", "The Islamic State", "al-Qaeda", "Hizballah", closing Al-Jazeera, etc. Qatar managed to resist the crisis with the help of Turkey and Iran. The position of Tehran and Ankara in the region due to this conflict has become the strongest. The Qatari crisis is deepening the tension in the Middle East and particularly in the Gulf region. A few young leaders of Saudi Arabia, UAE and Qatar are shaping new foreign policy.

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ՀՊՄՀ)

1882-1895 ԹԹ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ

Թուրքական բանակի բարեփոխման անհրաժեշտությունը ի հայտ եկավ հատկապես 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո, որով բացահայտվեց թուրքական բանակի ողջ հետամնացությունը և վերջինիս սպայական կազմի կատարյալ անպատրաստականությունը, ժամանակի պահանջներին համապատասխան մարտեր վարելու անկարողությունը¹: Աբդուլ Համիդը, թեկուզ խուսափելով զանգվածային նորարարություններից, այնուամենայնիվ, գիտակցում էր, որ իրականացնելով բանակի արդիականացում՝ կկարողանա հետագայում պայքարել ոչ միայն երկրի ներսում ծագած ազգային ազատագրական շարժումների դեմ, այլև արտաքին պատերազմի դեպքում ջախջախիչ պարտություն չի կրի, ինչը կարող էր բախտորոշ լինել ինչպես իր գահի, այնպես էլ Օսմանյան կայսրության գոյատևման համար:

Թուրքական բանակի արդիականացման նպատակով գերմանական ռազմական առաքելության Թուրքիա մեկնելու բանակցությունները Բեռլինի և Ստամբուլի միջև սկսվեցին 1880 թ. մայիսին: Թուրքիայում գերմանական արտաքին գործերի լիազոր ներկայացուցիչ Պաուլ ֆոն Հացֆելդը (Paul Gustav Graf von Hatzfeldt) հանձնեց Օսոտո ֆոն Բիսմարկին Աբդուլ Համիդի պաշտոնական դիմումը՝ առաջարկելով թուրքական բանակի վերակազմակերպման համար գործուղել գերմանական սպաների²:

¹ Бобрников Г., Записки, СПб 1913, с. 165-169.

² Holborn H., Deutschland und die Türkei 1878-1890, S. 10. Հուլիսին (Holborn H., Deutschland und die Türkei 1878-1890, Berlin 1926) բանակցությունների սկսման ամսաթիվը բաց է թողել և նշում է, որ այն սկսվել է 1880-ականների կեսերին: Ուստի մենք հիմնվում ենք ֆրանսիական փաստաթղթերում առկա տեղեկությունների վրա և փաստաթղթում նշվում է մայիս ամիսը, որը համընկնում է նաև Ռադովիցի հայտնած տեղեկության հետ: Վերջինս հայտնում է, որ Թուրքիա գերմանացի սպաներ ուղարկելու համար բանակցությունները սուլթանի հետ սկսվեցին մայիսի կեսերին: St´u Holborn H., Aufzeichnungen und

Օ. Բիսմարկին անհրաժեշտ էր Թուրքիա ուղարկվող ռազմական առաքելության նպատակահարմարության հարցի հետ կապված համոզել Վիլհելմ 1-ին կայսրին: Կայսրը, որը միշտ ձգտում էր սերտ հարաբերություններ պահել Հռենցոլլերների և Ռոմանովների միջև, դեմ էր կանցլերի հակառուսական գործունեությանը: Հատուկ զեկույցով Բիսմարկը ներկայացնում էր, թե ինչ նշանակություն կունենա Գերմանիայի համար Թուրքիա ուղարկվող գերմանական սպայական առաքելությունը: Կանցլերը ընդգծում էր, որ ամրապնդվելով Թուրքիայում, Գերմանիան նոր նախադրյալներ կստանա իր ազդեցությունը ուժեղացնելու տարածաշրջանում: Վերջինս շեշտում էր, որ Բոսֆորում գտնվող գերմանական սպաներն արժեքավոր իրազեկողներ կլինեն այնպիսի կարևոր դիվանագիտական իրադարձությունների կենտրոնից, ինչպիսին Ստամբուլն էր³:

1881թ. դեկտեմբերին Աբդուլ Համիդը հատուկ պատվիրակություն ուղարկեց Բեռլին, որը գլխավորում էին սուլթանի մտերիմ շրջապատի անձինք՝ Ալի Նիզամ փաշան և Ռաշիդ բեյը: Այս պատվիրակության նպատակն էր հասնել նրան, որ գերմանացի սպաները հատուկ պատվիրակության միջոցով ժամանեին Ստամբուլ⁴:

Աբդուլ Համիդին անհրաժեշտ էր վերականգնել բանակի մարտունակությունը, որը մարտերում կորցրել էր ողջ ռազմամթերքը և բարոյալքված էր կրած պարտություններից: Բացի այդ, բանակի արդիականացման և վերազինման հարցով Թուրքիայում, առանց արտաքին օժադակության պայմանների, կարող էին զբաղվել միայն մի քանի տարի անց, այն էլ այն դեպքում, եթե երկրի արտաքին և ներքին կյանքում բարդություններ չլինեին: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ թուրքական ղեկավարությունը ի վիճակի չէր իրականացնել բանակի վերականգնման և բարեփոխման գործընթաց, ուստի վերջինիս պետք էր արտաքին միջամտություն՝ բանակը վերակազմակերպելու համար: Այն խիստ անհրաժեշտ էր երկրի ներքին կյանքում առկա խռովու-

Erinnerungenausdem Leben des Botschafters Joseph Maria von Radowitz, 2 Bde, Stuttgart, Berlin und Leipzig 1925, S. 221.

³ Holborn H., նշվ. աշխ., էջ 12, 228:

⁴ «Die Grosse Politik der Europäischen Kabinete, 1871-1914». Sammlungen der diplomatischen Akten des Auswärtigen Amtes, Bd. III, Berlin 1922, Doc. № 671, S. 403. Տե՛ս մանրամասն նշված փաստաթղթի տողատակում զետեղված տեղեկատվությունը:

թյունները կանխելու համար, քանի որ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին առկա էին մի շարք ժողովուրդների և ազգերի անհնազանդություններ ու կառավարական ուժերի դեմ զինված ազգային ազատագրական պայքար:

Բանակի վերակազմակերպման ձգձգումները պայմանավորված էին բանակի բարեփոխումների և վերազինման ուղիների փնտրտուքով, ինչպես նաև ռուս-թուրքական վերջին պատերազմում ջախջախվելուց հետո թուրքական ֆինանսների ճեղքվածքով: 1878 թ. պաշտպանության նախարար նշանակված Օսման փաշան դեմ էր բանակի արմատական վերափոխումներին: Այսպիսին էին Թուրքիայում զինված ուժերի վիճակը 1882 թ. գերմանական ռազմական առաքելության Ստամբուլ ժամանելու պահին⁵:

Թուրքական բանակի վերակազմակերպման գործում գերմանացի սպաներն իրենց գործունեության առաջին տարիներին՝ 1882-1884 թթ., հասան նկատելի հաջողությունների: Չնայած այդ ամենի, պրուսական բանակի օրինակով թուրքական բանակի վերափոխմանը կտրուկ դեմ արտահայտվեց պաշտպանության նախարար Օսման փաշան⁶:

Արդյունքում, Կոլերի գլխավորած ռազմական առաքելության գրեթե բոլոր ծրագրերը, ընդհուպ մինչև նրա մահը, հաջողությամբ գործի դրվեցին: Գերմանացիներին այս ընթացքում հաջողվեց հասնել նրան, որ թուրքական բանակում մտցվեց հստակ զորակոչային տարիք և ավելացվեցին որոշ զորատեսակներ, դրանց հետ կապված գումարտակներ ստեղծվեցին: Հետագայում այդ ամենը զարգացվեց և ավելի ընդլայնվեց Կոլմար ֆոն դեր Գոլցի կողմից, որը ստանձնել էր Թուրքիայում գերմանական պատվիրակության ղեկավարի պարտականությունները:

Գերմանական գլխավոր շտաբի մայոր Կոլմար ֆոն դեր Գոլցը 1883 թ. կեսերին որպես Թուրքիայում գերմանական ռազմական առա-

⁵ Von H. A. (Albertall), Die türkische Wehrmacht, und die Armeen der Balkanstaaten: Bulgarien, Griechenland, Rumänien, Serbien und Montenegro, Wien, 1892, S. 10.

⁶ Գոլցի վկայությամբ Օսման փաշան հանուն բարեփոխումների դադարեցման մտադիր էր նաև գահընկեց անել նաև սուլթանին և այդ առումով նույնիսկ վճռական էր տրամադրված: Մակայն վերջինիս հետ մի քանի հանդիպումները մեղմեցին իրավիճակը: St. 'u C. Von der Goltz-Pascha, Denkwürdigkeiten, S.209.

քելության անդամ ժամանեց Ստամբուլ⁷: Թուրքիայում գտնվող ռազմական առաքելության կազմում Գոլցի ընդգրկումը միանգամայն կանխատեսված բնույթ էր կրում, որը թույլ է տալիս ավելորդ անգամ ընդգծել, թե գերմանական կառավարությունը ինչպիսի մեծ նշանակություն էր տալիս Թուրքիային⁸:

Ժամանելով Ստամբուլ՝ Գոլցը անմիջապես ձեռնամուխ եղավ թուրքական բանակի բարեփոխման գործընթացի իրականացմանը որպես գերմանական ռազմական առաքելության փաստացի ղեկավար: Նա կոչումով ցածր էր գնդապետ Կյոլներից, բայց, վերջինիս հաճախակի հիվանդանալու պատճառով, և հատկապես ռազմական գիտելիքների պակասը Գոլցի համեմատությամբ, թույլ չէր տալիս գնդապետին մրցակցության մեջ մտնել Գոլցի հետ: 1885 թ. նոյեմբերին՝ Կյոլների մահվանից հետո, Գոլցը պաշտոնապես ստանձնեց գերմանական ռազմական առաքելության ղեկավարությունը⁹:

Թուրքիայում գտնվելու առաջին երեք տարիների ընթացքում Գոլցը ձեռնամուխ եղավ մայրաքաղաքի ռազմական դպրոցների լիակատար վերափոխման գործընթացին: Կազմվեցին նոր ուսումնական ծրագրեր, գերմանական օրինակով հրատարակվեցին նոր դասագրքեր, վերացվեց մարմնական պատիժները, ներառվեց ֆիզիկական նախաՎարժանքը և կանոնավոր բուժզննությունը: Դպրոցում իրականացվում էր ներքին ծառայություն: Հստակ ուշադրություն էր հատկացվում գործնական պարապմունքներին՝ դաշտային ծառայությունը, կրակադաշտերում կրակային պատրաստությանը, որոնք նախկինում գրեթե

⁷ C. von der Goltz-Pascha, Denkwürdigkeiten, , Berlin, 1929, S.82; Տե՛ս C. Goltz-Pascha, Bilder aus der türkischen Armee, Militer-Wochenblatt, 1897, № 38, S. 1152. Արդեն 1880-ական թթ սկզբներին նա հայտնի էր որպես ռազմական պատմիչ: Նապոլեոնյան, 1870-1871թթ. ֆրանկո-պրուսական պատերազմի վերաբերյալ մի շարք աշխատությունները, հատկապես «Զինված ժողովուրդ» վերջին աշխատությունը հրատարակվել է 1883թ. և թարգմանվել անգլերեն ու ֆրանսերեն, իսկ 1886 թ.՝ ռուսերեն: Տե՛ս Гольц К., Вооруженный народ, СПб, 1886.

⁸ Ֆոն դեր Գոլցի տեսական և գաղափարական-քաղաքական ծրագրերը, ռազմական ոլորտի մտահաղացումները մանրամասն նկարագրված են Лешенский Л. М., Банкротство боевой идеологии германских империалистов, М., 1951, с. 159-170.

⁹ Schmiterlów B., AusdemLeben des Generalfeldmarschalls Freiher von der Goltz-Pascha, Berlin und Leipzig, 1926, S. 109-110. C. von der Goltz-Pascha, նշվ. աշխ., S. 136.

չէին իրականացվում, ինչպես նաև աշխատավարձի սահմանմանը ողջ զինվորական անձնակազմի համար, որը լիովին նորույթ էր թուրքական բանակի համար¹⁰:

Գուլը իր բնագավառում կարողացավ ավելի լուրջ հաջողություններ արձանագրել, քան գերմանական ռազմական առաքելության որևէ այլ գործիչ: 1880-ական թթ. վերջերին թուրքական ռազմական դպրոցներում՝ հատկապես մայրաքաղաքային, ուսուցման իրականացման և ներքին կարգապահության մակարդակի աստիճանը գրեթե հասել էր կատարյալի: Բավականին ավելացավ ռազմական դպրոցներում սովորողների թվաքանակը¹¹:

Թուրքական բանակի վերակազմակերպման իրենց բազմաթիվ ծրագրերում գերմանացի սպաները համառորեն պնդում էին թուրքական բանակի վերագինման համատեղելիության մասին, որպեսզի նրա կազմում տարբեր համակարգերի և տրամաչափերի զինատեսակներ չլինեն¹²: Գերմանացի սպաները աստիճանաբար կարողացան թուրքական կառավարության և սուլթանին ներշնչել ռազմամթերքի խոշոր գնումները արտասահմանում իրականացնելու գաղափարը: 1885-1886 թթ. նրանք գերմանամետ Ալի-Սաիբ փաշայի օժանդակությամբ գերմանացի գործարաններին հանձնեցին այդ պատվերների ճնշող մեծամասնությունը¹³:

Գուլցի առաջարկությամբ սուլթանը մեծ վեզիրի և ֆինանսների նախարարի գլխավորությամբ ստեղծեց հանձնաժողով, որը պետք է զբաղվեր զենքի ձեռք բերման համապատասխան միջոցների հայթայթմամբ¹⁴: Գերմանացի դիվանագետները և զինվորականները, արտաքին քաղաքական ճգնաժամը օգտագործելով, որը առաջացել էր Անգլիայի և Ռուսաստանի միջև Թուրքիայում ազդեցության գոտիների ամրապնդման համար, 1885 թ. կատարեցին առաջին պատվերները: Գերմանացի սպաները ձգտում էին նեղուցների և Ստամբուլ տանող ցա-

¹⁰ Նույն տեղում, էջ 114:

¹¹ Izzet-Pascha, Denkwürdigkeiten des Marschalls Izzet-Pascha, Leipzig, 1927, S. 96-97.

¹² C. von der Goltz-Pascha, նշվ. աշխ., էջ 125:

¹³ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում օսմանյան բանակի կրած պարտությունից հետո թուրքական բանակի ռազմամթերքի մեծ մասը ոչնչացվել էր և նրանք ստիպված էին այն վերստին ձեռք բերել: Այդ իսկ պատճառով, 1880-ական թթ. կեսերից սկսած թուրքական կառավարության զինամթերքի պատվերները անչափ մեծ էին: C. von der Goltz-Pascha, նշվ. աշխ., S. 125.

¹⁴ C. von der Goltz-Pascha, նշվ. աշխ., էջ 128:

մաքային ճանապարհների ամրապնդմանը: Միաժամանակ նրանք ջանքեր էին գործադրում Գերմանիային հանձնել նոր նավատորմի և հին նավահանգիստների վերագինման և արդիականացման պատվերները: Արդեն 1885 թ. գարնանը թուրքական կառավարությունը գերմանական Դանցիգ նավաշինական ընկերությանը մի քանի ականակիրների և 130 ինքնագնաց ականների պատվեր էր տվել¹⁵:

Գերմանական դեսպանատան և Գոլցի գլխավորած ռազմական առաքելության հետ երկարատև բանակցությունների արդյունքում 1885 թ. Կրուպպի ընկերության հետ դաշտային հրետանային, բոսֆորյան և դարդանեյան նավատորմի սպառազինության, ինչպես նաև նոր զրահակիր «Համիդիե» նավի հրետանային սպառազինության վերաբերյալ պայմանագիր կնքվեց: Պատվերի ընդհանուր գումարը կազմում էր 14.5 մլն ֆրանկ: 2.5 մլն ֆրանկի չափով առաջին վճարումը, որը պետք է իրականացվեր մինչև 1885 թ. վերջը, կատարվելու էր թուրքական մաքսային եկամուտների հաշվին¹⁶: Բացի այդ, ավելի ուշ Կրուպպի ընկերությանը պատվիրվել էր նա 60 մորտիրա, որը կատարվել էր, ինչպես գրում էր Ստամբուլում ռուսական ռազմական գործակալ, գեներալ մայոր Ֆիլիպովը, գերմանացի սպաների կողմից թուրքական պաշտպանության նախարարությանը համոզելու շնորհիվ¹⁷:

Պատվերներից առավել խոշորը կատարվեց 1887 թ. սկզբին, երբ Ստամբուլ ժամանեց Մաուզեր ընկերության ներկայացուցիչ և Վյուրտեմբերգյան բանակային միավորման գլխավոր տնօրեն Լյովե Ալֆրեդ Կաուլլան: Թուրքական կառավարությունը Կաուլլայի հետ 500.000 հրացանի և 50.000 հեծելազորային կարաբինի մատակարարման պայմանագիր կնքեց¹⁸: Գերմանական ընկերություններին զենքի նման չափաքանակների պատվերները գերմանական դիվանագիտության և ֆոն դեր Գոլցի ռազմական առաքելության ակնհայտ ձեռքբերումներից էր, որով ամրապնդվում էին Գերմանիայի դիրքերը Բոսֆորում:

Պայմանները, որոնց հիման վրա կնքվել էին այդ պայմանագրերը, թուրքական կառավարության համար ծայրահեղ ծանր և անշահավետ էին: Ըստ երևույթին, գերմանական ռազմական ընկերությունների ներկայացուցիչների կողմից թուրքական պաշտպանության նախարարու-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Menne B., Krupp. Deutschlands Kanonenkönig, Zürich, 1937, S. 154.

¹⁸ Holborn H., նշվ. աշխ., S. 79.

թյան և սուլթանական պալատական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներին տրված 200.000 լիբ կաշառքը ծառայեց իր նպատակին¹⁹:

Համաձայն պայմանագրի, թուրքական կառավարությունը պարտավորվեց 400.000 լիբի անհապաղ վճարում կատարել: Բայց դատարկված գանձարանից նման վճարում կատարելը Աբդուլ Համիդի համար չափազանց դժվար էր: Մաուզերին և Լյովեին այդչափ խոշոր գումարի վճարման անհրաժեշտությունը ստիպեց Աբդուլ Համիդին Անատոլիական երկաթգծի կառուցման համար արտաքին կապիտալի ներգրավման նպատակով արագացնել փոխզիջումները: 1887-1888 թթ. բանակցությունները իրականացվում էին թուրքական կառավարության և անգլիական ու ֆրանսիական ֆինանսական կազմակերպությունների հետ: Որպես Փոքր Ասիայում երկաթգծի կառուցման զիջման տրամադրման գլխավոր նախապայման՝ թուրքական կառավարությունը պահանջում էր 25 մլն ֆրանկ պարտք: Ողջ գումարը ուղղվելու էր Մաուզերի և Կրուպպի ընկերություններին ունեցած պարտավորությունների վճարմանը: Պարտքի վերաբերյալ բանակցությունները անօգուտ էին, ինչպես անօգուտ էին Օտտոմանյան կայսերական բանկից կամ գերմանական ֆինանսիստներից պարտք վերցնելու սուլթանի փորձերը²⁰:

Այսպիսով, թուրքական կառավարության անկարողությունը Թուրքիա մատակարարվող զենքի վճարումների հետ կապված 1888 թ. կեսերին հանգեցրեց մեծ պարտավորությունների առաջացման: Ստամբուլում Գերմանիայի ներկայացուցիչները, օգտագործելով իրենց տնօրինության տակ գտնվող բոլոր միջոցները, Թուրքիայից պահանջեցին անհապաղ վճարել վերջինիս վաճառված զենքի գումարները²¹:

Թուրքական ֆինանսների կտրուկ վատթարացումը, որը առաջացել էր գերմանացի սպաների և գործարարների մեղքով, Գերմանիայի կողմից ճարպկորեն օգտագործվեց Անատոլիական երկաթգծի կառուցման նպատակով ևս փոխզիջումներ ստանալու համար²²: 1888 թ. Գարնանը, Մաուզեր ընկերության գործերով պայմանավորված, կրկին Ստամբուլ ժամանակեց Ալֆրեդ Կաուլլան: Նրա նպատակն էր հասնել

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Küntzler K., Abdul-Hamid und die Reformen in der Türkei, Dresden und Leipzig 1897, S. 41.

²¹ Menne B., նշվ. աշխ., էջ 162:

²² Holborn H., նշվ. աշխ., էջ 83:

զենքի մատակարարման դիմաց թուրքական կառավարության պարտքերի վճարմանը: Ստանալով խոշորագույն Գերմանական բանկի կառավարիչ Գեորգ Միմենսի աջակցությունը, նա նույնպես միջամտեց Անատոլիական երկաթգծի կառուցման փոխզիջումներ ստանալու բազմաթիվ մրցակիցների մրցավազքին: Նոր հավակնորդը թուրքական կառավարությանն առաջարկեց 150 մլն ֆրանկ պարտքի դիմաց իրեն տալ ցանկալի փոխզիջումները: Թուրքական կառավարությունը համաձայնեց կնքել պայմանագիր միայն 37.5 մլն ֆրանկի դիմաց (1887 թ. այդքան էր կազմում թուրքական բյուջեի դեֆիցիտը): Աբդուլ Համիդը մտավախությամբ ընդունեց անգլո-ֆրանսիական օգնության առաջարկը և չէր ցանկանում կախվածության մեջ հայտնվել Օտտոմանյան կայսերական բանկից²³: Բացի այդ, թուրքական կառավարությունը գերմանական ֆինանսական աղբյուրներին տրամադրելով երկաթգծի կառուցման զիջումները, քաղաքական տեսանկյունից ևս կշահեր, քանի որ Կրուպպի և Մաուզերի պարտքերի վճարումից հետո էլ Թուրքիան կապավիներ Գերմանիայի օգնությանը:

Այդպիսով, գերմանական կապիտալը միաժամանակ մի քանի խնդիրներ էր լուծում. օգուտ էին ստանում պարտքերի դիմաց վճարվող տոկոսավճարներից, մատակարարվող զենքի վճարումներից և, վերջապես, ձեռք էին բերում երկաթգծի կառուցման չափազանց կարևոր զիջումներ, որը հիմք հանդիսացավ մի քանի տարի անց Մերձավոր Արևելքում խոշորագույն՝ Բեռլին-Բաղդադ երկաթգծի կառուցման փոխզիջումներ ստանալու համար: Այդ բոլորը, ընդհանուր առմամբ, նպաստում էին Գերմանիայի քաղաքական ազդեցության մեծացմանը Թուրքիայում²⁴:

Արդեն 1888 թ. սկսած Թուրքիա զենք մատակարարելու մենաշնորհը անցավ Գերմանիային: Հետագա մի քանի տարիների ընթացքում թուրքական բանակը ողողվել էր գերմանական զենքով: Միայն թուրքական զենքի պատվերների մատակարարման համար Մաուզերի ընկերությունում օրական պատրաստվում էր 320 հրացան²⁵: 1890 թ. Թուրքիան ստացավ պրուսական 1871 թ. օրինակով պատրաստված 200.000 «Մաուզեր» հրացան: Բայց թուրքական բանակի հրամանատարական կազմը չէր շտապում բանակը վերազինել նոր զենքերով: Դա

²³ Նույն տեղում, էջ 95:

²⁴ Küntzler K., նշվ. աշխ., էջ 54:

²⁵ Военный сборник, СПб 1890, № 10, ч. 2, с. 180

բարդանում էր նաև փամփուշտների սակավության պատճառով: 1890 թ. Մաուզերի հրացանների համար Լյովե ընկերությանը տրվել էր 15 մլն փամփուշտի պատվեր²⁶:

1891-1892 թթ., երբ Մաուզերի և Կրուպայի ընկերությունների կողմից գենքի մատակարարման պայմանագրերը կատարվել էին, գերմանական զինագործական ընկերությունները ֆոն դեր Գոլցի գլխավորած ռազմական առաքելության սպաների օժանդակությամբ փորձում էին ձեռք բերել նոր պատվերներ: Բայց նրանք հանդիպեցին Օսման փաշայի ընդդիմությանը, որը Սլի Մաիբ փաշայի մահվանից հետո վերստին ստանձնել էր պաշտպանության նախարարի պաշտոնը: Ուստի գերմանացի սպաները ձեռնամուխ եղան սուլթանին սադրանքի ենթարկելու մեթոդի կիրառմանը: Նրանք սկսեցին արտասահմանում հողվածներ հրատարակել Ռուսաստանի կողմից Թուրքիային սպառնացող վտանգի բովանդակությամբ²⁷:

Գերմանացի սպաները, դիվանագետները և զինագործական գործարարները, այնուամենայնիվ, կարողացան հասնել իրենց նպատակին: 1890-ական թթ. Մաուզերի ընկերությունը 200.000 նոր հրացանների պատվեր ստացավ: 1893 թ. մարտի 1-ին Ստամբուլ առաքվեց Մաուզերի 9,5 մմ տրամաչափի 228.000 և 7,65 մմ տրամաչափի 150.000 հրացան²⁸: 1885-1897 թթ. Գերմանիայից Թուրքիայի գնած հրացանների թիվը հասնում էր 800.000-ի: Դրանց մեծ մասը այդպես էլ մնաց պահեստներում և չտրամադրվեց զինվորներին: 1897 թ. հուլյն-թուրքական պատերազմի նախօրեին Ստամբուլում բնակվող մի գերմանացի գրում է. «Երբ պատերազմը սկսվի, այդ ժամանակ միայն, ըստ երևույթին, այդ հրացանները կբաժանվեն զինվորներին, որոնք մարտի կրոնվեն զենքով, որը երբևէ չէին բռնել իրենց ձեռքերում»²⁹:

1890-ական թթ. գերմանական զինագործական ընկերությունները դիվանագետների, ռազմական առաքելության սպաների օգնությամբ, ինչպես նաև թուրքական բարձրաստիճան պաշտոնյաներին կաշառելու ճանապարհով կարողացան ոչ միայն պահպանել, այլև ամրապնդել իրենց մենաշնորհ դիրքը թուրքական շուկայում:

Ըստ գերմանացի ուսումնասիրողների տվյալների՝ 1889-1897 թթ.

²⁶ Նույն տեղում, էջ 185:

²⁷ Holborn H., նշվ. աշխ., S. 83.

²⁸ Lamouche L., L'organisation militaire de l'empire Ottoman, Paris, 1895, 65.

²⁹ Kuntzler K., նշվ. աշխ., S. 22.

Մաուզերի, Լյովեի և Կրուպայի ընկերություններից իրականացվել էր 80 մլն մարկ գեներալ գնում, որը կազմում է տարեկան մոտավորապես 9 մլն մարկ, ինչը գերազանցում է 1880 թ. գերմանա-թուրքական ապրանքաշրջանառության ամբողջ ցուցանիշը: Ըստ նշված ուսումնասիրողների տվյալների՝ 1880-ականներին գերմանական արտաքին առևտրի բնագավառում թուրքական բանակին գեներալ վաճառելը հանդիսացավ Մերձավոր Արևելքում իրականացրած ամենամեծ գործարքը³⁰:

Այսպիսով, գերմանական ռազմական առաքելությունը քայլ առ քայլ իրականացրեց իր առջև դրված խնդիրը՝ օսմանյան պետությանը ներքաշեց գերմանական դեկավարների կողմից մշակված գաղութային ծրագրերում, որը Գերմանիայի համար դրսևորվում էր արտաքին քաղաքական ձեռքբերումներով: Ռազմական առաքելությունը Թուրքիայում ռազմական, ֆինանսա-տնտեսական բնագավառներում հասավ նկատելի հաջողությունների, որով էլ պայմանավորվեց գերմանա-թուրքական հետագա մերձեցումը և դաշնակցային ամուր կապերի հաստատումը:

Գերմանա-թուրքական դաշնակցային հարաբերությունների ձևավորման գործում առանցքային նշանակություն ունեցավ 1882-1895 թթ. գերմանական ռազմական առաքելության գործունեությունը Թուրքիայում: Այս տարիներին գերմանացի մասնագետները բարեփոխեցին թուրքական բանակը: Գերմանացի սպաների և դիվանագետների միջոցով թուրքական բանակի սպառազինությունը համալրվեց գերմանական արտադրության զինատեսակներով: Գերմանիան ձեռք բերեց Բեռլին-Բադոնաուեր կարևոր ուղղությունների շինարարության իրավունքը:

Այս միջոցառումների շնորհիվ թուրքական կառավարությունը ֆինանսական կախման մեջ ընկավ գերմանական կայսրությունից, որի շնորհիվ Գերմանիան ձեռք բերեց Մերձավոր Արևելքում իշխող դիրք և աստիճանաբար քայլեր ձեռնարկեց առաջիկա պատերազմին նախապատրաստության համար: Թուրք-գերմանական հիշյալ մերձեցումը նպաստավոր էր նաև Աբդուլ Համիդ Երկրորդի համար՝ արտաքին քաղաքական և ներքաղաքական մի շարք հարցեր լուծելու և, ի դեմս Գերմանիայի՝ հզոր դաշնակից ձեռքբերելու առումով:

³⁰ Holborn H., նշվ. աշխ., էջ 87; Krauss J., Deutsch-türkische Handelsbeziehungen, Jena, 1900, S. 101.

**TIGRAN KHACHATRYAN
(ASPU)**

**ACHIEVEMENTS OF GERMAN MILITARY MISSION'S OF
1882-1895 IN OTTOMAN TURKEY**

In the period of 1882-1895 the German military mission in Turkey played a pivotal role in the formation of the German-Turkish allied relations. During this period, the Turkish army was reformed by German experts, with the help of the German officers and diplomats the Turkish army was armed with German weapons. Germany has acquired the right to build the important links of the Berlin-Baghdad railroad.

Due to these measures, the Turkish government became financially dependent on the German Empire, thanks to which Germany acquired a dominant position in the Middle East and gradually took steps to prepare for the upcoming war. The mentioned Turkish-German rapprochement was also beneficial for Abdul Hamid II for solving foreign and domestic political issues and obtaining a powerful German ally.

**ՀԵՐՄԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)**

**ՀԱՅ ԵՎ ԱՐԱԲ ՊԱՏԳԱՍՄԱՎՈՐՆԵՐԸ 1908 ԹՎԱԿԱՆԻ
ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ**

19-րդ դարի կեսերին Օսմանյան կայսրությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ: Թանգիմաթի շրջանի բարեփոխումները չկարողացան կասեցնել թուրքական պետության քայքայումը: Երբեմնի հզոր տերությունը վերածվել էր տնտեսապես հետամնաց ագրարային երկրի արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակով: Երբ Աբդուլ Համիդ II-ը կասեցրեց 1876 թ. Սահմադրությունը, երկրի վիճակն էլ ավելի վատացավ: Ցանկացած հասարակական ակտիվություն, ազատամիտ հայացքների արտահայտում ճնշվում էր ամենադժան ձևով: Մաստկացել էր գրաքննությունը, ծանրացել էին հարկերը: Հատկապես ծանր վիճակում էին կայսրության քրիստոնյա հպատակները, որոնց իրավունքները ոտնահարվում էին, իսկ դժգոհությունները կասեցվում էին արյամբ: Այս էր պատճառը, որ Աբդուլ Համիդ II-ը ստացավ «կարմիր սուլթան» անունը: Բավական է նշել, որ միայն 1894-1896 թվականներին նրա հրամանով սպանվեց ավելի քան 300 հազար հայ¹: Այս ամենը վկայում էր քրիստոնյա հպատակների նկատմամբ Աբդուլ Համիդ II-ի իրական վերաբերմունքի մասին, և նրա այս քաղաքականությունը շատ հաճախ դժգոհությունների և ընդվզումների պատճառ էր դառնում:

Աբդուլ Համիդ II-ի փաստացի իշխանությունը վերջ դրվեց 1908 թ. երիտթուրքերի կողմից իրականացված հեղաշրջման հետևանքով: 1889թ. Ստամբուլի ռազմաբժշկական ուսումնարանի չորս սովորողներ ստեղծեցին մի գաղտնի ընդդիմադիր խումբ, որի նպատակն էր բռնակալական վարչակարգի ոչնչացումը:

Ռազմաբժշկական ուսումնարանի փոքրիկ գաղտնի խումբը սովարանալով հասավ քսան-քսանհինգ մարդու: Խմբի ղեկավարները սկսեցին կապեր հաստատել Ստամբուլի այլ ուսումնական հաստա-

¹ Փոլադյան Ա., Մարգարյան Լ., Սիրիացի արաբ ականատես Ֆայեզ Ալ-Ղուսեյնի հուշերը Հայոց ցեղասպանության մասին, Դամասկոս, 2017, էջ 13: Մարգարյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 12:

տությունների սովորողների հետ, որտեղ ստեղծվեցին նորաստեղծ կազմակերպության բջիջներ: Խումբը կապեր հաստատեց նաև Փարիզում գործող վտարանդիների հետ, որոնք ստիպված էին լքել հայրենիքը Արդուլ Համիդ II-ի կողմից օսմանյան խորհրդարանը ցրելուց հետո: Մկսեց կազմավորվել երիտթուրքերի ընդդիմադիր գործունեության արտասահմանյան առաջին կենտրոնը:

Շուտով ծնունդ առան նաև ուրիշ գաղտնի խմբակներ, որոնք բաղկացած էին հիմնականում սպաներից, պետական պաշտոնյաներից, առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներից և մտավորականներից:

1894 թ. առանձին-առանձին գործող բոլոր գաղտնի խմբերը միավորվեցին մեկ միասնական «Միասնություն և առաջադիմություն օսմանյան ընկերություն» («Օսմանյնը իթթիհադ վե թերաքքը ջեմիեթի») անունը կրող կազմակերպության մեջ, որոնց անդամներին սկսեցին կոչել «իթթիհադականներ» կամ «երիտթուրքեր»²: Կազմակերպության ստամբուլյան առաջին կենտրոնի կազմի մեջ մտնում էին Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ³:

1907 թ. դեկտեմբերի 27-29-ին Փարիզում գումարվեց երիտթուրքական երկրորդ կոնգրեսը⁴, որի հրավիրման նախաձեռնությամբ հանդես էր եկել ՀՅԴ-ն: Հայկական կազմակերպություններից այդ ժողովին մասնակցում էին միայն Դաշնակցությունը և Մարսելի «Արմենիա» թերթի խմբագրության անդամները⁵, իսկ արաբականից՝ «Հայֆեթ» ազգայնական կազմակերպությունը⁶: Կոնգրեսի մասնակիցները

² Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 583-585:

³ Котлов Л., Становление национально-освободительного движения на Арабском Востоке (середина XIX в. - 1908 г.), Москва, 1975, с. 267.

⁴ Երիտթուրքերի առաջին կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում 1902 թ. փետրվարի 4-9-ին: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էր 60-70 մարդ (այլ տվյալներով՝ 47): Երիտթուրքական կազմակերպություններից բացի՝ կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին նաև հայկական, հունական, արաբական, ալբանական քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Պատգամավորների թվում կային նաև չերքեզներ, քրդեր, հրեաներ:

⁵ Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 210:

⁶ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Հ. II, Օսմանյան տիրապետության շրջան. 1516-1918, Երևան, 2004, էջ 464:

կազմեցին հայտարարություն, որի մեջ ներկայացրել էին իրենց հիմնական պահանջները՝

- Աբդուլ Համիդ II-ի գահընկեցություն,
- արքուլիամիդյան վարչակարգի արմատական փոփոխություն,
- ներկայացուցչական համակարգի հաստատում (խորհրդարան)⁷:

Սկզբնապես հեղաշրջումը նախատեսվում էր իրականացնել 1909թ.: Բայց արդեն 1908 թ. հուլիսի 3-ին Մակեդոնիայում երիտթուրքերն ապստամբեցին՝ հրաժարվելով ենթարկվել սուլթանին: Կառավարությունը փորձեց ճնշել ապստամբությունը, բայց հաջողություն չունեցավ: Հուլիսի 22-ին ապստամբները գրավեցին Մոնաստիր (Բիտոլ) քաղաքը և ազատեցին բանտարկյալներին: Հուլիսի 13-ին զանգվածային ցույցեր սկսվեցին Սալոնիկում⁸:

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը, տեսնելով, որ երիտթուրքերի հիմնական պահանջի՝ 1876 թ. սահմանադրության վերականգման հետագա ձգձգումը կարող է ճակատարգրական լինել ոչ միայն իր գահի, այլև կյանքի համար, զանգվածային շարժման ճնշման տակ տեղի տվեց:

1908 թ. հուլիսի 24-ին Ստամբուլի թերթերը հրատարակեցին սուլթանական իրադե՝ սահմանադրությունը վերականգնելու և նախարարների պալատի առաջիկա գումարման մասին⁹:

Սահմանադրության վերականգման մասին նորությունը մեծ ուրախություն առաջացրեց օսմանահպատակ ազգերի շրջանում: Թե՛ հայ, թե՛ արաբ առաջադեմ զանգվածները մեծ ոգևորությամբ ընդունեցին այդ նորությունը: Նրանք միակարծիք էին այն հարցում, որ իշխանությունից Աբդուլ Համիդ II-ի հեռացումով կարելի կլինի հասնել Օսմանյան կայսրությունում բոլոր ազգերի արդյունավետ համագործակցությանը: Սրանով էր պայմանավորված երիտթուրքերի նկատմամբ նրանց դրական դիրքորոշումն ու աջակցությունը: Սահմանադրության վերականգնման կապակցությամբ շքերթներ և տոնախմբություններ էին կազմակերպվում կայսրության տարբեր վիլայեթներում, այդ թվում՝ հայկական և արաբական: Հայերի կազմակերպած տոնա-

⁷ Լեո, նշվ. աշխ., էջ 211:

⁸ Միմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 126:

⁹ Միմոնյան Հ., նույն տեղում, էջ 126:

խմբության կապակցությամբ Բիւզանդիոն թերթը գրում է. «Հայերը Քրասեր Բալասի ընդարձակ սրահներուն մէջ քաղաքային և զինուորական իշխանութեանց փառաւոր սեղան մը սարքեցին: Չկրցայ հրաւիրելոց թիւը ճշդի գիտնալ, բայց կըրնամ ասել թէ 500 հոգի կային: Շէնքին ընդարձակ սրահը չբաւեց և յարակից երկու սենեակներն ալ լեցուեցան: Բոլոր հրաւիրեալք շատ գոհ մնացին հայերուն այս փառաւոր ընդունելութենէն: Այս հանդէսը նկարագրել անկարելի է, և այս տեսակ հանդէս մը կա՛մ Նիսի մէջ կամ Բարիզ միայն կրնային ընել»¹⁰: Հայ և արաբ ազգայնականները ոգևորված էին օսմանյան ազգերի եղբայրությամբ: Նրանք հավատացած էին, որ բացվում է Օսմանյան կայսրության պատմության նոր էջը և այն բառը, որով կարելի է բնութագրել կայսրության ժողովուրդների միջև հաստատվող փոխհարաբերությունները, եղբայրությունն էր: ՀՅԴ օրգան «Դրոշակում» այդ առիթով գրված էր. «Թիւրք-հայ եղբայրակցութիւնը արդէն կնքուած էր արեան դաշտին վրայ: Սգահանդէսները, որոնք կատարուեցան Պօլիս կամ այլուր երկու ազգերու նահատակներուն իրական յիշատակը փառաւորելու համար, պատմութեան երևոյթը և օրինակը պիտի մնան ժողովրդական սրտագին և ինքնաբեր ցոյցերուն»¹¹: Թվում էր՝ հայերը դարձել են թուրքերի սիրելիները: «Դուք մեր ազատութեան վեմերն էք»¹², - ասում էին երիտասարդ թուրքերը հայերին ուղղելով իրենց խոսքերը: Հայ, արաբ և թուրք ազգայնականներն ընդհանուր քաղաքական գաղափարի՝ օսմանիզմի կողմնակիցներ էին: Բայց նրանք տարբեր բովանդակություններ էին դնում այդ գաղափարի մէջ: Հայերի և արաբների համար օսմանիզմը կայսրության իրավահավասար տարբեր ազգերի միասնությունն էր, կայսրության ամբողջականության պահպանումը¹³: Դաշնակցությունը նույնիսկ նշում էր, որ եթէ մինչև սահմանադրության վերականգնումը հայկական հարցը միջազգային դիվանագիտության առարկա էր, ապա այժմ այն դառնում էր Թուրքիայի ներքին խնդիր: Իսկ երիտթուրքերի համար օսմանիզմն իրենց գերիշխող դիրքերի ամրապնդում էր: Եվ ինչպես հետագայում պարզվեց, օսմանյան ազգերի եղբայրության ու հավասարության մասին հնչեցրած երիտթուրքերի բոլոր խոստումները կեղծ էին և օգտագործվում էին

¹⁰ Բիւզանդիոն, թիվ 3601, 30.VII. 1908:

¹¹ Դրոշակ, № 8, 1908:

¹² Դրոշակ, նույն տեղում:

¹³ Котлов Л., նշվ. աշխ., էջ 256-257:

իրենց նպատակներին հասնելու համար: Չնայած այս համընդհանուր ոգևորվածությանը՝ կային ազգային գործիչներ, ովքեր մինչև վերջ չէին հավատում և չէին վստահում երիտթուրքերին: Նրանցից էր ՀՅԴ ներկայացուցիչ Ռուբենը, ում կասկածներն ակնհայտ են դառնում ՀՅԴ մյուս ներկայացուցիչ Արամի հետ ունեցած նրա զրույցից. «Արդ, երբ քեզ բանտին կը հանեն եւ կյարտարարեն ամենքին, որ շնորհիւ քեզ եւ քեզպետներուն է, որ հին ռեժիմը տապալուած է, դու զինաթափ չպիտի մնաս եւ քու հաւաքած զենքերը քեզ պիտի վերադարձուին, Սահմանադրութեան իսկ պաշտպանութեան համար: Եթէ Սահմանադրական կառավարութիւնը վստահի եւ վերադարձնէ լաւ. եթէ չվերադարձնէ, ուրեմն անվստահելի է եւ մենք ալ տարբերութիւն չպիտի դնենք հին ու նոր ռեժիմներու միջեւ»¹⁴:

Սահմանադրության վերականգնումից հետո առաջին քայլը խորհրդարանի ձևավորումն էր: Խորհրդարանի բացումը սկզբնապես նախատեսվում էր 1908 թվականի նոյեմբերին, սակայն այն հետաձգվեց կայսրության որոշ շրջաններում սկիզբ առած ընդվզումների և ընտրական իրավունքի տարբեր խախտումների պատճառով: Ընտրական իրավունքի հիմքում ընկած էր 1877թ. մշակված օրինագիծը¹⁵: Խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին մեծամասնական սկզբունքով և ուղեկցվում էին ընտրական իրավունքի խախտումներով: Դրա ակնհայտ դրսևորումներից էր երիտթուրքերի կողմից ընտրական շրջանների ձևավորումը:

Ըստ օսմանյան սահմանադրության՝ 50 հազար արական շնչին բաժին էր հասնում մեկ պատգամավոր¹⁶: 75 հազար ընտրողին արդեն տրվում էր երկու պատգամավոր ունենալու իրավունք: Ելնելով սրանից՝ երիտթուրքերն այնպես էին խմբավորում բնակավայրերը, որ

¹⁴ Ներսիսեան Ա, Ռուբեն, Երևան, 2007, էջ 127:

¹⁵ Եթե 1877 թ. օրինագծով թույլատրելի չէր թեկնածություն դնել այն նահանգում, որտեղ թեկնածուն որոշակի ժամանակահատված չէր ապրել, ապա այժմ այդ կետը հանվում էր՝ հնարավորություն տալով երիտթուրքերին իրենց թեկնածուներին ուղարկել կայսրության ցանկացած շրջան: Պահպանվում էր թուրքերենի պարտադիր իմացության պայմանը, որն ունևոր խավի նեկայացուցիչների համար ճանապարհ էր հարթում դեպի խորհրդարան, պահպանվում էր տարիքային շեմի շերտը և այլն:

¹⁶ Տիգրան Զավեն, Թյուրք սահմանադրությունը և երիտասարդ թյուրք կուսակցությունները, Թիֆլիս, 1908, էջ 25:

նույնիսկ այն շրջանում, որտեղ թուրքերը փոքրամասնություն էին կազմում, ընտրողների ընտրության հարցում նրանք ստանում էին առավելություն: Թուրքերենի պարտադիր իմացության պայմանը մեծապես նվազեցնում էր հայ, արաբ և այլ ազգերի ներկայացուցիչների առաջադրվողների հնարավորությունները, քանի որ լեզվի իմացությունը սահմանափակվում էր հին վարչակարգի ներկայացուցիչներով՝ մասնավորապես պետական կառույցներում ծառայող պաշտոնյաներով: Միննույն ժամանակ, անհրաժեշտության դեպքում երիտթուրքերը պատրաստ էին առանձին դեպքերում այք փակել այդ կետի վրա, եթե թեկնածուն իթթիհադական կողմնորոշում ուներ: Մրա պատճառով խորհրդարանում եղան պատգամավորներ, ովքեր ստիպված էին պասիվ դիրք գրավել, քանի որ լեզվին լավ չէին տիրապետում և չէին կարողանում ակտիվորեն մասնակցել քննարկումներին: Երբեմն երիտթուրքերը նույնիսկ հրաժարվում էին ճանաչել ընտրությունների արդյունքները, եթե դրանք հակասում էին իրենց շահերին: Այդպիսի մի դեպք գրանցվեց Բասրայում, որտեղ թեկնածություն էր դրել Տալիբ փաշան, ով թեև «Իթթիհադ վե թերաքքիի» անդամ էր, բայց Աբդուլ Համիդի կողմնակից էր: Երիտթուրքերը երեք անգամ անվավեր ճանաչեցին Բասրայի ընտրությունները, այնուհանդերձ Տալիբ փաշան ընտրվեց պատգամավոր¹⁷: Ընտրությունները բավականին լարված բնույթ կրեցին նաև Միրիայում, հատկապես Դամասկոսում: Այդտեղ իրենց թեկնածությունն էին առաջադրել «Արաբասումանյան եղբայրություն» կազմակերպության ղեկավար Շաուֆիկ ալ-Մուայադ ալ Ազմը և նրա գործընկեր Ռուշդի ալ-Շաման: Երիտթուրքերը փորձեցին խոչընդոտել նրանց ընտրությունը, բայց ապարդյուն¹⁸:

Մոնաստիրում ռուսական հյուպատոս Վ.Ֆ. Կալը գրում էր, որ դրանք ոչ թե ընտրություններ էին, այլ նշանակումներ¹⁹:

Երիտթուրքերը պայքարի մեջ մտան՝ ունենալով գործուն և լավ մշակված նախընտրական համակարգ: Նրանց հեղինակությունը դեռ բարձր էր արաբական վիլայեթներում, որտեղ նրանց աջակցություն էին ցույց տալիս: Բացի այդ, ի տարբերություն երիտթուրքերի, հայերը և

¹⁷ Тума Э., Национально-освободительное движение и проблема арабского единства, Москва, 1977, с. 103.

¹⁸ Գասպարյան Ա., Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. Համագործակցությունից առճակատում (1908-1914), Երևան, 2016, էջ 48-49:

¹⁹ Шпилькова В., Младотурецкая революция 1908–1909 гг., Москва, 1977, с. 196.

արաբները չունենին լավ կազմակերպված քարոզարշավ, իսկ արաբները դեռ չունեին խոշոր ազգայնական միություններ, որոնք կարող էին հակակշիռ լինել երիտթուրքերին: Ճիշտ է, ընտրությունների նախօրյակին Կ. Պոլսում ստեղծվեց ընդդիմադիր «Օսմանյան լիբերալներ» կուսակցությունը «Օսմանլի ահրար ֆըրքասի», որի գլխավոր քարտուղարն ազգությամբ արաբ Նուր ալ-Դին Ֆարուխն էր, սակայն, ստեղծվելով ընտրությունների նախօրյակին, այն չհասցրեց հիմնել մասնաճյուղեր և ամրապնդել իր դիրքերը: Այդ պատճառով միայն մեկ թեկնածու՝ Մահիր Սայիդ փաշան, սեփական ջանքերի շնորհիվ կարողացավ ընտրվել Անկարայի ընտրատարածքից (հետագայում խորհրդարանում «Ահրարը» ստացավ 50 պատգամավորների աջակցությունը)²⁰: Այս ամենն էլ, իհարկե, իր դերակատարությունն ունեցավ երիտթուրքերի հաղթանակի մեջ: Օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորներին նշանակելու և հայ ընտրողներին ներկայացնելու համար տարբեր կուսակցությունների և քաղաքական ուղղվածություն ունեցող հայերի կողմից ձևավորվել էր խորհուրդ²¹: Այս միությունը ունեցավ իր օգուտը, ազգի կողմից որոշված պատգամավորները՝ նույնիսկ իթթի-հադի՝ մասնավորապես Զոհրապի անձի դեմ ցույց տված ընդդիմությունը հակառակ, հաջողելու տեսանկյունից, որն էլ և կառավարությունը տալիս էր ազգային միասնության պատրանք: Ցավոք, խորհրդարանական ընտրություններից հետո այն շփուրդ, որը հայ քաղաքական կուսակցությունների և ոչ քաղաքական շրջանակների մեջ սկսել ու օգտակար ազդեցություն էր ունեցել, դադարեց գոյություն ունենալուց և հետզհետե գոյացան երկու հակառակ հոսանքներ, որոնք իրար կողք գալու փոխարեն իրար դեմ դուրս եկան²²:

Ընտրությունների արդյունքում ձևավորվեց օսմանյան խորհրդարանը: Նոր խորհրդարանի 275 անդամներից 142-ը թուրքեր էին, 60-ը արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը՝ հայեր, 3-ը՝ սերբեր, 4-ը՝ բուլղարներ, 5-ը՝ հրեաներ, 1-ը՝ վալախ²³: Չնայած խորհրդարանի գրեթե կեսը կազմում էին ազգային փոքրամասնությունների ներկա-

²⁰ Նույն տեղում, էջ 200:

²¹ Բիլգանդիոն, թիվ 3649, 26.IX, 1908:

²² Ալպոյաճեան Ա., «Անհետացող դեմքեր» (Գրիգոր Զօհրապ – իր կեանքը եւ գործը), Կ. Պոլիս, 1919, էջ 197-198:

²³ Шпилыкова В., նշվ. աշխ., էջ 198: Մանդելշտամ Ա., Երիտասարդ-թիիրքերի պետությունը, Էջմիածին, 1916, էջ 13:

յացուցիչները՝ իրենց շահերի պաշտպանության համար ոչ միայն չմիավորվեցին մեկ ընդհանուր դաշինքի մեջ, այլև հաճախ պայքար էին մղում միմյանց դեմ²⁴:

Երիտթուրքերը խորհրդարանում կազմում էին մեծամասնություն՝ 150 տեղ: Ընդդիմությունը կազմում էին «Ահրար» ու «Անձնական նախաձեռնության և ապակենտրոնացման միության» կողմնակիցները: Դրա կողմնակիցները հիմնականում ոչ թուրքական ազգության պատգամավորներ էին: Արաբ ներկայացուցիչները ձևավորել էին այսպես կոչված «անկախ խմբավորում», որը միավորում էր շուրջ 50 մարդու²⁵:

Խորհրդարանի բացումը տեղի ունեցավ 1908 թ. դեկտեմբերի 17-ին: Այդ առիթով Բիւզանդիոն թերթը գրում էր. «Մեծ և պատմական տերութեան մը համար, երէկ նշանաւոր և յաւետ յիշատակելի օր մը եղաւ: Բոլոր պողոտաներն սքանչելապէս զարդարուած էին ամէն ազգի դրոշներով: Խանդավառութիւնն իր գագաթնակէտն հասած էր Խորհրդարանի շէնքին մօտերը, Բ. Դոնէն մինչև Այա Սոֆիայի հրապարակը»²⁶:

Օսմանյան խորհրդարանի առաջին նստաշրջանի ընթացքում 1908-1909 թթ. կայացավ 140 նիստ: Դրա ընթացքում քննարկվեցին սահմանադրության փոփոխությունների, պետական բյուջեի, պետական ապարատի մաքրման, բանակի, նավատորմի, ոստիկանության ամրապնդման և կրոնական հարցեր: Ընդհանուր հաստատվեց 50 օրենք²⁷:

Խորհրդարանի հայ պատգամավորներն էին՝ Գրիգոր Զոհրապ և Պետրոս Հալաճյան (Կ. Պոլիս), Ստեփան Սպարթալյան (Սպարթալ) և Հակոբ Պապիկյան (Իզմիր), Համբարձում Պոյաջյան (Մուրադ) (Գոզան), Գարեգին Փաստրմաճյան (Արմեն Գարո) և Վարդգես (Էրզրում), Գեղամ Տեր-Կարապետյան (Մուշ), դոկտոր Նազարեթ Տաղավարյան և Կարապետ Փաշայան (Սերաստիա), Վահան Փափազյան (Վան), Արշակ Վռամյան (Օնիկ Դերձակյան):

Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ահմեդ Ռիզա բեյը:

²⁴Խորհրդարանում պատգամավորների թվի և ազգային կազմի մասին տվյալները միանշանակ չեն: Վահան Փափազյանը նշում է 275 անդամ, որոնցից 70-ը արաբներ, իսկ 10-ը՝ հայեր, Ահմադ Ֆերոզը՝ 275 անդամ, որոնցից 60-ը՝ արաբներ, 14-ը՝ հայեր, Ն. Հովհաննիսյանը՝ 245 պատգամավոր, որոնցից 150-ը՝ թուրքեր, 60-ը՝ արաբներ:

²⁵ Шпилькова В., նշվ. աշխ., էջ 200-201:

²⁶ Բիւզանդիոն, թիվ 3709, 5. XII.1908:

²⁷ Шпилькова В., նշվ. աշխ., էջ 204:

Ամենաակտիվ հայ պատգամավորներից էր Գրիգոր Զոհրապը՝ հայտնի իր պերճախոսությամբ, որի գլխավոր հիմքը իր փաստաբանի տաղանդն էր: Երվանդ Օտյանը գրում էր, որ իբրև երեսփոխան՝ Գրիգոր Զոհրապը վարիչ ուժ էր Ազգային ժողովի մեջ, գիտեր բանաձևի մեջ հաշտեցնել ամեն ընդդիմարտ կարծիքները և նրանց քվեարկել տալ մեծամասնությանը²⁸: Գարինի ընտրություններից հետո ընտրվեցին 2 հայ ՀՅԴ-ից՝ Վարդգես Մերինկիվլեան և Գարեգին Փաստրմաճեան²⁹: Վարդգեսը թունդ հեղափախական և թունդ դաշնակցական էր: Ե. Օտյանը նրան անվանում էր «Մեր ազգային խենթ»³⁰: Ն. Տաղավարյանը պահպանողական կենտրոնին էր պատկանում և ազատականների ու հատկապես հեղափոխականների երդվյալ հակառակորդն էր, բայց վիճաբանությունների շատ չէր մասնակցում: Նրա համար հայ ազգի փրկության միակ միջոցը Եգիպտոսի Հայ Բարեգործական Միությունն էր³¹: Գ. Տեր-Կարապետյանը, որը, բացի ազգային գործիչ լինելուց, առաջնակարգ տեղ էր գրավում գավառի գրողների մեջ, առավել տարված էր իր նահանգի՝ Տարոնի խնդիրներով: Իր խոսակցության միակ առարկան Մուշն էր, գյուղացիների վիճակը, տնտեսական խեղճությունը, կրթական խեղճությունը, հողային հափշտակումները, հարստահարությունը...³²: Երվանդ Օտյանը գրում էր, որ Մուրադը անդրանիկ հեղափոխականներից մեկն էր, Հնչակյան կուսակցության անդամ և համեստ անձնավորություն: Ժողովներին նա շատ չէր խոսում: Իբրև երեսփոխան՝ անաղմուկ ու անխոս գործունեություն ունեցավ³³: Ե. Օտյանի բնորոշմամբ Ա. Վռամյանի համար Ազգային ժողովը պատերազմի դաշտ էր, ուր պետք էր խոսքի ռազմամթերքով զինված գալ: Միայն թե նրա կռվասիրությունը անկեղծ ու անշահախնդիր էր: Հեղափոխական քսանհինգ տարիներից ի վեր Ա. Վռամյանը պահել էր առաջին օրերի եռանդն ու խանդավառությունը, մինչ իր հետ ճամփա ելնողներից շատերը կա՛մ կես ճանապարհին կանգ էին առել, կա՛մ ճամփան փոխել և կա՛մ լռիվ ետ դարձել³⁴: Որպեսզի վիժեցնեն արմենականների թեկ-

²⁸ Օտյան Ե., Մեր երեսփոխանները, Երևան, 1999, էջ 21:

²⁹ Բիւզանդիոն, թիվ 3683, 5. XI.1908:

³⁰ Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 28:

³¹ Նույն տեղում, էջ 86:

³² Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 49:

³³ Նույն տեղում, էջ 66-67:

³⁴ Օտյան Ե., նշվ. աշխ., էջ 146-147:

նածուների ընտրությունը, Վանի հնչակյանների խումբն ու դաշնակցականները բլոկ կազմեցին, և Վահան Փափազյանը (Կոմս, Բժիշկ), որը անձանոթ էր թուրքերենին, մեպուս (պատգամավոր) ընտրվեց: Նա մեծ համակրանք էր վայելում ժողովրդի լայն խավերի մեջ: Վ. Փափազյանը թուրքերենին չէր տիրապետում, մասնակցում էր միայն խորհրդարանի բարենորոգումների հանձնաժողովի աշխատանքներին և ձգտում էր հարաբերություններ հաստատել միայն այլ ազգերի հեղափոխական պատգամավորների հետ: Վանից մեկնելու նախօրյակին Վ. Փափազյանը մեծ խոստումներ էր տալիս բոլորին: Նա ասում էր. «Մենք, ձախակողմյան երեսփոխաններս, պատենչի վրա պիտի կանգնենք և կուրծք պիտի տանք դեպի ժողովուրդը, դեպի հասարակական իրավունքները, դեպի արդարություն ուղղված հատվածներին»³⁵: Բայց նա նշանավոր եղավ միայն իր լռությամբ, այնպես որ շատերի կողմից արժանացավ «համր երեսփոխան» տիտղոսի³⁶:

Հայ պատգամավորներից չորսն էին, որ անսխալ խոսում էին թուրքերեն: Ինչպես նշում էր Վ. Փափազյանը, հայ և մյուս քրիստոնյա երեսփոխանների դժբախտությունը լեզվի անձանոթությունն էր, այդ պատճառով լուռ ու մունջ ունկնդրի դերի մեջ էին, առանց նույնիսկ հասկանալու տաղտկալի ճառերի բովանդակությունը³⁷:

Հայ երեսփոխանների գործունեության առաջին շրջանում հայաբնակ գավառներում՝ Մուշ, Վան, Կարին, Բաղեշ, Խարբերդ, անդորություն էր հաստատվել. հայահալած քաղաքականությունը գրեթե վերացել էր: Քննարկումներ էին ընթանում հողային խնդիրը լուծելու համար: Հայ երեսփոխանների նախաձեռնության և համառ պահանջի արդյունքն էր քրիստոնյա ազգերի զինվորագրությունը: Նրանք էին, որ քրիստոնյա ազգերի կրթական ծրագրերի համար կառավարական բյուջեից վարկեր ձեռքբերեցին³⁸:

Չնայած այս որոշակի հաջողություններին՝ հայերը, ինչպես և արաբները, այնուամենայնիվ, չկարողացան ճիշտ օգտագործել այդ

³⁵ Մշակ 17.06.1913:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Հարությունյան Ա., Նախընտրական պայքարը Վանում և 1908թ. խորհրդարանական երկրորդ ընտրությունները Օսմանյան Թուրքիայում, Տպագիր, ՊԲՀ, 2010, թիվ 2, էջ 38:

³⁸ Զօհրապ Գ., Հայ պատգամավորի մը հաշուետուութիինը, Կ. Պոլիս, 1910, էջ 18-22:

ժամանակը առավել լուրջ խնդիրների քննարկման և լուծման համար: Արաբ նախարարները, որոնք իրենց հայացքներով մոտ էին երիտթուրքերին, պաշտպանում էին և հետևում նրանց³⁹: Հայ պատգամավորները թեև կարողացան մեկ միասնական ճակատ կազմել խորհրդարանում, սակայն մշտապես հանդես էին գալիս սահմանադրության պաշտպանությամբ՝ համարելով, որ այդպես լավագույն կերպով են պաշտպանում կայսրության, այդ թվում՝ նաև հայերի շահերը: Արաբները, ինչպես և հայերը, չկարողացան ճիշտ կողմնորոշվել և առաջադրել ու պաշտպանել արմատական, առանցքային հարցեր: Առավել կետրոնացած լինելով առանձին տեղական խնդիրների վրա՝ նրանք չէին խորանում երիտթուրքերի առաջ քաշած սկզբունքների իրական բնույթի մեջ: Բացի այդ, ընդդիմադիր ուժերը այդպես էլ չկարողացան միավորվել մեկ ուժի մեջ՝ որպես հակադիր խմբավորում իթթիհադականներին: Այդ պատճառով իթթիհադականները շարունակեցին մնալ խորհրդարանի որոշիչ ուժը: Այսպիսով, արաբ և հայ պատգամավորները, ինչպես և խորհրդարանի մյուս ազգային փոքրամասնությունները, չկարողացան լուրջ ընդդիմություն ստեղծել իթթիհադականներին, ինչը նրանց հնարավորություն կտար բարձրացնել ազգային խնդիրներ:

HERMINE ARAKELYAN
(IOS)

ARMENIAN AND ARAB DEPUTIES IN THE OTTOMAN PARLIAMENT OF 1908

In July 1908 the Young Turks carried out a coup that restored the Constitution of 1876. The Ottoman Empire was proclaimed constitutional monarchy, and the actual power was concentrated in the hands of the Young Turks.

³⁹ Պետք է նշել, որ, չնայած այս ամենին, ոչ բոլոր հարցերում էին արաբները միաձայն երիտթուրքերի հետ: Օրինակ, երբ բարձրացվեց պատգամավորներ Շաուֆիկ ալ-Մուայադիև Յուսուֆ Շիտվանի ընտրության անօրինականության հարցը, արաբ պատգամավորները միահամուռ հանդես եկան ի պաշտպանություն հայրենակիցների: Երբ իթթիհադականների առաջարկով անվստահություն հայտնվեց մեծ վեզիր Քամալ փաշայի կառավարությանը, արաբները դարձյալ ընդունեցին հակաիթթիհադական դիրքորոշում:

The coup was accepted with great enthusiasm by the non-Turkish population of the empire, including Armenians and Arabs. After they came to power, the Young Turks organized parliament elections. As a result of these elections, in the new Ottoman parliament formed in 1908 Armenian and Arab members were also included. Although in the short term of their office in that parliament Armenians and Arabs had some success, nevertheless, they were more concentrated on local problems and were not able to orientate correctly and refer to primary and fundamental issues. Besides, the opposition could not put aside the existing disagreements and set up a union. That is why the Ittihadists continued to remain the main power of the parliament, and this fact deprived the ethnic minorities of the Parliament of the opportunity to raise national issues.

ՎԵՐԱ ՍԱՀՄԱՆՅԱԼ
(ՀԶԳԻ)

«ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱԼ» (ԹԵՇՔԻԼԱԹ-Ը ՄԱԽՍՈՒՍԱ)
ԱՆՁՆԱԿԱԶՄԻՈՒ ՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ

Օսմանյան կայսրությունում գաղտնի գործունեություն իրականացրած «Հատուկ կազմակերպության»՝ «Թեշքիլաթ-ը մախսուսայի» վերաբերյալ վերջին ուսումնասիրությունները առաջին հերթին կարևորվում են շրջանառության մեջ դրված արխիվային նոր նյութերի, նոր գտնված սկզբնաղբյուրների, վավերագրերի և այլ նորահայտ աղբյուրների գործածությամբ, որոնց շնորհիվ բացահայտվում են *թեշքիլաթական*ների գործունեության մի շարք կարևոր մանրամասնություններ: Այս առումով մենք առավել ևս կարևորել ենք հայերեն սկզբնաղբյուրները: Հայկական աղբյուրները Հայոց Մեծ Եղեռնի ականատեսների վկայություններ լինելու հանգամանքով ցեղասպանագիտության տեսանկյունից բացարձակ, անհերքելի ու բացառիկ հավաստիությամբ օժտված սկզբնաղբյուրներ են՝ իբրև ցուցմունք, որն արձանագրել են պատմական անժխտելի իրողության անմիջական կրողները, ականատեսներն ու վկաները: Այս վկայությունները որպես տեսական հիմնավորում, որպես պատմության փաստագրման վավերականության հաստատում, որպես ապրվածի վկայագիր՝ այն եղելության, այն իրականության, որի կրողն ու վկան եղել է հայ հասարակությունը, անհատն ու վերապրողը, դառնում են եզակի փաստաթուղթ՝ «վկայական»՝ հիշողության, փաստի արձանագրման առումով¹: Նման սկզբնաղբյուրներով հատկապես հարուստ է Երուսաղեմի պատրիարքության արխիվը, Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտը, ինչպես նաև Մաշտոցյան Մատենադարանը, որտեղ պահվում է Արշակ Ալպոյաճյանի և այլոց արխիվները՝ վկայությունների և այլ վավերագրական նյութերի հարուստ սկզբնաղբյուրներով:

Առաջնություն տալով և կարևորելով վկայության հավաստիության համատեքստում հայկական սկզբնաղբյուրների և հայ վերապրող հետազոտողների ուսումնասիրությունները՝ հողվածի շրջանակներում

¹ Dabag M., Der Genozid an den Armeniernim Osmanischen Reich, Volkhard Kingge /Norbert Frei (Hg.), Verbrechen erinnern, Müttnchen, Beck 2002, S. 10.

փորձել ենք հաշվել թե՛ շքիլաթականների քանակը: Անշուշտ, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ հայկական աղբյուրներում բերված վկայությունների մեջ չի գործածվում «*թե՛ շքիլաթ-ը մախսուսա*» բառակապակցությունը, քանի որ այս կազմակերպությունը թեպետև պաշտոնապես ստեղծվել է 1914 թ. օգոստոսի 3-ին, երիտթուրքերի գրասենյակում (Նուր ալ Օսմանիյե²), իսկ 1918 թ. Թավաթի կատավարության հրաժարականով լուծարվել է, նրա գործունեությունը խիստ գաղտնի է պահվել, իսկ բացահայտվել է միայն 1919-20 թթ. դատավարությունների շրջանակներում: Ուստի, ականատեսները չէին կարող գործածել պաշտոնապես նրանց տրված եզրույթը:

Հայկական սկզբանղբյուրներում այս կազմակերպության մեջ ընդգրկված անձինք և նրանց կատարած գործողությունները բնութագրվում են չեթեններ, բաշըբոգուկներ, հրոսակներ, անկանոն զորքեր, խառնակիչներ եզրույթներով: Քննելով նման եզրույթներով վկայության մանրամասները և այն համեմատելով թե՛ շքիլաթականների գործողությունների հետ՝ տեսնում ենք, որ դրանք նույնանում են «*թե՛ շքիլաթ-ը մախսուսա*» անվանվող կազմակերպության իրականացրած գործողությունների հետ:

Ինչ վերաբերում է հայերեն ուսումնասիրություններին, դրանց մեջ արդեն «*թե՛ շքիլաթ-ը մախսուսա*» կազմակերպությունը հիշվում է հատուկ, մասնավոր, մասնահատուկ, թե՛ շքիլաթ-մախսուսա, թե՛ շքիլաթ-ի մախսուսե և այլ տարբերակային ձևերով:

«*թե՛ շքիլաթ-ը մախսուսա*» (այսուհետ՝ ԹՄ) կազմակերպությանը նվիրված ուսումնասիրությունները մեծ մասամբ արվել են երիտթուրքերի դատավարության շրջանակներում հավաքագրված սկզբնաղբյուրների, դատավարության արձանագրությունների հիման վրա, որոնք ժամանակին լուսաբանվել են մամուլի մեջ: Մա առաջին փորձն է, երբ կազմակերպության ուսումնասիրությունը կատարվում է հիմք ընդունելով հայերեն անտիպ նյութերն ու վկայությունները, արևելահայերեն կամ արևմտահայերեն հրատարակված գրքերը: Մակայն սա բոլորովին չի նշանակում, թե օտար կամ հատկապես թուրքերեն աղբյուրներն ու սկզբնաղբյուրները սկզբունքայնորեն մերժել ենք:

Ուսումնասիրության հիմնաքարն է Գրիգոր վրդ. Կերկերյանի՝ Գրիկերի անտիպ և տպագիր հետազոտությունները, Ջավեն պատրիարքի կազմած ցուցակը, որը հրատարակել է թուրք հետազոտող Ալի

² Թաքվիմ-ի վեքայի, 1919 թ., հ. 3554, էջ 85:

Մաիթ Չեթինօղլուն³: Այս երկուսից գատ հնարավորին չափ օգտվել ենք 1890-1918 թթ. տպագրված հայերեն պարբերական մամուլից, ցեղասպանության վերաբերյալ գրված հուշագրություններից և այն բոլոր վկայություններից, որոնք տեղ են գտել Մաշտոցյան Մատենադարանում պահվող տարբեր անձնաց արխիվներում, Եղիշե Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում պահվող ֆոնդերում, ինչպես նաև քաղել ենք այլևայլ վավերագրերի հիման վրա տպագրված աշխատություններից:

«Թեշքիլաթ-ը մահսուսա» կազմակերպության առաջին հայ հետազոտողներից Գրիգոր վարդապետ Կերկերյանը՝ Գրիկերը⁴, ունի թեմային նվիրված տպագիր և անտիպ ուսումնասիրություններ: Մեծ աշխատանք է կատարել Պոլսից Երուսաղեմ տեղափոխված դատավարության նյութերի, սկզբնաղբյուրների ուսումնասիրման, համակարգման ու հրատարակման գործում:

Գրիկերը համարվում է նաև ԹՄ-ի առաջին հայ հետազոտողը: Նրա մեծադիր հոդվածը լույս է տեսել Գահիրեում՝ 1965 թ., «Յուսաբեր» օրաթերթի բացառիկ համարում՝ նվիրված Յեղասպանության 50-ամյա տարելիցին⁵:

Եթե «Յուսաբեր բացառիկ»-ում Գրիկերը քննության է դրել դատաքննության շրջանակներում հավաքագրված և Երուսաղեմում պահվող վավերագրերը, որոնց հիման վրա կատարել է վերլուծություններն ու կազմել ոճրագործների համահավաք ցանկը, ապա նրա մեկ այլ անտիպ «Արմենոցիդ»⁶ վերնագրված ուսումնասիրության մեջ, որը պահվում է Երուսաղեմի արխիվում, առաջինը լինելով ի մի է բերել օտար դիվանագետների գրառումները, ամերիկյան, անգլիական, գեր-

³ Çetinoğlu S., Patrik Zaven'in Ermeni Soykırımı Örgütleyecilerin Listesi, Exterminators Yok Ediciler ve Erdemli Müslümanlar, Peri Yayınları, İstanbul, 2011.

⁴ Գրիկեր, Գրիգոր Վարդապետ Կերկերյան, (1911 թ., Կյուրին (Սերաստիայի նահանգ), 1988 թ. Նյու Յորք), պատմաբան: Թուրքական պաշտոնական վավերագրերի ուսումնասիրող:

⁵ Գ.Վ.Կ. (Գրիգոր վարդապետ Կերկերյան), «Թեշքիլաթի մահսուսա», Յուսաբեր (օրաթերթ), Բացառիկ Թիւնուիրում Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակին, 1915-1965, տպ. «Յուսաբեր», Գահիրե, 1965, էջ 5-39:

⁶ Գրիկեր, Armenocide, Teşkilat-ı Mahsusa, Dossier LXXXVI, նյութը պահվում է Երուսաղեմի Ս. Հակոբյանց եկեղեցու արխիվում: Նյութի թվային տարբերակը մեր տրամադրության ներքո է դրել Միհրան Մինասյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

մանական, իտալական և այլ երկրների պաշտոնական վավերագրերը՝ ցեղասպանության և ԹՄ-ի լուսաբանման համար:

Ձեռք բերված նյութերի հիման վրա կազմել է թեշքիլաթականների ցանկերը, որի համար սկզբանորյուր է ծառայել 1918 թ. նոյեմբերի 30-ին Թուրքիայի վարչապետությանը, Ներքին գործոց նախարարությանը, Արդարադատության նախարարությանը և Ծերակույտի նախագահությանն ուղարկված երկարապատում հեռագիրը:

Հենվելով նշված վավերագրին՝ Գրիկերն իր հաշվումները կատարել է գավառների և սանջաքների՝ բանտերից ազատված հանցագործների քանակը հիմք ընդունելով: 1914 թ. դրությամբ, ըստ Գրիկերի, Օսմանյան Թուրքիան ունեցել է 30 կուսակալություն, 125 *սանջաք*⁷, 547 *բազա*⁸, 1193 *նահիյե*⁹ (*գյուղախումբ*) և 6300 գյուղ: Յուրաքանչյուր սանջաքի բանտից ազատ է արձակվել միջին հաշվով 65 ոճրագործ¹⁰: Այս մեթոդով հաշվելիս ազատ արձակված բանտարկյալների թիվը կազմում է 8125 մարդասպան:

Քանի որ սկզբնաղբյուրների փոխանցմամբ թեշքիլաթականները բաժանված էին 10-ական մարդասպանից կազմված ջոկատների, հետևաբար՝ 8125 ոճրագործները ունեցել են առնվազն 812 տասնապետ՝ Օսմանյան պետության բարձրաստիճան զինվորական: ԹՄ իրենից ներկայացնելով պետության մեջ պետություն, իսկ ոճրագործների խումբը՝ բանակի մեջ բանակ, ի մի բերված տեղեկությունների համաձայն այս ջոկատները պետք է դեկավարվեին Օսմանյան պաշտոնական բանակի դասավորությանն ու կազմին համապատասխան, հետևաբար բացի տասական խմբերից, բաժանված էին 50-ական, 100-ական գնդերի՝ կազմելով վաշտ, բանակային թեմ, բանակ և այլն:

Այսպիսով, միայն պաշտոնապես բանտերից դուրս բերված քրեական հանցագործների 8125 ոճրագործներից կազմված հրոսակախմբերն ունեցել են 165 հիսնապետ, 81 հարյուրապետ՝ կազմելով 40

⁷ Վիլայեթի մեջ մտնող վարչական միավոր, մարզ: Վիլայեթի կառավարիչն է մութասարրիֆը, սանջաքբեյը, նաև՝ միրլիվան: Տե՛ս Ն. Փափազյան, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 195:

⁸ Վարչական միավոր, մտնում էր սանջաքի մեջ: Տե՛ս Ն. Փափազյան, նշվ. աշխ., էջ 195:

⁹ Գավառակ, սանջաքի վարչական միավոր, Ա.Ն. Փափազյան, նշվ. աշխ., էջ 195:

¹⁰ Գ.Վ.Կ., *Թեշքիլաթի մահուտ*, էջ 15:

բանակային թեմ: Միայն հրամանատարների և պաշտոնապես ազատ արձակված հանցագործների ընդհանուր թիվը կազմել է 9183 մարդասպան:

Արդ, ինչպես վերևում արդեն նշեցի, լիարժեք տեղեկություն չենք կարող հավաքել ինքնակամ անդամագրված գաղթականների՝ մուհաջիրների թվի մասին, քարոզչության հետևանքով ներգրավվածների, քրդերի, չերքեզների, վրացիների և թյուրքախոս ցեղերի մասնակցության մասին:

Գրիկերն իր հերթին ոճրագործների ցանկերը ներկայացնում է նահանգներով՝ բերելով ընդմաներ երկու նահանգի՝ կուսակալության հաշվարկ. Մարաշ 314 և Այնթապ 324 մարդասպան¹¹: Եթե այս երկու նահանգների միջինը վերցնենք և բազմապատկենք 30-ով կստանանք 9570 հանցագործ:

Գրիկերը կատարել է նաև ոճրագործների դասակարգում հետևյալ սկզբունքով՝ **ոճրային պատասխանատվությունից զերծ** պարագլուխներ, **բարոյական պատասխանատուներ**, **պատասխանատու պաշտոնյաներ**, **զինվորական և ոստիկանական պատասխանատու պաշտոնյաներ**, **թեշխյաթական հրոսակախմբերի պարագլուխներ**՝ յուրաքանչյուր գավառի համար առանձին:

Այսպիսով, նա նշում է 11 ոճրային ամբաստանությունից զերծ, 15 բարոյական պատասխանատու, 7 պատասխանատու պաշտոնյա, 15 Զինվորական և ոստիկանական պատասխանատու պաշտոնյաներ, ապա ըստ նահանգների՝ **Ադրիանապոլսի** նահանգ՝ 2 պարագլուխ՝ երկուսն էլ բարձրաստիճան պաշտոնյաներ, **Այնթապի** /Հալեպի նահանգ/՝ 2 պարագլուխ, երկուսն էլ բարձրաստիճան պաշտոնյա, **Հալեպի** նահանգ՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Բաքու**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Բիթլիս**՝ 3 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Բուրս**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Պոլիս**՝ 5 պարագլուխ՝ բոլորը բարձրաստիճան պաշտոնյաներ, **Տիգրանակերտ**՝ 4 պարագլուխ՝ բոլորը բարձրաստիճան պաշտոնյաներ, **Կարին**՝ 3 պարագլուխ՝ բոլորը բարձրաստիճան պաշտոնյաներ, **Երզնկա**՝ 4 պարագլուխ, որոնցից միայն Էջգաջը Մեհմեդը վաճառական, մնացած բոլորը բարձրաստիճան պաշտոնյաներ, **Խարբերդ**՝ 2 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյաներ, **Նիկոմիդիա**՝ 1 պարագլուխ, պաշտոնյա, **Գրդ Շեհիր (Անկարայի նահանգ)**՝ 2 պարագլուխ,

¹¹ Նույն տեղում:

բարձրաստիճան պաշտոնյաներ, **Լիբանան**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Մարաշ**՝ 2 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Մարդին** 3 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Մարգվան**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Մուսուլ**՝ 4 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Մուշ**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Սամսոն**՝ 3 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյաներ, **Մեքաստիա**՝ 4 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյաներ, **Մալաթիա**՝ 2 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյան, **Տրապիզոն**՝ 1 վաճառական, մյուսը բարձրաստիճան պաշտոնյա, **Նդեսիա**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Ուրմիա**՝ 3 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Վան**՝ 1 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Յոզղատ**՝ 3 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Չանկրի**՝ 30 պարագլուխ, բարձրաստիճան պաշտոնյա, **Բոլու**՝ 11 պարագլուխ՝ բարձրաստիճան պաշտոնյա:

Գրիկերը նշում է, որ ցուցակները չի համարում վերջնական՝ ելնելով խիստ էական հետևյալ հանգամանքներից.

- Դեռևս չհրապարակված, գաղտնի պահվող փաստաթղթեր¹²:
- ԹՄ-ի անհաստիք ծառայողներ, որի մասին տեղեկություններ գրեթե չկան:
 - 1890 և 1896 թթ. ջարդերի մասնակիցներ, որոնք կազմել են առանձին խմբեր:
 - 1909 թ. Կիլիկիան կոտորածների մասնակիցների գաղտնի խմբեր:
 - Փախուստի դիմաց լեռնական ավագակներ:
 - Բանտից խույս տված մարդասպաններ:
 - Դատապարտությունը քաված նախկին ավագակների առանձին գնդեր:
 - Դասալիք զինվորականներ:
 - Կամավորների առանձին ջոկատներ¹³ և այլն:

Այս նշված խմբերի անդամակցության մասին որոշ հիշատակումներ քաղել ենք հիմնականում օրագրություններից, անձնական նամակ-

¹² Տակավին գաղտնի են պահվում թուրքական Պատերազմական ատյանի 293 թղթածրարները, որում ամփոփված են դատավարությունների ամբողջական նյութերը: Տե՛ս Գրիկեր, Եռզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը, Նիւ Եորք, 1980, էջ 33:

¹³ Գ.Վ.Կ., Թէշքիլաթի մահաուսէ, էջ 17:

ներից և հատկապես ժամանակի մամուլից, որոնց մեջ բերված վկայությունների համաձայն՝ 1890-1915 թթ. կազմակերպված կոտորածների բոլոր մասակիցները, առանձին, փորձառու խմբեր կազմելով մասնակցել են և՛ ջարդերին, և՛ քարավանների կողոպտմանը՝ կուտակելով թուրքական ոսկու ահռելի կարողություն:

Զավեն պատրիարքի կազմած հայոց ցեղասպանության կազմակերպիչների ցանկը աշխատության բնագիրը հրատարակության է պատրաստել թուրք հետազոտող Ալի Սաիթ Չեթինօղլուն: Բնագիրն անձամբ չենք կարողացել տեսնել, համեմատել և ճշգրտել: Այս երկրորդ ցուցակում բերված են կազմակերպիչների ցանկերը, կենսագրական երկար մանրամասնություններով: Չնայած Չեթինօղլուի աշխատանքը գրված է Զավեն պատրիարքի ցուցակի հիման վրա, բայց ունի նաև հավելումներ, որոնք արվել են Վարչապետության Հանրապետական արխիվի, Օսմանյան արխիվի և զանազան այլ սկզբնաղբյուրների, հետազոտությունների հիման վրա:

Պետք է նշենք, որ ԹՄ թվաքանակի համար առ այսօր շրջանառության մեջ է դրվել Ֆիլիպ Հենրի Ստոդոարդի ներկայացրած թիվը: ԹՄ-ի առաջին հետազոտողը նշում է, որ թեշքիլաթականների ընդհանուր թիվը եղել է 30 000 մարդ: Սակայն նա ներկայացրել է միայն հետախուզական թևը, և ընդհանրապես չի անդրադարձել Մեծ Եղեռնին ունեցած մասնակցությանը, որը կարծում ենք, բխում էր նրա ընտրած ուսումնասիրության նպատակից, որն էլ թուրք-ամերիկյան հարաբերությունների մերձեցման ծիրից ներս էր: Չնայած դրան՝ մենք կարևորել և հաշվի ենք առել նաև այս ուսումնասիրությունը:

Ի վերջո հաշվարկ կատարելով բոլոր սկզբնաղբյուրներում բերված տեղեկությունները՝ կատարել ենք մեր հաշվարկը: Ըստ այդմ կազմել ենք աղյուսակներ, որոնց մեջ ներառել ենք պարագլուխներին, առկայության դեպքում զինվորական կոչումը և զբաղեցրած պաշտոնը, հնարավորության դեպքում ճշտել ենք ազգային պատկանելությունը, առանձին ցանկով նշել նրանց մասնակցությունը գույքի հափշտակմանը, անհատապես կուտակած ոսկու չափն, առանձին հավելվածով ցույց ենք տվել նաև հայ գաղթականների քարավանների համար նա-

խատեսված մահվան գոտիները և այդ գոտիները վերահսկող թեշքիլաթական-մարդասպաններին¹⁴:

Այսպիսով, միայն բանտերից պաշտոնապես ազատ արձակվածների թիվը կազմում է մոտավորապես 10 000 մարդասպան, իսկ պատասխանատու պաշտոնյաների թիվը ըստ մեր արված հավելումների և հաշվարկների՝ կազմել է 1294 մարդասպան:

Ինչ վերաբերում է հետախուզական ցանցի մեջ ներգրավված անձնաց թվին, ինչպես հայտնի է, Ֆիլիպ Հենրի Սոտոդարդը գրել է իր ուսումնասիրությունը բանավոր գրույցների հիման վրա¹⁵, քանի որ վերջինիս չեն թույլատրել օգտագործելու պատերազմի շրջանի արխիվները¹⁶: Իր ուսումնասիրության մեջ խոսում է 30 000-ի մասին¹⁷: Ահմեթ Թեթիկն իր հերթին գրքի առաջին հատորում, որն ընդգրկում է 1914-1916 թթ., խոսում է ավելի քան 400 բարձրաստիճան զինվորականի մասնակցության մասին¹⁸:

¹⁴ Ցավոք, ծավալի պատճառով մեր կազմած ցանկերը չենք կարող ներառել հողվածի մեջ: Այն ամբողջությամբ տեղ կգտնի թեկնածուական ատենախոսության մեջ՝ որպես հավելված:

¹⁵ Stoddart P., նշվ. աշխ., էջ 253-259:

¹⁶ Stoddart P., նշվ. աշխ., էջ 259:

¹⁷ Ֆիլիպ Հենրի Սոտոդարդը ԱՄՆ ԱԳՆ տեղեկատվության և ուսումնասիրությունների Թուրքիայի բաժնի մասնագետ էր: Ի սկզբանե նրան հանձնարարված էր գրել 1908-1918 թթ. Օսմանյան պետության և արաբական ազգայնականների հարաբերությունների մասին: Սակայն, քանի որ թեման շատ ծավալուն էր, Սոտոդարդն այն նեղացնելով, արաբա-օսմանյան հարաբերությունները դիտարկեց ԹՄ-ի հետ ունեցած առնչությունների ծիրից ներս: Ութամյա աշխատանքից հետո, 1963-ին Սոտոդարդն ավարտեց ատենախոսությունը. "The Ottoman Government and The Arabs, 1911-1918: A Preliminary Study of the Teşkilât-ı Mahsusa": Վերջինիս գլխավոր սկզբնաղյուրը Քուշուբաշը Էշրեֆի հայերյան նոթերն էին: 30 տարի անց ատենախոսությունը թարգմանվեց և հրատարակվեց թուրքերեն: Սոտոդարդի այս աշխատանքը թուրքական խորքային պետության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է: Այնտեղ մատչելի ձևով ներկայացված են Ֆրանսիայի, Ռուսաստանի, Անգլիայի և Իտալիայի վերահսկողության ներքո գտնվող իսլամական աշխարհը միավորելու, պանիսլամիզմի և պանթուրքիզմի գաղափարախոսությունների տարածման և նշված երկրներում իսլամական հեղափոխական կոմիտեների կազմավորման մանրամասնությունները:

¹⁸ Tetik A., Teşkilat-ı Mahsusa (Umur-ı Şarkiyye Dairesi) Tarihi cilt I: 1914-1916, İşbankası Y. 2014, 1. C.:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք, որ սույն ուսումնասիրությունը, սույն հաշվարկը կատարեցինք փաստագրական, վավերագրական, տպագիր կամ ձեռագիր, առհասարակ գրավոր աղբյուրներում առկա արձանագրությունների հիման վրա: Հաշվարկից տակավին դուրս են մնացել քարոզչության հետևանքով ներգրավված բնակչությունը, մուհաջիրները, գաղտնի գործակալները և այլն:

Սույն ուսումնասիրության ամբողջական ցանկերը՝ օգտագործված աղբյուրներով տեղ է գտել մեր թեկնածուական ատենախոսության հավելվածի մեջ:

Մեր ներկայացրած թիվը վերջնական չէ: Նոր աղբյուրների հրապարակման և նոր աշխատասիրությունների պատրաստման պարագայում ոճրագործների մեր ներկայացրած թիվը անշուշտ կարող է փոփոխություն կրել:

VERA SAHAKYAN
(Scientific Research Institute of Ancient Manuscripts named
after Mesrop Mashtots)

ABOUT THE STAFF AND QUANTITY OF THE "SPECIAL ORGANIZATION"
(TEŞKILAT- MAHSUSA)

Within the framework of the article, we have tried to count the total number of prisoners and high-ranking officials of Special Organization based on the archives of Jerusalem, materials from Matenadaran and other printed sources. According to our calculations, the number of criminals taken out of prisons was about 10,000 criminal offenders and 1294 high-ranking officials.

We do not consider this calculation as final, as there are many unexplored sources, the publication of which might make alterations in the number offered by us.

ԱՐՏԱԿ ԶԱՐԳԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ. ՍԱԱԿԱՇՎԻԼԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ

1988 թ. Սարփիի անցակետի բացումով Թուրքիայի և Վրաստանի միջև սկսվեց այսպես կոչված «Ճամպուրկային առևտրի» փուլը: Երկկողմ առևտրատնտեսական համագործակցությունը կարգավորող առաջին պայմանագիրը ստորագրվեց 1992 թ. հուլիսի 30-ին Թբիլիսիում¹: Այս պայմանագրով կողմերը համաձայնություն էին ձեռք բերում ներմուծվող և արտահանվող ապրանքների համար կիրառել ավելի պարզեցված մաքսատուրք: Կողմերը պայմանավորվեցին բարելավել նաև բանկային ոլորտի գործակցությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության այս սեգմենտը հանդիսանում էր առևտրային և գործարար միջավայրի զարգացմանն ուղղված ամենակարևոր ոլորտներից մեկը:

Երկկողմ առևտրային հարաբերությունների զարգացման մեջ մասնավոր սեկտորի ներգրավվածությունն ապահովելու նպատակով թուրքական «Էքսիմ» բանկը Վրաստանին տրամադրելու էր 20 մլն դոլարի վարկ: Բացի այդ, Վրաստանը Թուրքիայից ստանալու էր 50 մլն դոլարի լրացուցիչ վարկ²: Այս համաձայնագրով նաև նախատեսված էր երկու երկրների կառավարությունների միջև երկկողմ տնտեսական և առևտրային հարաբերությունների հետագա զարգացումը խթանելու նպատակով ստեղծել թուրք-վրացական միասնական տնտեսական հանձնաժողով³:

Երկանում, մինչև 2004 թ. Վրաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունները կրում էին տարերային բնույթ (տե՛ս Աղյուսակ 1): Զգացվում էր համակարգային մոտեցման բացակայություն, Վրաստանի տնտեսության հանդեպ Թուրքիայի հետաքրքրության ոչ բավարար մակարդակ: Հետխորհրդային տնտեսա-

¹ Совместное Грузино-Турецкое заявление, Свободная Грузия, 01.08.1992.

² Նույն տեղում:

³ Özbay R., Gürcistan Sosyo-Ekonomik Yapısı Dünyave Türkiyeile İlişkiler, Istanbul, 2014, s. 219.

կան ճգնաժամը, անցումը շուկայական տնտեսության, հստակ տնտեսական դոկտրինի բացակայությունն օր օրի ավելի էր խորացնում Վրաստանի տնտեսական ճգնաժամը: Այս ամենին գումարվում էին նաև ներքին միջէթնիկական բախումները, քաղաքացիական պատերազմը, հանցագործությունն ու կոռուպցիան, որի արդյունքում Վրաստանի տնտեսությունն աննախադեպ անկում ապրեց⁴: «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի տնտեսությունը սկսեց արձանագրել տեսանելի ու շոշափելի բարեփոխումներ գրեթե բոլոր բնագավառներում: Վրաստանի նոր տնտեսական քաղաքականությունը նշանավորվեց երկրի հարկային համակարգի և շուկայի ազատականացմամբ, որի շնորհիվ ստեղծվեց ավելի բարենպաստ միջավայր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ներդրողների համար, ձևավորվեց ձեռներեցությունը խրախուսող ու աջակցող միջավայր: Ինչպես նշում է Վրաստանի նախկին վարչապետ Վ. Գուրգենիձեն՝ «.. դա իսկական ձեռնարկատիրական հեղափոխություն էր»⁵:

Ինչպես Վրաստանի, այնպես էլ Թուրքիայի քաղաքական վերնախավերը ցուցաբերում էին շահագրգռվածություն ու քաղաքական կամք՝ երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների խորացման ուղղությամբ: 2004-2013 թթ. ընթացքում երկու երկրների միջև ստորագրվեցին շուրջ յոթ տասնյակ երկկողմ և բազմակողմ պայմանագրեր, որոնք վերաբերում էին առևտրի ազատականացմանը, վիզայի ռեժիմի վերացմանը, կրկնակի հարկման համակարգի վերացմանը, բնական գազի և նավթի փոխադրման, բարձր լարման էլեկտրականության մատակարարման, բեռնափոխադրումների ոլորտներին⁶:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս պայմանագրերի և երկրի տնտեսության մեջ կատարված արտաքին ներդրումների շնորհիվ Վրաստանի տնտեսությունը ենթարկվեց արմատական բարեփոխումների: Երկրի տնտեսության մեջ գերակա ուղղություն դարձան տարանցիկ

⁴ Georgia's Libertarian Revolution Part one: Georgia as a model Berlin – Tbilisi – Istanbul, 10 April 2010,

http://www.esiweb.org/pdf/esi_-_georgias_libertarian_revolution_-_part_one_-_georgia_as_a_model_-_10_april_2010.pdf


⁵ Georgian-Turkish Free Trade Agreement 2008: Implications Two Years After, The Black Sea Trust for Regional Cooperation, Tbilisi, March 2011, p 14.

⁶ Tvalodze S., Georgia-Turkey Trade Relations - Challenges and Opportunities, PMC Research Center, Tbilisi, 2016.

փոխադրումների ու ծառայությունների ոլորտները: Վրաստանը դարձավ տարանցիկ և սպասարկող երկիր տարածաշրջանային տնտեսական նախագծերի համար, որոնք ունեին աշխարհաքաղաքական ու ռազմավարական կարևորություն: Այս տնտեսական բարեփոխումների արդյունքում բարձրացավ նաև Վրաստանի քաղաքական կշիռն ու դերակատարումը տարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացներում:

Աղյուսակ 17

Վրաստանի և Թուրքիայի միջև փոխադարձ առևտրային հաշվեկշիռը 1995-2004 թթ.



Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի՝ 2004 թ. Վրաստան կատարած պաշտոնական այցելությունը կարևոր նշանակություն ունեցավ երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցությունը զարգացնելու ու խորացնելու հարցում: Օգոստոսի 11-ին Ռ. Թ. Էրդողանը թուրք գործարարներից բաղկացած մեծ պատվիրակության ուղեկցությամբ ժամանեց Վրաստան⁸: Մ. Սասկաշվիլու հետ ունեցած համատեղ ճեպագրույցի ժամանակ Ռ. Թ. Էրդողանը շեշտեց, որ թուրք

⁷ Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրության գրասենյակի պաշտոնական կայքը ,http://geostat.ge/index.php?action=page&p_id=134&lang=eng

⁸ Erdogan to visit Georgia, Turkish Press Review, 11.08.2004.

<http://www.hri.org/news/agencies/trkpr/2004/04-08-11.trkpr.html>

գործարարներից բաղկացած պատվիրակության հետ այցելությունը վկայում է այն մասին, որ Թուրքիան պատրաստ է խորացնել իր տնտեսական հարաբերությունները Վրաստանի հետ: Իր վրաց գործընկերոջ հետ հանդիպման ընթացքում Թուրքիայի վարչապետն առաջարկեց երկու երկրների միջև բացել երրորդ սահմանային անցակետը՝ Կարս-Ախալքալաք հատվածում՝ պատրաստակամություն հայտնելով այդ նախագծի համար գտնել համապատասխան ֆինանսավորում⁹: Կողմերը քննարկեցին նաև Բաքու-Թբիլիս-Ջեյհան նավթամուղի հարցը: Ռ. Թ. Էրդողանը ընդգծեց, որ նավթամուղի շահագործումը բավական կարևոր է երկու երկրների համար՝ շեշտադրելով այն հանգամանքը, որ նավթամուղը հնարավորություն կտա Վրաստանին ապահովել ավելի մեծածավալ արտաքին ներդրումներ երկրի տնտեսության մեջ: Կողմերը քննարկեցին նաև Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծի կառուցման հարցը: Նույն թվականի մայիս ամսին Անկարա կատարած պաշտոնական այցի ժամանակ Մ. Սաակաշվիլին թուրքական կողմին առաջարկել էր պարզեցնել Մարփիի անցակետով դեպի Թուրքիա գնացող քաղաքացիների վիզայի տրամադրման գործընթացը: Նախագահ Սաակաշվիլին խոստացել էր, որ Վրաստանն այսուհետ կհեշտացնի այդ գործընթացը Թուրքիայի քաղաքացիների համար¹⁰: Հանդիպման վերջին օրը՝ օգոստոսի 13-ին, կողմերն այցելեցին Մարփիի անցակետ, որտեղ Մ. Սաակաշվիլին և Ռ. Թ. Էրդողանը համատեղ հայտարարությամբ ազդարարեցին այն մասին, որ Վրաստանի ու Թուրքիայի քաղաքացիներն այսուհետև առանց վիզայի կարող են հատել Մարփիի անցակետը¹¹:

Այսպիսով, կարելի արձանագրել, որ վարչապետ Էրդողանի այցելությամբ Վրաստանի և Թուրքիայի միջև սկսվեց առևտրատնտեսական հարաբերությունների նոր փուլ: Ինչպես Թուրքիայի, այնպես էլ Վրաստանի քաղաքական վերնախավը պատրաստ էր այդ նոր փուլի մեկնարկին: Թուրքիան դրա համար ուներ անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, արտահանումը խրախուսող տնտեսական քաղաքականություն, համապատասխան տնտեսվարող սուբյեկտներ, որոնք

⁹ Erdoğan'dan Gürcistan'a: Gecikmeye tahammül yok, Sabah, 12.08.2004.

¹⁰ სააკაშვილი მივსალმება თურქეთის როლს აჭარის კრიზისის მოგვარების საქმეში, 20.04.2004.

<http://www.civil.ge/geo/article.php?id=6805&search>

¹¹ Sarp'tan vizesiz geçilecek, Milliyet, 13.08.2003.


պատրաստ էին թուրքական արտադրանքն արտահանել Վրաստան, այստեղ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Վրաստանը վերանայել էր իր երկրի հարկային համակարգը, ազատականացրել էր ներքին շուկան օտարերկրյա՝ հատկապես թուրք գործարարների և ներդրողների համար, թուրքական կապիտալի անարգել ներհոսքը ապահովելու համար ստեղծել էր բարենպաստ գործարար միջավայր: Անձամբ նախագահ Մ. Սաակաշվիլին քաջալերում ու աջակցում էր թուրք գործարարներին՝ Վրաստանի տնտեսության մեջ ներդրումներ անելու, երկրի տարածքում արտոնյալ պայմաններով գործունեություն ծավալելու համար: Մ. Սաակաշվիլու այս աջակցությունը լրացուցիչ ազդակ էր ոչ միայն թուրքական մանր ու միջին ձեռնարկատերերի, այլ խոշոր կապիտալի ներկայացուցիչների համար՝ ավելի համարձակ ներդրումներ անել Վրաստանի տնտեսություն մեջ:

2005 թ. տվյալներով Վրաստանում առկա էին թուրքական կապիտալով աշխատող 100-ից ավելի ընկերություններ, որոնք ներկայացնում էին հեռահաղորդակցության, վերամշակող արդյունաբերության, շինարարության, ծառայությունների մատուցման և այլ ոլորտներ: Վրաստանի տնտեսության մեջ իր ազդեցությունն ուժեղացնելու համար Թուրքիան կիրառում էր կենտրոնացված ներդրումային քաղաքականություն: Վրացական շուկա սկսեցին ներթափանցել թուրքական այնպիսի խոշոր տնտեսվարողներ, ինչպիսին էին Եվրոպայի ամենախոշոր ապակի արտադրող կոնցեռնը՝ «Turkiye Sise ve Cam Fabrikalari A.S.» (Sisecam), ծանր արդյունաբերության, շինարարության, սննդի արտադրության բանագավառում խոշոր արտադրող «Sener Arda» կազմակերպությունը, որն իրականացնում էր Բաթումիի նավահանգստի արդիականացումն ու վերազինումը, կառուցում էր թուրք-վրացական միջազգային առևտրի կենտրոնը Թբիլիսիում: Թուրքական մեկ այլ կազմակերպություն՝ «Arda Enterprises Ltd»-ը, Քոբուլեթիում կառուցեց ամսական 1200 տ. արտադրություն ունեցող ալյուրաց: Թուրքական «Turkcell» բջջային օպերատորը հանդիսանում է վրացական «Geocell» ընկերության գլխավոր բաժնետերը: «Delta Petrol» նավթային ընկերությունը, որը հանդիսանում է «Transteknik» հուլիինգի քույր ընկերությունը, սպասարկում է Փոթիի նավթահորերը, ինչպես նաև իրականացնում է ծովային բեռնափոխադրումներ: Կազմակերպությունը կատարել էր մոտ 15 մլն դոլարի ներդրում Փոթիի նավթային տերմինալում, հանդիսանում էր «Georgian-Turkish Channel Energy» ընկերության 75 տոկոս

բաժնետոմսերի սեփականատերը և ցանկանում էր սեփականաշնորհել Փոթիի նավահանգիստը¹²: Վրաստանի տնտեսության մեջ զգալիորեն ներթափանցել էին նաև թուրքական այնպիսի շինարարական խոշոր կազմակերպություններ, ինչպիսին էին՝ «Baytur», «Borova», «Burc», «TML», «Ustay» և «Zafer»: Թուրքիան իր հետաքրքրությունն էր ցուցաբերում նաև Վրաստանի տուրիզմի և գյուղատնտեսության բնագավառների նկատմամբ: Այսպիսով, 2003-2013 թթ. ընթացքում Վրաստանի տնտեսության մեջ Թուրքիայի կատարած ուղղակի ներդրումները կազմեցին 855 մլն. դոլար (տե՛ս Աղյուսակ 2), որը կազմում էր երկրի տնտեսության մեջ կատարած օտարերկրյա անմիջական ներդրումների մոտ 12%-ը¹³:

Աղյուսակ 2¹⁴

Վրաստանի տնտեսության մեջ Թուրքիայի կատարած ուղղակի ներդրումները 2003-2013 թթ.



Վրաստանը դարձավ առաջին հետխորհրդային երկիրը, որտեղ Թուրքիային հաջողվեց շրջանցել Ռուսաստանին և դառնալ նրա թիվ

¹² Özbay R. D., նշվ. աշխ., էջ 218:

¹³ Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրության գրասենյակի պաշտոնական կայքը,

[/http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/](http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/)


¹⁴ Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրության գրասենյակի պաշտոնական կայքը,

[/http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/](http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/)

մեկ առևտրային գործընկերը¹⁵: Սկսած 2006 թ. արտաքին առևտրի շրջանառության ոլորտում, իսկ 2008 արտահանման բնագավառում, Թուրքիան դարձավ Վրաստանի գլխավոր առևտրային գործընկերը: Նրան բաժին էր ընկնում Վրաստանի արտաքին առևտրի շրջանառության 14.9 % և ներմուծման 17.6 %-ը¹⁶:

Աղյուսակ 3-ում և 4-ում ներկայացված է Վրաստանի և Թուրքիայի փոխադարձ առևտրային հաշվեկշիռը 2003-2013 թթ. ընթացքում:

Աղյուսակ 4 ¹⁷



Պաշտոնական տվյալները փաստում են, որ 2003 թ. հետ համեմատած, 2013 թ. Վրաստանի արտահանումը Թուրքիա աճել էր մոտ 2 անգամ և կազմում է 184 մլն դոլար: Համեմատության համար պետք է նշենք, որ այդ նույն ժամանակահատվածում Թուրքիայից Վրաստան ներմուծման ծավալն աճել է գրեթե 12 անգամ և կազմում է 1.410 մլն դոլար: Շնորհիվ այն հանգամանքի, որ Վրաստանի ներքին շուկան սպառում է թուրքական արտադրության տարբեր իրեր ու ապրանքներ, Թուրքիայում ստեղծվում է տարեկան 60.000 աշխատատեղ: Ընդ որում, թուրքական ապրանքատեսակները հատկապես գրավում էին վրա-


¹⁵Çelikpala M., Turkey as a Regional Power and the Caucasus, Insight Turkey. 2007. Vol. 9, № 2. p. 28.

¹⁶ Арчвадзе И., նշվ. աշխ.:

¹⁷ Տվյալները՝ Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի պաշտոնական կայքից: /<http://www.geostat.ge/index.php?action=0&lang=geo/>

ցական շուկայի այն սեգմենտը, որտեղ մինչև 2000 թ. վրացական արտադրության ապրանքները գրեթե մենաշնորհային դիրքեր էին զբաղեցնում¹⁸:

Աղյուսակ 5¹⁹



Իրականում, Վրաստանը Թուրքիայի արտաքին առևտրի շրջանառության մեջ գրավում էր երկրորդական տեղ: 2012 թ. տվյալներով նրան բաժին էր ընկնում Թուրքիայի արտահանման 0.9%, իսկ ներմուծման 0.07%: Վրաստանը անգամ չի մտնում Թուրքիայի 20 խոշոր առևտրային գործընկերների ցանկի մեջ²⁰: Վրացական շուկայում թուրքական ապրանքների սպառումը հիմնականում իրականացվում էր արտագնա աշխատողների կողմից դեպի Վրաստան կատարվող դրամական փոխանցումների հիման վրա: Թուրքիայից ներմուծվող ապրանքների տարեկան ծավալն ուղիղ համեմատական է այդ փոխանցումներին: Ընդ որում, Թուրքիայից ներմուծվող ապրանքները փակում էին այդ դրամական փոխանցումների 80-90%-ը: Օրինակ, 2013 թ. վրաց արտագնա աշխատողների կողմից կատարվել էր 1477 մլն դոլարի

¹⁸ Kartal Ç., Gürcistan ve Türkiye ilişkileri, Trakya Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Edirne, 2007, s. 151.

¹⁹ Տե՛ս Վրաստանի Ազգային վիճակագրության գրասենյակի պաշտոնական կայքը, [/http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/](http://geostat.ge/index.php?action=page&p_id=2231&lang=eng/)

²⁰ Арчвадзе И., նշվ. աշխ.:

դրամական փոխանցումներ: Իսկ Թուրքիայից ներմուծել էր 1346 մլն դոլարի ապրանք²¹:

Վրաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ «Ազատ առևտրի համաձայնագիրը» (այսուհետ՝ ԱԱՀ), որը ստորագրվեց 2007 թ. նոյեմբերի 21-ին՝ Թբիլիսիում անցկացվող Վրաստան-Թուրքիա բիզնես ֆորումի շրջանակներում²²: Փաստաթուղթը ստորագրելուց հետո նախագահ Ս. Սաակաշվիլին անձամբ շնորհակալություն հայտնեց Թուրքիայի նախագահ Ա. Գյուլին պայմանագրի ստորագրմանը խոչընդոտող բոլոր արգելքները վերացնելու և այն կարճ ժամկետներում վերջնական տեսքի բերելու համար²³: Վրաստանի համար այս պայմանագիրը նշանակալի առաջընթաց էր տարածաշրջանային կարևոր գործընկերոջ Թուրքիայի հետ, ինչպես առևտրային, այնպես էլ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների բարելավման տեսանկյունից:

Համաձայնագիրն ուժի մեջ մտավ միայն հաջորդ տարի՝ 2008 թ. նոյեմբերի 1-ին: Թուրքական մամուլի փոխանցմամբ՝ այդ համաձայնագրի շուրջ բանակցությունները սկսվել էին դեռևս 2006 թ. Դեկտեմբերից, երբ Անկարա էր ժամանել Վրաստանի նախագահ Ս. Սաակաշվիլին²⁴: Անհրաժեշտ է նշել, որ ԱԱՀ-ի շուրջ ընթացող բանակցություններն ոչ միշտ են հարթ ընթացք ունեցել: 2006 թ. դեկտեմբերին Վրաստանում Թուրքիայի դեսպանությունը Վրաստանի կառավարությանը ներկայացրեց Թուրքիայի և Վրաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի թուրքական տարբերակը: Այս տարբերակի շուրջ քննարկումների առաջին փուլը տեղի ունեցավ 2007 թ. փետրվարին Անկարայում: Այդ փուլում թուրքական կողմը դեռ պատրաստ չէր գնալ զիջումների, մասնավորապես կրճատել այն ապրանքների ցանկը, որոնց ներմուծումը Վրաստանից Թուրքիա արգելված էր: Նշենք, որ այդ ցանկը հասնում էր մոտ 140-ի²⁵: Այս ամենի հետևանքով համաձայնա-

²¹ Նույն տեղում:

²² Saakashvili Praises Turkey's Fast Decision on Free Trade Treaty, 21.11.2007. <http://www.civil.ge/eng/article.php?id=16391/>.

²³ Նույն տեղում:

²⁴ Saakashvili Türkiye'ye geldi, Hürriyet, 19.12.2006

²⁵ Tsikhelashvili K., Chkhutishvili I., Georgian-Turkish Free Trade Agreement 2008: Implications Two Years After, Published by The European Initiative Liberal Academy

გრი ჯორჯ უნივერსიტეტის მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს. 2007 წ. იანვარში მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.

მნიშვნელოვანია, რომ უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.

1. უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.
2. უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.

ეს ხომ უნდა იყოს, როდესაც უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.

შედეგად, უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებული მენეჯერები დასრულებულია უნივერსიტეტის მენეჯერების პროგრამით და ეძღვნება უნივერსიტეტის მენეჯერების პროგრამის დასრულებულ მენეჯერებს.

Tbilisi (EI-LAT), Tbilisi, March 2011, p 31.

²⁶ Tsikhelashvili k., Chkhutishvili I., იტალია, გვ. 32:

²⁷ შეთანხმება თავისუფალი ვაჭრობის შესახებ საქართველოსა და თურქეთის რესპუბლიკას შორის, მუხლი 1. მიზნები, ნაწილი "ბ", "დ", <https://www.matsne.gov.ge/ka/document/view/1311090>.

ეტიკეტები და სტრუქტურები, որთადაც სხვა ხամადანადეკრეტე ჟარბანომ ღინ ათადელ არბჟეადიორ ჟილი კიორღი ხამარ: ანაღინღ, ორნ ოსთ ლიბიან ხანღიხანომ ღე ა.ა.ა-ღ ანსკონანჟარღ, ჟა აინ ჟეტიბნ ღე, ოროღ ᄢღ ჯარბ ააჟრანჟათესასკნღ დეღრეადათღვეღინ ᄢაჟსათორბღ, ჰსკ ოროღ ააჟრანჟნღღი ხამარ სახინანღდ ᄢაჟსათორბღ კრდათღ-ღვე: ბერიორღღ ᄢეღეღღღე ააჟრანჟნღღი ჟილიორღინი ააჟახიღადეღინ სკეღინღღ, ოღი ხამადან რენენღ ააჟახიღადეღინ ღინ ოღსღეღი, ჰ აიღ ააჟახიღადეღინ ᄒიღინ ᄒიღინ ღე ხადასარაღე ჟილი ჟიღინღინ: ბღ ბერიორღ ᄒიღინთესასკან ბადინ ოროღ ააჟრან-ჟათესასკნღღი ხამარ ᄢეღეღღღე ასკეღინღი ჟღიორღინი ხამსკარღ²⁸: ა.ა.ა-ღ ᄢიღ ᄢღ ᄢინღღღე ხეთ ᄒრასათინი ჰღინანღიღინღინღინღინ ჰიღსღ ᄢინღინ, ორ 70 ᄢღ. რისკღიღინ ᄢინღეღღ ጁრიღინ ᄢაღინაღი ღე ᄒრადგასკან ართორღინღღ, ხათსკაღე ᄒიღინთესასკან ბადინ, ართახანღღი ხამარ ᄢეღ ᄢეკინათღე ჯიღ, ოღი ᄒიღინიღ ჟიღი ᄢინთესათიღინღ კარდ ბინანსკონ კარღღ ღე არბანადეღღ ოღიღღეღინ ად²⁹: ᄢასკინ, ᄒრად ᄒიღინანღინღი ᄒინღინანღ ᄢრთახან-ინ ᄢადღღინღინ აიღაღე ღე ᄒიღინ ასსკეღინღ ᄒიღინანღინღინ: ጁრიღინ ᄒიღინიღ ᄒიღინ ღე ᄢრადგასკინიღ რადღსკან კიღღ ააღინანღ, ორონღ ᄒრად ᄒიღინანღინღინ ᄢი ᄒრასათინი ᄢინთესათი-ღინ ᄢინღინ ᄒათრასთ ᄒღინ³⁰:

ღინღ ხეღინ, ᄒრასათინომ აღინათიღ ጁრიღ ᄒიღინანღინღინღინ რადღინ ღინ ᄢღ ჯარბ ჰინღინღინღინ ᄢი ጁრინღინღინღინ, ᄢანანადორაღე

1. ᄢაჟსანენღ დანანაჟარბიღ ጁრიღინიღ ᄒრასათინ ᄢინღინიღღიღი ააჟრანჟნღინღ ᄢინღინ ღინ ᄢღ არღარ ᄢრადგასკინიღ ააღინანღ ᄢინ ጁრიღ ᄒიღინანღინღინი ხამარ, ᄢიღინ ᄢინღინიღინ ღინ ᄢიღინ ააჟრანჟნღინ ოღინსკან დანანაჟარბიღ, ᄒდარინ

²⁸ შეთანბეღა თავისუღვალი ვაჭრობის შესახეღ ჰაქართველოსა და თურღეღის რეღბღღღინ ጁრის,

<https://www.matsne.gov.ge/ka/document/view/1311090>

²⁹Georgian Government Works to Expand FTA List, 2008, Invest Today, Issue No. 8, p. 4, retrieved from <http://www.investinggeorgia.org/uploads/file/invest8.pdf> on September 23, 2010.

³⁰ Georgia Struggles to Compete with Turkish Economy: Two years on, free trade deal has not resulted in promised export surge, 2010, retrieved from <http://iwpr.net/report.news/georgia.struggles.compete.turkish.economy> on October 15, 2010.

էին մաքսազերծման հարկերը և հայտնվում են ոչ շահեկան պայմաններում,

2. Վրաստանի օրենսդրական բացերը և օրենքները տարբեր կերպ մեկնաբանելու հնարավորությունը, գործնականում ստեղծում էր դժվարություններ արդար բիզնես վարելու համար,
3. Թուրքիայի հանդեպ վերաբերմունքը Վրաստանում, ընդհանուր առմամբ, այդքան էլ դրական չէ: Դա գալիս էր նախ և առաջ պատմական հիշողությունից, հետևաբար, թուրք գործարարների հանդեպ վստահությունն ու վերաբերմունքը լիովին դրական չէր կարող լինել,
4. 1990-ականների ընթացքում Թուրքիայից Վրաստան էին ներմուծվում անորակ ապրանքներ, ինչը թուրքական արտադրանքի հանդեպ ձևավորել էր բացասական վերաբերմունք,
5. Երկարատև ներդրումներ անելու համար բացակայում էր պետության կողմից անհրաժեշտ աջակցությունն ու հստակ երաշխիքները,
6. Վրաստանի ներքին շուկայի զարգացման վերաբերյալ անհրաժեշտ վերլուծությունների և հավաստի վիճակագրության բացակայությունը նույնպես խոչընդոտ էր երկարատև ներդրումներ իրականացնելու տեսանկյունից³¹:

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ Թուրքիան Վրաստանում իրականացնում էր տնտեսական էքսպանսիայի հստակ քաղաքականություն: Այս քաղաքականությանը նպաստում էին նաև Վրաստանի նոր իշխանությունները, որոնք Թուրքիայի հետ տնտեսական կապերի ամրապնդման և գործընկերային հարաբերությունների զարգացման համար ստեղծեցին համապատասխան պայմաններ: Թուրքական կապիտալի անարգել ներհոսքը դեպի Վրաստան ապահովելու համար Վրաստանի իշխանությունները ազատականացրեցին երկրի հարկային համակարգը, թուրք գործարարների համար ստեղծեցին արտոնյալ պայմաններում բիզնես վարելու հնարավորություն: Վրաստանի տնտեսության մեջ իր ազդեցությունն ուժեղացնելու համար Թուրքիան կիրառում էր կենտրոնացված ներդրումային քաղաքականություն: Ծանր և վերամշակող արդյունաբերության, շինարարության, սննդի արտադրության ու գյուղատնտեսության, հեռահաղորդակցության, բեռնափո-

³¹ Tvalodze S., Adeishvili G., Georgia-Turkey Trade Relations - Challenges and Opportunities, PMC Research Center, Tbilisi, 2016.

խաղրումների, նավթամշակման բնագավառներում հայտնի թուրքական մի շարք խոշոր ընկերություններ, շնորհիվ արտոնյալ պայմանների, կարողացան ներթափանցել Վրաստանի տնտեսության մեջ և այստեղ զբաղեցնել գերիշխող, եթե ոչ մենաշնորհային դիրքեր: Նման խոշոր ու փորձառու տնտեսվարող կազմակերպությունների ներթափանցումը Վրաստան գրեթե անհնարին էր դարձնում վրացական տնտեսվարողների գոյությունն այդ ոլորտներում, ինչը ենթադրում էր լիարժեք կախվածություն թուրքական արտադրանքից, տնտեսության այդ բնագավառներում ազգային արտադրության մասնակի կամ իսպառ բացակայություն: Վրաստանի տարածքում գործունեություն իրականացնող թուրք գործարարները ստանում էին պետական դոտացիաներ, իսկ Վրաստանի ո՛չ բյուջեն, և ո՛չ էլ տնտեսական քաղաքականությունը նման հնարավորություններ չէր տալիս սեփական տնտեսվարողներին: Նման անհավասար պայմաններում Թուրքիա-Վրաստան տնտեսական համագործակցության մասին խոսելը այդքան էլ տեղին չէ, քանի որ Վրաստանի տնտեսությունը իր զարգացման մակարդակով ու ծավալներով պատրաստ չէր նման համագործակցության: Թուրքիան բացահայտ տնտեսական էքսպանսիայի էր ենթարկում Վրաստանին, նրան օգտագործելով որպես սեփական արտադրանքի արտահանման համար շուկա:

2007 թ. ստորագրված ԱԱՀ-ը կարևոր քայլ էր երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար, սակայն այն չկարողացավ ապահովել ակնկալվող արդյունքները Վրաստանի տնտեսության համար: Վրաստանը տնտեսապես պատրաստ չէր ներթափանցելու Թուրքիա և դիմանալու այստեղի շուկայում գործող մրցակցությանը: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայի պես դիմամիկ զարգացող, ժողովրդագրական առումով երիտասարդ երկրի հետ հարևանությունը Վրաստանի համար կարող էր ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալ-մշակութային, մենթալ ու ժողովրդագրական բնույթի լուրջ հետևանքներ ունենալ: Վերջին տարիներին պահպանվող միտումների պայմաններում մեծանում է Թուրքիայի կողմից վրացական սպառողական շուկայի լիակատար կլանման վտանգը: Վրաստանի ռազմավարական նշանակության օբյեկտներին տիրանալը, Վրաստանի ներքին շուկայում գերիշխող դիրքերի գրավումը պետք է լուրջ ահազանգ լինի Վրաստանի իշխանություններին առ այն, որ երկիրը ընկնում է լիակատար տնտեսական կախվածության մեջ հարևան

Թուրքիայից: Տնտեսական կախվածությունը իր հերթին կարող է հանգեցնել նաև քաղաքական կախվածության:

**ARTAK ZARGARYAN
(IOS)**

**THE TRADE AND ECONOMIC RELATIONS BETWEEN
TURKEY AND GEORGIA
UNDER THE PRESIDENCY OF M. SAHAKASHVILI**

During the presidency of M. Saakashvili, the trade and economic relations between Georgia and Turkey went through unprecedented development. Turkey became one of the main trade and economic partners of Georgia. The Georgian authorities, at the level of the president, promoted the flow of Turkish capital into the country. The Turkish businessmen were provided with privileged conditions to foster development of their businesses on the territory of Georgia. Due to these prerogatives, Turkey was able to expand its economic presence and influence in Georgia. In fact, Turkey pursued a policy of economic expansion towards Georgia. Big Turkish companies in the field of heavy industry, construction, agriculture, telecommunications, transport, could easily penetrate the Georgian economy and take the dominant, if not monopolistic position in Georgia. In these circumstances, the appearance and development of such industrial trends in Georgian economy became practically impossible. This led to complete dependence on Turkish goods, and to a partial or complete absence of national production in relevant areas of the Georgian economy.

ԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ)

ԱԼԵՔՍԱՆԴՐԵԹԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԱՐՑԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ 1920-30-ԱԿԱՆ ԹԹ.

Ալեքսանդրեթի սանջաքը (թուրքերեն՝ Բսքենդերուն) ներկայում Հաթայի վիլայեթն է Թուրքիայի տարածքում և ընկած է Միջերկրական ծովի հարավարևելյան հատվածում: Այնտեղ է գտնվում Ալեքսանդրեթի նավահանգիստը, որը բնական նավահանգիստ է Միջերկրական ծովում¹: Ալեքսանդրեթի սանջաքը, ինչպես և ամբողջ Միրիան, օսմանյան լծի տակ մնաց 1516 թ. մինչև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ., երբ Անտանտի զորքերը գրավեցին Միրիան՝ մինչև Ալեքսանդրեթ ու Կիլիկիա: Այն դեռևս վաղ ժամանակներից առևտրական կարևոր կենտրոն էր: Հատկապես Անտիոք քաղաքը քրիստոնյաների համար կարևոր նշանակություն ուներ, քանի որ Քրիստոսի մահից ու Հարությունից հետո իրենց կյանքի վերջին տարիներն այնտեղ են գործել Պետրոս ու Պողոս առաքյալները: Հետագայում Անտիոքում պատրիարքարան հիմնվեց²: Սանջաքն ուներ բազմազգ բնակչություն: 1937 թ. բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 240.000-ի, որի մոտ 49 տոկոսը կազմում էին արաբները, մոտ 23 տոկոսը՝ թուրքերը, 18 տոկոսը՝ հայերը, 8 տոկոսը՝ թուրքմենները, իսկ մնացածը՝ քրդերը, չերքեզները և այլ փոքրամասնությունների ներկայացուցիչները³:

Ալեքսանդրեթի սանջաքի հարցը միջազգային դիվանագիտական խնդիր է եղել 1920-ական թվականներից մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը:

Նորաստեղծ Թուրքիայի Հանրապետության ղեկավարությունը չէր հաշտվում այն մտքի հետ, որ սանջաքը Թուրքիայի կազմում չէ և

¹ Sté u Sanjian A., The Sanjak of Aleksandretta (Hatay), its impact on Turkish-Syrian relations, (1939-56), Middle East Journal, Vol. 10, No. 4, 1956, Middle East Institute, p. 379.

² Sté u Shields S., Fezzes in the River: Identity Politics and European Diplomacy in the Middle East on the Eve of World War II, New York, 2011, p. 17:

³ Sté u Բայրամյան Ա., Ալեքսանդրեթի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-39 թթ.), Ե., 1998, էջ 18:

ձգտում էր իրեն միացնել, քանի որ այն ուներ աշխարհաքաղաքական ու ռազմավարական կարևոր նշանակություն⁴: Քեմալականների ընդունած «Ազգային ուխտով» սանջաքը մտցվում էր Թուրքիայի կազմի մեջ: Սվասի ժողովի ժամանակ (1919 թ.) Մուսատաֆա Քեմալը մասնավորապես ասել է. «Ես համոզված եմ, որ 1918 թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ մեր հայրենիքի սահմանների մեջ գտնվող հատվածը այստեղ ապրող մեր մահմեդական քաղաքացիներին է պատկանում, նրա անբաժան մասն է»⁵, իսկ 1920 թ. ամերիկացի մի լրագրողի տված հարցազրույցում նա ասել է, որ ամեն ինչ անելու են այդ ուխտում նշված բոլոր կետերը իրականացնելու համար, որով ևս մեկ անգամ հաստատում էր սանջաքից չհրաժարվելու մտադրության մասին⁶: Արդեն թուրք-ֆրանսիական բանակցությունների ու երկու երկրների միջև հաշտության պայմանագրի նախապատրաստման ընթացքում սանջաքի հարցը ամենակարևոր հարցերից մեկն էր:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում համաձայնագիր կնքվեց Ֆրանսիայի կառավարության ու Թուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարության միջև: Այն հայտնի է Ֆրանկլին-Բույոնյան պայմանագիր անունով: Պայմանագիրը նախատեսում էր պատերազմական գործողությունների դադարեցում կողմերի միջև և 2 ամսվա ընթացքում ֆրանսիական զորքերի դուրսբերում Կիլիկիայից, բացառությամբ Ալեքսանդրեքի սանջաքի, որը «հատուկ վարչակարգի» կարգավիճակով մնում էր ֆրանսիական մանդատային կառավարման տակ՝ տեղի թուրք բնակչության մշակութային լայն ինքնավարությամբ⁷: 1923 թ. Լոզանի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո ֆրանսիական ներկայացուցչությունը հաստատել է այդ շրջանի հատուկ կարգավիճակը: Իսկ արդեն 1924 թ. դեկտեմբերի 5-ին Ֆրանսիայի բարձրագույն կոմիսարի հրամանագրով սանջաքը դրվել է սիրիական կառավարության գերիշխանության տակ⁸: Հարկ է նշել, որ Ազգերի լիգայի որոշմամբ Ֆրան-

⁴ Sté u Marcus F., Why did France abandon the Sanjak of Alexandretta ?, undergraduate dissertation, Oxford UK, p. 11.

⁵ Atatürk'ün Tamim, Telgraf ve Beyannameleri, c. IV, Ankara, 2006. s. 90.

⁶ Sté u Tünay B., Atatürk ve Hatay, Atatürk Araştırma Merkezi Dergisi, առկա է՝ <http://www.atam.gov.tr/dergi/sayi-05/aturk-ve-hatay>

⁷ Sté u Թուրք-ֆրանսիական համաձայնագիր 1921, «Հայկական հարց» հանրագիտարան, 1996 թ., էջ 146:

⁸ Sté u Сагимбаев А., Проблема Александреттского санджака в контексте опреде-

սիային արգելվում էր Սիրիայի տարածքը կամ նրա մի մասը զիջել կամ հանձնել որևէ օտար պետության⁹: Սակայն Թուրքիայի քաղաքական ծրագրերը Ալեքսանդրեթի սանջաքի վերաբերյալ շատ հեռուն էին գնում: Նա ձգտում էր սանջակը կցել իրեն, որի համար սպասում էր ավելի հարմար առիթի:

1930-ական թթ. սկսած միջազգային իրադրությունը փոխվեց թե՛ Եվրոպայում, թե՛ Մերձավոր Արևելքում: Փոխվել էր ուժային հավասարակշռությունը Եվրոպայում: Գերմանիայում իշխանության գլուխ էին եկել նացիստները՝ Ադոլֆ Հիտլերի գլխավորությամբ, Իտալիայում իշխանության էր եկել Բենիտո Մուսոլինին: Արդեն 1930-ական թթ. երկրորդ կեսին ավելի ակնհայտ էր, որ պատերազմը Եվրոպայում անխուսափելի է: Սակայն Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան պատերազմ չէին ուզում և սկզբնական շրջանում առավել զիջողական քաղաքականություն էին: Մեծ Բրիտանիան հայտարարում էր, որ Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև լավ ու բարիդրացիական հարաբերությունները խիստ անհրաժեշտ են Եվրոպայում ընդհանուր խաղաղությունը պահպանելու համար¹⁰: Չնայած դրան՝ աշխարհը գնալով բաժանվում էր երկու ճամբարների՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի գլխավորությամբ ստատուս-քվոն պաշտպանելու կողմնակիցների և Գերմանիայի ու Իտալիայի գլխավորությամբ նվաճողական դիրքորոշում ունեցողների: Լարվածությունը այդ ճամբարների միջև գնալով ուժեղանում էր: Ագրեսոր երկրների կողմից ստատուս-քվոյի խախտման պայմաններում Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ձգտում էին լավացնել հարաբերությունները Թուրքիայի հետ՝ Թուրքիայի աշխարհագրական դիրքով պայմանավորված:

Ինչպես հայտնի է, Լոզանի պայմանագրից հետո թուրք-ֆրանսիական հարաբերություններում առանցքային նշանակություն ունեցող օսմանյան պարտքի խնդիրը: Այս խնդիրը կարգավորելուց հետո՝ 1933թ.

ления границ подмандатных территорий (1921 – 1939 гг.) , с.2, առկա է՝ <http://pismo.netnado.ru/umot/sagimbaev-a-v-problema-aleksandrettskogo-sandjaka-v-kontekste/>

⁹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատ. 4, Ե., 2007, էջ 436-437:

¹⁰ Տե՛ս White B., The emergence of minorities in the Middle East: The politics of community in French mandate Syria, Edinburgh, 2011, p. 57.

սկսած, թուրք-ֆրանսիական հարաբերությունները սկսեցին լավանալ¹¹: Երբ Իտալիան 1935 թ. հարձակվեց Եթովպիայի վրա, դա սպառնալիք հանդիսացավ Միջերկրական ծովում Մեծ Բրիտանիայի քաղաքական շահերի համար: Այդ շրջանում իր անվտանգությունն ապահովելու համար նրան անհրաժեշտ էին դաշնակիցներ ու որպես այդպիսին նա ընտրեց Թուրքիան: Նման պայմաններում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Ալեքսանդրեթի սանջաքի խնդիրը կարևոր դեր սկսեց խաղալ¹²: 1935 թ. նոյեմբերի 1-ին թուրքական մեջլիսի բացման ճառում Մուստաֆա Քեմալը հայտարարեց. «Անտիոքն ու Ալեքսանդրեթը Թուրքիայի ազգականներն են»¹³:

Թուրքերը իրենց քաղաքականությունը սանջաքի նկատմամբ ավելի ուժեղացրին 1936 թ. կնքված Մոնտրոյի պայմանագրից հետո¹⁴: Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը 1936 թ. նոյեմբերի 1-ի ԹԱՍԺ-ի հերթական նստաշրջանի բացման նիստում հայտարարեց. «Այս օրերին մեր ազգին զիշեր-ցերեկ անհանգստացնող գլխավոր խնդիրը Իսթենդերուն-Անթաքիայի ու շրջակայքի ճակատագրի հարցն է, որոնց իսկական տերը հանդիսանում է Թուրքիան: Մենք հարկադրված ենք մեր ձեռքը վերցնելու այս հարցը լուրջ ու հաստատական կերպով»¹⁵: Նա հանձնարարեց սանջաքում թուրքամետ խմբավորման ակտիվիստներից մեկին՝ Թայֆուր Սյոքմենին, օգտագործել Հաթայ անունը, ինչն, ըստ Աթաթուրքի, կհամախմբեր տեղի բազմազգ բնակչությանը¹⁶: Սա ցույց է տալիս, որ թուրքերը օգտագործում էին ամեն հնարավոր միջոց ու շատ

¹¹ St' u Новичев А., Турция: краткая история, М., 1965, с. 189:

¹² St' u Поцхверия Б., Турция между двумя миравыми войнами: очерки внешней политики, М., 1992, էջ 115:

¹³ Atatürk'ün söylev ve demeçleri, cilt I-III, Ist., 2006, s. 401.

¹⁴ Թուրքիային անհանգստացնում էր նեղուցների կարգավիճակը, որի պատճառով նա առաջարկեց նեղուցների մասին միջազգային նոր պայմանագիր կնքել: 1936 թ. հուլիսի վերջին շվեյցարական Մոնտրոյում սկսվեցին բանակցությունները նեղուցների հարցի վերաբերյալ: Այնտեղ հիմնականում քննարկվում էին Մեծ Բրիտանիայի ու Խորհրդային Միության առաջարկած նախագծերը: Թուրքական կողմը հակված էր անգլիական տարբերակի անցկացմանը, ինչը ևս մեկ անգամ խոսում է Անգլիայի հետ նրա մերձեցման մասին: Այնուամենայնիվ կողմերը գտան փոխզիջումային տարբերակ և 1936 թ. հունիսի 20-ին նեղուցների վերաբերյալ նոր համաձայնագիր կնքվեց:

¹⁵ Миллер А., Кемаль Ататюрк избранные речи и выступления, М., 1996, с. 294.

¹⁶ St' u Karakoç E., Atatürk'ün Hatay davası, Bilig, Yaz / 2009, sayı 50, s. 102.

մեծ ուշադրություն էին դարձնում նաև հարցի քարոզչական կողմին: Մոնտրոյի պայմանագրի կնքումից հետո քաղաքական իրավիճակը շատ նպաստավոր էր Թուրքիայի համար: Թուրքական կառավարությունը սանջաքի նկատմամբ իր պահանջները ավելի վճռական ու կտրուկ կերպով սկսեց ներկայացնել, իսկ մեծ տերությունները շատ էին կարևորում Թուրքիայի հետ հարաբերությունները, ինչով էլ պայմանավորված սանջաքի հարցում ֆրանսիացիները սկսեցին զիջել:

1936 թ. սեպտեմբերի 9-ին Ֆրանսիայի ու Միրիայի միջև կնքվեց պայմանագիր, որի նպատակն էր վերացնել ֆրանսիական մանդատը Միրիայում և ստեղծել անկախ սիրիական պետություն: Ալեքսանդրեթի սանջաքի նկատմամբ իրավունքներն ու պարտականությունները ևս անցնում էին Միրիային, ինչը դժգոհություն առաջացրեց Թուրքիայում: 1936 թ. քաղաքական այցով Փարիզում էր գտնվում Թուրքիայի արտգործնախարար Ռյուշթու Արասը, սակայն անմիջական բանակցությունները չսովեցին Թուրքիայի համար ցանկալի արդյունքները: Հարցը սկսվեց քննարկվել Ազգերի լիգայում: Հարցի քննարկման հենց առաջին օրը «Ալեքսանդրեթի ու Անտիոքի» հարցի մասին զեկուցող էր նշանակվել Շվեդիայի արտաքին գործերի նախարար Սանդլերը: Նա դեկտեմբերի 16-ի նիստում Լիգայի խորհրդին ներկայացրեց իր զեկուցագիրը և 8 կետից բաղկացած բանաձևի նախագիծը¹⁷: Հարկ է նշել, որ Սանդլերի զեկույցը վերաբերում էր ոչ թե բուն հարցին և դրա լուծմանը, այլ Թուրքիայի ներկայացուցչի կողմից պահանջված այդ «պաշտպանական միջոցառումներին», որոնք պետք է ձեռք առնվեն սանջաքում մինչև վեճի կարգավորումը¹⁸: Սա բացասաբար ընդունվեց սիրիական հասարակության, ինչպես նաև իշխանության կողմից: Միրիայի վարչապետ Ջամիլ Մարդամ-Բեկն ընդունեց, որ այն հարցի լուծման մի քանի ճանապարհների համար կարող է դուռ բացել, ինչպես սանջաքի՝ Միրիայի կազմում որպես ինքնավար մարզ մնալուն, այնպես էլ նրա կցումը Թուրքիային, քանի որ Դամասկոսի հետ առանց այն էլ թույլ էին կապերը, սա ավելի էր թուլացնում սիրիական իշխանության ազդեցությունը սանջաքում¹⁹:

Սանդլերի զեկույցով նախատեսվում էր ստեղծել դիտորդական հանձնաժողով, որը կգնար ու տեղում կուսումնասիրեր սանջաքում

¹⁷ St' u Shields S., նշվ. աշխ., էջ 83:

¹⁸ St' u Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 61:

¹⁹ St' u Shields S., նշվ. աշխ., էջ 97:

առկա վիճակը: Ազգերի լիգան դեկտեմբերի 22-ին ստեղծեց դիտորդական հանձնաժողով՝ նորվեգացի Հանս Հոլստադի, հոլանդացի գեներալ Լ. Կարոնի և շվեյցարացի Շառլ դը-Վաթթենվիլի մասնակցությամբ²⁰: 1936 թ. դեկտեմբերի 30-ին դիտորդները հասան Անկարա, իսկ Նոր տարվա նախաշեմին հասան Հալեպ, այնուհետև անմիջապես ուղևորվեցին Անտիոք: Նրանք հինգն էին՝ երեք դիտորդներն ու անձնակազմի երկու ներկայացուցիչները (Ազգերի լիգայի քարտուղարության անդամներ նորվեգացի Փեթեր Անկերը և շվեյցարացի Չարլզ Մոտիերը): Այդ ընթացքում բարձր կոմիսար Մարտելը, հանդիպելով սիրիական ղեկավարության հետ, նշել էր, որ Սիրիայի համար ամենանպատակահարմարը դիտորդական առաքելության ընթացքում բախումներից, հուզումներից խուսափելն ու սանջաքում ազատորեն շրջել է, ինչը թույլ կտա իրապես տեսնել, թե ինչ մթնոլորտ է տիրում սանջաքի բնակչության մոտ²¹:

Դիտորդները առաջին հերթին եղան Կըրըկ-Խանում, որն ուներ արաբ, հայ, թուրք, թուրքմեն խառը բնակչություն: Նրանք տեղում հաստատեցին, որ «գժտության որևէ հիմք չկա և թուրքերն, արաբներն ու հայերը ապրում են կատարելապես համերաշխ»: Մահմանամեձ Աքթեփե և Հաջիլեր գյուղերում շրջանի թուրքմեն պատգամավորը հայտարարեց, որ իր ընտրողների ճնշող մեծամասնությունը ցանկանում է խաղաղ ապրել առկա քաղաքական վիճակում: Այդ գյուղերի թուրքմեն գյուղացիները դիտորդներին դիմավորեցին խանդավառ ցույցերով և բացահայտորեն արտահայտեցին իրենց բուռն ցանկությունը՝ մնալ Սիրիայի կազմում²²:

Այդ ընթացքում, ինչպես որոշվել էր Ազգերի լիգայի կողմից, 1936 թ. դեկտեմբերի 21-ից Փարիզում սկսվեցին թուրք-ֆրանսիական բանակցությունները: Թուրքիան ոչ մի կերպ հետ չէր կանգնում սանջաքին անկախություն տալու իր պնդումներից²³: Երբ Արասը վերադարձավ Թուրքիա և հունվարի 5-ին հանդես եկավ ԹԱՄԺ-ում, պատգամավորների մեծամասնությունն անարդյունավետ համարեց Թուրքիայի վարած քաղաքականությունը սանջաքի նկատմամբ, և որոշում

²⁰ St' u Poicxveria B., նշվ. աշխ., էջ 167:

²¹ St' u Shields S., նշվ., աշխ., էջ 95:

²² St' u Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 63:

²³ St' u Khadduri M., The Alexandretta Dispute, The American Journal of International Law, Vol. 39, No. 3 (Jul. 1945), էջ 416:

ընդունվեց օգտագործել ավելի կոշտ միջոցներ ու հասնել թուրքական պահանջների բավարարմանը: Աթաթուրքն անձամբ մեկնեց Քոնիա ու հասավ Ուլուքըշլա, որտեղ հրամայեց զորքեր կուտակել սանջաքի սահմանին: Ֆրանսիական կողմը սկսեց տեղի տալ, քանի որ միջազգային իրադրությունն անբարենպաստ էր իր համար: Եվրոպայում պատերազմի սկսման վտանգն արդեն ակնհայտ էր, և Ֆրանսիային ու Մեծ Բրիտանիային անհրաժեշտ էր լավ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: 1937 թ. հունվարի 11-ին Թուրքիայի արտգործնախարար Արասը ֆրանսիական կառավարությանը ներկայացրեց մի նախագիծ, որով առաջարկվում էր ստեղծել Սիրիայի, Լիբանանի ու Ալեքսանդրեթի սանջաքի համադաշնություն: Ֆրանսիան մերժեց այս առաջարկը: Չնայած դրան՝ Ֆրանսիայի դիրքորոշումը սկսել էր փոխվել սանջաքի հարցի վերաբերյալ: Թուրքիայի ու Ֆրանսիայի առաջարկով Ազգերի լիգայի հերթական նիստը հունվարի 18-ից հետաձգվեց հունվարի 21-ը:

1937 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի վարչապետ Լեոն Բլյումը Փարիզում Թուրքիայի դեսպան Դավազին ուղարկեց մի նամակ, որով հայտնում էր, որ մշակվել է նոր նախագիծ, որը հաշվի է առնում երկու կողմերի տեսակետներն էլ²⁴: Նրանք կարողացան հասնել հարցի լուծման փոխզիջումային տարբերակի, որին Ազգերի լիգան ուղղակի համաձայնություն տվեց: Այն հայտնի է Ժնևյան կոմպրոմիս անունով²⁵: Դրանով նոր կարգավիճակ հաստատվեց սանջաքում, իսկ Ժնևյան փաստաթղթի 22-րդ հոդվածով և Հիմնական օրենքի 6-15-րդ հոդվածներով սահմանվում էր սանջաքի պառլամենտի ընտրության սկզբունքները²⁶: Այդ առաջին ընտրությունները պետք է կազմակերպվեին ու անցկացվեին Ազգերի լիգայի նշանակած հանձնաժողովի վերահսկողությամբ: 1937 թ. հոկտեմբերի 4-ին Թ. Ռեյդ-ի (Անգլիա) գլխավորությամբ ընտրվեց հանձնաժողով, որն ուներ հետևյալ կազմը՝ Ժ. Լագրանժ (Բելգիա), Վան դեր-Մենդերե (Նիդեռլանդներ), Չ. Ռեյմերս (Նորվեգիա), Ռ. Սեկրեթան (Շվեյցարիա): Հանձնաժողովը սանջաքում մնաց մինչև նոյեմբերի 19-ը: Վերադառնալով Ժնև՝ դեկտեմբերի 10-ին հանձնաժողովն Ազգերի լիգայի խորհրդի նախագահին ներկայացրեց «Ալեքսանդրեթի սանջաքում կատարվելիք առաջին ընտրությունների կանոնա-

²⁴ Տե՛ս Khadduri M., նշվ. աշխ., էջ 417:

²⁵ Տե՛ս Поцхверия Б., նշվ. աշխ., էջ 165-166.

²⁶ Տե՛ս Բայրամյան Ա., նշվ. աշխ. 90:

դրությունը» և առաջարկեց առաջին և երկրորդ աստիճանի ընտրություններն անցկացնել համապատասխանաբար 1938 թ. մարտի 28-ին և ապրիլի 12-ին: Ընտրությունները պետք է տեղի ունենային ազգային-դավանական «համայնքների» համամասնական ներկայացուցչության սկզբունքով՝ թուրք, ալևի, արաբ, հայ, քուրդ և այլ համայնքների բաժանման հիման վրա²⁷:

Հարկ է նկատել, որ Ազգերի լիգայի խորհրդի կողմից 1937 թ. Ալեքսանդրեթի հարցին տրված «լուծումը» ըստ էության փոխզիջումային կարգավորում էր, որը ձեռք էր բերվել միջազգային լարված պայմաններում և ժամանակավորապես պահպանում էր խաղաղությունը Արևելյան Միջերկրականի շրջանում: Մակայն այն չի կարելի համարել սանջաքի հարցի արդարացի ու վերջնական լուծում, քանի որ այն ավելի շուտ քաղաքական ժամանակավոր կարգավորում էր: Դրանով, փաստորեն, Սիրիան զրկվում էր երկրի անբաժան մասը հանդիսացող մարզի վրա իր գերիշխանությունից²⁸: Ասել, թե Ֆրանսիան չէր զիտակցում սանջաքի նշանակությունը, դրա համար նման զիջողական դիրքորոշում որդեգրեց, այնքան էլ ճիշտ չէ: Այն կարևորում էր սանջաքի ռազմավարական ու տնտեսական նշանակությունը, ինչի ապացույցն այն մեծ ներդրումներն էին, որ կատարվում էին այնտեղ: Ֆրանսիան անզիջում դիրքորոշում ուներ այս հարցում մինչև որ նրա դաշնակից Մեծ Բրիտանիան սկսեց այլ ցուցումներ տալ²⁹:

Արաբ հեղինակ Մ. Խադդուրին գրում է, որ Ժնևյան կոմպրոմիսը խոր զայրույթով ընդունվեց Սիրիայի և արաբական մյուս երկրների քաղաքական շրջանակների կողմից: Արաբ ժողովուրդները հաստատ համոզված էին, որ մանդատային իշխանությունները և նրանց դաշնակիցները սանջաքը ծախել են իրենց սեփական մաշկը փրկելու համար: Հենց սանջաքում արաբները ուժեղ դիմադրություն ցույց տվեցին Ժնևի որոշմանը³⁰: Թուրքիայում Ազգերի լիգայի այս որոշումն ընդունվեց որպես երկրի դիվանագիտական հաղթանակ, դեպի սանջաքի անկախությանն ուղղված ևս մեկ քայլ: Հունվարի 27-ին Մուստաֆա Բենալ Աթաթուրքը շնորհավորական հեռագիր ուղարկեց վարչապետ

²⁷ Տե՛ս Khadduri M., նշվ. աշխ., էջ 420:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 79:

²⁹ Տե՛ս Marcus F., նշվ. աշխ., էջ 36:

³⁰ Տե՛ս Khadduri M., նշվ. աշխ., էջ 418:

Իսմեթ Ինոնյուին³¹: Հետագայում սանջաքն իրենց կցելու ուղղությամբ տարվող թուրքական կողմի ջանքերն ավելի մեծ թափ ստացան: Թուրքական իշխանությունը ցանկանում էր այս նոր ռեժիմն անմիջապես հաստատել սանջաքում: Մակայն թե՛ սիրիական կառավարությունը, թե՛ ժողովուրդը չէին ընդունում Ժնևյան կոմպրոմիսի դրույթները: Այս ամենը առաջ բերեց մի շարք խնդիրներ, անընդհատ բախումներ էին տեղի ունենում սանջաքի թուրք ծայրահեղականների ու Սիրիային միանալու կողմնակիցների միջև:

Երբ հայտնի դարձավ սանջաքում պատգամավորական ընտրությունների կարգը, Թուրքիան հանդես եկավ հաստատված ընտրակարգի դեմ, որը նրան թույլ չէր տալիս մեծամասություն կազմել սանջաքում: Այս հարցում ևս մեծ տերությունները զիջումներ արեցին, և 1938 թ. Ազգերի լիգան փոխեց ընտրակարգն այնպես, որ այն լիովին ձեռնտու էր թուրքերին³²: 1938 թ. մայիսի 3-ին սանջաքում սկսվեցին հանրաքվե-ընտրությունների աշխատանքները: Մայիսի 22-ին գրանցումներն ավարտվեցին: Չնայած թուրք ծայրահեղականների իրականացրած անօրինական քայլերին, ամեն տեսակ ճնշումներին, նույնիսկ այն հանգամանքին, որ Թուրքիայից քվերակությանը մասնակցելու համար անօրինական ճանապարհով սանջաք էր ուղարկվել 25.000 կեղծ «սանջաքցի», ընտրողների շուրջ 65%-ը գրանցվել էր սանջաքը Սիրիայում պահելու կողմնակիցների ընտրական ցուցակներում³³: Դրանից հետո՝ մայիսի 21-ին, Անկարան Փարիզ հղեց վերջնագրի բովանդակություն ունեցող մի հեռագիր, որտեղ պահանջում էր մինչև ամսվա վերջ, ինչ գնով էլ լինի, հասնել վերջնական կարգավորման: Նույն օրը թուրքական զորքեր կենտրոնացվեցին սանջաքի սահմանում, թուրքական թերթերը կատաղի արշավ սկսեցին:

Հունիսի 9-ին վերաբացվեցին ընտրական տեղամասերը: Ձերբակալվում, ծեծվում ու սպանվում էին «Հալք էվիի» (ժողովրդական տուն)³⁴

³¹ Տե՛ս Սուքխերիա Ե., նշվ. աշխ., էջ 167:

³² Տե՛ս Shields S., նշվ. աշխ., էջ 103:

³³ Տե՛ս Բայրամյան Ա., Հայերի մասնակցությունը 1936-1938 թթ. Ալեքսանդրետի սանջաքի պաշտպանության պայքարին. Պատմաբանասիրական հանդես, № 1 , 1968 , էջ 161:

³⁴ 1932 թվականից սկսած երկրի տարածքում մի քանի հարյուր «Ժողովրդական տները» (թուրքերեն՝ Halk Evi) և «Ժողովրդական սենյակները» (Halk Odası) հնարավորություն էին տալիս մասնակցելու տարբեր սպորտային և մշակութային

ընտրական ցուցակներում գրանցվել չցանկացող ընտրողները: Հարկ է նշել, որ երկու համաշխարհային պատերազմների միջև եղած ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Ալեքսանդրեթի սանջաքի ինդիքը լուծելու գործում, քաղաքական ու դիվանագիտական պայքարից բացի, մշակութային ու քարոզչական ուղղություններով էլ մեծ ջանքեր գործադրվեցին, որոնք իրականացվում էին «ժողովրդական տների» կողմից: 1937-1939 թթ. Ալեքսանդրեթի սանջաքում գործել են Հալք էվիների երեք թները՝ անվտագության, իրավականական ու քարոզչական³⁵:

Չնայած այս ամենին, ընտրություններում կրկին չստացվեց թուրքերի համար մեծամասնություն ապահովել: Ազգերի լիգայի ընտրական հանձնաժողովը 1938 թ. հունիսին Լիգայի գլխավոր քարտուղարին հղեց մի հեռագիր, որտեղ ասվում էր, որ ընտրությունները կեղծելու վտանգ կա, որը սպառնում է ազգաբնակչության ամենամեծ հատվածի դիրքորոշման ազատությանը³⁶: Վիճակն այնքան վատացավ, որ հանձնաժողովը հայտնեց, որ նման պայմաններում ավարտված է համարում իր առաքելությունը սանջաքում, որ այլևս անելիք չունի այնտեղ և 1938 թ. հունիսի 19-ին հեռացավ սանջաքից³⁷: Ստեղծվեց 3 թուրքից ու 1 ֆրանսիացուց բաղկացած նոր հանձնաժողով: Հուլիսի 22-ին սկսվեցին նոր «ընտրական գործողություններ», որոնք վերջացան հուլիսի 31-ին: Հայերն ու արաբները բոյկոտեցին այդ «ընտրությունները»³⁸:

1938 թ. հունիսից Փարիզում և Անկարայում ընթանում էին երկկողմ բանակցություններ³⁹: Թուրքիայի ռազմական ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում Թուրքիան ու Ֆրանսիան Անկարայում 1938 թ. հուլիսի 3-ին կնքեցին ռազմական պայմանագիր սան-

միջոցառումների: Նրանց գլխավոր նպատակը թուրքական քարոզչության տարածումն էր ժողովրդի շրջանում:

³⁵ St' u Payasli V., Hatay Halkevi'nin faaliyetleri ve Hatay Halkevi Dergisi (1939-1951), Ankara Üniversitesi Türk İnkılâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, S 52, Güz 2013, s. 905-941.

³⁶ St' u Fայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 108-109:

³⁷ St' u Khadduri M., նշվ. աշխ., էջ 421:

³⁸ Բայրամյան Ա., *Հայերի մասնակցությունը 1936-1938 թթ. Ալեքսանդրեթի սանջաքի պաշտպանության պայքարին*, էջ 163:

³⁹ St' u Новичев А., նշվ. աշխ., էջ 190:

ջաքի տարածքային ամբողջականության ու քաղաքական ստատուսի համատեղ ապահովման մասին⁴⁰: Այդ պայմանագրի համաձայն սանջաքի անվտանգությունն ապահովելու համար հավասար քանակությամբ թուրքական ու ֆրանսիական զորք պետք է լիներ այնտեղ, անհրաժեշտության դեպքում երկուստեք համաձայնությամբ այդ թիվը կարող էր ավելանալ: Այնտեղ նշված էին նաև այն գործողությունները, որոնք պետք է ձեռք առնվեին սանջաքում նրա վրա Թուրքիայից, Միրիայից կամ ծովից հարձակման դեպքում⁴¹: Հուլիսի 4-ին Անկարայում ստորագրվեց «ֆրանս-թուրքական բարեկամության դաշինքը»: Այն իր մեջ ներառում էր մի քանի դրույթներ, որոնք վերաբերում էին երկրների միջև լավ հարաբերություններ հաստատելուն և այն քաղաքական ու տնտեսական միջոցառումներին, որոնք պետք է ձեռք առնվեին արտաքին հարձակման դեպքում⁴²: Դա հանդիսացավ սանջաքի Թուրքիայի միացնելուն ուղղված առաջին քայլը:

Նման պայմաններում «ընտրությունների արդյունքներն» այնպիսին եղան, որ Հալք-Էվիի ընտրացուցակում «գրանցվեց» ընտրողների 63%-ը⁴³: «Թուրք համայնքի» ցուցակում «գրանցվեց»՝ 35847, ալևի համայնքում՝ 11319, 5504՝ հայ համայնքում, 1845՝ արաբ համայնքում, 2098՝ հույն-ուղղափառ, այլ համայնքերի ցուցակներում՝ 359 ընտրող: Ընտրությունների երկրորդ փուլի համար ընտրվեցին 358 թուրք, 113 ալևի, 55 հայ, 18 արաբ, 20 հույն-ուղղափառ ընտրողներ: Արդյունքում թուրքերը «խորհրդարանում» ստացան 22 տեղ, ալևիները 9 տեղ, հայերը՝ 5, արաբները՝ 2, ուղղափառ հույները 2 տեղ⁴⁴: Սանջաքում «խորհրդարանը» հրավիրվեց 1938 թ. սեպտեմբերի 2-ին «Պատգամավորների» բոլոր ելույթները թուրքերեն էին, նրանք Հիմնական օրենքի վրա էլ թուրքերեն երդվեցին: Նրանք իրենց ճառերում «իրենց երախտագիտությունն էին հայտնում Թուրքիայի նախագահին և կառավարությանը սանջաքի անկախությանը հասնելու գործում ցույց տված աջակցության համար»⁴⁵: Իսկ Սյոքմենն իր առաջին ելույթում հայտարարեց. «Սան-

⁴⁰ Տե՛ս Սուքխերիա Բ., նշվ. աշխ., էջ 167:

⁴¹ Տե՛ս Օրան Բ., նշվ. աշխ., էջ 188:

⁴² Տե՛ս Կաթաչ Մ., նշվ. աշխ., էջ 38:

⁴³ Տե՛ս Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 104:

⁴⁴ Տե՛ս Կաթաչ Մ., նշվ. աշխ., էջ 39:

⁴⁵ Տե՛ս Toynbee A., The Cession to Turkey of the Sanjak of Alexandretta, Survey of International Affairs-1938, vol. I, London, 1941, p. 488.

ջաքը վերջապես ազատվեց գերությունից»⁴⁶։ «Կառավարության» բոլոր 5 անդամները թուրք էին։ «Հաթայ» անունը ընտրվեց որպես նորաստեղծ «պետության» անվանում, իսկ Թայֆուր Սյոքմենն ընտրվեց նախագահ։ Ընտրվեց հանձնաժողով այդ «պետության» դրոշը որոշելու համար։ Այդ դրոշը մի փոքր փոփոխությամբ գրեթե նույն թուրքական դրոշն էր։ Ընդունված Սահմանադրությունը գրեթե թուրքական սահմանադրությունն էր, իսկ օրհներգը հենց Թուրքիայի օրհներգն էր⁴⁷։ Սանջաքի կարգավիճակի համաձայն, երկրի արտաքին հարաբերությունների համար պատասխանատու էր սիրիական կառավարությունը։ «Հաթայի» դրամական միավոր ճանաչվեց սիրիական արժույթը, սակայն 1939 թ. մայիսի 13-ին որպես արժույթ սահմանվեց թուրքական լիրան։ Թուրք ծայրահեղականների հաջորդ քայլը «Հաթայում» կարևոր պաշտոններում ֆրանսիացի կամ այլազգի ներկայացուցչի փոխարեն թուրքերին նշանակելն էր։ «Երկրի» մայրաքաղաք Ալեքսանդրիայի փոխարեն ընտրվեց Անտիոքը⁴⁸։

«Հաթայի պետությունը» այդ կարգավիճակում մնաց այնքան ժամանակ, մինչև Թուրքիան կիրականացնեք սանջաքը Սիրիայից իլելու իր վերջին գործողությունները։

Բեռլին-Հռոմ առանցքի ագրեսիվ գործողությունների ծրագրերում ընդգրկված էին նաև Սիրիան, Լիբանանն ու հատկապես Թուրքիան։ Վերջինս ընտրված էր որպես ֆաշիզմի քարոզչության կենտրոն Մերձավոր Արևելքում։ Թուրքիան միշտ օգտագործել է այս հանգամանքն իր արտաքին քաղաքականության մեջ։ Ավստրիայի անշյուսը և այն վախը, որ Թուրքիան կարող է միանալ Առանցքի երկրներին, պատճառ դարձան, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ցանկանան անմիջապես դաշինք կնքել Թուրքիայի հետ։ 1938 թ. սեպտեմբերի 30-ին կնքված Մյունխենի պայմանագրից հետո Ֆրանսիան ավելի կենտրոնացավ Միջերկրականում իր դիրքերի ամրապնդման վրա և կարիք ուներ ավելի ուժեղացնելու Թուրքիայի հետ դաշնակցությունը։ Հարկ է նկատել, որ Թուրքիայի համար այս պայմանագիրն ազդանշան հանդիսացավ⁴⁹։

⁴⁶ Տե՛ս, Khadduri M., նշվ. աշխ., էջ 423:

⁴⁷ Տե՛ս Hür A., Atatürk diplomasisinin başarı öyküsü: Hatay'ın ilhaki, Radikal gazetesi, 14.10.2012.

⁴⁸ Տե՛ս Oran B., նշվ. աշխ., էջ 289:

⁴⁹ Տե՛ս Ireland P., Turkish Foreign Policy after Munich, The Political Quarterly, Vol. X, april 1939, pp. 185-201.

Թուրք հեղինակներից Յամաչը ևս ընդունում է, որ «Հաթայ» պետությունը ստեղծելու գլխավոր նպատակը այն Թուրքիային կցելն էր⁵⁰: Միջազգային հարաբերությունների և ներքաղաքական բարդ իրադրության պայմաններում «Հաթայի կառավարությունը» արագ կերպով առաջ էր տարել Ալեքսանդրեթի սանջաքի թուրքացումը: Մնում էր այն պաշտոնապես դիվանագիտական ակտերով «օրինականացնել»⁵¹:

Արդեն 1939 թ. մարտի 15-ին Գերմանիան հարձակվեց Չեխոսլովակիայի վրա, Լեհաստանի հետ չհարձակման պայմանագիրը չեղարկվեց, մայիսի 22-ին Իտալիայի հետ կնքվեց «պողպատե պակտը», որով ձևավորվեց գերմանա-իտալական ռազմական ագրեսիվ դաշինքը: Դեպքերի նման զարգացումը անհանգստացնում էր Մեծ Բրիտանիային ու սատուս-քվոն պահպանելու կողմնակից մյուս երկրներին: Միջերկրական ծովում անվտանգությունն ապահովելու համար Մեծ Բրիտանիան դաշնակցության առաջարկ արեց Թուրքիային: Վերջինս ցանկանում էր դաշինք կնքել նաև Ֆրանսիայի հետ, այսինքն՝ կնքել անգլո-ֆրանս-թուրքական եռակողմ դաշինք, որի համար Ֆրանսիայից պահանջում էր Հաթայը կցել Թուրքիային: Մեծ Բրիտանիայի գործուն ազդեցությամբ Ֆրանսիան այս հարցում զիջեց Թուրքիային: 1939 թ. հունիսի 23-ին Անկարայում Թուրքիայի արտգործնախարար Սարաջօղլուն ու Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան Սասիգլին կնքեցին «Թուրքիայի ու Միլիայի միջև տարածքային հարցերի վերջնական կարգավորման մասին» համաձայնագիր: Հաստատվեցին «Հաթայի պետության» սահմանները և որոշվեց սանջաքի բնակչության կարգավիճակը: Այդ համաձայնագրով Ֆրանսիան համաձայնվում էր «Հաթայ պետությունը» կցել Թուրքիային: Ֆրանսիան պարտավորվում էր մինչև հուլիսի 23-ը հանել իր զորքերը սանջաքից: Հենց այդ օրն էլ սանջաքի նկատմամբ ֆրանսիական լիազորությունները պետք է ավարտվեին⁵²: Դեռևս այս պայմանագիրը ուժի մեջ չէր մտել, երբ հունիսի 29-ին «Հաթայի խորհրդարանի» նիստում քվեարկության միջոցով ընդունվեց «Հաթայը» Թուրքիային կցելու որոշումը: Չնայած սահմանված էր, որ պայմանագիրը պետք է ուժի մեջ մտնի հուլիսի 22-ին, թուրքական կողմի պահանջով այն ուժի մեջ մտավ հուլիսի 13-ին: Ֆրանսիական

⁵⁰ St' u Yamaç M., նշվ. աշխ., էջ 40:

⁵¹ St' u Toynbee A., նշվ. աշխ., էջ 489:

⁵² St' u Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 292:

գորքերը հեռացան սանջաքից⁵³: 1939 թ. հունիսի 23-ի պայմանագրով ձեռք բերված միակ նվաճումը այն էր, որ հայերի պահանջով ֆրանսիացի գործիչների ազդեցության տակ ու հասարակական ճնշումների արդյունքում հնարավոր եղավ Թուրքիայի ձեռքից պոկել և Սիրիային վերամիավորել Քեսաբի շրջանը⁵⁴:

Մեծ տերությունների թողտվությամբ ու առանց Ազգերի լիգայում քննարկման ու հաստատման տեղի ունեցած այս կցումը հակասում էր մանդատի ակտի 4-րդ հոդվածին, որտեղ մասնավորապես ասվում էր, որ մանդատային տերությունը պատասխանատվություն է կրում նրա համար, որ չխախտվեն Սիրիայի ու Լիբանանի տարածքային ամբողջականությունը և նրանց որևէ հատված չընկնի մեկ այլ տերության իշխանության տակ⁵⁵: Ֆրանս-թուրքական նման գործարքը դեմ էր նաև Ազգերի լիգայի մանդատային համակարգին վերաբերող դրույթներին և Մանդատային մշտական հանձնաժողովի որոշումներին: Մինչ Ազգերի լիգան լռում էր, մանդատային մշտական հանձնաժողովը քննարկեց սանջաքը Թուրքիային կցելու հարցը: Հանձնաժողովի գրեթե բոլոր մասնակիցները նշում էին, որ դա հակասում է Մանդատի ակտի 4-րդ դրույթին: Միայն Ֆրանսիայի՝ Լիգայում հավատարմագրված ներկայացուցիչ Ռոբեր դը Քենն էր կրկնում թուրքական անհիմն փաստարկները, թե իբր «Սիրիայի սահմանները վերջնականապես ճշգրտված չէին», որ դա կատարվել է «Սիրիայի շահերից ելնելով» և այլն⁵⁶:

Սիրիայում չէին ընդունում սանջաքի կցումը Թուրքիային: Նրանք Ֆրանսիային մեղադրում էին դավաճանության մեջ՝ համարելով, որ սանջաքը զոհաբերվել է սեփական կաշին փրկելու համար: Սանջաքի կորուստը Սիրիայի համար նաև կորուստ էր տնտեսական առումով: Մա ևս գլխավոր պատճառներից էր հարցը «չփակելու» համար: Հետագայում թուրքերը կտրականապես հերքում էին, որ գոյություն ունի «Հաթայի խնդիր»: Նրանք պնդում էին, որ Սիրիան չի կարող վերականգնել մի տարածք, որը «իրավացիորեն» վերադարձվել է թուրքերին:

⁵³ Տե՛ս Yamaç M., նշվ. աշխ., էջ 40:

⁵⁴ Տե՛ս Բայրամյան Ա., նշվ. աշխ., էջ 148:

⁵⁵ Տե՛ս French Mandate for Syria and the Lebanon, The American Journal of International Law, Vol. 17, No. 3, Supplement: Official Documents (Jul., 1923), p. 178.

⁵⁶ Տե՛ս Khadduri M., նշվ. աշխ., էջ 425:

Նրանք նշում էին, որ Սիրիայում նման տրամադրություններ ներշնչում է խորհրդային իշխանությունը⁵⁷:

Այսպիսով, 1930-ական թթ. աշխարհաքաղաքական իրավիճակն աշխարհում փոխվեց: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան շատ էին կարևորում Թուրքիայի հետ դաշնակցությունը՝ համարելով նրան միջերկրածովյան շրջանում ամենաուժեղ երկիրը: Այդ դաշնակցության գինը եղավ Ալեքսանդրեթի սանջաքի բռնակցումը Թուրքիային: Անտեսվեց սանջաքի ժողովրդի մեծամասնության կարծիքը և միջազգային իրավունքի մի շարք խախտումներով 1939 թ. հունիսի վերջին սանջաքը բռնակցվեց Թուրքիային: Ինչ վերաբերում է Ազգերի լիգային, ապա կարելի է ասել, որ այն մեծ խաղաքարտ էր մեծ տերությունների ձեռքում և ուղղակի լուռ համաձայնությունն տվեց թուրք-ֆրանսիական պայմանավորվածությանը, որը մինչև Լիգայի խորհրդի որոշումը, ձեռք էր բերվել նրանց միջև: Սիրիական կողմը երբեք չի ընդունել այս անօրինական որոշումը: Նրանց դասագրքերում, քարտեզներում սանջաքը մշտապես ներկայացվում է որպես Սիրիայի անբաժան մաս, և սիրիացիները պահանջում են, որ սանջաքը վերամիավորվի Սիրիայի հետ: Իրավական տեսակետից խնդիրը մնացել է չլուծված: Սիրիան սպասում է հարմար պահի, որպեսզի հարցը բարձրացնի Ազգերի լիգայի իրավահաջորդը հանդիսացող Միավորված ազգերի կազմակերպությունում: Սակայն, հաշվի առնելով վերջին մի քանի տարիներին Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները, մոտ ապագայում դա դեռևս իրատեսական չէ:

ANI MELKONYAN
(ISEC NAS RA)

**THE PROBLEM OF THE SANJAK OF ALEXANDRETTA AS AN
INTERNATIONAL DIPLOMATIC PROBLEM DURING 1920-30S**

The problem of the Sanjak of Alexandretta has been the object of International political and diplomatic dispute during 1920-30s. In this article we describe Alexandretta Sanjak's annexation to Turkey, as well as the

⁵⁷ Տե՛ս Sanjian A., նշվ. աշխ., էջ 383:

international situation in that time, the policy of France, Great Britain and Turkey over the Sanjak and the role of the League of Nations in this problem.

The Sanjak of Alexandretta was originally a part of Syria, but Turkey showed interest in the area. It can be said that Turkey was able to use the favorable international situation for its political interests. At the beginning of the Second World War France and Great Britain decided to keep Turkey on their side and Alexandretta was the price to pay. In 1939 France agreed to give the Sanjak of Alexandretta to Turkey. It was an illegal act and Syria never accepted this annexation. It is worth mentioning that in Syria, official maps have the Sanjak included as national territory.

ՄԱԼՎԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՆԶԻՄԱԹԸ

Պոլսահայ վերնախավում իրենց նշանակալիությամբ առանձնացող խոջաներին ու չելեպիներին¹ XVIII դարի երկրորդ կեսին փոխարինելու եկավ ամիրայական դասը, որը իր ազգային ու տնտեսական իշխող դիրքերը պահպանեց մինչև արևմտահայերի Ազգային սահմանադրության գործածությունը (1860-ական թթ):

Կ. Պոլսի հայ ամիրայական խավի ձևավորումը տվյալ ժամանակաշրջանում հատուկ գործընթաց էր և արտացոլում էր օսմանյան իրականության մեջ ի հայտ եկող երևույթները: Գավառային ազդեցիկ և հարուստ առևտրավաշխառուական խավը, գալով Կ. Պոլիս, ձգտում էր այստեղ հաստատվել և օսմանյան կառավարող վերնախավում ուժ ու հեղինակություն ձեռք բերել:

Ըստ Հ. Բարսումյանի՝ ամիրաների մասին առաջին հիշատակությունը վերաբերում է 1758 թ.², նրանք, առաջ գալով որպես մի նոր խավ, իրենց համար որպես պատվանուն վերցրին «ամիրա»³ տիտղոսը:

¹ «Խոջա» բառը պարսկերեն ծագում ունի, նաև՝ տարբեր իմաստներ: Այն կարող է նշանակել և՛ տեր, և՛ ուսուցիչ, և՛ ներքինի: Թուրքերենում, ի թիվս այլոց, այս բառը գործածվում է նաև «վաճառական» իմաստով: Խոջաները բացի առևտրից զբաղվում էին վաշխառությամբ, նրանք ավելի շուտ գավառական փաշաների սեղանավորներն էին: Տե՛ս Խաչատրյան Ս., Կոստանդնուպոլսի հայ ամիրայությունը (1750-1860-ական թթ.), Երևան, 2014, (թեկն. ատեն.), էջ 48: «Չելեպի» բառը թուրքական ծագում ունի և հին թուրքերենում «չելեպ» նշանակում է «աստված»: Ըստ Հ. Անասյանի, բառն ազնվականական տիտղոս ունեցող մի մակդիր էր, որ հին ժամանակ Թուրքիայում տրվում էր վերնախավի հարուստ մարդկանց, ընդհուպ մինչև սուլթանը: Ավելի ուշ շրջանում այդ մակդիրը կրել են մտավորականները և արքայական որոշ շնորհների հասած մարդիկ: Տե՛ս Խաչատրյան Ս., Կոստանդնուպոլսի հայ ամիրայությունը (1750-1860-ական թթ.), Երևան, 2014, (թեկն. ատեն.), էջ 45-46: Հայտնի են ոչ միայն Կ. Պոլսի չելեպի մեծահարուստ-վաշխառուները, այլև մտավորականներ, որոնցից ամենանշանավորը XVII դարում հայագիտությանը քաջածանոթ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն էր:

² Barsumyan H. L., *The Armenian Amira Class of Istanbul*, Yerevan, 2007, p. 38.

³ «Ամիրա» բառը առաջացել է արաբերեն միր, էմիր բառերից, որը նշանակում է

Ամիրայական դասակարգը բաղկացած էր սեղանավորներից (սարաֆներ)⁴, մեծագումար վաճառականներից և պետական պաշտոնյաներից:

Ամիրաները գործում էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև կայսրության տարբեր գավառներում՝ վարկավորելով գլխավորապես վարչական վերնախավին՝ ի դեմս գավառական կուսակալ փաշաների (վալի): Չուտ ֆինանսական գործառնությունների առումով, ամիրաները հանդես էին գալիս որպես վաշխառու-չելեբիների հաջորդներ, սակայն շատ ավելի լայն շտապիղներով, օսմանյան վարկային համակարգում՝ գործառնության լուրջ նշանակությամբ:

Օգտվելով այն հանգամանքից, որ մինչև Ղրիմի պատերազմի ավարտը (1856 թ.) սուլթանները եվրոպական պետություններից փոխառություններ չէին վերցնում, ամիրաները իրենք էին կատարում այդ գործարքները, տոկոսով վարկեր էին բաց թողնում այս կամ այն վաճառականին, առևտրական ընկերությանը, պետական գրասենյակներին,

հրամանատար, իշխան և այլն: Արաբական խալիֆայությունում ամիրաներ են անվանվել զորահրամանատարները, կուսակալները: Օսմանյան կայսրությունում ամիրա պատվանունը տրվում էր սուլթանների պալատական քրիստոնյա, հայ արքունի պաշտոնյաներին՝ որպես կայսերական հաստատությունների վերակացուներ, վարկատուներ կամ մատակարարներ: Տե՛ս Ստեփանյան Շ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, էջ 185: Ամիրաների մասին տես՝ Barsumyan H. L., *The Armenian Amira Class of Istanbul*, Yerevan, 2007: Carmont P., *Les Amiras: Seigneurs de l'Arménie ottomane*, Paris, 1999: «Ամիրա» տիտղոսով հայտնի էին նաև պաշտոն ստացած քուրդ ցեղապետերը:

⁴ Հաճախ մեր պատմագիտության մեջ նույնացնում են «սարաֆ» և «ամիրա» հասկացությունները: Պետք է նկատել, որ խոսքը փաշաների սարաֆների մասին է, այլ ոչ թե ամիրաների: Տե՛ս Urquart D., *Turkey and its Resources*, https://books.google.am/books?id=mW8R0xfjXCYC&pg=PR9&hl=ru&source=gbs_selected_pages&cad=3#v=onepage&q&f=false. Իհարկե, սարաֆ ամիրաների և փաշաների սարաֆների գործառնությունները իլլիզամի առումով չեն տարբերվում, սակայն ամիրաները XVIII դ. II կեսին նոր խավ էին խորհրդանշում, և նրանք կապված էին օսմանյան կառավարող վերնախավի նոր շերտերի և արքունիքի հետ: Տե՛ս Խաչատրյան Ս., *Կոստանդնուպոլսի հայ ամիրայությունը (1750-1860-ական թթ.)*, Երևան, 2014, (թեկն. առեն.), էջ 42-43: Այս սարաֆները առանցքային դեր են խաղում հարկային համակարգում: Համակարգի հիմնական գործառնությունը հարկերի հավաքագրման միջոցով պետական գանձապետարանին եկամուտների ապահովումն էր: Տե՛ս Barsumyan H., *The Armenian Amira Class of Istanbul*, Yerevan, 2007, p. 60.

զանազան փաշաների, թուրքական դեսպաններին, հաճախ անգամ սուլթանին⁵, այս բնագավառում ամենայն հաջողությամբ մրցակցելով հրեա սեղանավորների հետ:

Մյուս կողմից, ճանաչված լինելով որպես առանձին դաս և մտնելով սեղանավոր-ամիրաների կորպորատիվ կազմակերպության մեջ՝ ամիրաների մի մասը, թեկուզ և սահմանափակ թվով, օգտվում էր ժառանգական պաշտոնակալության իրավունքից (հավանաբար, այստեղ գործել է նախադեպի նորմը, որն այնքան հարգի էր օսմանյան ավանդական հասարակության մեջ)⁶: Դրա ուժով Պալյան ամիրաները զբաղեցնում էին արքունի ճարտարապետների պաշտոնը, Տյուզյանները՝ ոսկերչապետների և փողերանոցի (դրամահատարան) գլխավորի, Տատյանները՝ վառողապետի և զինագործարանների տնօրենի պաշտոնը և այլն:

XIX դարի 30-50-ական թթ. Օսմանյան կայսրության տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի պայմաններում ձևավորվեց օսմանյան բարենորոգչական գաղափարախոսությունը: Օսմանյան Թուրքիայում եվրոպական տերությունների ծավալվող շահամետ քաղաքականությունը, բնակչության շահագործումը և ոչ մահմեդական ժողովուրդների ազգային ու կրոնական ճնշումների սաստկացումն այն գործոններն էին, որոնք անհրաժեշտ էին դարձնում բարենորոգումները:

Թանզիմաթի⁷ դարազրույիչ Օսմանյան կայսրությունում սկսվեց 1839 թ. նոյեմբերի 3-ին, երբ Կ. Պոլսի սուլթանական Գյուլիանե պալատում Մուստաֆա Ռեշիդ փաշան (1800-1858) կարդաց Գյուլիանեի հաթթը շերիֆը⁸ (Վարդաստանի հրովարտակ): Թանզիմաթի երկրորդ

⁵ Տե՛ս Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. Ա, Երևան, 1962, էջ 22:

⁶ Խառատյան Ա., Ամիրաների դասը Կոստանդնուպոլսի հայ համայնքում (XVIII դ. II կես-1860- ական թվականներ), «Պատմաբանասիրական հանդես», 2013, թիվ 3, էջ 1:

⁷ Թանզիմաթը (արաբերեն թանզիմ բառի հոգնակի ձևն է, որ նշանակում է կարգադրել, բարեփոխել): Թանզիմաթը ժամանակագրորեն ընդգրկում է երկու փուլ՝ 1839-1856 և 1856-1876 թթ., երբ հռչակվեց օսմանյան առաջին սահմանադրությունը: Տե՛ս Шабанов Ф., Государственный строй и правовая система Турции в период танзимата, Баку, 1967, с. 18.

⁸ Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երևան, 2002, էջ 22-27:

շրջանը սկսվում է 1856 թ. փետրվարի 18-ին հրապարակված Հաթթը հյումայունում⁹ (Կայսերական գիր): Այս երկու հրովարտակներն էլ հրապարակվեցին Աբդուլ Մեջիդի (1839-1861) գահակալության շրջանում:

Օսմանյան կայսրությունում 1839 թ. մեկնարկած բարեփոխումները ոչ միայն համընկան, այլև մասամբ խթանեցին պոլսահայ համայնքի հանրային կառուցվածքի մշակմանը և դասային փոխհարաբերությունների զարգացմանը դրա ներսում: Դրան նպաստեցին կայսրության հպատակների թեկուզև զուտ ձևականորեն իրավահավասարության, հարկերի կանոնավոր գանձման, սեփականության իրավունքի հռչակման վերաբերող հաթթերը, վարչական որոշ բարեփոխումներ և այլն:

Ամիրայական խավի անկումը սկիզբ առավ նույն՝ XIX դարի 30-ական թթ. վերջերից ծավալված թանգիմաթի բարենորոգումներից: Ամիրայական խավի աստիճանական անկման գործընթացում օբյեկտիվ գործոններ կարելի է համարել Օսմանյան Թուրքիայում նոր կապիտալիստական հարաբերությունների թեկուզև դանդաղ զարգացումը, միջին խավի զարթոնքը, որ կապված էր հրապարակված թանգիմաթի գաղափարների հետ, նոր բանկային համակարգի ձևավորումն ու եվրոպական գաղափարների տարածումը:

Հասարակական հիմնավորց այս շերտի միլիոններով հաշվվող հարստությունը դիզվել էր կապալահարկերի, պետական մատակարարումների, բարձր պաշտոնյաների վարկավորման և նման այլ միջոցներով: Ամիրայությանն էր ծառայում Անատոլիայի և Ռումելիայի բանկային ընկերությունը¹⁰, որի միջոցով հարստահարության աղբյուր էր դարձվում երկրի գյուղացիության հարկումը: Ֆինանսավորելով ռազմական և վարչական հիմնարկների պետերին՝ ամիրաները տարածում էին իրենց ազդեցությունը պետական ապարատի վրա: Հաճախ նրան-

⁹ Տե՛ս Փափագյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երևան, 2002, էջ 27-35:

¹⁰ Անատոլիայի ընկերության ղեկավարն էր Հարություն ամիրա Ուզունյանը (Երկանյան): Ռումելիի ընկերության գլխավորներն էին Մագսուտ ամիրա Մարիմյանն ու Ճանիկ ամիրան: Տե՛ս Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, էջ 188:

ցից էր կախված սաղրագամների (մեծ վեզիր) և փաշաների բախտը¹¹: Այս առիթով Ն. Մրմըրյանը նկատում է. «Ասոնց ջոջերէն ամէնակարևորն խումբ մը՝ համախոհութեամբ իրարու հետ և համահաճութեամբ պետութեան՝ հիմնած էր այն հսկայ ընկերութիւնը սեղանաւորական, որ բաժնուէլով երկու ճիւղի՝ կը տնտեսէր ու կը հաւաքէր իր գործակատարներուն և հարիւրորդաւոր հաւաքողներուն ձեռքով՝ Անատօլի հարկերը և երկրորդը՝ նոյնպէս իր գործակատարներուն և հաւաքողներուն ձեռքով Բուսթիի հարկերը, այնպէս որ բովանդակ Տէրութեան հարկերն և տուրքերը կը ժողովէին այդ ընկերութեան ձեռքով, որ շատ անգամ ի հաշիւ Տէրութեան կանխավճարներ ընելով այդ հարկերուն փոխարէն՝ կը դիրացներ անոր պիտուէին առ ձեռն հաւասարակշռութիւնը, և ինք ալ կը շահէր լիով՝ ցորչափ գիտնար իր հաշիւը, և տնտեսէր լաւ պաշտօնէութեան մը ձեռքով իր ընդարձակ գործերը»¹²: Սակայն ուժի և ազդեցության այս գազաթնակետից էլ ամիրայական դասակարգը սկսում է ցած գլորվել:

Ամիրայության հիմքերը խարխլոդ թշնամի էր հանդիսանում թանգիմաթը, որ «որքան էլ հիմնականում տառ մնացած մի նորություն լինէր, բայց և այնպէս, որոշ փոփոխություններ մտցնում էր օսմանյան վարչական և հարկահանման սկզբունքների մեջ: Եվ որքան հետզհետե զարգանում էին այդ սկզբունքային փոփոխությունները, այնքան ամիրայությունը կորցնում էր իր իշխանական ուժի այն հեղինակությունը, որ ուներ հայ համայնքի մեջ»¹³:

Ամիրաները գորեղ ազդեցություն ունեին հայոց պատրիարքների վրա: Իրենց ձեռքում ունենալով բավական լուրջ քաղաքական և տնտեսական լծակներ՝ նրանք Կ. Պոլսի Հայոց պատրիարքի գահին էին նստեցնում իրենց հաճո հոգևորականներին: Կ. Պոլսի պատրիարքի միջոցով հայ ամիրայական դասն այդպիսով իրագործում էր իր քաղաքականությունը՝ հիմնականում ինչպէս ազգի, այնպէս էլ թուրքական կառավարության առջև պատրիարքին ներկայացնելով որպէս այդ քաղաքականության պաշտոնական կրողի: Ամիրաները ֆինանսավորում

¹¹ Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 348:

¹² Մրմըրեան Յ. Գ., Մասնական պատմութիւն հայ մեծատուններու, 1400-1900, Կ. Պոլիս, 1909, էջ 130:

¹³ Լեո, Երկերի ժողովածու, Հայոց պատմություն, հ. 4, գիրք Ա, Երևան, 1984, էջ 517:

Էին պատրիարքարանը և պատրիարքների միջոցով իրենց ազդեցությունը տարածում ողջ արևմտահայության վրա: Իսկ ժողովուրդը ամիրաների հիւր կամակատարն էր և խոնարհվում էր նրանց անձնական հեղինակության և տնտեսական ուժի առաջ. «Ամիրաներն ինքնակոչ կը գային իշխանական մականն առնուլ, ոչ զի արժանի էին նմա, այլ զի պատիւ ունէին ևս դրամ: Նոքա կը գործէին ինչ որ ուզէին... իսկ պատրիարքն կամ առաջնորդներն ամիրայի գործիքն էին շատ անգամ»¹⁴:

Թանգիմաթն ամենից առաջ թուլացնում էր հայոց պատրիարքի, ասել է՝ ամիրայական դասակարգի պատժողական իշխանությունը, որ մի տեսակ ահաբեկման դրության մեջ էր պահում հասարակ ժողովրդին: Պատրիարքն այլևս իրավունք չունէր իր կամեցած մարդուն բռնությամբ տանել պատրիարքարան, առանց դատի խոշտանգել և ապա արքայել: Այս բռնակալական կարգի վերացումն արդեն և ինքնըստինքյան մի խթան էր հանդիսանում, որ մշտապես խոշտանգվող ժողովուրդը իրեն զգա մարդկային տարրական իրավունքի տեր. մի տրամադրություն, որ նեցուկ էր գտնում թանգիմաթի բացորոշ ազատական խոստումների մեջ և սկսում պայքար իր վրա բռնացած ամիրայության դեմ¹⁵:

Թանգիմաթով որոշված բարենորոգություններից մասնավորապես երկուսը՝ օրենքի առաջ հավասարությունը և տուրքերի արդար բաշխումը, ամենամեծ ազդեցությունն ունեցան պատրիարքների գլխավորած վարչության վրա¹⁶:

Այս պարագայում Կ. Պոլսի ամենաբազմամարդ խավը՝ էսնաֆությունը¹⁷, մարտահրավեր է նետում ամիրայությանն ու պատրիարքին:

¹⁴ Ասատուր Հ., Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն, Կ. Պոլիս, 1878, էջ 47:

¹⁵ Լեո, նշվ. աշխ., էջ 517-518:

¹⁶ Տե՛ս Բорян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, Москва-Ленинград, 1928, с. 185.

¹⁷ Էսնաֆություններն առհասարակ կորպորատիվ միություններն էին Օսմանյան Թուրքիայում, և արհեստավորները կազմում էին դրանց բաղկացուցիչ մասը: Հայ արհեստավորական միավորված կազմակերպությունների թիվը Կ. Պոլսում XIX դարի սկզբին հասնում էր 65-ի, իսկ դարակեսին ավելի քան 100-ի: Հայտնի էին սառաֆների սեղանավորների (սառաֆ), ոսկերիչների (գուլումճի), ժամագործների (սահատջի), հացագործների (էքմէքջի), բաղնիսպանների (համամջի), վարսավիրների (բերբեր) և այլ արհեստով զբաղվողների միությունները: Տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն, /Միջնադարից մինչև 1920/, հ. 2, Երևան, 2003, էջ 115:

Ժողովրդական այս պայքարն ամիրաների դեմ իր արտահայտությունը գտավ արհեստավորության ցույցերի մեջ, որոնք բռնկվեցին 1825, 1827, 1832, 1836 թթ.¹⁸: Սակայն ամիրայական մենատիրության դեմ այս ընդվզումները հայությանը որևէ արդյունք չտվեցին: Սուլթանը դեռ զգում էր ամիրաների կարիքը, ուստի բավարարեց վերջիններիս ցանկությունները և պատժեց արհեստավորներին¹⁹:

1830-ական թթ. վերջերից այս դրության մեջ սկսում է փոփոխություն նկատվել: Այս առիթով Սարուխանը նկատում է. «Խլրտում է ծագում մանաւանդ էսնաֆ (արհեստաւոր) դասակարգի մեջ, որը, շնորհիւ իր միջի մի քանի գիտակից և համարձակ ոգու տէր անհատների, խուլ բողոքներ է բարձրացնում ամիրայական իշխանավարութեան դէմ: Այս դժգոհությունը հարմար առիթի էր սպասում ուժեղ կերպով երևան գալու համար: Եվ առիթը վերջապէս ներկայացաւ»²⁰:

Սկիզբ առած արհեստավորական ցույցերն առավել մեծ թափով ընթացան 1839 թ. Սկյուտարի ճեմարանի շուրջ: Ըստ նախնական պայմանավորվածության՝ ճեմարանի ծախսերը պետք է հոգային ամիրաները և Երուսաղեմի պատրիարքությունը: Այստեղ պետք է սովորեին նաև արհեստավորների երեխաները, սակայն ամիրաները դեմ արտահայտվեցին այս իրողությանը և միջոցներ չտրամադրեցին:

Սկյուտարի ճեմարանի շուրջ ծավալված պայքարում արտահայտվեցին պոլսահայ համայնքի ներսում ծագած բոլոր հակամարտությունները: Չնայած այս հանգամանքին՝ ամիրաների դեմ պայքարում որոշակի հաջողություններ գրանցվեցին, և ճեմարանը կրկին բացվեց: Սակայն ակնհայտ էր, որ առանց ամիրաների օժանդակության, ճեմարանը երկար գոյատևել չէր կարող և «Ի վերջոյ, ճեմարանը կը փակուի 1841 հոկտեմբեր 3-ին և չորս տարի փակ կը մնայ, իսկ 1843-ին կը վերածուի զինուորական հիւանդանոցի»²¹:

Սակայն կարող ենք նշել այն հանգամանքը, որ արդեն 1830-ական թթ. վերջերին ամիրաները ստիպված էին հաշվի նստել ժողովրդի հետ: Այս շրջանում ամիրաների նկատմամբ հոգևոր առաջնորդների

¹⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 332:

¹⁹ Նուրբեկյան Լ., Արևմտահայերի ազգային ժողովի գործունեությունը, Երևան, 2017, էջ 28:

²⁰ Սարուխան Ա., Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 5:

²¹ Մուխթարեան Ա., Պոլսահայերը (1923-1939), Երևան, 2006, էջ 44:

վերաբերմունքը նույնպես փոխվում է: Նրանք կարծես թե ավելի ինքնուրույն են դառնում և աջակցում են հասարակ ժողովրդին ու էսնաֆին ամիրաների կամայականությունների դեմ²²:

Ամիրայության ազդեցության նվազման մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ պոլսահայերն այլևս առաջվա պես ամեն ձեռնարկման մեջ իրենց հույսը ամիրաների հետ չէին կապում. «Այլևս ամենայն ինչ ամիրաներեն և ունեւորներեն սպասելու հոգին մարած էր, և ժողովրդական խումբեր, ընկերություններ կազմելով և փոքրիկ նուէրներով ձեռնարկներ կատարելու կը վարժուէին»²³:

Ըստ էության՝ Սկյուտարի ճեմարանի շուրջ ծավալված պայքարն առաջին լուրջ հարվածն էր ամիրայությանը: Դրանից հետո ամիրաներն հետզհետե կորցնում էին իրենց հեղինակությունը համայնքում: Մյուս կողմից էլ նոր գլուխ բարձրացող, Եվրոպայում կրթված բուրժուազիայի ներկայացուցիչները ձգտում էին բարեփոխել համայնքը բոլոր առումներով:

Բարեփոխումների արդյունքում գավառներում մի հայտնի չափով վերջ տրվեց փաշաների ինքնագլխությանը, հատկապես հարկահավաքման բնագավառում, որ խարխլեց իլթիզամի²⁴ արատավոր և կործանարար համակարգը, որը երբեք օգտակար չէր եղել բնակչության բարեկեցությանը²⁵: Վերջին հանգամանքները ոչ մահմեդական համայնքներում պետք է թուլացնէին օսմանյան ռազմարյուրկրատական վերնախավի, և մասնավորապես, փաշաների հզորությանը կոթնած հայ ամիրաների տնտեսական ուժն ու կարողությունը:

Այս առումով Պ. Չիխաչովը նկատում է, որ փաշաների ժառանգական իրավունքների վերացումը և դրանց քաղաքացիական պարտականությունների սահմանազատումը հնարավոր դարձավ իրակա-

²² Խաչատրյան Ս., Կոստանդնուպոլսի հայ ամիրայությունը (1750-1860-ական թթ.), Երևան, 2014, էջ 172, (թեկն. ատեն.):

²³ Օրմանեան Ս., Ազգապատում, հ. Գ, սյունակ 4483:

²⁴ Պետական եկամուտների որևէ ճյուղը (գլխավորապես՝ գյուղատնտեսական հարկերը) նախապես վճարելու պայմանով պարտավորագրով վերցնելը կոչվում էր իլթիզամ, իսկ պարտավորագրով վերցնող անձնավորությունը կոչվում էր մյուլթեզիմ կամ մուքաթաաջը: Մյուլթեզիմները զանազան պատրվակներով հաճախ նշանակած հարկերից ավելի բարձր էին գանձում: Տե՛ս Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Երևան, 2002, էջ 238:

²⁵ Տե՛ս Դուլինա Н., Танзимат и Мустафа Решид-паша, Москва, 1984, с. 54.

նացնել խոստացված բարեփոխումների թվում²⁶:

Ամիրաների ազդեցությանը հատկապես ծանր, և թվում է՝ անդառնալի հարված հասցրեց 1852 թ. նոյեմբերի 28-ի՝ վիլայեթների վերաբերյալ օրենքը, որով պետք է բավական կտրուկ կերպով վերակառուցվեին գավառական վարչությունները: Նահանգապետ փաշաների գործառնության միահեծանությունը տրոհվեց տարբեր պաշտոնյաների միջև. նրանց կողքին հայտնվեցին զինվորական կառավարիչը (մուհաֆըզ) և ֆինանսները տնօրինող պաշտոնյան (մուհասարը կամ մալմուդուր)²⁷: Այս կերպ սուլթանը և Բ. դուռը կարծեք թե հասնում էին իրենց բաղձալի նպատակին, որի համար ապարդյուն պայքար էին մղել դեռևս XVII-XVIII դարերից սկսած, այն է՝ գավառական անհնազանդ փաշաներին ու դերեբեյներին (հովատերեր) կենտրոնական իշխանություններին ենթարկելու և նրանց ամբողջովին կախման մեջ դնելու նպատակին²⁸:

1856 թ. Ղրիմի պատերազմի ավարտից հետո հույն, հայ և հրեա սեղանավորներն առհասարակ կորցրեցին իրենց անփոխարինելի գործառնության նշանակությունը երկրի ֆինանսական համակարգում և արքունիքում: Սկսվում էր նոր՝ եվրոպական երկրներից Օսմանյան Թուրքիայի փոխառությունների դարաշրջանը, որով խորացավ կայսրության տնտեսական կախվածությունը եվրոպական տերություններից: Դրան զուգահեռ, ընթանում էր ոչ մահմեդական համայնքների նկատմամբ, (և դարձյալ եվրոպական հարկադրանքով) ոչ մահմեդական համայնքների վարչությունների վերակառուցման գործընթացը:

1856 թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրով²⁹ Օս-

²⁶ Հարությունյան Գ., Արևմտահայության կացությունը և Հայկական հարցի միջազգայնացումը (1850-1870-ական թթ.), Երևան, 2009, էջ 49:

²⁷ St u Фадеева И., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-панисламизм). XIX-начало XX в., Москва, 1985, с. 62.

²⁸ Չատինյան Գ., Հայ հասարակական միտքը Օսմանյան բարենորոգչական շարժման մասին (1839-1876), Երևան, 2015, էջ 36, (թեկն. ատեն.): Բարեփոխումների արդյունքում վերակազմավորվեց կայսրության գավառական վարչակազմը, նախ կենտրոնացնելով այն և, ապա, կառավարման համակարգ բերելով վարձու պաշտոնյաների, որոնք փոխարնեցին փաշաներին և պատասխանատու էին կենտրոնական իշխանություններին: St u Bernard L., The emergence of modern Turkey, London, Oxford, New York, 1969, p. 107.

²⁹ 1856 թ. մարտի 30-ին Փարիզում կնքված պայմանագրի 9-րդ հոդվածը ճանաչում էր Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների

մանյան Թուրքիան պարտավորվեց աշխարհականացնել միլեթների (հայ, հույն, հրեա) ներքին ազգային վարչությունը, որը ևս իր ազդեցությունն ունեցավ հայ համայնքի ներքին կյանքի և ամիրաների դերակատարման նվազման վրա:

Հաջորդ իրադարձությունը, որ պիտի վերջնականապես խարխլեր ամիրաների դիրքերը, Ազգային սահմանադրությունն էր: Թեպետ ազգի երևելիներն ամեն ինչ արեցին այն տապալելու համար, սակայն սուլթանը 1863 թ. մարտի 17-ին վավերացրեց սահմանադրությունը հաստատող ֆերմանը³⁰: Սա նոր սերնդի հաղթանակն էր, և ամիրայության վերջնական պարտությունը:

Սահմանադրությունը սահմանափակում էր ամիրաների և պատրիարքների իրավունքները: Այսուհետև ամիրայական դասի մասին խոսել չենք կարող, քանի որ այն դադարեց գոյություն ունենալ՝ դիրքերը զիջելով նոր, առաջադիմական ուժերին: Հ. Միրունին այս առիթով գրում է. «Սահմանադրութեան այս նոր սերունդը հողի տակ պիտի դնէր հայ ամիրաները եւ քար մը պիտի գլորէր անոնց գերեզմանին վրայ»³¹:

Ազգային սահմանադրության վավերացումից հետո՝ 1863 թ., ամիրայության որպես վերնախավի մասին խոսելը շատ դժվար է: Ազգային վարչության մեջ նրանք այլևս ծանրակշիռ դերակատարում չեն ունեցել, իսկ Օսմանյան կայսրության կյանքում էլ նրանք իրենց դերն արդեն սկսել էին զիջել պաշտոնյաների նոր սերնդին և նոր առաջ եկող երիտասարդ բուրժուազիային: Այսուհետ կարող ենք խոսել միայն անհատների մասին, որոնք, ի դեպ, արդեն «ամիրա» պատվանունը չեն կրում, այլ կոչվում են պեյ կամ էֆենդի:

Ամիրայական տների որոշ շառավիղներ պետությանն ու արքունիքին ծառայեցին մինչև XIX դարի վերջը, բայց նրանց մեծ մասը իրենց

իրավունքները, որով թուրքական իշխանությունը պարտավորվում էր առանց կրոնի խտրականության հոգավ բոլոր հպատակների բարեկեցության մասին: Մակայն եվրոպական պետությունների վարած երկդիմի քաղաքականության արդյունքում պարզ դարձավ, որ այն սոսկ արտաքին վարագույր է Օսմանյան Թուրքիայի նկատմամբ իրենց իրական նպատակները թաքցնելու համար; Տե՛ս Նուրբեկյան Լ., Արևմտահայերի Ազգային ժողովի գործունեությունը, Երևան, 2017, էջ 25:

³⁰ Տե՛ս Bebiroğlu M., Tanzimattan II. Meşrutiyete Ermeni nizamnameleri, İstanbul, 2003, s 76.

³¹ Միրունի Հ., Պոլիս և իր դերը, հ. 3, Անթիլիաս-Լիբանան, 1987, էջ 102:

գործառույթները զիջեցին եվրոպական բանկերին: Եվրոպայում կրթություն ստացած ամիրաների որդիները նույնպես պիտի սատարեին կայսրությունում տեղի ունեցող նոր գործընթացներին:

Ամիրայական յուրահատուկ կարգավիճակը, որ շարունակվում էր գրեթե մեկ դարի ընթացքում՝ (XVIII դարի II կեսից ժառանգաբար), կորցրեց իր հմայքը թանգիմաթի բարեկարգումների դարաշրջանում: Ամիրաներն իրենց իշխանությունը հայ համայնքում ինչ-որ չափով պահպանեցին մինչև 1860 թ., բայց այդ ուղիղ համեմատական էր թանգիմաթի ոչ հետևողականությանն ու անկատարությանը: Համենայն դեպս, տասնամյակներ պահանջվեցին հայ համայնքում ամիրայության վերջնական անշքացման համար:

Կարող ենք փաստել, որ թանգիմաթի շրջանում, երբ կայսրության հպատակ ժողովուրդների մեջ նոր դրսևորումներ ստացավ ազգային ինքնագիտակցության զարգացման ընթացքը, ազգային կյանքում ամիրաների միահեծան դարձած իշխանությունը տեղի պետք է տար ազատականացման պահանջներին, ամիրաների կամքը՝ հանրային մղումներին:

**SALVINE MARKOSYAN
(IAE)**

THE ARMENIAN AMİRA CLASS OF COSTANTİONPLE AND THE TANZİMAT

The exploration of Amira class has up-to-date meaning to reveal financial and legal consequences of Tanzimat's decisions. In fact Tanzimat fastened the transformations of social classes of Western Armenians in Costantinople. These transformations were due to the legal, civil and economic changes happening in Ottoman Empire which also contributed to the development of the country.

In the provinces Tanzimat's legal acts against the pashas as well as the weakening financial power of pashas and operation of European banks in Ottoman Empire eliminated the banking activities of Amira class.

After the declaration of the Constitution in 1863 the Amira class was marginalised from the life of Western Armenian society and ceded its position to the new generation of officials.

ՄՅԱՄՆԻԿ ԵՍՈՅԱՆ
(ԵԿՏԱ)

**ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ «ԱՐԵԳ»
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷԶԵՐՈՒՄ 2010-2015 ԹԹ.**

Հայկական բարեգործական ընդհանուր միության Կահիրեի մասնաճյուղի ֆինանսավորմամբ 2010 թ. առայսօր լույս է տեսնում «Արեգ» պարբերականը, որը շարունակում է կատարել «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածի առաքելությունը: «Պատահական չէ, որ պարբերականը «Արեգ» անվանումը ստացավ», - նկատում է արաբ հետազոտող Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը «Վերադարձ դեպի սկիզբ» հոդվածում, որտեղ հեղինակը ներկայացնում է պարբերականի ստեղծման պատմությունը¹:

«Արև»-ի արաբերեն հավելվածի նման «Արեգ» պարբերականի հիմնական նպատակը հայ-արաբական՝ մասնավորապես հայ-եգիպտական հարաբերություններն ամրապնդելն է: ՀԲԸՄ արաբերեն պարբերականի օգնությամբ ցանկանում է խորացնել հայ և արաբ ժողովուրդների միջև մշակութային կապերը: Հայկական բովանդակությամբ թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական բովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը: «Արեգ» պարբերականը «Արև»-ի արաբերեն հավելվածի նման ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում վառ պահել նրանց հիշատակը:

Եգիպտահայ համայնքը 20-րդ դարում նշանակալից հաջողություններ ունեցավ կերպարվեստի բնագավառում: Կերպարվեստի տարբեր ճյուղեր բավականին շահութաբեր էին՝ հնարավոր դարձնելով նկարչական դպրոցների, ցուցասրահների և ցուցահանդեսների առկայությունը: Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էին Լեոնարդո դա Վինչիի նկարչական դպրոցը, բազմաթիվ ցուցասրահներ, որոնք զբաղվում էին նկարների առևտրով: Այդ միջավայրում ապրեցին և ստեղծագործեցին մի շարք հայ նկարիչներ և քանդակագործներ, որոնք պատվավոր տեղ են գրավում եգիպտական կերպարվեստի պատմու-

¹ Արեգ, Կահիրե, 2010, № 1, էջ 1 (արաբերեն):

թյան մեջ: Չնայած եգիպտահայ մամուլը՝ հատկապես «Արև» օրաթերթը, բազմիցս անդրադարձել է եգիպտահայ նշանավոր արվեստագետների կենսագրության ու ստեղծագործական գործունեության լուսաբանմանը, «Արեգ» պարբերականը ևս պարբերաբար վերհիշում է հայազգի նշանավոր արվեստագետներին և համառոտ կենսագրական և ստեղծագործական տեղեկություններ հաղորդում ընթերցողին:

Արաբերեն պարբերականը եգիպտահայ արվեստագետների առաջին սերնդի ներկայացուցիչներից մեծապես արժևորում է Երվանդ Դեմիրճյանի ու Վահրամ Մանավյանի արվեստը: Երվանդ Դեմիրճյանը ստեղծագործել է դիմանկարներ, ինչպես նաև կրոնական բնույթի նկարներ, որոնք այսօր փակցված են Եգիպտոսի հայկական եկեղեցիների պատերին: Հայազգի արվեստագետի մահից հետո նրա աշխատանքները, որոնք իրենցից ներկայացնում էին 49 եգիպտացի տղամարդու և կնոջ դիմանկարներ, 161 բնապատկերներ, քաղաքային նկարներ և այլն, 1939 թ. տեղափոխվեցին Կահիրեի Հայ Առաքելական պատրիարքարան: Բացի այդ՝ հայազգի արվեստագետը իր կյանքի ընթացքում ստեղծագործել է 16 յուղաներկով, 10 ջրաներկով նկարված նկար: Ընդհանուր առմամբ Երվանդ Դեմիրճյանի նկարների հավաքածուն ներառում է 236 կտավ²:

Եգիպտահայ նշանավոր արվեստագետներից է Վահրամ Մանավյանը: Ալեքսանդրիայում ապրած տարիներին զբաղվել է նկարչությամբ, յուղաներկերով նկարել է Ալեքսանդրիայի քաղաքային, ծովափնյա տեսարաններ: 1951 թ. կազմակերպում է անհատական ցուցահանդես, որին ներկայացված էր արվեստագետի 60-ից ավելի յուղաներկով և ջրաներկով կատարված աշխատանքները: 1952 թ. Վահրամ Մանավյանի մահից հետո նրա աշակերտ հայազգի արվեստագետ Հովհաննես Դաջիբջյանը Մանավյանի բարեկամներից գնում է 50-60 նկար: Դրանից հետո ոչ ոք չգիտի Վահրամ Մանավյանի նկարների ճակատագիրը: Արվեստագետ Հարութ Սասունյանը նշում է, որ եգիպտական հին ֆիլմերը դիտելու ընթացքում նկատել է, որ որոշ ֆիլմերի դեկորացիաներ պարունակում են Մանավյանի բնապատկերները³:

Եգիպտահայ ավագ սերնդի հայտնի արվեստագետներից է Արման Արնաուտյանը, ով առավել հայտնի է Ալբան ազգանունով: Առաջին

² Նույն տեղում, 2015, № 57, էջ 14-20:

³ Նույն տեղում, 2015, № 57, էջ 23:

աշխարհամարտի ավարտից հետո հայազգի արվեստագետը մեկնում է Փարիզ, այնուհետև՝ Բրյուսել, ուր մի քանի տարի աշխատելուց հետո անձնական նկարչական արվեստանոց է բացում և շատ կարճ ժամանակահատվածում մեծ բարձունքների հասնում: Երկար տարիներ Բրյուսելում ապրելուց հետո Արման Ալբանը մեկնում է Փարիզ, որտեղ ևս արվեստանոց է բացում: Այստեղ հայազգի արվեստագետը մեծ ճանաչում է ձեռք բերում, և նրա արվեստանոցում նկարներ էին պատվիրում բազմաթիվ ճանաչված անհատականություններ: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայում կտրուկ վիճակը վատթարանում է, և Արման Ալբանը ստիպված թողնում է Փարիզը և 1940 թ. վերադառնում Եգիպտոս, որտեղ ապրում և ստեղծագործում է մինչև 1961 թ.⁴:

Արաբերեն պարբերականը եգիպտահայ արվեստագետների երկրորդ սերնդի ներկայացուցիչներից մեծապես կարևորում է Տիրան Կարապետյանի, Պարույր Պարտիզպանյանի, Առաքել Պատրիկի, Ալեքսանդր Սարուխանի, Օնիկ Ավետիսյանի, Արամ Ալբանի և Վահան Հովվյանի արվեստը: 20-րդ դարի Եգիպտոսի նշանավոր արվեստագետներից է երգիծաբան Ալեքսանդր Սարուխանը, ով համարվում է նաև Մերձավոր Արևելքի խոշորագույն ծաղրանկարիչներից մեկը: Նա 20-րդ դարում Եգիպտոսում մեծ վերելք ապրած քաղաքական երգիծանքի հիմնադիրներից է: Եգիպտացի արվեստագետ Ահմադ Սաբիթ Տուշանը նշում է, որ Սարուխանը Եգիպտոսում իրեն երջանիկ էր զգում և՛ որպես անհատ, և՛ որպես արվեստագետ: «Եգիպտոսում ամուսնացավ, դուստր ունեցավ»⁵, - իր հուշերում հիացմունքով նշում է արաբ արվեստագետը և խոստովանում, - «Սարուխանից շատ բան եմ սովորել»⁶:

Եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ Պերճ Թերզյանը, Ալեքսանդր Սարուխանին ներկայացնելով Շարլ Ազնավուրի ու Վիլյամ Սարոյանի հետ, նշում է, որ վերոնշյալ հայազգի գործիչները, պահպանելով իրենց հայկական արմատները, միևնույն ժամանակ իրենց նոր հայրենիքներում դարձան տեղի հասարակության կողմից հարգված ու լիիրավ անդամներ⁷:

⁴ Նույն տեղում, 2015, № 53, էջ 7-14:

⁵ Նույն տեղում, 2014, № 51, էջ 19:

⁶ Նույն տեղում, էջ 14:

⁷ «Արև», Կահիրե, 1998, № 10, էջ 1-4 (արաբերեն):

1967-1973 թթ. ընթացքում Ալեքսանդր Սարուխանը շուրջ 90 երգիծապատկերներ է նկարել, որոնցում արտահայտված են Եգիպտոսի արտաքին և ներքին քաղաքականության կարևորագույն իրադարձությունները: Ալեքսանդր Սարուխանի երգիծապատկերներում արտացոլված են 1971 թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Անվար Սադատի որդեգրած արտաքին և ներքին քաղաքականությունը, որի ընթացքում մի շարք արմատական փոփոխություններ իրականացվեցին⁸:

Սարուխանը պատկերել է նավթի գործոնը միջազգային հարաբերություններում. մասնավորապես մի երգիծապատկեր է պատկերել, որում ներկայացվում է, թե ինչպես են արաբական երկրները փորձում նավթի գործոնը օգտագործել որպես քաղաքական լծակ արևմտյան պետությունների քաղաքականության վրա ազդելու համար⁹: Սարուխանն իր աշխատանքներում անդրադարձել է նաև Եգիպտոսում զինվորականների դերի լուսաբանմանը, որոնք առայսօր շարունակում են կարևոր դերակատարում ունենալ երկրի պետական կառավարման գործում¹⁰:

Ալեքսանդր Սարուխանը իր երգիծապատկերներում պատկերել է Մուեզի ջրանցքի ազգայնացումը, արաբախորայելական պատերազմները, Ասուանի ջրամբարի կառուցումը, մերկացրել Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում առկա խնդիրները¹¹: Ալեքսանդր Սարուխանը ստեղծագործական կյանքի ընթացքում ստեղծագործել է մոտ 40000 երգիծապատկեր, որոնք տպագրվել են արաբական, հայկական և ֆրանսիական մամուլի էջերում¹²:

Ալեքսանդր Սարուխանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Եգիպտոսում տեղի ունեցան տարբեր մշակութային միջոցառումներ: Նախ 1998 թ. դեկտեմբերի 6-14 տեղի ունեցավ երգիծաբանի հոբելյանական ցուցահանդեսը, որի ընթացքում ցուցադրվեց հայ երգիծաբանի մոտ 100 աշխատանք: Այնուհետև Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը թողարկեց Ալեքսանդր Սարուխանի լավագույն աշխատանքների ալբոմը, իսկ 1998 թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ

⁸ «Արեգ», 2013, № 40, էջ 11-12:

⁹ Նույն տեղում, էջ 12-13:

¹⁰ Նույն տեղում, էջ 6-15:

¹¹ Նույն տեղում, 2014, № 42, էջ 24-25:

¹² Սարուխան Ա., Մենք մեր ակնոցով, Գահիրե, 1962, էջ 5:

հոբելյարի հիշատակին նվիրված ֆորում, որի ընթացքում մասնակիցները հանդես եկան նրա կյանքի ու գործունեության, Եգիպտոսում երգիծանքի վերաբերյալ զեկուցումներով¹³: Ի պատիվ հայազգի նկարչի՝ Կահիրեի քաղաքապետի 2006 թ. 2663 որոշմամբ Կահիրեի փողոցներից մեկը վերանվանվեց Ալեքսանդր Մարուխանի անունով¹⁴:

Արվեստագետ Օնիկ Ավետիսյանի ծննդյան կապակցությամբ «Արեգ»-ը տեղեկություններ է հաղորդում եգիպտահայ արվեստագետի կյանքի և ստեղծագործական գործունեության կարևոր էջերի մասին¹⁵: Օնիկ Ավետիսյանի վաղ շրջանի գրաֆիկական նկարներում պատկերված են Ավստրիայի և Իտալիայի տեսարաններ, Հալեպի և Կահիրեի հին թաղամասերի պատկերներ¹⁶:

1930-ականն թթ. պատկերում է Կիպրոսի տարբեր վայրերի, Ասուան և Լուքսոր քաղաքների տեսարաններ, որոնք հիմնականում յուղաներկով նկարված աշխատանքներ են: Իր կյանքում շատ է ճանապարհորդել հայազգի արվեստագետը: Մասնավորապես 1946 թ. Մեկնում է Ասուան, ապա 1951 թ.՝ Եվրոպա, այցելում Իտալիայի բազմաթիվ քաղաքներ¹⁷:

Օնիկ Ավետիսյանը նաև հոդվածներն է տպել «Արև» օրաթերթում եգիպտահայ արվեստագետների, Եգիպտոսի մշակութային կյանքի մասին: «Եգիպտահայ արվեստագետների ընկերություն» միությունը առաջարկեց նրան 100-150 էջանոց գիրք տպել եգիպտահայ արվեստագետների մասին: Ուր տարի տևած քրտնաջան աշխատանքից հետո տարբեր աղբյուրներից հավաքելով արժեքավոր նյութեր եգիպտահայ արվեստագետների մասին՝ Օնիկ Ավետիսյանին հաջողվեց ավարտին հասցնել գրքի շարադրումը¹⁸: Այն 1200 տպաքանակով լույս տեսավ 1959 թ., որի 494 էջերում 350 արվեստագետների, վերջիններիս 500-ից ավելի նկարների մասին արժեքավոր տեղեկություններ են ամփոփված¹⁹: Լիբանանում ապրած տարիներին Օնիկ Ավետիսյանի մի շարք

¹³ «Արև», 1999, № 13, էջ 11:

¹⁴ Նույն տեղում, 2007, № 111, էջ 17:

¹⁵ «Արեգ», 2014, № 52, էջ 3-12:

¹⁶ Նույն տեղում, 2014, № 51, էջ 3:

¹⁷ Նույն տեղում, էջ 4:

¹⁸ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., Հայերը Եգիպտոսում 1896-1961 թթ., Կահիրե, 2003, էջ 614 (արաբերեն):

¹⁹ «Արեգ», 2014, № 51, էջ 6:

արժեքավոր գործեր ավարտին հասցրեց. մասնավորապես 6 կրոնական բնույթի նկարներ ստեղծագործեց Բեյրութի Սուրբ Նշան եկեղեցու պատերը զարդարելու համար²⁰: 1930-ականներին Օնիկ Ավետիսյանը նաև մոտ 15 քանդակներ է ստեղծագործել, որոնց մեծ մասը կիսանդրիներ են եղել: Դրանցից նշանավորները իր հոր՝ Հակոբ Ավետիսյանի, Պողոս Նուբար փաշայի և Տիգրան Աբրոյանի կիսանդրիներն են: Հայագգի արվեստագետի աշխատանքների ընդհանուր թիվը 125-130 է²¹:

Ամփոփելով Օնիկ Ավետիսյանի ստեղծագործական գործունեությունը՝ կարող ենք փաստել, որ հայագգի արվեստագետը իրեն փայլուն դրսևորել է վեց տարբեր ոլորտներում՝ փորագրության, նկարչության, քանդակագործության, եգիպտահայ պատմության ուսումնասիրման, ինչպես նաև դասավանդել և տասնյակ հոդվածներ է գրել եգիպտահայ նշանավոր արվեստագետների մասին:

Պարբերականը եգիպտահայ արվեստագետների երրորդ սերնդից առանձնացնում է Գրիգոր Մկրտչյանին, Աշոտ Ջորյանին, Արթին Տուբայանին, Արտավազ Յուզաթաթայանին, Բյուզանդ Ջոջամանյանին, Հրանտ Անդրանիկյանին, Միմոն Շահրիբյանին, Միմոն Սամսոնյանին, Ջոն Փափազյանին, Հովհաննես Դագիբջյանին:

Հրանտ Քեշիշյանն արվեստագետներ Աշոտ Ջորյանի և Միմոն Սամսոնյանի ծննդյան 100-ամյակների կապակցությամբ ընթերցողին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում վերջիններիս կյանքի ու ստեղծագործությունների մասին: Եվրոպայում սովորելու ընթացքում Աշոտ Ջորյանը մասնագիտացավ կանանց մերկ նկարների ստեղծագործելու գործում²²:

Իր կյանքի ընթացքում կազմակերպել է 9 անհատական ցուցահանդես՝ այդ թվում Հալեպում և Բեյրութում: Բացի այդ՝ հայագգի արվեստագետը մասնակցել է 1945 թ., 1953 թ., 1958 թ. և 1962 թ. Արվեստագետների միության ցուցահանդեսներին, 1949 թ. և 1952 թ. Փարիզում և Վիեննայում կազմակերպված ցուցահանդեսներին²³:

1968 թ. մեկնում է Միացյալ Նահանգներ քրոջ մոտ և այնտեղից վերադառնալուց հետո ծանր հիվանդանում է, որից հետո 1970 թ.

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, 2014, № 52, էջ 3-11:

²² Նույն տեղում, 2015, № 59, էջ 17:

²³ Նույն տեղում, էջ 19:

կյանքից հեռանում է եգիպտահայ նշանավոր արվեստագետը: Քանի որ երեխաներ չունեն, նրա նկարչական ժառանգությունը բաժանվեց երեք մասի, որից երկուսը անցավ քույրերին, իսկ երրորդը՝ ամենամեծ բաժինը (մոտ 210 նկար), ուղարկվեց Հայաստանի ազգային պատկերասրահ: Աշոտ Ջորյանի աշխատանքներում մոտ 1/3-ը դիմանկարներ են՝ մասնավորապես կանանց դիմանկարներ, որոնցում հեղինակը պատկերել է կնոջ գեղեցկությունը: Աշոտ Ջորյանի աշխատանքներում մեծ թիվ են կազմում նաև ծաղիկները, բնապատկերները, ծովային նկարները, քաղաքային տեսարանները: Բացի այդ՝ Աշոտ Ջորյանը կրոնական բնույթի նկարներ է ստեղծագործել, որոնք զարդարում են Կահիրեի Հայ Առաքելական եկեղեցու պատերը²⁴:

Եգիպտացիների շրջանում մեծ հեղինակություն վայելող արվեստագետներից է Սիմոն Սամսոնյանը, ով ստեղծել է բազմաթիվ նկարներ, որոնցում պատկերել է երաժիշտների, իր երեխաների դիմանկարները: Սամսոնյանի նկարներում մեծ տեղ են գրավում նաև կնոջ ու երեխայի վերաբերյալ պատկերները՝ շաղախված տխրությամբ ու ցավով²⁵:

Եգիպտահայ արվեստագետների շարքում առավել հայտնի արվեստագետներից է նկարիչ Բյուզանդ Ջոջամանյանը, ում ծննդյան 100-ամյակի կապակցությամբ արաբերեն պարբերականը ընթերցողին ներկայացնում է հայազգի նկարչի կյանքն ու գործունեությունը: «Արեգ»-ը անդրադառնում է 1950-1960-ականներին տեղի ունեցած հայազգի արվեստագետների 26 անհատական ցուցահանդեսներից մի քանիսի լուսաբանմանը²⁶:

Ստեղծագործական վաղ շրջանում Բյուզանդ Ջոջամանյանը վառ գույներով պատկերել է բնության տեսարաններ, դիմանկարներ, ծաղիկներ և այլն: 1940-1960-ական թթ. ստեղծագործած աշխատանքներում գերիշխում են զգացմունքային նկարները: Այս շրջանում Բյուզանդ Ջոջամանյանը սկսում է պատկերել մարդկային հարաբերությունները, նկարում բազմաթիվ կտավներ սիրո, ընտանիքի և ընկերության վերաբերյալ: Արաբերեն պարբերականը հայազգի արվեստագետի աշխատանքներից առանձնացնում և արժեվորում է «Նրանց աշխարհը» կտավը, որում պատկերված է եգիպտական ավանդական գյուղացու ընտա-

²⁴ Նույն տեղում, էջ 15-21:

²⁵ «Արև», 1999, № 17, էջ 8-11:

²⁶ «Արեգ», 2010, № 3, էջ 4-11:

նիքը, և «Մայրն ու նրա երեխաները» կտավը, որում հեղինակը պատկերել մայրիկին և նրա երեխաներին: Այս կտավում հայազգի արվեստագետը արտահայտել է Մեծ Եղեռնի տարիներին հայ ժողովրդին՝ այդ թվում իր ընտանիքին պատած վիշտը: 1970-1980-ական թթ. Ստեղծագործած աշխատանքներում զգացմունքային բնույթի նկարներն իրենց տեղը զիջում են ապագայի հանդեպ լավատեսությամբ, հույսով ու հավատով համեմված նկարներով²⁷:

Եգիպտահայ երրորդ սերնդի անվանի արվեստագետներից է Հովհաննես Դազիբջյանը, ով ծնվել է 1925 թ. Կահիրեում: Որպես արվեստագետ ստեղծագործել է մինչև 1966 թ., երբ ծանր սոցիալական պայմանների պատճառով, նկարչությունը շարունակելու մոտիվացիայի բացակայության պայմաններում թողեց նկարչությունը: Հովհաննես Դազիբջյանը 1953 թ. կազմակերպել է իր առաջին և վերջին անհատական ցուցահանդեսը: 1950-1960 թթ. հայազգի արվեստագետը ստեղծագործել է յուղաներկով 50-60 աշխատանք, որոնցում պատկերված են հիմնականում Կահիրեի քաղաքային տեսարաններ: 1960-ականների սկզբներին մի քանի տարի աշխատել է ջրաներկով՝ ստեղծելով մի քանի նկարներ: Բացի այդ՝ Հովհաննես Դազիբջյանը զբաղվել է դեկորացիաների, յուղաներկերով նկարների բարեկարգմամբ վերականգնելու գործով: Այս ոլորտում նրա կատարած ամենահայտնի աշխատանքը անվանի արվեստագետ Տիրան Կարապետյանի 90 նկարների վերականգնումն էր, որը կատարել է 1981-1983 թթ.: Ինչևէ, երկարատև դադարից հետո Հովհաննես Դազիբջյանը շարունակել է ստեղծագործել և մասնակցել է 2008 թ. Ալեքսանդրիայում և 2009 թ. Կահիրեում կազմակերպված ցուցահանդեսներին²⁸:

Եգիպտահայ երրորդ սերնդի նշանավոր արվեստագետներից էր նաև Միմոն Շահրիբջյանը, ում ընտանիքը սերում է Արևմտյան Հայաստանի Սվազ նահանգից: Միմոն Շահրիբջյանի վաղ շրջանի աշխատանքներում տիրապետող են արտաքին միջավայրի տեսարանները, հետագա շրջանի աշխատանքներում զգացվում է ֆրանսիական նկարչության ազդեցությունը: Այնուհետև հայ արվեստագետի աշխատանքներում մեծ տեղ են գրավում անհատական նկարները, դիմանկարները,

²⁷ Նույն տեղում, էջ 10-11:

²⁸ Նույն տեղում, 2015, № 57, էջ 23-24:

իսկ Միմոն Շահրիքյանի արվեստի վերջին շրջանում գերակշռում են նոր ռեալիզմի ոճին հատուկ նկարներ²⁹:

Արաբերեն պարբերականը ժամանակակից եգիպտահայ արվեստագետներից առանձնացնում է Հակոբ Հակոբյանին, Հովհաննես Դանգյանին, Նորա Ազարայանին, Արմենուհի Ժամկոչյանին, Շուշան Էզոյանին, Ռոզ Փափազյանին, Վահե Մուղայանին, Շանթ Ավետիսյանին, Մարգարիտա Բալտիսյանին, Հրանտ Քեշիշյանին, Սարգիս Տուսոնյանին, Վահան Թեյսանին, Արման Հակոբին, Ալին Ջիզիմջյանին, Մարի Արթինյանին և Գեղամ Ճաղայանին ու համառոտ ներկայացնում վերջիններիս ստեղծագործական գործունեությունը³⁰:

20-րդ դարի ընթացքում Եգիպտոսում ապրեցին և ստեղծագործեցին հայազգի բազմաթիվ արվեստագետներ, որոնք մեծ ներդրում ունեցան Եգիպտոսում արվեստի զարգացման գործում: Առանձնապես մեծ հաջողությունների հասան եգիպտահայ նկարիչները: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում վառ պահել նրանց հիշատակը: Արաբերեն պարբերականը մեծապես արժեվորում է եգիպտահայ անվանի արվեստագետների գործունեությունը և արժեքավոր տեղեկություններ հաղորդում վերջիններիս մասին:

**MYASNIK YESOYAN
(EU)**

**THE EGYPTIAN-ARMENIAN ARTISTS IN THE PAGES OF MAGAZINE
AREG IN 2010-2015**

In the 20th century many Egyptian artists lived and worked in Egypt and they made a great contribution to the development of art. Especially the Egyptian-Armenian artists achieved great success. The magazine "Areg" sought to keep the attention on elucidation of activities of Egyptian-Armenian artists and keep their memory alive for the Arabic readers. The Arabic magazine greatly appreciates the activities of Egyptian – Armenian famous artists and gives valuable information about them.

²⁹ Նույն տեղում, 2011, № 17, էջ 7-8:

³⁰ Նույն տեղում, էջ 16-25:

ԹԱՄԱՐՅԱՆ ՁԵՆԻ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎՐԱՑԱԼԵԶՈՒ ԿԱՅՔԵՐՈՒՄ

2015 թվականի հունվարի 29-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի մոտ ՀՀ նախագահը պաշտոնապես հրապարակեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Այդ փաստաթղթով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը և դրա հետևանքների հազրահարմանը հասնելու գործընթացը¹:

Պետք է նշել, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի մեկնարկը տրվել է ավելի վաղ: Համայն հայության և Սփյուռքի ջանքերի շնորհիվ աշխարհի քաղաքակիրթ և աշխարհակարգ թելադրող երկրներ՝ խորհրդարանական

¹ Տե՛ս <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>.

՝Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրները՝ Բանաձևերի ընդունման տարեթվերով՝ Ուրուգվայ՝ 1965 թ., 2004 թ., Կիպրոսի խորհրդարան՝ 1975 թ., 1982 թ., Ռուսաստանի Դումա՝ 1995 թ. և ապրիլի 24-ը համարեց Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Կանադա՝ 1996 թ., 2002 թ., 2004 թ., Լիբանանի Ազգային ժողով՝ 1997 թ., Բելգիայի սենատ՝ 1998 թ., Ֆրանսիա՝ 1998 թ., 2000 թ., 2001 թ., 2006 թ., Հունաստան՝ 1999 թ., 2014 թ., Իտալիայի խորհրդարան՝ 2000 թ., Վատիկանը՝ ի դեմս Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ի՝ 2000 թ., Շվեյցարիա՝ 2003 թ., Արգենտինայի սենատ՝ 2004 թ., Սլովակիայի խորհրդարանը՝ 2004 թ., 2011 թ., Նիդերլանդների ներկայացուցչական պալատ՝ 2004 թ., Վենեսուելայի խորհրդարան՝ 2005 թ., Լեհաստանի խորհրդարան՝ 2005 թ., Լիտվա՝ 2005 թ., Չիլիի սենատ՝ 2007 թ., Շվեդիա՝ 2010 թ., Բոլիվիայի խորհրդարան՝ 2014 թ., 2015 թ., Ավստրիայի խորհրդարան՝ 2015 թ., Լյուքսեմբուրգի խորհրդարան՝ 2015 թ., Բրազիլիա՝ 2015 թ., Պարագվայի սենատ՝ 2015 թ., Գերմանիայի Բունդեսթագ՝ 2016 թ., Չեխիա՝ 2017 թ.: Հայոց ցեղասպանությունը մասնակիորեն ճանաչած պետություններից են Ավստրալիան, Արգենտինան, Կանադան, Շվեյցարիան, Բրիտանիան, Իսպանիան, Իտալիան, ԱՄՆ-ն (ԱՄՆ-ի 50 նահանգներից 48-ը

բանաձևերի և օրենքների մակարդակով ընդունեցին և դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը՝ որպես XX դարի սկզբին մարդկության դեմ իրագործված ոճրագործություն:

Ներկա պայմաններում Հայոց ցեղասպանության հարցի վերջնական լուծումը ոչ միայն նպատակ է հետապնդում վերականգնել պատմական արդարությունը, այլև ապահովել հայության անվտանգությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում²:

Այս համատեքստում առավել քան կարևորվում է քրիստոնյա Վրաստանի կողմից պետական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը:

Վրաց հասարակությունը, որը ցեղասպանության իրականացման անմիջական ակնատեսն ու վկան է դարձել, ինչպես նաև ցեղասպանությունից փրկված հայ գաղթականներին որոշակի օգնություն է ցուցաբերել, օժանդակել է նրանց վերաբնակեցման գործին³: 1991 թվականից մինչ օրս, Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները չեն նպաստել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության անաչառ գիտական ուսումնասիրմանը, այդ թվում՝ նաև Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը:

Եթե 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության հարցը բոլշևիկյան բռնապետությունից զերծ տարածքներում լրջորեն ուսումնասիրվել և գնահատվել է, ապա Վրաստանում նույնիսկ չի դարձել հետազոտության առարկա, քանի որ այդ հարցը տաբու էր: Իսկ անկախացումից հետո, պայմանավորված իր արտաքին քաղաքական (մասնավորապես՝ Թուրքիայի և Գերմանիայի հետ ռազմավարական սերտ համագործակցությունը) և ներքին ֆինանսատնտեսական շարժառիթներով, Վրաստանը մինչ օրս շարունակում է հանդես գալ չեզոք դիրքերից: Մակայն,

ընդունել և դատապարտել են Հայոց Ցեղասպանությունը): Հայոց ցեղասպանությունը ճանաչվել ու քննադատվել է նաև որոշ ազդեցիկ միջազգային կազմակերպությունների կողմից՝ Եվրոպական խորհրդարան, Եվրոպայի խորհուրդ, ՄԱԿ-ի մի քանի հանձնաժողովներ, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ և այլն:

² Մանրամասն տե՛ս Մարուքյան Ա. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան 2014, էջ 332:

³ Դավիթ Թարխան-Մոուրավի, Հայոց ցեղասպանությունը պետք է ճանաչենք, հարցազրույց: <https://www.youtube.com/watch?v=ioH4nRtTzMc>

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի կայքէջում 2003 թ. տեղ գտած հոդվածը⁶ անդրադարձավ վրաց իրականության մեջ պետական մակարդակով առաջին անգամ Վրաստանի խորհրդարանում բարձրացվող Հայոց ցեղասպանության հարցին: Միջադեպի մանրամասները հիմք հանդիսացան եզրակացնելու, որ այն ազդակ կդառնա ցեղասպանության ճանաչման պահանջի բարձրացման և իրադարձությունների նոր զարգացման համար: Եվ իրականում այդպես էլ եղավ: Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ սերտացող հարաբերությունների պայմաններում, Վրաստանի հայ բնակչության կողմից նման պահանջները Վրաստանի իշխանություններին կանգնեցրին երկրնտրանքի առջև: Պաշտոնական Թբիլիսին մի կողմից պետք է հավասարակշռության մեջ պահեր հայ բնակչության պահանջները, իսկ մյուս կողմից Թուրքիայի և Ադրբեջանի շահերը, որոնք իր ռազմավարական գործընկերներն են:

Հոդվածում նշվում էր, որ նման պահանջը կարող է լուրջ հակամարտություն առաջացնել Վրաստանի հայ և ադրբեջանցի բնակչության միջև: Հատկապես հաշվի էր առնվում այն, որ ցեղասպանության ճանաչման փաստը պնդող հայազգի պատգամավորները ընդդիմության կուսակցության անդամներ են, իսկ ադրբեջանցի պատգամավորներն էլ նախագահի գաղափարակիցներն են՝ հատկապես Քվեմո-Քարթվիում: Վրաստանի խորհրդարանի անդամների և տարբեր կուսակցությունների միմյանց զեղծարարության մեջ մեղադրելը, որը հիմնված էր կուսակցական շահերի վրա, կարող էր երկրում ապրող էթնիկ խմբերի միջև լարվածության գործոն դառնալ:

Հայության պահանջը անարձագանք չմնաց. դրա վկայությունն էր 2012 թ. Վրաստանի խորհրդարանի «Միասնություն հանուն արդարության» խմբակցության անդամ Ջոնդի Բադաթուրիայի ելույթը, ով հանդես եկավ հետևյալ կոչով.

«Մեզ մոտ են եկել մեր հայ համաքաղաքացիները, ովքեր պահանջում են ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այո, նրանք մեր համաքաղաքացիներն են: Հետևաբար, պատասխանատվության զգացում ունենք նրանց բոլորի հանդեպ»⁷:

⁶Գեոցոցոցի Նաչոտեբո www.nplg.gov.ge.

⁷ Ընթացիկում Նաչոտեբոյի Գեոցոցոցի տեղեկագրեր.

<http://news.ge/ge/news/story/11623-dapirispireba-somxetis-genocidis-temaze>.

Վրացի պատգամավորի կոչը շարժեց Մառնեուլի շրջանի իշխող կուսակցության ադրբեջանցի պատգամավոր Ազեր Սուլեյմանովի զայրույթը, ով սկսեց անտեղի վիրավորել, հայհոյել Ջ. Բաղաթորիային, վերջինիս անվանելով սադրիչ, հայ: Ջ. Բաղաթորիային աջակից ելույթով հանդես եկավ Վրաստանի խորհրդարանի «Ազգային շարժում» կուսակցության անդամ, Պ. Ադամյանի անվան հայկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ա. Բայանդուրյանը: Վեճը վերածվեց ծեծկռտուքի:

Այս ընդհարումը, կարելի է ասել, առաջինն էր, որ խորհրդարանում վրաց պատգամավորների կողմից բարձրացվեց Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջը, ինչն էլ բախում առաջացրեց վրացական և ադրբեջանական կողմերի միջև⁸:

Որպեսզի այդ միջադեպը զարգացում չունենա, Խորհրդարանի նախագահ Դավիթ Բաքրաձեն հանդես է գալիս հետևյալ կոչով. «Մեր երկրում ամուր հիմքերի վրա է դրված քաղաքացի հասկացությունը: Անկախ նրանց ազգային էթնիկ պատկանելությունից, մենք մեր երկրի քաղաքացիներն ենք՝ նույն իրավունքներով ու արժեքներով:

Եվ ամենամեծ թշնամությունն այն կլինի Վրաստանում, որ էթնիկ ծագման հողի վրա բաժանումներ լինեն և տարաձայնություններ ունենան Վրաստանի որևէ հարևանի հետ: Դրա համար էլ կոչ եմ անում բոլոր իմ գործըկերներին իրենց ելույթները չհնչեցնեն ի վնաս Վրաստանի՝ կիսելով քաղաքացիների միջև, հակադրելով հարևաններին»: Ըստ նրա՝ «Վրաստանի խորհրդարանում չի կարող հնչել մի հայտարարություն, որը կվիրավորի եղբայրական հայ ժողովրդին: Իրոք, քանի որ սա Վրաստանի խորհրդարանն է, այստեղ չի կարող լինել մի հայտարարություն, որը կվիրավորի մեր եղբայրական ադրբեջանական ժողովրդին: Այն ցավն ու ողբերգությունը, որը տարել են մեր եղբայրական ժողովուրդները, դա մեր ցավն ու ողբերգությունն էլ է, բայց այդ ողբերգությունը կարիք չունի քաղաքական ելույթների ու բռնի շահարկման, ինչպիսիք մենք այսօր լսեցինք մեր որոշ գործըկերներից»⁹:

Փաստորեն, Դ. Բաքրաձեն, լինելով վրաց իշխանությունների ներկայացուցիչ, պատմական ճշմարտությունը նախընտրելու փոխա-

⁸ՃձՁԻՐՈՆՍՅՈՐԴԵՑ ԵՄԹԵՅՏՈՆ ԶԵՆՈՇՈՃՈՆ ՏԵՄԵՅԵՅ.

<http://news.ge/ge/news/story/11623-dapirispireba-somxetis-genocidis-temaze>.

⁹ՃձՁԻՐՈՆՍՅՈՐԴԵՑ ԵՄԹԵՅՏՈՆ ԶԵՆՈՇՈՃՈՆ ՏԵՄԵՅԵՅ.

<http://news.ge/ge/news/story/11623-dapirispireba-somxetis-genocidis-temaze>.

րեն, փորձեց շարունակել մինչ օրս կառավարության որդեգրած քաղաքական դիրքորոշումը:

Այս իրադարձություններին հետևում է Վրաստանում գործող մի շարք կազմակերպությունների՝ («Վրաստանի հայ համայնք», «Համագործակցության հայկական կենտրոն», «Ուսանողների հայկական ասոցիացիա», «Երիտասարդական հայկական միություն», «Հայ երիտասարդների ասոցացիա», «Նոր սերունդ» միություն և Թբիլիսի հայերի ասամբլեա) դիմում-կոչը ուղղված Վրաստանի խորհրդարանին, ովքեր պահանջում էին ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

«Մենք՝ հայ համայնքի ներքոստորագրյալ կազմակերպություններս, հանուն արդարության և ժողովրդավարական արժեքների, կոչ ենք անում Վրաստանի խորհրդարանին միանալ աշխարհի քաղաքակիրթ հասարակությանը և նախաձեռնել Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանության հարցի քննարկումը», - ասվում է հայտարարության մեջ¹⁰: Այս կոչը մեծ զայրույթ առաջացրեց վրաց որոշ գիտնականների մոտ: Ինչպես նշում է Թբիլիսիի Դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր Մոսո Յինցաձեն¹¹. «Այս կոչի հեղինակների հետևում կանգնած են ծայրահեղական և Վրաստանի նկատմամբ թշնամական տրամադրվածություն ունեցող հայկական կազմակերպություններն ու քաղաքական գործիչները»¹²:

Շեշտելով Վրաստանում ապրող ադրբեջանցիների մեծաքանակ լինելու և մյուս կողմից էլ Թուրքիայի ռազմավարական գործընկերոջ փաստը՝ Յինցաձեն վստահորեն հայտնում է, որ դա ընդամենը արհեստական փորձ է, ինչն էլ նպատակ է հետապնդում առճակատման հանել Վրաստանի կառավարությանը մի ողջ իսլամական աշխարհի

¹⁰Ճամբուրի Խաչատրյան-Սոմեյի Սեյրապետյան Յուրայի Գեոգրաֆիկալ Գեոցոլոգիա Վրաստանում. Գրքեր, Գրքեր, <<Վրաստան>>. http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

¹¹Պատմաբան, քաղաքագետ, փորձագետ: 1960-64թթ.՝ Վրացական ՄՍՀ ԳԱ փոխնախագահի օգնական: 1964-75թթ.՝ Վրացական ՄՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող: 1975-97 թթ.՝ ազգամիջյան հարաբերությունների հետազոտությունների կենտրոնի վարիչ: Այժմ Դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր: Եղել է նաև արտաքին քաղաքականության ասոցիացիայի նախագահ, Վրաստանի քաղաքական գիտությունների ակադեմիայի անդամ: Հեղինակ է 100-ից ավել գիտական հոդվածի և 18 մենագրության:

¹²Ճամբուրի Խաչատրյան Վրաստանում ցեղասպանության տեմաՅե.

<http://news.ge/ge/news/story/11623-dapirispireba-somxetis-genocidis-temaze>.

ղեմ¹³: Ըստ գիտնականի՝ ցեղասպանության թեման ընդհանրապես անիրատու բանավեճ է. «Եղել է թե չէ ցեղասպանություն, ես վստահ ոչինչ չեմ կարող ասել, ես այս հարցի հետազոտողը չեմ, և չեմ կարող որևէ բան ասել, բայց որ մենք ապաստան ենք տվել այդքան տուժածի ու զոհի, դա փաստ է: Այնպես որ, պետք է շնորհակալ լինել, և այդ հարցում մեզ չխառնել»¹⁴: Ցինցաձեղ կարծիքով այս ամենի ետևում կանգնած են «հայ դաշնակ ռեցեդիստները», մասնավորապես Վրաստանում ծնված, այժմ ՀՀ խորհրդարանի հայ պատգամավորները, ովքեր ագրեսիվ քաղաքականություն են վարում Ջավախքում:

Թբիլիսիի Եվրասիայի ինստիտուտի տնօրեն Գուլբաթ Ռեցիլաձեի կարծիքով, Ռուսաստանում գործող ջավախահայերի համայնքը կոչ է արել վրացական ընդդիմությանը ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Միննույն ժամանակ, նշում է որ, այդ կոչ-պահանջները պայմանավորված են պոտենցիալ դաշնակիցների դրդմամբ: Ռեցիլաձեի պնդմամբ նրանք նմանատիպ կոչերով չեն համարձակվի դիմել թուրքական աշխարհին՝ Ադրբեջանին, կամ նույնիսկ Թուրքմենստանին և Կենտրոնական Ասիայի հանրապետություններին: Փաստորեն, ինչպես նշում է Ռեցիլաձեն, վրաց կառավարությունը շարունակում էր մնալ անորոշ վիճակում. «Մի կողմից, ունենք հայկական ծագումով նախագահ, որի համար միննույն են հայերն էլ, վրացիներն էլ, մյուս կողմից էլ նրա համախոհներն ու աջակիցները, կարիք չկա թվարկել նրանց ազգանունները», - ասում է նա: Անդրադառնալով Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջի համար վիրահայերի պայքարին՝ Ռեցիլաձեն նշում է. «Հայերը փորձում են կեսագործել իրենց շահերը, և դրա համար շատ դրական փաստարկ կլինի, եթե Վրաստանը և Թուրքիան միմյանց հակադրվեն: Այս հակադրությունը երաշխավորված կլինի, նույնիսկ այն դեպքում, եթե կառավարությունը, ինչ-որ առավել հզոր ընդդիմադիր քաղաքական կուսակցություն կճանաչի հայ ժողովրդի ցեղասպանությունը: Սա Վրաստանի և Թուրքիայի միջև քաղաքականության լուրջ փորձ կլինի, անկախ նրանից, կառավարությունը դա կընդունի, թե ոչ»¹⁵:

¹³დამწავრი ხაფანგი- სომხები საქართველოს პარლამენტს გენოციდის აღიარებას სთხოვენ. ფრიდონ დოზია, <<ვერსია>>. http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

¹⁴Նույն տեղում: http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

¹⁵ Նույն տեղում: http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

Այնպես, ինչպես Գուլբաթ Ռեյսիլաձեն, այնպես էլ Ցինցաձեն, կարծում են, որ Հայոց ցեղասպանության հարցը մասնավորապես հայ և թուրք պատմաբանների քննարկման առարկան է. «Մենք պետք է խրախուսենք հայերին, որ նրանք այս պատմությունը չշահարկեն և թյուրիմացություններ չտարածեն: Իրականում զեղծարարության չենթարկեն իրենց մահացած նախնիների հոգիները: Սա հիրավի հայերին ձեռնտու չէ: Նրանք այս կոչ-պահանջներով իրենք իրենց մեկուսացնում են: Հայերը ստեղծել են այնպիսի խոչընդոտներ, որ Թուրքիայի հետ հարաբերությունները չեն կարող կարգավորել, և իրենց համարում են իրենց իսկ հորինած առասպելի զոհերը: Մենք մեր հայ հարևաններին և գործընկերներին բարեկամական կարող ենք ասել, միայն այն, որ վերջ տան այդ ցեղասպանության հարցի շահարկմանը, իրատեսական լինեն և ժամանակակից աշխարհում զբաղեցնեն իրենց տեղը»¹⁶:

Չնայած Վրաստանի խորհրդարանում մի քանի հանձնաժողով միաժամանակ ուսումնասիրում և քննարկում են ռուսական կայսրության կողմից Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ցեղասպանության ճանաչելու հարցը, Հայոց ցեղասպանության նկատմամբ կողմնորոշվելու հարցում նրանք չեն շտապում: Դեռևս 2011 թ. Վրաստանի պաշտպանության նախարար Բաչո Ախալայան Երևանում իր պաշտոնական այցի ընթացքում հանդիպեց հայ գործընկերոջը, հանդիպման ժամանակ քննարկվեց նաև Հայոց ցեղասպանության հարցը: Այն հարցին, թե ինչն է խոչընդոտում Հայոց ցեղասպանության ճանաչմանը, վրացի նախարարը հայտարարեց միայն այն, որ «հայ ժողովրդի ցավը մոտ է վրաց ժողովրդի սրտին»: Վրաստանի խորհրդարանի հանձնաժողովի նախագահ Շոթա Մալաշիսիայի կարծիքով՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը շատ բարդ հարց է, որը պետք է բարձր մակարդակով ուսումնասիրվի պատմաբանների կողմից, այնինչ և՛ Վրաստանի կառավարությունը, և՛ հայ համայնքը այնքան էլ լրջորեն չեն մտենում հարցին, սակայն եթե հարցը լուծում ստանա երկու երկրների խորհրդարանների մակարդակով, դա կլինի Վրաստանի միջազգային համագործակցության ու բարեկամության և Հայաստանի արժանապատվության հարցը:

¹⁶ დამნაჯური ხაფანგი- სომხები საქართველოს პარლამენტს გენოციდის აღიარებას სთხოვენ. ფრიდონ დოზია, <<ვერსია>>. http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Նուզգար Ծիկլաուրին¹⁷, անդրադարձնալով Վրաստանի խորհրդարանում գործող ռուսական կայսրության կողմից Հյուսիսային Կովկասի ժողովուրդների ցեղասպանությունների ուսումնասիրման հանձնաժողովի աշխատանքներին, նշում է, որ Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը դեռևս ոչ մի ստորաբաժանում չի սկսել. դա ժամանակի հարց է և առաջին հերթին քաղաքական լուծում պետք է ստանա:

2011 թ. Վրաստանի պառլամենտի ազգային գրադարանում, Վրաստանի հայ համայնքի ջանքերով տեղի ունեցավ «Հայոց Ցեղասպանությունը 1914-1918 թթ. վրաց պարբերականներում»¹⁸ գրքի շնորհանդեսը: Աշխատությունը ներառում էր Վրաստանի պառլամենտի ազգային գրադարանի վրաց պարբերականների տարեգրությունում առկա Հայոց ցեղասպանության նյութերը, որոնք մինչև օրս անհայտ էին հասարակությանը: Գրքի հիմնական նպատակն էր ընթերցողին ծանոթացնել Վրաստանի Ազգային գրադարանի պահոցներում և արխիվներում պահվող Հայոց ցեղասպանության մասին նյութերն, այդպիսով նպաստելով մի քանի տասնյակ տարիներ Վրաստանում տաքու հանդիսացող Հայոց ցեղասպանության հարցի մասին վրաց հասարակության ուսումնասիրմանն ու գնահատմանը:

Նման մակարդակով գրքի շնորհանդեսը մեծ գայրույթ առաջացրեց վրաց գիտնականների շրջանակներում:

Ս. Ցինցաձեն իր հարցազրույցներից մեկի ժամանակ անդրադարձնալով հիշյալ գրքի շնորհանդեսին, իր և Լևան Ալեքսիձեի¹⁹ հրավերին,

¹⁷ <http://www.amerikiskhma.com/a/armenia-genocide-120692929/534892.html>.
Նախարարության ցեղասպանության հարցի շնորհանդեսի տեքստը: <http://www.amerikiskhma.com/a/armenia-genocide-120692929/534892.html>.

¹⁸ Տե՛ս: Նուզգար Ծիկլաուրի, «Հայոց ցեղասպանությունը 1914-1918 թթ. (Նախարարության ցեղասպանության հարցի շնորհանդեսի տեքստը)», Երևան, 2011 թ., 176 գ. Գիրքը հրատարակվել է EUROPEAN AMERICAN FEDERATION FOND JUSTICE AND DEMOCRATIC (Եվրոպայի և Միացյալ Նահանգների արդարադատության և ժողովրդավարության ֆոնդի) վրաստանյան գրասենյակի և Վրաստանի հայ համայնքի կողմից:

¹⁹ Պատմաբան, մանկավարժ: 1946 թ. ավարտել է Թբիլիսի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1950-70թթ. Թբիլիսի պետական համալսարանի ասպիրանտ, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 1970-77 թթ.՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների վարչության ենթահանձնաժողովի քարտուղար, բաժնի վարիչ, ազգային փոքրամասնությունների պաշտպանության հանձնաժողովի քարտուղար: 1992-95թթ.՝ միջազգային իրավունքի և միջազգային կա-

նշում է. «Վրդովված Լևան Ալեքսիձեն իմ ներկայությամբ զանգահարեց գրադարանի տնօրենին և հարցրեց, թե ինչու է կատարվում այս ամենը: Նա պատասխանեց, որ գաղափար չունի, թե ինչ է կատարվում: Հիմա տեսնում եք, թե ինչպե՞ս են ամրապնդվել հայերի դիրքերը: Ժամանակին վրացական մամուլը ճանաչել է ցեղասպանությունը և հիմա դուք էլ պետք է ճանաչեք: 1914-1918 թթ. հնարավոր է գրված լինեն մի քանի հոդվածներ, թե ինչ դժբախտություն է տեղի ունեցել, հայերի են սպանել, սակայն այս ամենը ճանաչում հո չի՞ նշանակում: Այս ամենը նրանք ցեղասպանություն են կոչում: Ահա թե ինչ ձևով են հարձակվում հայերը Վրաստանի վրա: Տեսնում եք չե՞, այս ամենին է խառնված Եվրոպա-Ամերիկա ֆոնդը, որն էլ ֆինանսավորել է գրքի հրատարակումը: Այս ամենը ձեր կարծիքով Թուրքիային դուր կգա՞»²⁰:

Վրացական կայքերում առկա են նաև վերլուծականներ, որոնք անդրադառնում են Ֆրանսիայի և ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին և նրանց կողմից բանաձևերի ընդունմանը: Հիմնական շեշտը դրվում է հայ լրբիստների գործունեության վրա, ովքեր Զբիգն Բժեգինսկու բնորոշմամբ «վտանգավոր բացառություններ են»²¹:

Սկարագրելով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, ինչպես նաև ոճրագործության ժխտումը քրեականացնող օրենքների ընդունման գործընթացի մանրամասները՝ հեղինակները գալիս են այն եզրակացության, որ Վրաստանը ևս Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում պետք է հավասարության նշան դնի պատմական արդարության և քաղաքական նպատակահարմարության միջև²²:

պերի ֆակուլտետի բաժնի վարիչ: 1994-2003թթ.՝ Վրաստանի նախագահի միջազգային իրավունքի հարցերով խորհրդական: Մասնակցել է Աբխազիայի կարգավիճակի վերաբերյալ քննարկումներին: Հեղինակ է շուրջ 120 գիտական աշխատությունների, 20 մենագրության և 2 ձեռնարկի:

²⁰ დაშნაკური ხაფანგი- სომეხები საქართველოს პარლამენტს გენოციდის აღიარებას სთხოვენ. ფრიდონ დოჩია, «ვერსია». http://for.ge/view.php?for_id=4496&cat=9.

²¹სომეხებისგენოციდი ისტორიულსამართლიან ობსადაპოლიტიკურმიზანშეწონილობასშორ ის. [HTTP://WWW.TABULA.GE](http://WWW.TABULA.GE).

²² სომეხების გენოციდი ისტორიულ სამართლიანობასა და პოლიტიკურ მიზანშეწონილობას შორის. [HTTP://WWW.TABULA.GE](http://WWW.TABULA.GE).

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցով պայմանավորված վրաց մամուլում տեղ գտան նյութեր, որոնք նկարագրում էին Հայոց ցեղասպանությունն ընդհանրապես՝ սկսած 1877-78թթ. հայկական հարցի միջազգայնացումից, վերջացրած 1923թ. Լոզանի կոնֆերանսով:

Հատկապես անդրադարձ է կատարվում 1895-96 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից իրագործված ոճրագործությանը, 1907 թ. Երիտթուրքերի հրապարակ գալուն, 1909թ. Ադանայի կոտորածին, 1915թ. Մեծ Եղեռնի հայ վրիժառուների կողմից օսմանյան պարագլուխների սպանությանը, մեծ տերությունների կողմից՝ 1916-20թթ. Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևերի ընդունմանը, ինչպես նաև 1923թ. Լոզանի կոնֆերանսին, որտեղ փաստացի Հայկական հարցը փակուղի մտցվեց:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ իրադարձությունների նկարագրություններում տեղ են գտել որոշ անճշտություններ: Մասնավորապես, խոսելով 1895-96 թթ. համիդյան ջարդերի մասին, սպանված հայերի թվաքանակը նշվում է 100-200 հազար²³, չնայած որ չնայած որ վաղուց տարածում է գտել այդ տարիներին սպանված հայերի թիվը 300 հազար նշելը: «Հայոց ցեղասպանություն: Համառոտ ակնարկ» հոդվածի «Ի՞նչ է տեղի ունեցել» ենթավերնագրի ներքո, անդրադառնալով Հայոց ցեղասպանության պատճառներին, հոդվածագիրը առաջ է քաշում տեղահանության թուրքական պաշտոնական տեսակետը²⁴:

Փաստորեն, Վրաստանի աչքի առաջ կատարված հանցագործության դատապարտման հարցը խորը քաղաքական երանգ է ստացել: Բարոյական տեսանկյունից՝ քրիստոնեություն, բազմադարյա հարևանություն, մշակույթների նմանություն, հարցն անքննելի է, քանի որ այս կարևորագույն սկզբունքները Վրաստանի կողմից մղվում են երկրորդ պլան: Հատկանշական է, որ տվյալ հարցի քաղաքական ենթատեքստը ճանաչվում է Վրաստանի քաղաքական իշխանության բոլոր մակարդակներում: Անկախացումից ի վեր, Վրաստանի վերնախավը փորձում է արդարացնել իր լռությունը, հայտարարելով, որ «Վրաստանի կողմից հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտումը և ճանաչումը լռջորեն կարող է վատթարացնել հարաբերությունները երկու հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ»²⁵: Ըստ վրացի քաղաքական

²³ Եթե ճշտ է, ապա <https://postsovietwatch.com>

²⁴ Եթե ճշտ է, ապա <https://postsovietwatch.com>

²⁵ Եթե ճշտ է, ապա <https://postsovietwatch.com>

գործիչ Դավիթ Թարխան Մոուրավիի, 26 տարիների ընթացքում սա եղել է վրացական իշխանությունների գլխավոր հիմնավորումը, որը ոչ մի քննադատության չի դիմանում, և Վրաստանը Թուրքիային անհրաժեշտ է միայն իր ծրագրերի իրականացման համար: Վրաց իշխանությունները, գիտակցելով, որ իրենք ընդամենը հանդիսանում են Թուրքիայի տարածքային-տնտեսական կցորդ, Հայոց ցեղասպանության հարցը երկրորդական պլան են մղում: Այնինչ, այն կարող էր լավ հնարավորություն դառնալ Թուրքիայի ճիրաններից ազատվելու համար և մեկ քայլ առաջ՝ պետական անկախության հասնելու համար: Նա, լինելով «Հայրենասերների դաշինք»-ի առաջնորդ, դեռևս 2015 թ. ապրիլի 26-ին «Մեդիա-կավճիր օբիեքտիվի/ՅԵԾՕՏ-ՅՅՅԾՕՐՕ ԵԾՕԵԵԵՅՅՕՅՅՕ» հաղորդաշարին տալով հարցազրույց, նշում է, որ «ցավոք Վրաստանը չունի այնքան կարողություն, ունակություն և խիզախություն, որ ճանաչի Հայոց ցեղասպանությունը»: Նա այդ իրողությունը Վրաստանի համար որակում է որպես դժբախտություն: Դա այն պարագայում, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչել են այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան և Ֆրանսիան: Նրա կարծիքով, բարիդրացիական հարևանությամբ պայմանավորված, ժխտողական քաղաքականությունը երկրի համար հիմար և անհեթեթ պատճառաբանություն է. «Այո եղել է ցեղասպանություն, հայերի ցեղասպանություն: Մա այն ճշմարտությունն է, որից չենք կարող վախճել միայն այն բանի համար, որ Թուրքիայի հետ ունենք տնտեսական և այլ շահեր. սա ուղղակի հիմարություն է: Ցանկացած տեսակի շահերից վեր է այս ճշմարտությունը, որը պարտադիր է և անհրաժեշտություն: Վրաստանը պե՛տք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը»²⁶:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության խնդրին՝ նա հստակորեն նշում է, որ հայերը տեղահանվել են իրենց պատմական հայրենիքից, իսկ Թուրքիան արհեստականորեն ստեղծված երկիր է, որի նույնիսկ մի քառակուսի մետրը չի պատկանում այդ ժողովրդին:

Դավիթ Թարխան Մոուրավին հիացմունքով է խոսում նաև հայերի համառության և համախմբվածության մասին. «Կեցցե՛ն հայերը, ես չեմ նախանձում, ուղղակի ապշած եմ նրանց համառությամբ, որ այսօր տարի պայքարում են և ամենուր են պայքարում, որ աշխարհը ճանաչի Հայոց ցեղասպանությունը ... ցանկանում եմ, որ հայերը շատ կարճ ժամանակահատվածում հաղթանակ տանեն այս անարդար

²⁶ ԵԾԵԵԵԵԵԵԵԵ ԵԵԵԵԵԵԵ Pos-sovet. <https://postsovietwatch.com>

պայքարում, և իրոք աշխարհը ճանաչի, որպեսզի ոչ մի տեղ չկրկնվի նման վայրագություն»²⁷:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցում Վրաստանի դիրքորոշումը մեծապես կախված է թուրք-ադրբեջանական տնտեսական և քաղաքական ճնշումներից, ինչը վտանգ է նաև Վրաստանի ազգային անվտանգությանը, և դա առաջին հերթին պետք է գիտակցվի հենց Վրաստանի իշխանությունների և վրաց հասարակության կողմից:

JENNY TAMARYAN
(IOH NAS RA)

**THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN GEORGIAN
LANGUAGE WEBSITES**

This article consists of materials, kept in the Georgian press archives of the National Parliamentary Library of Georgia, touching on the Armenian Genocide in Western Armenia and the Ottoman Turkey. These materials are a good reflection of the Georgian civic and media attitude towards the Armenian Genocide, underlining the urgency of this matter.

The main goal of this edition is to provide the general public with the Georgian periodical materials of 1914-1918, which to this day were largely unknown, and thereby to contribute to the edification on the matter of the Armenian Genocide, an issue, tabooed in Georgia for decades.

²⁷ სომხეთის გენოციდი Pos-sovet. <https://postsovietwatch.com>

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

XIII

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր N 889

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2018թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, տպագր. 18.5 մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: